Բ. ՎՈՒԼԻՆ




# Բաց Գրագրություն

II ՊՐԱԿ

3(02)
Վ-79

ԿՈՒՍՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ
1933

12 AUG 2013
11338
3(02)
Վ-79
09 DEC 2009
25 SEP 2006

«Մեր ամբողջ պատմությունը մեր դասակարգի լավագույն առաջավոր էլեմենտների հանուն պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակի, հանուն դասակարգերի վոչնչացման, հանուն կոմունիզմի մղած հերոսական պայքարի ծրագիրն է, ստրատեգիան, տակտիկան ու կազմակերպությունը»:

ԿԱԳԱՆՈՎԻՉ

# V ԳԼՈՒԽ

# ԻՆՉՊԵՍ ՅԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՑԱՐԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

## 1. ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է

*Արդեն իր ամենաառաջին աշխատություններում — իր* 1894 *թվի «Ինչ են «ժողովրդի բարեկամները»» նշանավոր աշխատության մեջ,* 1901—3 *թվականների հոդվածներում,* 1902 *թվին գրված «Ինչ անել» պատմական գրքում և մյուսներում,* Լենինը հիմքը դրեց այն հոսանքին, որը 1903 թվից ձևակերպվեց որպես բոլշևիզմ: *Լենինիզմ-բոլշևիզմը հետագա ամբողջ յերեսուն տարիների ընթացքում յեղել է և է վոչ միայն Ռուսաստանի պրոլետարիատի, այլև ամբողջ միջազգային հեղափոխական բանվոր դասակարգի ղեկավար թեորիան: Լենինը նոր կուսակցության հիմնական գաղափարներն սկսեց ձևակերպել Մարքսի մահվանից (մեռել է* 1883 *թ.) մոտավորապես տասը տարի հետո, Էնգելսի մահվանից* (1894) *քիչ առաջ: «Մարքսը և Էնգելսը, — ասում է ընկ. Ստալինը — մաքառում եյին նախահեղափոխական (մենք նկատի ունենք պրոլետարական հեղափոխությունը) ժամանակաշրջանում, յերբ դեռ զարգացած իմպերիալիզմ չկար, պրոլետարների կողմից հեղափոխության նախապատրաստվելու ժամանակաշրջանում, յերբ դեռ պրոլետարական հեղափոխությունն ուղղակի գործնական անխուսափելիություն չէր: Իսկ Լենինը — Մարքսի և Էնգելսի աշակերտը — մաքառում էր զարգացած իմպերիալիզմի ժամանակաշրջանում, ծավալվող պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջանում, յերբ պրոլետարական հեղափոխությունն արդեն հաղթանակեց մի յերկրում, ջախջախեց բուրժուական դեմոկրա-*

1359
42-92
ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ — ССРА им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

25 SEP 2006

ռիային և բաց արեց պրոլետարական դեմոկրատիայի դարաշրջանը՝ խորհուրդների դարաշրջանը»: Լենինը վոչ միայն վերականգնեց մարքսիզմի հեղափոխական բովանդակությունը, վորը խեղաթյուրված ու գռեհկացված եր II Ինտերնացիոնալի ոպորտունիստների կողմից, այլև առաջ տարավ Մարքսի ուսմունքը նոր դրության մեջ, պրոլետարիատի դասակարգային պայքարի նոր պայմաններում, ոգտագործելով բանվոր դասակարգի միջազգային պայքարի և Ռուսաստանի բանվոր դասակարգի պայքարի փորձը:

«Լենինիզմն աճեց և ձևակերպվեց—ասում է ընկ. Ստալինը—իմպերիալիզմի պայմաններում, յերբ կապիտալիզմի հակասությունները հասան ծայրագույն կետին, յերբ պրոլետարական հեղափոխությունը դարձավ անմիջական գործնականի հարց, յերբ բանվոր դասակարգի կողմից հեղափոխության նախապատրաստվելու հին ժամանակաշրջանը դեմ առավ և վերաճեց կապիտալիզմի վրա ուղղակի գրոհի նոր ժամանակաշրջանի»:

Յերբ բոլշևիզմը ծագեց և միջազգային թատերաբեմ դուրս յեկավ, այն ժամանակվա Ռուսաստանը իմպերիալիզմի բոլոր հակասությունների հանգուցակետն եր:

«Ռուսաստանը հեղափոխությամբ հղի յեր ավելի, քան վորևէ մի այլ յերկիր, և դրա համար էլ միայն նա յեր ի վիճակի հեղափոխական ճանապարհով լուծելու այդ հակասությունները...

Ցարական Ռուսաստանը ամեն տեսակի կեղեքման ոջախ եր—և՛ կապիտալիստական, և՛ գաղութային, և՛ զինվորական—դրանց ամենաանմարդկային և ամենաբարբարոս ձևով»:

Բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության այն բոլոր սերունդները, վորոնք անցել են կապիտալիստական ֆաբրիկայի և կալվածատիրական ստրկության դպրոցը, լավ հիշում են իրենց անասելի շահագործումը կապիտալիստների ու կալվածատերերի կողմից, վորը ձուլվում եր ցարի բռնապետական ինքնակալության և ազգային փոքրամասնությունների հարստահարման հետ:

«Կապիտալիստը հնարավորություն է ստանում միանգամայն խեղդելու բանվորին—գրում եր Լենինը 1897 թ.—տաժանակիր աշխատանքում նրան մահվան դուռը հասցնել, և վոչ միայն նրան, նմանապես նաև նրա կնոջն ու նրա յերեխաներին»: Բացարձակ իրավազրկություն, չտեսնըված կուլտուրական հետամնացություն և անգրագիտություն, բնակարանային և կենցաղային վողբալի պայմաններ, ծայրահեղորեն ցածր, կիսաքաղց աշխատավարձ, մշտական տուգանումներ, անտանելիորեն յերկար բանվորական որ—ահա թե ինչով եր բնութագրվում բանվորի կյանքը:

«Բանվորական ժամերի թիվը շաբաթվա մեջ—ճիշտ նույն ժամանակ



գրում եր Լենինը—մեջին հաշվով (միքանի հարյուր ֆաբրիկաների տվյալներով) կազմում է 74, այսինքն որական $12^1/_3$ ժամ... Յեվ նկատի առեք, վոր այդ ամբողջ հաշիվը վերաբերում է միայն ցերեկվա աշխատանքին, հատկապես սահմանյալ աշխատանքին: Իսկ արտաժամյա աշխատա՞նքը...»: Կապիտալիստական ֆաբրիկաների դաժան պայմանների հետևանքով աշխատանքի լիակատար անպաշտպանություն և գործազըրկության, հիվանդության ու հաշմանդամության դեպքում լիակատար անապահովություն—այսպես եր բանվոր դասակարգի դրությունը:

Գյուղում — ճորտատիրության ամենաայլանդակ, ամենաանհանդուրժելի մնացորդները, կալվածատերերի ինքնիշխանությունը: Լենինը 1901 թվին գրում եր, վոր 1861 թ. գյուղացիների «ազատագրումից» հետո անցած 40 տարիները «ապագյուղացիացման համատարած պրոցես են, դանդաղ, տանջալի մահվան պրոցես: Գյուղացին հասցվեց կյանքի աղքատիկ մակարդակի.—նա բնակվում է անասունի հետ միասին, ցընցոտիներ է հագնում և խոտով կերակրվում»:

Այժմ Խորհրդային Միության կազմի մեջ մտնող ցարական Ռուսաստանի ազգությունների աշխատավոր մասսաների ավագ սերունդը շատ լավ է հիշում այն անլուր անարգանքներն ու անգթությունները, վորոնց յենթարկվում եյին վոչ-ռուս ժողովուրդները ցարիզմի կողմից.—նրանց հողի կողոպտումը, գույքերի բռնագրավումը, մեկ ազգության մյուսի դեմ լարելը, ջարդերը, բռնի ռուսացումը, իրավունքի սահմանափակումները, ազգային դպրոցների, ազգային գրականության, ազգային լեզվի արգելումը:

Ցարական Ռուսաստանը հայտաբերելով իրեն վորպես ամենաանգութ իմպերիալիստական ավազակը ռուսական կայսրության ազգությունների և իր թույլ դրացիների վերաբերմամբ, միաժամանակ ինքը արտասահմանյան կապիտալին հնարավորություն եր տվել շահագործելու իր աշխատավոր մասսաներին և տիրություն անելու ժողովրդատնտեսության այնպիսի վճռական ճյուղերում, ինչպիսին վառելանյութն է, մետալուրգիան, յերկաթուղիները և այլն: Ցարական Ռուսաստանը վոչ միայն ազատ մուտք եր տալիս արտասահմանյան կապիտալին, այլև նրա տրամադրության տակ եր դրել, արևմտյան իմպերիալիստների տրամադրության տակ եր դրել միլիոնավոր զինվորներ վորպես թնդանոթի միս: Յեվ դա տեղի ունեցավ իմպերիալիստական պատերազմի ժամանակ, յերբ 12 միլիոն ռուսական զինվորներ շպրտվեցին պատերազմի հորձանուտի մեջ անգլո-ֆրանսիական կապիտալիստների հրեշավոր շահույթներն ապահովելու համար:

Ցարական Ռուսաստանում ցարիզմի և արևմտյան իմպերիալիզմի շահերն ամենասերտ կերպով զուգորդվում եյին միմյանց: Արևմտյան Յեվրոպայի իմպերիալիստները մեծապես շահագրգռված եյին ցարական

Ռուսաստանի վիճակով, ուշադիր կերպով հետևում եյին բանվորական շարժման ծավալմանը, նրա մեջ խոշոր վտանգ տեսնելով իրենց շահերի համար: Ցարիզմը վոչ միայն խեղդում եր ամեն մի կենդանություն իր յերկրում, այլև ինչպես յեվրոպական, նույնպես և ասիական ռեակցիայի հզոր հենարանն եր: Ահա թե ինչու ընկ. Ստալինը մատնանշում ե. «Ով ցանկանում եր խփել ցարիզմին, նա անխուսափելիորեն իր ձեռքը բարձրացնում եր ցարիզմի վրա, ով ապստամբում եր ցարիզմի դեմ, նա պետք ե ապստամբեր նաև իմպերիալիզմի դեմ, վորովհետև ով տապալում եր ցարիզմը, նա պետք ե տապալեր և իմպերիալիզմը, յեթե նա իսկապես մտածում եր վոչ միայն ջախջախել ցարիզմը, այլև մինչև վերջ վոչնչացնել նրան: Հեղափոխությունը ցարիզմի դեմ մոտենում եր, և այսպիսով, պետք ե վերաճեր հեղափոխության ընդդեմ իմպերիալիզմի, պրոլետարական հեղափոխության»:

Ռուսաստանում հեղափոխության համար պայմանները հասունանում եյին, շարժման գլուխ եր կանգնած աշխարհի ամենահեղափոխական բանվոր դասակարգը՝ ղեկավարությամբ լենինյան կուսակցության և դաշնակից ունենալով հեղափոխական գյուղացիության բազմամիլիոն մասսաներին:

Այսպես եյին պայմանները, վորոնց մեջ Լենինը ձևակերպեց իր հայացքները Ռուսաստանի հեղափոխության մասին, վորպես հեղափոխության, վորը պետք ե իր զարգացման հենց առաջին օրերին միջազգային բնույթ ընդունի և վորը պետք ե վերաճի, վերածվի սոցիալիստական հեղափոխության:

Ռուսական բոլշևիկները չեյին կարող իրենց աշխատանքը սահմանափակել ռուսական հեղափոխության նեղ-ազգային շրջանակներով: Ընդհակառակն: Իրենց աշխատանքում նրանք դուրս յեկան այդ շրջանակներից, պայքարը փոխադրեցին միջազգային թատերաբեմ, բաց անելով իմպերիալիզմի խոցերը, ապացուցելով նրա կործանման անխուսափելիությունը, մերկացնելով միջազգային մենշևիզմը, կռելով բոլոր յերկրների պրոլետարիատի համար պայքարի ստրատեգիան ու տակտիկան:

Լենինը դեռ 1902 թվին գրում եր, վոր այժմ պատմությունը ռուսական մարքսիստների առաջ դրել ե «մոտակա խնդիր, վորը վոր յերկրի ել ուզում ե լինի պրոլետարիատի բոլոր մոտակա խնդիրներից ամենահեղափոխականն ե: Այդ խնդրի իրագործումը, վոչ միայն յեվրոպական, նմանապես նաև ասիական ռեակցիայի հզորագույն հենարանի տապալումը ռուսական պրոլետարիատին կդարձնի միջազգային հեղափոխական պրոլետարիատի ավանգարդը»:

Լենինի այդ մարգարեական նախագուշակումը նշանակալից չափով հաստատվեց 1905 թվի դեպքերով, յերբ մասսաների հեղափոխական շարժումը, պրոլետարիատի ղեկավարությամբ, մինչ այդ աննախընթաց ու-



ժի հասավ և ուժեղագույն արձագանք գտավ միջազգային թատերաբեմում: Դա լիովին հաստատվեց 1917 թվի հեղափոխության փորձով, վորն իրագործեց պրոլետարիատի դիկտատուրան և բաց արեց միջազգային կոմունիստական հեղափոխության դարաշրջանը:

Ահա թե ինչու Ռուսաստանը, վորը կատարել ե յերեք հեղափոխություն, սահմանել ե պրոլետարիատի դիկտատուրա, կառուցում ե սոցիալիզմ, դարձել ե բոլշևիզմի-լենինիզմի, միջազգային պրոլետարական հեղափոխության թեորիայի ու տակտիկայի հայրենիքը: Ահա թե ինչու Ռուսաստանի (այժմ ՍՍՀՄ-ի) պրոլետարիատը դարձավ միջազգային պրոլետարիատի ավանգարդը, իսկ ՀամԿ(բ)Կ առաջնորդները— Լենինը և նրա լավագույն ու ամենահավատարիմ աշակերտ Ստալինը դարձան Կոմինտերնի և համայն աշխարհի բանվոր դասակարգի հանրաճանաչ առաջնորդները:

## ՊԱՅՔԱՐԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Հեշտացնելու համար ռուսական պրոլետարիատին իր խնդիրները հասկանալու գործը, նրա ավանգարդին մարքսիզմ-լենինիզմի վոգով դաստիարակելու համար, անհրաժեշտ եր ամենից առաջ մերկացնել ինտելիգենցիայի վորոշ մասի մանր-բուրժուական գաղափարախոսությունը, այն մասի, վորը ցարական ճորտատիրական ռեժիմի նկատմամբ իր դժգոհությունը ծածկում եր մշուշոտ սոցիալիստական ֆրազով: Անհրաժեշտ եր մերկացնել այսպես կոչված «նարոդնիկներին»:

Նարոդնիկությունը, վորը կազմակերպված շարժում դարձավ անցյալ դարի 70-ական թվականներից, իր զարգացման ընթացքում անցել ե մի ամբողջ շարք ետապներ —«սոցիալիստական» պրոպագանդի նպատակով «ժողովրդի մեջ գնալը», անարխիստական խռովարարություն, տեռոր ընդդեմ ինքնակալական կարգի ներկայացուցիչների: 70-ական թվականներին նարոդնիկները հեղափոխական անձնուրաց աշխատանք եյին տանում: Սակայն, ինչպես ասում ե Լենինը, «նրանք հենվում եյին մի թեորիայի վրա, վորն ըստ եյության իսկի ել հեղափոխական թեորիա չե, և ընդունակ չեյին կամ չեյին կարող իրենց շարժումն անխզելիորեն կապել դասակարգային պայքարի հետ զարգացող կապիտալիստական հասարակության ներսում»:

Նարոդնիկները ժխտում եյին կապիտալիզմի զարգացման անխուսափելիությունը Ռուսաստանում, և միայն նրա վնասն եյին տեսնում: Նրանք չեյին համաձայնվում այն բանի հետ, վոր միայն կապիտալիզմի զարգացումն ե ստեղծում սոցիալիստական հեղափոխության պայմանները (կառուցվում ե խոշոր ֆաբրիկային արդյունաբերություն, ստեղծվում ե հատուկ դասակարգ—պրոլետարիատ): Այդ առնչությամբ նա-

բոդնիկները ժխտում էին պրոլետարիատի դասակարգային պայքարը, հիմնական հեղափոխական ուժը համարելով գյուղացիությունը և պրոլետարիատը լուծելով աշխատավորության ամբողջ մասսայում: Իսկ ապագա սոցիալիստական կարգի տնտեսական հիմքը Ռուսաստանում նրանք համարում էին ոչ թե խոշոր արդյունաբերությունը, այլ գյուղացիական համայնքը, որը ժառանգություն է մնացել հեռավոր անցյալից և հիմնված է հողի պարբերական վերաբաժանման և աշխատանքի ծայրահեղորեն ցածր արտադրողականության վրա: Միայն ռուսական գյուղացիությունը, դաստիարակված համայնքում, ընդունակ է յուրացնել սոցիալիզմի գաղափարները, և դրա համար ոչ միայն չի կարելի քայքայել գյուղացիական համայնքը, այլ անհրաժեշտ է ամեն կերպ պահպանել և զարգացնել այն,—ասում էին նարոդնիկները:

Ուրիշ խոսքով, նարոդնիկներն իրենց համարում էին առանձնահատուկ, զուտ ռուսական ձևի «սոցիալիզմի» ներկայացուցիչներ, որը ձգտում էր թույլ չտալ կապիտալիզմի մուտքը Ռուսաստան, ձգտում էր երկիրը չշարժել դեպի առաջ, այլ նրա զարգացումը շարժել հետ, դեպի հին համայնքը գյուղատնտեսության մեջ, դեպի հին արհեստը ընդդեմ ֆաբրիկայի արդյունաբերության մեջ, որն այդ աղքատ, տարկական երկիրը զարդարում էր, իդեալականացնում»: (Նարոդնիկության հիմնական գաղափարները հետո դրվեցին սոցիալիստ-հեղափոխականների ծրագրի հիմքում, որը, ինչպես հայտնի յե, դարձավ հակահեղափոխական կուսակցություն):

Սակայն բացի նարոդնիկության ռեակցիոն կողմից, որն առանձնապես սուր հայտաբերվեց 90-ական թվականներին, երբ նարոդնիկների հետնորդները հանուն մանր գյուղացիական սեփականության պահպանման ոտք դրին համաձայնողական տակտիկայի ուղին ցարիզմի վերաբերմամբ,—նարոդնիկներն ունեին նաև հեղափոխական դեմոկրատական կողմ, որն արտացոլում էր ամբողջ գյուղացիության բողոքը կալվածատերերի շահագործման դեմ, ինքնակալության ճնշման դեմ:

Անհրաժեշտ էր մերկացնել նարոդնիկների «սոցիալիզմը», որը հանգում էր մանր գյուղացիական սեփականության պաշտպանությանը, և միաժամանակ բաց անել նարոդնիկության հեղափոխական, առաջավոր, դեմոկրատական կողմը:

Դա արել է ընկ. Լենինը 1894 թվին «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները»» գրքում: Լենինը ցույց տվեց, որ հեղափոխության միակ ղեկավարը պրոլետարիատն է, որը կուսակցության ղեկավարությամբ պետք է անջատ «խռովություններից» անցնի կազմակերպված պայքարի՝ դաշնակցած գյուղացիության հետ: «Այն ժամանակ ռուսական բանվորը,—գրում էր այդ գրքում Լենինը,—բոլոր դեմոկրատական էլեմենտների գլուխ կանգնած լինելով, կտապալի աբսոլյուտիզմը և ռուսական



պրոլետարիատին (բոլոր երկրների պրոլետարիատի հետ մեկտեղ) բացահայտ քաղաքական պայքարի ուղիղ ճանապարհով կտանի դեպի հաղթական կոմունիստական հեղափոխություն»:

Լենինի հետ միասին նարոդնիկներին քննադատել է նաև Պլեխանովը, սակայն Լենինը Պլեխանովից այլ ձևով է քննադատել նարոդնիկներին: Հակառակ Պլեխանովի, որի համար գյուղացիությունը միշտ թշնամի յե պրոլետարիատին, Լենինը հանձին գյուղացու տեսնում էր պրոլետարիատի դաշնակցին: Ըստ Պլեխանովի դուրս էր գալիս, որ պրոլետարիատի և գյուղացիության շահերն անհաշտելի յեն, որ լիբերալ բուրժուազիան ավելի մոտ է պրոլետարիատին, քան գյուղացիությունը: Դա արդեն հենց իր սաղմում մենշևիկյան վերաբերմունք էր դեպի ռուսական հեղափոխությունը:

«Աշխատանքի ազատագրության խմբակի» — Պլեխանովի կողմից 1883 թ. արտասահմանում հիմնված առաջին ռուսական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության — հիմնադիրներից մեկը, հետագայում հայտնի մենշևիկ Աքսելրոդը հիշում է այսպիսի մի խոսակցություն, որը տեղի յե ունեցել նրա ու Լենինի միջև 1896 թվին: «Ձեզ մոտ (Աքսելրոդը դիմում է Լենինին) նկատվում է իմ գրած հոդվածին ուղղակի հակադիր տենդենցիա... Դուք մեր հարաբերությունները դեպի լիբերալները նույնացնում եք սոցիալիստների վերաբերմունքին դեպի լիբերալներն Արևմուտքում: Ես հենց հոդված եմ պատրաստում «Ռուսական կյանքի հարցերը» անունով ժողովածուի համար, որի մեջ ցանկանում եմ ցույց տալ, թե տվյալ պատմական մոմենտում պրոլետարիատի մերձավոր շահերը Ռուսաստանում զուգադիպում են հասարակության մյուս պրոգրեսիվ էլեմենտների շահերին»: Ուլյանովը (Լենինը) ժպտալով՝ որպես պատասխան նկատեց. «Գիտեք, Պլեխանովն իմ հոդվածների առթիվ միանգամայն նույն դիտողությունն արեց, նա պատկերավոր արտահայտեց իր միտքը.—դուք կռնակով եք դառնում դեպի լիբերալները, իսկ մենք՝ «երեսով»»:

«Դուք, այսինքն Լենինը, կռնակով եք դառնում դեպի լիբերալները, իսկ մենք, այսինքն Պլեխանովը և Աքսելրոդը, «երեսով»»—Պլեխանովի այս պատկերավոր արտահայտությունը պարունակում է Լենինի ու Պլեխանովի դեպի լիբերալ բուրժուազիան ունեցած մոտեցման մեջ նկատվող տարբերության ամբողջ էությունը: Եթե Լենինը պրոլետարիատին երեսով դարձնում էր դեպի գյուղացիությունը, որպես դեպի միակ վստահելի դաշնակիցը բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ, ապա Պլեխանովը երեսով դառնում էր լիբերալ բուրժուազիայի կողմը:

Նարոդնիկության քննադատողների թվում էին նաև այսպես կոչված «լեգալ մարքսիստները»: «Դրանք,—ասում է Լենինը,—բուրժուա-

կան դեմոկրատներ եյին, վորոնց համար խզումը նարոդնիկության հետ նշանակում եր քաղքենիական (կամ գյուղացիական) սոցիալիզմից անցնել վոչ թե պրոլետարական սոցիալիզմին, ինչպես մեզ համար, այլ բուրժուական լիբերալիզմին»: «Լեգալ մարքսիստները» ժխտում եյին պրոլետարիատի հեղափոխական պայքարի անհրաժեշտությունը, մարքսիզմից վերցնում եյին միայն մեկ դրույթ՝ Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման անխուսափելիության մասին և չեյին ուզում տեսնել, վոր կապիտալիզմի ներսում պայքար ե տեղի ունենում բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև: «Լեգալ մարքսիստները» պայքարում եյին կապիտալիզմի կործանման և պրոլետարիատի դիկտատուրայի անխուսափելիության մասին մարքսյան թեորիայի դեմ: Լենինը վոչնչացնող քննադատության յենթարկեց «լեգալ մարքսիզմի» բուրժուական եությունը (և առաջին հերթին նրա պարագլխին—Ստրուվեյին, ներկա թունդ սպիտակ բանդիտին, մոնարխիստին, վորն ապրում ե Պարիզում): Լենինը մերկացրեց բուրժուազիայի փորձերը՝ ոգտագործելու բանվորական շարժումը հոգուտ իր դասակարգային շահերի:

90-ական թվականների վերջին բավական լայն տարածվեց նաև մի այլ հոսանք—էկոնոմիզմը—վորը սոցիալ-դեմոկրատական շարժումը հարմարեցրեց բուրժուազիայի շահերին: «Եկոնոմիստները» ժխտում եյին բանվոր դասակարգի քաղաքական պայքարի անհրաժեշտությունը ինքնակալության դեմ: Նրանք գտնում եյին, վոր միայն բանվորության կենցաղի տնտեսական բարելավման, աշխատավարձի չնչին ավելացման համար մղվող պայքարը պետք ե լինի բանվորական շարժման հիմքը: Քաղաքական պայքարով պետք ե զբաղվի բուրժուազիան, պրոլետարիատը քաղաքականության հետ գործ չունի: «Եկոնոմիստները» վճռականորեն առարկում եյին այն բանի դեմ, վոր պրոլետարիատի կուսակցությունը նրա ղեկավար ավանգարդը լինի: Նրանք համարում եյին, վոր յեթե պրոլետարիատն անգիտակից ե, ապա նրան չպետք ե զարգացնել, այլ նրա առաջ դնել այնպիսի խնդիրներ, վորոնք նրան այդպես ել հասկանալի յեն: Այլ կերպ ասած, կուսակցությունը վոչ թե պետք ե պրոլետարիատին առաջ տանի, այլ նրա պոչից քարշ գա:

Այսպիսով «եկոնոմիստները» բանվորությանը քարոզում եյին հրաժարվել ցարիզմի դեմ պայքարելուց: Իսկ չե՞ վոր այդ ռեժիմը խեղդում եր բանվոր դասակարգի ամեն տեսակ կազմակերպությունը (վոչ միայն կուսակցական, այլև պրոֆմիութենական), զինված ուժով ջախջախում եր բանվորների յուրաքանչյուր գործադուլ, բանվորների և տերերի վորևե վեճի ժամանակ ոգնում եր վերջիններին: Պարզ ե, վոր ցարիզմի պայմաններում անհնարին եր բանվորության կենցաղի արմատական բարելավումը: Այն ժամանակ, յերբ Լենինի և նրա հետևորդների համար հանուն բանվորության տնտեսական պայմանների բարելավման պայքարը



պետք ե ոժանդակեր բանվոր դասակարգին քաղաքական պայքարում ներգրավելու,—«եկոնոմիստները» բանվորական շարժումը սահմանափակում եյին «հինգ կոպեկի» համար մղվող պայքարով:

«Եկոնոմիզմի իմաստն ե,—գրում եր Լենինը,—բանվոր դասակարգի հպատակեցումը (հանուն «զուտ բանվորական» խնդիրների) բուրժուական քաղաքականությանն ու գաղափարախոսությանը»: Այսպիսով եկոնոմիզմը կատարել ե այն դերը, վորը 1903 թվականից անցավ նրա ժառանգորդներին—մենշևիկներին:

Լենինը դեռ աքսորում սուր կերպով քննադատեց «եկոնոմիստներին», և հետագայում, յերբ ստեղծվեց արտասահմանում հրատարակվող «Իսկրա» թերթը, Լենինը, վորպես այդ թերթի գլխավոր ղեկավարներից մեկը, անդուլ պայքար մղեց եկոնոմիզմի դեմ:

«Ոժանդակել բանվոր դասակարգի քաղաքական զարգացմանը և քաղաքական կազմակերպությանը,—գրում եր Լենինը 1900 թվին,—մեր գլխավոր և հիմնական խնդիրն ե: Յուրաքանչյուր վոք, ով այդ խնդիրը յերկրորդ պլանի վրա յե մղում, ով նրան չի հպատակեցնում բոլոր մասնավոր խնդիրները և պայքարի առանձին ձևերը, նա կանգնում ե սխալ ճանապարհի վրա և լուրջ վնաս ե հասցնում շարժմանը: Այդ խնդիրը հետին պլանի վրա յեն մղում, նախ, նրանք, ովքեր կոչ են անում հեղափոխականներին առանձին դավադրական խմբակների ուժերով պայքարել կառավարության դեմ, յերկրորդ, նրանք, ովքեր քաղաքական պրոպագանդայի, ագիտացիայի և կազմակերպության բովանդակությունը սեղմում են, ովքեր հնարավոր և տեղին են համարում բանվորներին հյուրասիրել «քաղաքականությամբ» միայն նրանց կյանքի բացառիկ մոմենտներում, միայն հանդիսավոր դեպքերում...»:

Պատահականորեն չե, վոր առաջացավ «եկոնոմիզմը»: Նա յերևան յեկավ Արևմտյան Յեվրոպայում ոպորտունիզմի աճման հետ միաժամանակ: Դա կապիտալիզմի համեմատաբար խաղաղ զարգացման ժամանակաշրջանն եր, յերբ միջազգային սոցիալիստական շարժման մեջ, ընկ. Ստալինի արտահայտությամբ, պայքարի լեգալ ձևերը բարձրացվում եյին մինչև յերկինք և մտածում եյին լեգալությամբ «սպանել» կապիտալիզմը,—մի խոսքով, յերբ II Ինտերնացիոնալի կուսակցությունները ճարպակալում եյին և չեյին ուզում լրջորեն մտածել հեղափոխության մասին, պրոլետարիատի դիկտատուրայի մասին, մասսաների հեղափոխական դաստիարակության մասին»:

Լենինը, վորը պայքարի դրոշ բարձրացրեց «եկոնոմիզմի» դեմ և սոցիալիստ-հեղափոխականների—նարոդնիկության այդ հետնորդների դավադրականության դեմ, ի պաշտպանություն հեղափոխական մարքսիզմի, դրանով վոչ միայն դուրս յեկավ ռուսական ոպորտունիզմի դեմ,

այլ և ոպորտունիզմի դեմ միջազգային բանվորական շարժման մեջ, կռվելով միջազգային բոլշևիզմի թեորիան ու տակտիկան։

Անհրաժեշտ էին գաղափարական համառ պայքարի տարիներ ընդդեմ նարոդնիկների և հետո նրանց հետնորդների—սոցիալիստ-հեղափոխականների (էսեր)—կուլակային ունևոր գյուղացիության այդ կուսակցության,— ընդդեմ լեգալ մարքսիստների և «էկոնոմիստների», որպեսզի կազմակերպվեր բոլշևիզմը որպես քաղաքական մտքի հոսանք։ Անհրաժեշտ էին կազմակերպական համառ ջանքերի տարիներ, որպեսզի ստեղծվեր, կոփվեր Լենինի շուրջ համախմբված պրոլետարական հեղափոխականների խմբակ։

«Հին «Իսկրայի» պայքարը և «պոչականության» թեորիայի փայլուն քննադատությունը, տրված Լենինի «Ի՞նչ անել» բրոշյուրում,— ասում է ընկ. Ստալինը,—ոչ միայն ջախջախեցին այսպես կոչված էկոնոմիզմը, այլ նաև ստեղծեցին ռուսական բանվոր դասակարգի իսկական հեղափոխական շարժման թեորետիկական հիմունքները։ Առանց այդ պայքարի անիմաստ էր մտածել ինքնուրույն բանվորական կուսակցության ստեղծման մասին Ռուսաստանում և նրա ղեկավար դերի մասին հեղափոխության մեջ»։

## ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻՑ ԴԵՊԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Անցյալ դարի 90-ական թվականները կապիտալիզմի անսանձ զարգացման, բանվոր դասակարգի աճման և նրա պայքարի ծավալման տարիներ էին Ռուսաստանում։ Անտանելի շահագործումը, որին ենթարկվում էր բանվոր դասակարգը, չէր կարող նրա կողմից հետմղման փորձեր չառաջացնել ու առաջին հերթին գործադուլային շարժման ձևով։ 90-ական թվականների սկզբից գործադուլները մասսայական բնույթ են ստանում։ Եթե 1881 թվից մինչ 1886 թ. 6 տարվա ընթացքում գործադուլներին մասնակցող բանվորների թիվը ընդամենը 80 հազար հոգի էր, ապա 1894-ից մինչև 1899 թ. 6 տարվա ընթացքում գործադուլներին մասնակցողների թիվն արդեն հասնում է 450 հազարի ($5\frac{1}{2}$ անգամ ավելի)։ Սակայն գործադուլային շարժման աճն այնքան սարսափեցրեց ինքնակալությանը, որ նա 1897 թվին դիմեց բանվորական օրը $11\frac{1}{2}$ ժամից ավելացնելն արգելող օրենքի հրատարակմանը (մինչ այդ բանվորական օրը հաճախ անցնում էր 14 ժամից)։

Գործադուլային շարժման հետ միաժամանակ աճում էին նաև բանվորական քաղաքական զանազան խմբակները։

Ռուսաստանում առաջին բանվորական խմբակներն ու միությունները («Հարավ-ռուսական բանվորների միությունը»—1873—1875 թ.թ. և



«Հյուսիս-ռուսական բանվորական միությունը»—1877—1879 թ. թ.) դեռ գտնվում էին նարոդնիկության ուժեղ ազդեցության տակ։ Սակայն նրանց նշանակությունն այն է, որ նրանք բանվորների ինքնուրույն դասակարգային կազմակերպության ստեղծման փորձեր էին և աստիճանաբար կոփում էին բանվոր-առաջավորների թեև ոչ շատ նշանակալից, բայց կայուն կադրեր դասակարգային պայքարի համար ընդդեմ ցարիզմի և կապիտալիստական շահագործման։ 90-ական թվականների, բանվորական շարժման վերելքի մոմենտին, այդ խմբակներից ջոկվում են բանվոր դասակարգի ամենագիտակից տարրերը, որոնք հենարան են դառնում 1883 թվականին ստեղծված «Աշխատանքի ազատագրություն» խմբակի—մարքսիստական կազմակերպության համար։

Լենինի՝ հեղափոխության ուղին վրա գնելու մոմենտին, 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականների սկզբներին արդեն առաջ են գալիս մի շարք մարքսիստական խմբակներ ինչպես Պետերբուրգում, նույնպես և Ռուսաստանի մյուս խոշոր բանվորական կենտրոններում։ Բանվորական շարժումն այդ ժամանակամիջոցի ընթացքում նշանակալից քայլ էր արել դեպի առաջ, և, համեմատած նախորդ տարերային ժամանակաշրջանի հետ, նրան կարելի յե որոշ չափով գիտակցական համարել։ Լենինը մատնանշում է, որ 90-ական թվականների գործադուլները «հայտաբերում էին բանվորների և տերերի անտագոնիզմը (հակամարտությունը), սակայն բանվորները չունեին և չէին էլ կարող ունենալ իրենց շահերի և ժամանակակից ամբողջ քաղաքական և հասարակական կարգի անհաշտ հակադրության գիտակցությունը»։

Ահա այդ իրադարձության մեջ, բանվոր դասակարգի ակտիվության միշտ ավելի ու ավելի ուժեղացող հայտաբերման ժամանակ,— որպես արդյունք Լենինի բազմաթիվ ելույթների, որը կարողացավ իր հեղափոխական-մարքսիստական գործունեության առաջին իսկ հնգամյակում դնել և լուծել ռուսական և միջազգային հեղափոխական շարժման կարևորագույն հարցերը, 1895 թ. առաջ է գալիս «Բանվոր դասակարգի ազատագրման պայքարի միությունը», որի մեջ մտնում են Լենինը, Կրուպսկայան, Ռադչենկոն, Կրժիժանովսկին, Մարտովը (հետագայում մենշևիկների առաջնորդը) և մյուսները։ Լենինը թերթիկներ է գրում բանվորներին, աշխատում է խմբակներում և բանտում նստած՝ քաղաքական թեմաների շուրջ թռուցիկներ է գրում։

Ծագում է հեղափոխական մարքսիստների համագումար հրավիրելու միտքը։ Լենինը միության գործունեության գնահատականը տալով գրում էր.—«Մի՞թե այդ կազմակերպությունը հեղափոխական կուսակցության սաղմը չէ, որը հենվում է բանվորական շարժման վրա, ղեկավարում է պրոլետարիատի դասակարգային պայքարը, կապիտալի և բացարձակ միապետական կառավարության դեմ ուղղված պայքա-

րը, չկազմակերպելով վոչ մի դավադրություն, իր ուժերը քաշելով հատկապես սոցիալիստական և դեմոկրատական պայքարի միացումից, վորպես Պետերբուրգի պրոլետարիատի միասնական ու անբաժանելի դասակարգային պայքար»:

Հիմնվելով միության հաջող գործունեության վրա, Լենինն առաջադրեց հեղափոխական մարքսիստների համառուսական մեկ կուսակցության մեջ միացման գաղափարը: Սակայն, յերբ այդ ուղղությամբ առաջին գործնական քայլերն արդեն արվել եյին, Լենինը— 1895 թ. ձմռանը ձերբակալվեց և 1897 թ. գարնանը, համաձայն վոստիկանության դեպարտամենտի կարգադրության, հաստատված Նիկոլայ II ցարի կողմից, աքսորվեց Արևելյան Սիբիր, Շուշենսկ հեռավոր գյուղը: Մինսկում 1898 թվին կայացած առաջին համագումարը շատ փոքրաթիվ էր—տաս հոգուց պակաս, իսկ նրանց ընտրած կենտկոմը շուտով ձերբակալվեց: Դրա համար էլ առաջին համագումարին չհաջողվեց գործնականում կուսակցություն ստեղծել:

Միայն հինգ տարի հետո հրավիրվեց կուսակցության II համագումարը, վորը նախապատրաստվեց տեղերում Լենինի և նրա կողմնակիցների հսկայական թեորետիկական և կազմակերպական աշխատանքով:

Լենինն այդ ժամանակաշրջանում մշակում է ռուսական հեղափոխության արմատական հարցերը, ապացուցելով, վոր առաջիկա բուրժուական-դեմոկրատական հեղափոխության մեջ ղեկավար ուժը կլինի վոչ թե լիբերալ բուրժուազիան, այլ պրոլետարիատը, վորն իր հետևից կտանի գյուղացիությանը: Լենինը մշակում է նաև պրոլետարիատի հեղափոխական կուսակցության կազմակերպության հարցերը, նրա պայքարի ձևերն ու մեթոդները, կոփելով նոր տիպի կուսակցության հիմունքները, վորը նման չէ ոպորտունիստների ղեկավարած II Ինտերնացիոնալի կուսակցություններին: Լենինն այդ տարիներին պարզորոշ ձևակերպում է այն հոսանքի հիմունքները, վորը II համագումարում բոլշևիզմ անունն ստացավ:

Կուսակցության II համագումարում բաժանում տեղի ունեցավ կուսակցական շինարարության հիմնական հարցերի շուրջը, վորոնց ուղիղ լուծման համար Լենինը դեռ համագումարից առաջ պայքարում էր 3 տարի շարունակ: Նրանք, ովքեր Լենինի հետ միասին կողմնակից եյին կազմակերպական պինդ ստեղծելու կուսակցության մեջ վոչ-պրոլետարական, ինտելիգենտական էլեմենտների ներհոսման դեմ, ովքեր կողմնակից եյին կենտրոնացված, կարգապահ, միասնական հեղափոխական կուսակցության, վորն ընդունակ լինի առանց տատանման մասսաներին մարտի առաջնորդելու, սկսեցին կոչվել բոլշևիկներ (կուսակցության ղեկավար որգաններն ընտրելիս համագումարում վորպես մեծամասնություն կազմողներ): Իսկ նրանք, ովքեր կողմնակից եյին կու-



սակցության ընդլայնմանն ի հաշիվ մանր-բուրժուական տարրերի, կոչվեցին մենշևիկներ: Մենշևիկներն արտահայտում եյին մանր-բուրժուազիայի տատանումները, նրա յերկյուղը կենտրոնացված ղեկավարությունից, նրա անվստահությունը դեպի պրոլետարիատի ուժերը:

Շատերը պնդում եյին, վոր բոլշևիկները, Լենինի գլխավորությամբ, կազմակերպական հարցերի պատճառով բաժանվելով՝ ցուցաբերում են համառություն, վնասակար անհաշտություն, վոր նրանք հանցապարտ հերձվածողներ են և այլն: «Իսկրայի» խմբագրությունը, վորն ընտրված էր II համագումարի կողմից, պառակտվեց և «Իսկրան» մենշևիկների կողմից խլվեց: Լենինը մնաց մեն-մենակ, Լենինի դեմ դուրս յեկան բոլոր հին առաջնորդները—Պլեխանովը, Մարտովը, Աքսելրոդը, Զասուլիչը, Պոտրեսովը, վորոնք դարձան մենշևիկների առաջնորդները:

Սակայն մեր կուսակցության զարգացման հետագա ընթացքը ցույց տվեց, վոր Լենինը ճշմարիտ էր, վոր կազմակերպական հարցերի շուրջ ծագած տարաձայնությունները իրենց հիմքում ունեյին ռուսական հեղափոխության ուղիների տարբեր հասկացողությունները: Մենշևիկներին, վորոնք լիբերալ բուրժուազիայի մեջ տեսնում եյին ռուսական հեղափոխության ղեկավարին, հարկավոր չէր այնպիսի կուսակցություն, վորը կարողանար միաձուլել պրոլետարիատին, նրան դարձնել գյուղացիության առաջնորդը և հեղափոխության ղեկավարը: Առանց մենշևիկներից բաժանվելու չէր կարելի պրոլետարական հեղափոխական կուսակցություն ստեղծել:

Այսպես է այն ուղին, վորով անցավ բանվոր դասակարգի՝ Լենինի կողմից առաջնորդված ավանգարդը մինչև այն մոմենտը, վորի մասին Լենինը բազմիցս ասում է, վոր «բոլշևիզմը վորպես քաղաքական մտքի հոսանք և վորպես քաղաքական կուսակցություն գոյություն ունի 1903 թվից», վոր «բոլշևիզմն առաջացավ 1903 թվին մարքսիզմի թեորիայի ամենաամուր բազայի վրա»:

Տրոցկին II համագումարում մենշևիկների հետ միասին նույն բանակումն էր: Համագումարից հետո նա բաց թողեց «Մեր քաղաքական խնդիրները» գրքույկը: Այդ բրոշյուրում, Լենինի դեմ բամբասական հարձակումների հետ միասին, իր փայլուն արտահայտությունն էր գտել տարբերայնության թեորիան կուսակցական կազմակերպական հարցերում, ֆրակցիաների և խմբավորումների ազատության քարոզը, կուսակցության՝ վորպես առաջավոր ավանգարդի, պրոլետարիատի առաջնորդի՝ դերի ժխտումը, դիսցիպլինայի ժխտումը կուսակցության ներսում: Բոլշևիկյան կուսակցության դեմ հետագա պայքարում Տրոցկին գործադրում էր նույն սկզբունքները, վորոնք նա տվել է իր պլատֆորմում:

Բաժանվելով մենշևիկներից, միջազգային ոպորտունիզմի այդ ռուսական գործակալությունից, բոլշևիկները դրա հետ միասին վերցրին II Ինտերնացիոնալի մեջ պառակտում առաջացնելու գիծը:

II Ինտերնացիոնալի լիդերները պայքարեցին բոլշևիկների դեմ, ոժանդակելով մենշևիկներին՝ կուսակցության դեմ նրանց մղած պայքարում: Կարլ Կաուցկին գրում եր, որ ինքը վճռականորեն արտահայտվում ե հոգուտ Մարտովի և ընդդեմ Լենինի, որ կենտրոնացված կուսակցության սկզբունքը չի հարմարում Ռուսաստանին: Ավգուստ Բեբելն առաջարկեց իր ծառայությունները որպես «հաշտարարի», հայտարարելով, որ կազմակերպական հարցերի համար չարժե բաժանվել: Ռոզա Լյուքսեմբուրգը, որը գերմանական կուսակցության ձախ թևումն եր, արտահայտվեց հոգուտ մենշևիկների պոչականության և հարձակվեց Լենինի ու բոլշևիկների վրա:

Որ II Ինտերնացիոնալի հեղինակությունների յելույթը Լենինի դեմ բոլորովին էլ պատահական չեր, այլ Լենինի դեմ միջազգային ոպորտունիզմի ուժերի մոբիլիզացիայի լայն մտածված պլան եր, յերևում ե ի միջի այլոց Պոտրեսովի 1904 թ. մայիսի 24-ին Աքսելրոդին (յերկու հայտնի մենշևիկներ) գրած հետևյալ նամակից: Այդ նամակում Պոտրեսովը ուրախությամբ հայտնում ե Աքսելրոդին Կաուցկու՝ Լենինի դեմ յելույթ ունենալու մասին. «Այսպես, առաջին ռումբը նետված ե, և աստծու ոգնությամբ Լենինը հոդս կլինի: Յես մեծ նշանակություն եմ տալիս այն բանին, որ Լենինի դեմ կամպանիայի ընդհանուր պլան մշակվի: Յեթե պայթեցնում ենք նրան, ապա պայթեցնենք մինչև վերջը, մեթոդիկորեն, պլանաչափ: Ի՞նչպես հարվածել Լենինին: Ահա հարցը: Ամենից առաջ յես կարծում եմ, որ անհրաժեշտ ե նրա դեմ դուրս բերել հեղինակություններին—Կաուցկուն (կա արդեն) և Ռոզա Լյուքսեմբուրգին և Պարվուսին, որպեսզի մեր պղնձաճակատների (մենշևիկներն այսպես եյին կոչում բոլշևիկներին) ճակատին խփենք»:

Լենինն ընդունեց միջազգային ոպորտունիզմի՝ նրան ուղղած մարտահրավերը: Նա խարազանեց Բեբելի ուշացած հաշտվողական ջանքերի անսկզբունքայնությունը, փայլուն հոդվածով հրապարակ դուրս յեկավ Ռոզա Լյուքսեմբուրգի կազմակերպական սխալների դեմ: Այդ ժամանակ էլ Լենինը ճանաչեց Կաուցկուն: «Կաուցկին իրավունք չունի խոսելու իր անաչառության մասին,—գրում եր Լենինը 1905 թ. գարնանը,—նա միշտ էլ աչառու յե յեղել ներկա ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ներսում յելած պայքարի վերաբերմամբ, և նա, ով աչառու յե, լավ ե չխոսի անաչառության մասին, որպեսզի չմեղադրվի կեղծավորության մեջ»:

Բոլշևիկյան կուսակցությունը—նոր տիպի կուսակցությունը—իրեն հակադրեց ամբողջ II Ինտերնացիոնալին:



## ՊԱՅՔԱՐԸ ՅԵՐԿՈՒ ՖՐՈՆՏՈՎ—ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԵՆՔՆ Ե

«Մեր կուսակցության պատմությունը,—ասում ե ընկ. Ստալինը,—ներկուսակցական հակասությունների հաղթահարման և այդ հաղթահարման հիման վրա մեր շարքերի անշեղ ամրապնդման պատմությունն ե»:

Բանվոր դասակարգն իր կաշու վրա զգում ե իրեն շրջապատող ոչ-պրոլետարական տարրերի ազդեցությունը: Բանվոր դասակարգը միատարր չե: Արմատական պրոլետարները—դա բանվոր դասակարգի ամենահեղափոխական շերտն ե, կոմունիզմի ամենավստահելի հենարանը: Պրոլետարիատի յերկրորդ շերտը—դա մոտիկ անցյալում, ոչ պրոլետարական դասակարգերից, գյուղացիությունից, քաղաքային մանր բուրժուազիայից, ինտելիգենցիայից դուրս յեկածներն են: Կապիտալիզմի պայմաններում անխուսափելի յե գյուղացիության և քաղաքային մանր բուրժուազիայի (տնայնագործների, արհեստավորների, առևտրականների) հսկայական մասսաների քայքայումն ու աղքատացումը: Այդ շերտի հաշվին աճում ե բանվոր դասակարգը: Բնական ե, որ այդ նորեկները բանվոր դասակարգի մեջ բերում են իրենց մանր-բուրժուական գաղափարախոսությունը, իրենց ունակությունները, սովորույթները և նախապաշարմունքները: Հատկապես այդ շերտի միջոցով պրոլետարիատը հազար թելերով կապվում ե մանր բուրժուազիայի հետ և զգում ե նրա ազդեցությունը: Մանր-բուրժուական տարրերը շրջապատում ե պրոլետարիատին, ներթափանցելով նրա միջավայրը, նա բանվոր դասակարգի, հետևաբար և կուսակցության մեջ ե բերում իրեն յուրահատուկ տատանումներն ու յերերումները:

Վերջապես կա բանվոր դասակարգի վերնաշերտը, «բանվորական արիստոկրատիան», պրոլետարիատի ամենից ավելի ապահովված մասը: Բանվոր դասակարգի այդ «բուրժուական» վերնաշերտն ստեղծվում ե իմպերիալիստական յերկրների բուրժուազիայի կողմից ի հաշիվ գաղութների թալանի և բանվոր դասակարգի հիմնական մասսայի շահագործման: Այն միլիարդներից, որ բուրժուազիան ստանում ե գաղութային ժողովուրդների անլուր թալանից, նա վողորմելի փշրանքներ ե տալիս, որպեսզի կաշառի բանվոր դասակարգի վերնաշերտին, դարձնի նրան իր գործակատարը: Բանվորության այդ վաճառված և այլասերված վերնաշերտը գնում ե դեպի բուրժուազիան, համաձայնվում ե նրա հետ և հրաժարվում ե հեղափոխական պայքարից:

Հեղափոխական կազմակերպվածությունը և անհաշտությունը, հետևողականությունը և վճռականությունը, կայունությունն ու կարգապահությունը բանվոր դասակարգը դարձրել ե իր կուսակցության

լավագույն հատկությունները: Իսկ մանր-բուրժուական, անկայուն, օպորտունիստական էլեմենտները դրան հակադրում են կամ համաձայնողական թմրածությունը, տատանումը, լակեյությունը բուրժուազիայի առաջ, կամ էլ թե հեղափոխական «ձախ» ամպագոռ ֆրազը, պրոլետարական դիսցիպլինային հպատակվելու անկարողությունը կամ խուսափումը, հեղափոխական կայունության և պրոլետարական տոկունության բացակայությունը:

Մեր կուսակցության ամբողջ պատմությունը, հենց իր սաղմնավորման սկզբից, պայքար է բուրժուական ազդեցության այդ արտահայտությունների դեմ պրոլետարիատի վրա, պայքար է՝ օպորտունիզմի դեմ կուսակցության ներսում: Կուսակցությունը մշտական ամենաանհաշտ պայքար է մղել օպորտունիզմի բոլոր տեսակների դեմ և՛ Ռուսաստանում և՛ միջազգային թատերաբեմում, հանգամանքների առնչությամբ պայքարն առանձնապես ուժեղացնելով մեկ աջերի, մեկ «ձախերի» դեմ: Մեր կուսակցությունն աճել է ու ամրապնդվել այդ պայքարում, մաքրվելով օպորտունիստական էլեմենտներից և դրանով դառնալով ավելի ամուր, ավելի միատարր, համախմբված և կազմակերպված: Ռուսական հեղափոխության արմատական հարցերը միաժամանակ միջազգային հեղափոխության արմատական հարցերն են յեղել: Ահա թե ինչու, յերբ բոլշևիկները մարքսիստորեն դնում եյին ռուսական բանվորական շարժման ամենասուր հարցերը, մերկացնելով ամեն գույնի ռուսական օպորտունիստներին, նրանք խփում եյին միջազգային օպորտունիզմին:

Բոլշևիզմն այդ պայքարը մղում էր և՛ Ռուսաստանում և՛ միջազգային թատերաբեմում վոչ միայն բացահայտ, ակներև օպորտունիզմի դեմ, այլ և հաշտվողականության ու ցենտրիզմի դեմ (այսինքն դիմակավորված, թաքուն օպորտունիզմի դեմ), վորի ներկայացուցիչներն եյին II Ինտերնացիոնալի թեորետիկ Կաուցկին Արևմուտքում և Տրոցկին՝ Ռուսաստանում: II Ինտերնացիոնալի առաջնորդները բոլշևիկներին անվանում եյին «հերձվածողներ» և «կազմալուծողներ», ամեն կերպ դատապարտելով բոլշևիզմի գաղափարները: Սակայն բոլշևիկները գնում եյին իրենց ճանապարհով, չշփոթվելով այն բանից, վոր վոչ միայն II Ինտերնացիոնալի առաջնորդները, այլև նրա ձախ թևը պաշտպանում եյին մենշևիկներին մեր դեմ: Բոլշևիկների անդուլ պայքարը հանուն միջազգային հեղափոխության հիմնական հարցերի ճիշտ լուծման վերջիվերջո հանգեցրեց այն բանին, վոր III Ինտերնացիոնալում բոլշևիկների շուրջը համախմբվեցին միջազգային բանվորական շարժման լավագույն տարրերը:

Մեր կուսակցության զանազան թշնամիները և տատանվող տարրերը բոլշևիզմի ներսում, ցանկանալով սորացնել, գռեհկացնել այն



պայքարը, վորը Լենինը (բոլշևիկները) մղում էր օպորտունիզմի դեմ, կշտամբում եյին բոլշևիկներին կռվարարության, վեճ սիրելու, բծախնդրության համար: «Դա սխալ է,—ասում է Ստալինը,—բանն այստեղ կռվարարությունը չէ: Բանն այստեղ սկզբունքային տարաձայնությունների առկայությունն է, վորոնք առաջ են գալիս կուսակցության զարգացման ընթացքում, պրոլետարիատի պայքարի ընթացքում...»:

Լենինը, դեռ 1902 թվին, իր «Ի՞նչ անել» գրքում շատ պատկերավոր կերպով և հստակորեն ցույց տվեց օպորտունիստներով և հաշտվողականներով շրջապատված բոլշևիկների դիրքը: Նա գրում էր.

«Մենք գնում ենք սեղմ խմբով խորդուբորդ և դժվարին ճանապարհով, ամուր տված ձեռք-ձեռքի: Մենք բոլոր կողմերից շրջապատված ենք թշնամիներով և հարկադրված ենք համարյա միշտ գնալ նրանց կրակի տակով: Անբռնադատ վճռով մենք միացել ենք հատկապես նրա համար, վորպեսզի պայքարենք թշնամիների դեմ և վոչ թե նահանջենք հարևան ճահիճը, վորի բնակիչները հենց սկզբից կշտամբում եյին մեզ այն բանի համար, վոր մենք ջոկվել ենք ու կազմել առանձին խումբ և ընտրել ենք պայքարի ուղին և վոչ թե հաշտության ուղին: Յեվ ահա մեզանից վոմանք կանչում են.— գնանք դեպի ճահիճ! Իսկ յերբ նրանց ամաչեցնում են, նրանք առարկում են, թե՝ ինչպիսի հետամնաց մարդիկ եք դուք: Յեվ ի՛նչպես դուք չեք ամաչում բացասել ձեզ լավագույն ճանապարհի կոչելու մեր ազատությունը: Այո՛, պարոններ, դուք ազատ եք վոչ միայն կոչելու, այլև գնալու այնտեղ, ուր ձեզ հաճելի յե, թեկուզ և ճահիճ. մենք նույնիսկ գտնում ենք, վոր ձեր իսկական տեղը ճահիճն է, և մենք պատրաստ ենք մեր կարողության չափով օգնել ձեզ ձեր այնտեղ փոխադրվելուն: Սակայն այն ժամանակ բաց թողեք մեր ձեռքերը, մի՛ բռնեք մեզանից և մի՛ աղտոտեք ազատության մեծ խոսքը, վորովհետև չէ՞ վոր մենք ել ազատ ենք գնալու այնտեղ, ուր մենք ենք ցանկանում, ազատ ենք պայքարելու վոչ միայն ճահճի դեմ, այլ նրանց դեմ, ովքեր դառնում են դեպի ճահիճը»:

Մեր կուսակցության ամբողջ անցյալը հաստատում է այն դրույթը, վոր «Ռուսաստանում բանվոր դասակարգը չեր կարող իր կուսակցությունը կառուցել այլ կերպ, բան օպորտունիզմի բոլոր այլակերպությունների դեմ յերեսնամյա վճռական պայքարում» (Լենին):

## 2. ԲՈԼՇԵՎԻԶՄԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

### 1905 ԹԻՎԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՐՁՆ ԵՐ

Իր ավազակային, իմպերիալիստական գրավումների ժամանակ ցարական կառավարությունը Հեռավոր Արևելքում ընդհարվեց մի ուրիշ



Гос. Публ. Библиотека ССРА им. А. Мясникяна

իմպերիալիստական ավազակի—Ճապոնիայի հետ: Ռուս-ճապոնական պատերազմն սկսվեց 1904 թվի փետրվարին չինական և կորեական մի քանի հողամասերի համար, վորոնք հարկավոր չեյին վոչ ռուս և վոչ էլ ճապոնական ժողովրդին: Ցարական ինքնակալությունը հույս ուներ ռազմական-հայրենասիրական մոլուցքով հեռացնել աշխատավորության ուշադրությունը հեղափոխական շարժումից: Սակայն այն պարտությունները, վորոնք ցարիզմը կրեց ճապոնացիների հետ մղած կռվում, ինքնակալության վերաբերմամբ ոպոզիցիոն կերպով տրամադրեցին նույնիսկ բուրժուազիայի ու նրա ինտելիգենցիայի նշանակալից շերտերին:

«Քաղաքական ճգնաժամի զարգացումը Ռուսաստանում,—գրում էր Լենինը 1904 թ.—այժմ ամենից ավելի կախումն ունի Ճապոնիայի հետ տարվող պատերազմի ընթացքից: Այդ պատերազմը շատ ավելի մերկացրեց և մերկացնում է ինքնակալության նեխվածությունը, շատ ավելի թուլացնում է նրան ֆինանսական և ռազմական տեսակետից, շատ ավելի ըկում և ապստամբության մղում տանջված ժողովրդական մասսաներին, վորոնցից այդ հանցավոր պատերազմն այդքան անվերջ զոհեր է պահանջում»:

Ժողովրդական մասսաների դժգոհությունը, պատերազմի շարունակման հետ զուգընթաց, ավելի ու ավելի աճեց: Պրոլետարիատն սկսեց դուրս գալ վորպես նախաձեռնակ ինքնակալության դեմ մղվող պայքարում: Տնտեսական հողի վրա ծագած գործադուլները հաճախ վերածվում եյին քաղաքականի:

Հունվարի 9-ի դեպքերը 1905 թ. հեղափոխության սկիզբը հանդիսացան: Հունվարի 3-ին Պուտիլովի գործարանի բանվորները գործադուլ սկսեցին, պահանջելով աշխատանքի ընդունել անարդար կերպով հեռացված չորս բանվորներին: «Պուտիլովի գործարանում հունվարի 3-ին սկսված գործադուլը,—գրում էր Լենինը,—բանվորական շարժման ամենահոյակապ յերևույթներից մեկն է»: Բանվորական մասսաների տնտեսական թշվառությունն այնքան մեծ էր, նրանց դժգոհությունն ու զայրույթը այնքան ուժեղ, վոր 4 բանվորների հեռացումից զայրացած պուտիլովցիների պրոլետարական մասսան վոչ միայն մենակ ինքը դուրս յեկավ, այլև իր հետևից տարավ Պետերբուրգի բանվորության մեծ մասին: Պիտերի պրոլետարները քահանա Գապոնի ազդեցության տակ միտք հղացան պետիցիայով (խնդիրք, բողոք) «ցար-հայրիկի» մոտ գնալու: Այդ պետիցիայում բացի մի շարք տնտեսական պահանջներից կային նաև քաղաքական պահանջներ: Բանվորության հիմնական մասսան չէր հասկանում, վոր ցարը տիրող դասակարգերի ներկայացուցիչն է, հատկապես կալվածատերերի ներկայացուցիչը, վորոնք հազար թելերով կապված եյին խոշոր բուրժուազիայի հետ: Բանվորական մասսան կարծում



էր, վոր ցարը չի իմանում իրենց ծանր վիճակի մասին, իսկ յեթե իմանա, կվոչնչացնի նրանց բոլոր թշվառությունները: Տասնյակ հազարավոր բանվորներ, իրենց կանանց և յերեխաների հետ, խաչվառներով, խաչերով և ցարական նկարներով գնացին դեպի ցարի պալատը: Սակայն ցարը նրանց իր մոտ չընդունեց և զինվորների համազարկերով դիմավորեց «նահապետական քահանայի կողմից ղեկավարված անկիրթ, անգրագետ բանվորներին» (Լենին): Թափվեց բանվորական արյունը, հազարներով ընկան պրոլետարները, նրանց կանայքն ու յերեխաները: Այն բանվորները, վորոնք դեռ առավոտյան հավատքով և հույսով գնում եյին ցարի մոտ, յերեկոյան արդեն բարիկադների վրա կռվում եյին նրա զորքերի դեմ:

«...Բանվորության և գյուղացիության մասսաները,—գրում էր այն ժամանակ Լենինը,—վորոնք դեռ հույսի նշույլ եյին պահել դեպի ցարը, չեյին կարող ապստամբության դիմել: Հունվարի 9-ից հետո մենք իրավունք ունենք ասելու, վոր նրանք այժմ կարող են դիմել և կդիմեն ապստամբության: «Ցար-հայրիկն» իր արյունոտ հաշվեհարդարով անզեն բանվորների հետ ինքը նրանց մղեց բարիկադներ բարձրանալու և բարիկադային կռվի առաջին դասերը տվեց: «Ցար-հայրիկի» դասերը իզուր չանցան...Բանվոր դասակարգը քաղաքացիական կռվի մեծ դաս ստացավ. մի որվա մեջ պրոլետարիատի հեղափոխական ապստամբությունն առաջ գնաց այնպես, ինչպես չէր կարող գնալ գորշ, առորյա, ծեծկված կյանքի ամիսների և տարիների ընթացքում»:

1905 թվի հունվարի 9-ի արյունոտ կիրակիի դեպքերի նշանակությունն այնքան մեծ էր (մենք այն նշում ենք սգո որով հունվարի 22-ին—նոր տոմարով), վոր նրա արձագանքը տարածվեց ամբողջ Ռուսաստանում, ավելի քան մեկ միլիոն բանվոր պայքարի հանելով: Գործադուլային շարժումն ընդգրկեց լայնագույն մասսաներին: Բարձրացավ նմանապես գյուղացիական շարժման ալիքը կալվածատերերի դեմ:

1905 թվի հեղափոխությունը բաց արեց կալվածատերերի և գյուղացիության միջև յեղած հիմնական հակասությունները: Մի բևեռում կային 10 միլիոն գյուղացիական տնտեսություններ, վորոնք միասին ունեյին 72,9 միլիոն դեսյատին հող, իսկ մյուսում՝ 28 հազար կալվածատերեր, վորոնցից յուրաքանչյուրն ուներ 500 և ավելի դեսյատին հող, իսկ միասին վերցրած—62 միլիոն դեսյատին:

Հեղափոխական շարժումն անցավ նաև բանակը: «Հեղափոխության ժամանակ գործադուլային և գյուղացիական շարժման ալիքի յուրաքանչյուր բարձրացումը,—գրում էր Լենինը,—ուղեկցվում էր զինվորների ապստամբություններով՝ Ռուսաստանի բոլոր ծայրերում: Նրանց մեջ ամենահայտնին ապստամբությունն է Սև ծովի «Կնյազ Պատյոմկին» զրահանավի, վորն ընկնելով ապստամբների ձեռքը, մասնակցեց Ոդե-

սայի հեղափոխությանը և հեղափոխության պարտությունից և ուրիշ նավահանգիստներ գրավելու անհաջող փորձից (օրինակ, Թեոդոսիան Ղրիմում) հետո Կոնստանցայում անձնատուր յեղավ ռումինական իշխանություններին»:

1905 թ. գարնանը արտասահմանում հավաքված՝ մեր կուսակցության III բայլշևիկյան համագումարը մի շարք վորոշումներ ընդունեց հեղափոխության զինյալ ուժերի կազմակերպման մասին, զինյալ ապստամբության նախապատրաստվելու մասին, ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին: Ելնելով այն բանից, վոր գյուղացիությունը պրոլետարիատի դաշնակիցն է հեղափոխության մեջ, համագումարն իր վորոշումներում մատնանշեց, վոր կուսակցությունը կոժանդակի գյուղացիությանը նրա հեղափոխական պայքարում մինչև ամբողջ կալվածատիրական հողի գրավումը և գյուղացիական հեղափոխական կոմիտեների ստեղծումը, վորոնք տեղերում պետք է դառնան հեղափոխական իշխանության օրգանները:

«Պրոլետարիատը հուզվում է անընդհատ,—գրում էր Լենինը,—վոչ մի րոպե հանգիստ չտալով թշնամուն, հարձակվելով առավելապես գործադուլների միջոցով, խուսափելով ուղղակի ընդհարումներից ցարիզմի զինյալ ուժերի հետ, նախապատրաստելով իր ուժերը մեծ վճռական մարտի համար...

Բացի ապստամբության ընդհանուր քաղաքական նախապատրաստությունից, առաջադրվում է ապստամբության համար անմիջապես կազմակերպվելու և սպառազինվելու, հատուկ (մարտական) խմբեր կազմակերպելու լոզունգը, վորովհետև շարժումը արդեն հասցրել է զինյալ ապստամբության անհրաժեշտությանը...»:

Պրոլետարիատը նախապատրաստվում էր մեծ, վճռական մարտի: Եվ այդ նախապատրաստությունն արտահայտվեց 1905 թվի հոկտեմբերյան ընդհանուր գործադուլով, վորին մասնակցում էր մոտ մի միլիոն մարդ: Նա ընդգրկեց բոլոր յերկաթուղիները և արդյունաբերական կենտրոնները, ծավալվեց մինչև ամենախուլ անկյունները, առաջ բերեց հեղափոխական շարժման հետագա, ցարիզմի պայմաններում աննախընթաց աճ:

Ցարական կառավարությունը, վորը կաթվածահար էր յեղել գործադուլով (նա ի վիճակի չէր օգտագործելու վոչ յերկաթուղին, վոչ հեռագիրը և այլն), 1905 թ. հոկտեմբերի 17-ին ամեն տեսակ ազատություն խոստացող մանիֆեստ հրապարակելով փորձ արեց խաբելու բանվորական մասսաներին, գրավելու լիբերալ բուրժուազիային, իր կողմը պահելու բանակը:

«Հակառակորդը խուսափեց լուրջ ճակատամարտից,—գնահատեց դրությունը մանիֆեստից հետո Լենինը,—թշնամին նահանջեց, ճակատամարտի դաշտը թողնելով հեղափոխական ժողովրդին, նահանջեց դեպի նոր դիրք, վորը նրան թվում է ավելի ամրացրած և վորի վրա ինքը հույս ունի ավելի վստահելի ուժեր հավաքելու, համախմբելու ու աշխուժացնելու նրանց, հարձակման համար լավագույն մոմենտ ընտրելու...

Բանվորները յերբեք չեն մոռանա ցարի կապիտուլյացիայի հարկադրական բնույթը: Բանվորները յերբեք չեն մոռանա,—նախազգուշացնում էր Լենինը,—վոր միայն մասսաների ուժով, իրենց կազմակերպվածության ուժով, իրենց միասնականությամբ, իրենց հերոսությամբ նրանք ցարիզմից նվաճեցին ազատության ճանաչումը թուղթ-մանիֆեստի վրա, կնվաճեն նաև գործնականում... Հեղափոխական պրոլետարիատը բերեց առաջին մեծ հաղթանակին՝ քաղաքային հեղափոխությանը: Նա պետք է այժմ ընդլայնի և խորացնի հեղափոխության բազան՝ այն տարածելով գյուղի վրա... Հեղափոխության հաջողությունը կախված է պրոլետարիատի և գյուղացիության այն մասսաների չափից, վորոնք կբարձրանան նրա պաշտպանության և նրա ավարտման համար»:

Այսպես եյին գնահատում բայլշևիկները, հեղափոխական պրոլետարները, ցարական մանիֆեստի էությունը, ի պատասխան դրան ուժեղացնելով հեղափոխական աշխատանքը:

Հոկտեմբերյան գործադուլի ժամանակ արդեն արդյունաբերական կենտրոններում բանվորական պատգամավորական խորհուրդներ սկսեցին առաջանալ: Ռուսաստանում և համայն աշխարհում բանվորական պատգամավորների առաջին խորհուրդը—մասսաների հեղափոխական ստեղծագործության այդ արդյունքը—առաջացավ Իվանովո-Վոզնեսենսկում, ցարական Ռուսաստանի տեքստիլ ռայոնում՝ յոթանասունօրյա գործադուլի հետևանքով:

«Բանվորական պատգամավորների խորհուրդները,—գրում էր Լենինը,—մասսայական անմիջական պայքարի օրգանները... առաջացան վորպես գործադուլային պայքարի օրգաններ: Նրանք անհրաժեշտության ճնշման տակ շատ շուտ դարձան կառավարության դեմ ընդհանուր հեղափոխական պայքարի օրգաններ: Նրանք անսանձելիորեն, դեպքերի զարգացման և գործադուլների՝ ապստամբության փոխվելու ուժով, վերածվեցին ապստամբության օրգանների»:

1905 թ. դեկտեմբերի սկզբին ձերբակալվեց բանվորական պատգամավորների Պետերբուրգի խորհրդի գործադիր կոմիտեն: Ի պատասխան դրան ամբողջ Ռուսաստանում ընդհանուր գործադուլ հայտարարվեց: Սակայն Պետերբուրգի պրոլետարիատը, նախորդ ամիսների պայքարից հյուծված, կազմալուծված իր պատգամավորների ձերբակալությամբ և նոր գործկոմի անվճռականությամբ, վորը մեծ մասամբ կազմված

եր մենշևիկներից, չկարողացավ գործադուլային կռիվը հասցնել բարձրագույն աստիճանի և այն դարձնել հաղթական զինյալ ապստամբություն: Այդ խնդիրը վիճակվեց Մոսկվային, նմանապես նաև Ռուսաստանի հարավին և ծայրամասերին (մերձբալթյան յերկրամաս, Լեհաստան, Կովկաս), վորտեղ ազգային ճնշումն ավելի ծանրացրել եր առանց այն էլ անտանելի քաղաքական լուծը:

«Թող քնից դիպի գործադուլ,
Գործադուլից—զինյալ ապստամբություն,
Ապստամբությունից—հաղթություն,
Այսպես է մեր ուղին,
Բանվոր դասակարգի ուղին»,

ասված եր բայլշևիկների Մոսկվայի կոմիտեյի Թռուցիկում:

Սակայն բանվորների դեկտեմբերյան ապստամբությունը Մոսկվայում պարտություն կրեց: Չնայած Մոսկվայի պրոլետարիատի, հատկապես Կրասնայա Պրեսնյայի բանվորների հերոսական, անձնուրաց պայքարին,—ցարական զորքերին հաջողվեց զինաթափել Մոսկվայի պրոլետարիատին, քանդել Պրեսնյայի բարիկադները, գնդակահարել բանվոր-դրուժիննիկներին (ջոկատայիններին) և Մոսկվայից հետո ճնշել ապստամբությունը նաև մյուս քաղաքներում: Դեռ դրանից առաջ ճնշվել եյին մի շարք զինվորական ապստամբություններ (Կրոնշտատում, Սեվաստոպոլում և այլն):

Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբության ճնշումը նշանակում եր հեղափոխության պարտություն: Այդ մոմենտից Ռուսաստանը թևակոխեց ռեակցիայի աստիճանական, սակայն վճռական հաղթանակի շրջան, վորը ժողովրդից մեկը մյուսի հետևից խլեց հեղափոխության նվաճումները:

Ի՞նչն եր հեղափոխության պարտության պատճառը:

Գյուղացիական շարժումը, վորը վատ եր կազմակերպված և անբավարար չափով եր կապված պրոլետարիատի կուսակցության հետ, ինչպես տեմպի, նույնպես և կազմակերպվածության տեսակետից մեծապես հետ եր մնում բանվորական քաղաքից: Գյուղացիությունը նոր եր սկսում հեղափոխականանալ, նրա պայքարը չկարողացավ բավարար չափով վարակել ցարական բանակը, վորն իր կազմով գյուղացիական բանակ եր: Բանակը հիմնականում ինքնակալության ձեռքում մնաց:

Իսկ ինքնակալությունը, միջազգային իմպերիալիզմի օժանդակությամբ, իր կողմը գրավեց բանվորական շարժման թափից սարսափած լիբերալ բուրժուազիային, ազատության մասին կեղծ մանիֆեստի շնորհիվ վորոշ հանգիստ ձեռք բերեց և ոգտվեց նրանից իր ուժերը, մասնավորապես սև հարյուրյակները կազմակերպելու համար:

Սև հարյուրյակները բաղկացած եյին քաղաքների խանութպաններից և բասյակներից, վորոնք ինքնակալության կողմն եյին գրավվել ինչպես դրամական լողունգներով ընդդեմ հրյաների, նույնպես և ուղղակի կաշառքով: Սև հարյուրյակներն աշխատեցին: Կոտորածների, ջարդերի և անլուր գազանությունների լուրերը շարունակ տեղում եյին Ռուսաստանի բոլոր ծայրերից: Տիրեց սպիտակ տեռորը: Վորտեղ հնարավոր եր, վոստիկանությունը բարձրացնում եր և կազմակերպում կապիտալիստական հասարակության տականքներին թալանի և բռնության համար, հարբեցնելով քաղաքի բնակչության թափթփուկներին, կազմակերպելով հրեյական ջարդեր, հորդորելով ծեծելու բանվորներին և ուսանողներին:

Պրոլետարիատը մենակ չկարողացավ բավարար ուժ հակադրել ինքնակալությանը: Մի շարք վայրերում ապստամբությունները անբավարար եյին նախապատրաստված շնորհիվ մենշևիկների կողմից նրանց ձախողմանը և տեղի եյին ունենում տարբեր ժամանակներում, վորն ինքնակալությանը հնարավորություն եր տալիս հակառակորդին մաս առ մաս հարվածելու:

1905 թվի հեղափոխությունը մեծ նշանակություն ունեցավ: 1905 թվի հեղափոխության նշանակությունն այն է, վոր նա առաջին անգամ թափահարեց, քաղաքական պայքարի ասպարեզ հանեց բանվորական և գյուղացիական մասսաներին, կազմակերպեց նրանց, պայքարի սովորեցրեց, ցույց տվեց նրանց, թե ո՛վ է հեղափոխության առաջնորդը (բայլշևիկները), և ո՛վ է նրա թշնամին (լիբերալ բուրժուազիան, մենշևիկները)—և այդ ամենով ապահովեց 1917 թ. հաղթանակը: Դրա համար էլ Լենինը 1905 թիվը կոչեց1917 թվի փորձ:«Առանց 1905 թվականի գլխավոր փորձի,—ասում եր Լենինը,—Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն անհնարին կլիներ»: 1905 թվի հեղափոխության միջազգային նշանակությունն այն եր, վոր դա իմպերիալիզմի դարաշրջանի առաջին հեղափոխությունն եր: Նա հսկայական ազդեցություն գործեց բանվորական շարժման վրա Յեվրոպայում և զարթեցրեց Արևելքի ժողովուրդներին, վորոնք Ռուսաստանի որինակով հեղափոխություն արին Թյուրքիայում, Պարսկաստանում և Չինաստանում:

## 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԴԵՄ

Լենինը սովորեցրել է, վոր ռուսական առաջին հեղափոխության հիմնական խնդիրը—պայքարն է հանուն հեղափոխական իշխանության ստեղծման, հանուն պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի իրագործման՝ պրոլետարիատի

ղեկավարության անառարկելի պայմանով: Այդ դիկտատուրայի զենքը պետք է հանդիսանա ժամանակավոր հեղափոխական կառավարությունը, վորպես ժողովրդական ապստամբության օրգան: Այդ կառավարությունից պրոլետարիատը կպահանջի մերձակա քաղաքական և տնտեսական բարեփոխությունների իրագործում՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության շրջանակներում,—հանրապետության հռչակում, ամեն տեսակ ազատությունների (խոսքի, մամուլի, ժողովների և այլն) ապահովում, ութժամյա բանվորական օրվա սահմանում, ճորտատիրության մնացորդների վոչնչացում գյուղում, կալվածատիրական հողերի բռնագրավում, պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգությունների ինքնորոշման իրավունքի ճանաչում և այլն:

Սակայն Լենինը մատնանշում էր, վոր պրոլետարիատը կանգ չի առնի կես ճանապարհին, վոր բոլշևիկները ամբողջ ուժով կօգնեն վողջ գյուղացիությանը՝ հեղափոխությունը դեմոկրատական դարձնելու (այսինքն՝ տապալելու ցարին և կալվածատերերին), վորպեսզի դրանով ավելի հեշտ լինի պրոլետարիատին անցնել բարձրագույն խնդրին — սոցիալիստական հեղափոխության, կապիտալիզմի տապալման: «Պրոլետարիատը,— գրում էր Լենինը,— պետք է մինչև վերջը հասցնի դեմոկրատական հեղաշրջումը, միացնելով իրեն գյուղացիական մասսային, վորպեսզի ուժով ճնշի ինքնակալության ընդդիմադրությունը և չլատի բուրժուազիայի անկայունությունը: Պրոլետարիատը պետք է սոցիալիստական հեղաշրջում կատարի, միացնելով իրեն բնակչության կիսապրոլետարական էլեմենտների մասսան, վորպեսզի ջախջախի բուրժուազիայի ընդդիմադրությունը և չլատի գյուղացիության ու մանր բուրժուազիայի անկայունությունը»:

Ուշացած բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը Ռուսաստանում, հենց իր ուշացման պատճառով, պրոլետարական հեղափոխության մի ամբողջ շարք կողմեր հայտաբերեց: Նրա հեգեմոնը բանվոր դասակարգն էր: Նա իր առաջընթաց շարժման մեջ գործադրում էր պայքարի այնպիսի բնորոշ պրոլետարական մեթոդներ, ինչպիսիք են ընդհանուր գործադուլը և զինված ապստամբությունը: Նրա զարգացման ընթացքում առաջացան ապագա պրոլետարական դիկտատուրայի օրգանները — բանվորական պատգամավորների խորհուրդները: Նա հայտաբերեց հեղափոխության մեջ պրոլետարական կուսակցության ղեկավար դերի հսկայական նշանակությունը: 1905 թվի բուրժուական – գյուղացիական հեղափոխությունը հատուկ այդ պրոլետարական գրոշմի մեջ բոլշևիկները տեսնում եյին նրա (1905 թ. հեղափոխության) համաշխարհային – պատմական նշանակությունը:

Այդ բոլոր հարցերի շուրջ բոլշևիկները վճռական պայքար եյին մղում մենշևիկների դեմ:



Մենշևիկները մերժում եյին հեղափոխության սոցիալիստականի վերաճելու պլանը, մեջտեղից վերցնում եյին զինված ապստամբության հարցը, բացասում եյին հեղափոխության մեջ դաշինքը գյուղացիության հետ, հեղափոխության մեջ ղեկավար դերը տալիս եյին բուրժուազիային: Մենշևիկները փորձում եյին պրոլետարիատը հպատակեցնել բուրժուազիային, համոզել պրոլետարիատին, վոր հեղափոխության մեջ ղեկավար ուժը պետք է լինի լիբերալ բուրժուազիան:

Վորովհետև այժմ բուրժուական հեղափոխություն է ծավալվում, ասում եյին մենշևիկները, ապա պետք է բուրժուազիային հնարավորություն տալ ղեկավարելու կառավարությունը, իսկ պրոլետարիատը թող ոպոզիցիա կազմի իր շահերի պաշտպանության համար: Այդ մենշևիկյան տեսակետը նշանակում էր հեղափոխության բախտի լիակատար վստահումը բուրժուազիային, վորը հեղափոխական ճանապարհի վրա կանգնելու վոչ մի ցանկություն չուներ, այլ միայն փորձում էր պրոլետարիատի կռնակի հետև ցարիզմից վորևէ բան պոկել իրեն համար, համաձայնության գալ նրա հետ՝ պայքարելու ընդդեմ բանվոր դասակարգի և հեղափոխության մեջ նրա դաշնակցի — գյուղացիության:

Վերաճման մասին մարքսիստական-լենինյան ուսմունքին մենշևիկ Տրոցկին 1905 թվին և հետագայում՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, հակադրեց իր «պերմանենտ» (անընդհատ) հեղափոխության թեորիան: Տրոցկին (ինչպես և մենշևիկները) հաշվից դուրս էր գցում գյուղացիությանը, հնարավոր էր համարում դեմոկրատական հեղափոխության մեջ յոլա գնալ առանց գյուղացիության ոգնության, հանձին գյուղացիության չէր տեսնում և չէր ցանկանում տեսնել պրոլետարիատի դաշնակցին: Նա պնդում էր, վոր «պրոլետարիատն իրագործելով իր դիկտատուրան, թշնամական ընդհարման կհանդի» գյուղացիության լայն մասսաների հետ:

Յելնելով այդ մենշևիկյան հայացքներից, «պոռոտախոս Տրոցկին» (Լենինն այսպես էր կոչում նրան այն ժամանակ) պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական – դեմոկրատական դիկտատուրայի բոլշևիկյան լոզունգի դեմ առաջադրեց «առանց ցարի, իսկ կառավարությունը բանվորական» լոզունգը: Դա նշանակում էր հեղափոխություն առանց գյուղացիության և ընդդեմ գյուղացիության, հետևաբար նաև հեղափոխության տապալման անխուսափելիություն:

Տրոցկին ինքն այդ խոստովանում և ուղղակի գրում էր. «Առանց յեվրոպական պրոլետարիատի ուղղակի պետական ոգնության Ռուսաստանի բանվոր դասակարգը չի կարող իշխանության գլուխ մնալ»: Դրանով իսկ նա խորհուրդ էր տալիս հետաձգել հեղափոխությունը, մինչև վոր Յեվրոպայում բանվորներն իշխանությունը վերցնեն իրենց ձեռքը:

Լենինը «պերմանենտ հեղափոխության» տրոցկիստական թեորիան բնութագրել է վորպես գյուղացիական շարժումից «ցատկոտումն», վորպես «իշխանության զրավելու խաղ»: Ընկ. Ստալինը զարգացնելով Լենինի այդ մտքերը, արդեն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից և տրոցկիզմի կրկնակի յելույթներից հետո, մատնանշել է, վոր ռուսական «պերմանենտնիկների» եյությունը կայանում է «վոչ միայն գյուղացիության դերի թերագնահատության մեջ, այլև պրոլետարիատի ուժերի ու ընդունակությունների թերագնահատման մեջ՝ գյուղացիությանն իր հետևից տանելու հարցում, պրոլետարիատի հեգեմոնիայի գաղափարին չհավատալու մեջ»:

Ինչպես կուսակցության դերի հարցում, նույնպես և 1905 թ. հեղափոխության գնահատության մեջ բայլշևիկներն իրենց հակադրել են II Ինտերնացիոնալին: Միջազգային մենշևիզմի լիդերները (Կաուցկի) դեմ եյին հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի և հեղափոխությունը սոցիալիստականի վերածելու լոզունգին:

«Պերմանենտ հեղափոխության» կիսամենշևիկյան թեորիան Տրոցկին փոխ առավ Պարվուսից և Ռոզա Լյուքսեմբուրգից (II Ինտերնացիոնալի ձախ թևը):

Այդ բոլոր ոպորտունիստական հոսանքներն ու խմբերը չեյին հասկանում այն, վոր բուրժուական և դեմոկրատական հեղափոխության միջև չի կարելի արհեստական պատ դնել, թեև չի էլ կարելի նրանց միմյանց խառնել: Նրանք կամ խառնում, խճճում եյին, չեյին կարողանում տարբերել բուրժուական — դեմոկրատական ու սոցիալիստական հեղաշրջումը, կամ թե նրանց միմյանցից բաժանում եյին չինական պարսպով: Հանճարեղ, լիովին խորիմաստ է 1919 թվին Լենինի արտահայտածը վերածման հարցի մասին:

«Դուրս յեկավ ճիշտ այնպես, ինչպես մենք ասում եյինք: Հեղափոխության ընթացքը հաստատեց մեր դատողության ճշտությունը,— գրում եր Լենինը՝ հենվելով իր 1905 թվին ասածներին,— Նախ «ամբողջ» գյուղացիության հետ ընդդեմ միապետության, ընդդեմ կալվածատերերի, ընդդեմ միջնադարի (և այդքանով հեղափոխությունը մնում է բուրժուական, բուրժուական-դեմոկրատական): Հետո չքավորագույն գյուղացիության հետ, կիսապրոլետարիատի հետ, բոլոր շահագործվողների հետ՝ ընդդեմ կապիտալիզմի, այդ թվում նաև գյուղական հարուստների, կուլակների, սպեկուլյանտների դեմ, և այդ չափով հեղափոխությունը կդառնա սոցիալիստական: Փորձել չինական արհեստական պարիսպ դնել մեկի և մյուսի միջև, առանձնացնել մեկը մյուսից վորևե բանով, բացի պրոլետարիատի նախապատրաստման աստիճանից և նրան գյուղական չքավորության հետ միացնելու աստիճանից — մարքսիզմի մեծագույն աղավաղումն է, նրա գռեհկացումն է, լիբերալիզմով փոխարինումը:



## 3. ՅԵՐԿՈՒ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Այժմ տրոցկիստական հետնորդները, ինչպես «պատմաբան» Վալասեվիչը և այլք, փորձում են մաքսանենգորեն մեջտեղ քաշել այն պնդումը, վոր իբր բայլշևիկները 1905 թվին բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերածելու գիծը չեյին տանում, վոր իբր բայլշևիկները յերկու պլան ունեյին.— մեկը 1905 թվին, մյուսը՝ 1915—1917 թ.թ.: Դա անամոթ բամբասանք է բայլշևիկյան կուսակցության հասցեյին: Մեզ համար դեմոկրատական հեղաշրջումն անխուսափելի ետապ եր գլխավոր խնդրի — սոցիալիստական հեղափոխության հաղթանակի ճանապարհին: «Դեմոկրատական հեղափոխությունից,—գրում եր Լենինը 1905 թվին,— մենք այժմ կսկսենք անցնել և հենց մեր ուժի չափով, գիտակից և կազմակերպված պրոլետարիատի ուժի չափով, դեպի սոցիալիստական հեղափոխությունը»:

Դեկտեմբերյան ապստամբության ջախջախմամբ հեղափոխական շարժումը չվերջացավ: Հեղափոխությունը դեռ ծավալվում եր գյուղում: Սակայն «միայնակ» հանդես յեկող գյուղացիական շարժումը, վորն ուժեղացավ այն ժամանակ, յերբ պրոլետարիատի շարժումն սկսեց նվազել, դատապարտված եր պարտության: Ցարական ոպրիչնիկների պատժիչ եքսպեդիցիաներն արյամբ վողողեցին ռուսական գյուղերը, բանտերը, և սիբերյան աքսորավայրը լցվեց կալվածատիրական սեփականության դեմ ապստամբած գեղջուկներով:

Հետագա յերկու տարիների — 1906—1907 թվերի ընթացքում հեղափոխական ալիքն աստիճանաբար իջավ: Հեղափոխության զարկերակը մերթ ավելի ընդհատ և թույլ եր խփում: Վրա յեր հասնում ռեակցիան, վորը ջախջախում եր պրոլետարիատի կազմակերպությունները, հաշվեհարդար եր կատարում գյուղացիության հետ, ավելի խոր ընդհատակ եր քշում կուսակցությանը և գործում եր արյունոտ սպիտակ տերրորի մեթոդներով — գնդակահարությամբ, կախաղաններով, ջարդով, կոտորածով, տաժանակիր աշխատանքով և աքսորով՝ դեպի Սիբիր:

Մինչև 1911 թվականը Ռուսաստանն ապրում եր խոր ռեակցիայի, մեր կուսակցական կազմակերպությունների ձերբակալության և ջախջախման, մի շարք ինտելիգենտների՝ կուսակցությունից հեռանալու ժամանակաշրջան: Բայլշևիկ-լենինեցները հարկադրված եյին համառ և դժվարին պայքար մղելու մենշևիկ-լիկվիդատորների հետ, վորոնք ցանկանում եյին լիկվիդացիայի յենթարկել պրոլետարիատի անլեգալ (ընդհատակյա) կուսակցությունը և ստեղծել լեգալ համաձայնողական կուսակցություն — այնքան հնազանդ, վորպեսզի ցարիզմը կարողա-

նար նրան թույլ տալ: Բոլշևիկները պայքարում էին նաև սոցիալ-դեմոկրատների «ձախ» խմբի դեմ, որոնք դեմ էին ցարիզմի պայմաններում որևէ լեգալ հնարավորության օգտագործմանը: Մասսաների հետ կապի լեգալ հնարավորությունների օգտագործման համար բոլշևիկների մղած պայքարը, անլեգալ կազմակերպության ղեկավարությամբ և հեղափոխական լոզունգներով, օրինակ է յեղել և է՛ միջազգային բանվորական շարժման համար:

## ԱՆԼԵԳԱԼ ՅԵՎ ԼԵԳԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԶՈՒԳՈՐԴՈՒՄԸ

Մեր կուսակցությունն իր պայքարի բոլոր տարիներին, բացառությամբ ռուսական առաջին հեղափոխության կարճատև ժամանակաշրջանի, հարկադրված էր աշխատելու խոր ընդհատակում: Ցարական կառավարությունն անողոքաբար հետապնդում էր բանվորական շարժման բոլոր արտահայտությունները: Գործադուլը և գործադուլային կոմիտեները, բանվորներին ուղղված նրանց հետաքրքրող հարցերը լուսաբանող թռուցիկները, բանվորական խմբակները, կուսակցական կազմակերպությունները, նրանց մամուլը, նրանց կոնֆերանսները և համագումարները — այս ամենը հետապնդվում էր ամենաանողոք կերպով: Բանտ, աքսոր, տաժանակիր աշխատանք, մահապատիժներ, ջարդեր, ծեծ — ամեն բան գործադրում էր ցարական ինքնակալությունը, որպեսզի թույլ չտար պրոլետարիատի կազմակերպությունները և խանգարեր նրա գիտակցության վերելքին:

Լրտեսները պտտվում էին կուսակցական աշխատողների հետքերով, Պրովոկատորները, գաղտնի ոստիկանները խցկվում էին կուսակցական կազմակերպությունների մեջ, հետևում էին կուսակցական կոմիտեներին և նրանց աշխատողներին:

Կուսակցական աշխատանք տանելու համար մեծ վարպետություն էր պահանջվում: Մեծ փորձ էր հարկավոր, որպեսզի բոլշևիկ-պրոֆեսիոնալն աննկատ քաղաք գար, ռայոն մտներ և թափանցեր գործարանի ներսը: Հարկադրված էին արտաքինը փոխելու, ուրիշի, հաճախ կեղծ անցագրով ապրելու, փոխելու կուսակցական ծածկանունը (Ստալինն իր ընդհատակյա աշխատանքում կոչվում էր «Դավիթ», «Կոբա», «Չիժիկով», «Իվանովիչ» և այլն), քնելու զանազան տեղերում: Ժողովները կազմակերպվում էին զանազան նախազգուշացումներով, որոնք պետք է դժվարացնեին ոստիկանությանը դրանց հայտաբերելու գործը, իսկ հավաքվողներին օգնեին վտանգի դեպքում՝ աննկատելիորեն և արագ ցրվելու.— պատրուլներ էին դրվում, պարոլներ — բերանացի պայմանաբաններ էին հայտնվում, գալիս էին մեկ-մեկ՝ զանազան տեղերից և այլն: Գոյություն ունեին



հատուկ բնակարաններ («ЯВКИ»), որտեղ բերանացի կամ գրավոր հատուկ պայմանական նշաններով ներկայանում էին ուրիշ քաղաքներից կամ ռայոններից յեկող ընկերները: Թռուցիկները, թերթերը, պրոկլամացիաները տպվում էին գաղտնի, ոստիկանությունից լավ թաքցրած հատուկ տպարաններում (այդպիսի տպարան Անդրկովկասում կազմակերպեց ընկ. Յենուկիձեն — Միության Կենտգործկոմի ներկա քարտուղարը, այդպիսի տպարան կար Մոսկվայում Լեսնայա փողոցում):

Ընդհատակյա աշխատանքի այդպիսի դժվարին, վտանգավոր պայմաններում ոչ միշտ հնարավոր էր լինում հավաքվել կուսակցական ղեկավարությունը վերընտրելու համար, դաժան «տապալումից» (բանտարկությունից) հետո ոչ միշտ հնարավոր էր լինում ընտրելու միջոցով փոխարինել ձերբակալված կամ հարկադրականորեն թաքնված ընկերոջը: Այն ժամանակ ընտրության փոխարեն տեղի յեր ունենում ղեկավար ընկերոջ նշանակում, կիրառվում էր կոոպտացիայի մեթոդը, առանց ընտրության, լավ հայտնի, անձնուրաց ընկերոջը կազմի մեջ ընդունելը:

Ընդհատակի այդ անողոք պայմաններում հարկավոր էր միասնական, համառուսական հեղինակավոր կենտրոն, որը կարողանար ղեկավարել բոլշևիկյան ընդհատակի ամբողջ աշխատանքը, դասավորել ուժերը, միացնել նրանց գործունեությունը, ստուգել նրանց գործնականում, տալ ընդհանուր լոզունգներ, հաղորդել դեպքերի իր քաղաքական գնահատականը, գիտենալ տեղերի դրության մասին:

Այդպիսի քաղաքական կենտրոն էր լենինյան բոլշևիկյան Կենտրոնական Կոմիտեն, որը մշտական գլխավորվում էր Լենինի կողմից: Այդ Կենտկոմի անդամները մեծ մասամբ ընդհատակյա աշխատանք էին տանում Ռուսաստանում: Նրանց հետ միասին աշխատում էին Կենտկոմի գործակալները, լիազորները: Լենինը ղեկավարում էր կուսակցության ամբողջ աշխատանքը, գտնվելով էմիգրացիայում՝ ամենասերտ կերպով կապված էր ընդհատակում աշխատողների հետ, նրանք գնում էին Լենինի մոտ, գրում էին նրան: Ինքն անհատապես և բոլշևիկյան մամուլի միջոցով ամենաամուր կապ էր պահպանում տեղերի հետ, զանազան սահմանագծային կետերից նամակներ, թերթեր, գրականություն էր ուղարկում (ցարական սահմանից գրականության անլեգալ փոխադրման այդպիսի կազմակերպիչ էր ընկ. Պյատնիցկին, հին բոլշևիկ, Կոմինտերնի Գործադիր Կոմիտեյի ներկա քարտուղարը):

Ամենից ավելի նշանավոր կոնֆերանսները և բոլոր համագումարները (բացի առաջին համագումարից, որը 1898 թ. հրավիրվեց Մինսկում), մինչև 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը, հրավիրվում էին արտասահմանում: Այնտեղ գնալը մեծ վտանգների հետ

ձեր կազմված մեր պատգամավորների համար, վորոնց մեծ մասն անլեգալ պրոֆեսիոնալ աշխատողներ եյին: Հետ վերադարձը շատ հաճախ վերջանում եր ձերբակալություններով սահմանագլխին կամ հաշվետու ժողովում: Կուսակցական կադրեր կոփելու համար Լենինը Պարիզի մոտ Լոնժյումոյում դպրոց կազմակերպեց Ռուսաստանից հատկապես կանչված բանվոր-բոլշևիկների համար: Այդ բանվորներից շատերը հետո դարձան մեր կուսակցության Կենտկոմի և ԿՎՀ-ի անդամ:

Միայն ընդհատակյա, խիստ կենտրոնացված կուսակցությունը, վորը ղեկավարվում ե պրոֆեսիոնալ-հեղափոխականների, բոլշևիկների, ամբողջությամբ հեղափոխության գործին նվիրվածների կողմից,—միայն այդպիսի կուսակցությունն ընդունակ եր այդ պայմաններում մասսաներին նախապատրաստելու հեղափոխության:

Անլեգալ գոյության դժվարություններում, ընդհատակյա աշխատանքի վտանգների մեջ,—բանվորական թաղամասերում, բանտային կամերաներում, Սիբիրի աքսորի հեռավոր, խուլ բնակավայրերում, այդտեղից՝ չդադարող համարձակ փախուստներում, կարճատև ճամփորդություններում արտասահման, Լենինի մոտ,— կոփվում եր մեր բոլշևիկյան գվարդիան, այն յերկաթյա, և վոչ մի ամպրոպային փոթորկից չընկճվող լենինյան ջոկատը, վորի լավագույն ներկայացուցիչները Լենինի կողմից ջոկվում եյին մեր կուսակցության Կենտկոմի կազմի համար:

Մեր կուսակցությունն անլեգալ աշխատանքի այդպիսի պայմաններում ել կարողացավ կազմակերպել պրոլետարական մասսաներին և դաստիարակել նրանց հանուն պրոլետարական իշխանության պայքարելու համար: Բոլշևիկների կուսակցությունը, չնայած վոստիկանական տերրորի կատաղությանը, մասսաներին փողոց եր դուրս հանում, ղեկավարում եր նրանց մեծ գործադուլների որերին, գլխավորում եր բանվորական ցույցերը և գրոհի որերին մասսաներին տանում եր դեպի ապստամբություն:

Մենշևիզմը միշտ ել դեմ եր կենտրոնացված մարտական կուսակցության և կողմնակից ամեն տեսակ մանր-բուրժուական ելեմենտների համար կուսակցական դռները լայն բաց անելուն: Իսկ ռեակցիայի տարիներին մենշևիզմը գլորվեց մինչև ընդհատակյա կուսակցության լիակատար լիկվիդացիայի գաղափարը, մինչև լեգալ կուսակցության գաղափարը, վորը բացարձակ գործեր ցարական ռեժիմի պայմաններում: Ցարիզմի համաձայնությունն այդպիսի կուսակցություն կազմակերպելու համար մենշևիկները հույս ունեյին ստանալ հեղափոխական լոզունգներից հրաժարվելու միջոցով (մանավորապես դեմոկրատական հանրապետության լոզունգից), ցարական ռեակցիային հարմար-



վելու և պրոլետարիատի ինքնուրույն քաղաքական պայքարից հրաժարվելու միջոցով:

Վճռական պայքար մղելով մենշևիկների դավաճանության դեմ, բոլշևիկները միաժամանակ պայքարում եյին այն «ձախերի» դեմ, վորոնք դեմ եյին վորևե լեգալ հնարավորության ոգտագործմանը:

Լենինը սովորեցնում եր կուսակցությանը միշտ կարողանալ զուգորդել խոր ընդհատակյա աշխատանքը լեգալ աշխատանքի հնարավոր ձևերի հետ: Մինչև 1905 թվի հեղափոխությունը լեգալ աշխատանքի հնարավորությունները ծայրահեղորեն սահմանափակ եյին: Սակայն հենց վոր բանվորական շարժումն այնքան բարձրացավ, վոր ինքնակալությանը հարկադրեց առաջին զիջումներն անելու, առանձնապես ցարիզմի հարկադրական ժամանակավոր նահանջից հետո, 1905 թվի հոկտեմբեր—դեկտեմբերին, կուսակցությունը, պահպանելով իր ամբողջ անլեգալ ապարատը, միաժամանակ սկսեց բացարձակ դուրս գալ ինչպես ժողովներում, նույնպես և մամուլում («Նովայա ժիզն», «Վոլնա» թերթերը և այլն), կազմակերպել պրոֆմիություններ և այլն:

Լեգալ միջոցների ոգտագործման փայլուն որինակ ե մեր բոլշևիկյան, լենինյան վերաբերմունքը Պետական Դումային — ցարական այդ պոչատ ներկայացուցչական հիմնարկին — և վերաբերմունքը մեր բոլշևիկյան ֆրակցիայի աշխատանքին:

Դեռ 1905 թվի հեղափոխության վերելքի մոմենտին ցարական կառավարությունը, բուրժուազիային իր կողմը գրավելու համար, հարկադրված եր Պետական Դումայի ընտրությունների հայտարարմանը դիմելու, ուր կարող եյին ընտրվել բնակչության ներկայացուցիչները: Ընտրական որենքը Դումայում ճնշող մեծամասնությունն ապահովում եր ունևոր դասակարգերի համար, սակայն Դումա կարող եյին ընկնել նաև բանվորական պատգամավորները: Բոլշևիկներն այն ժամանակ կոչ եյին անում բանվորներին, բոյկոտի յենթարկել ընտրությունները, հրաժարվել ցարական Դումայի ընտրություններից, վորովհետև հեղափոխությունը ծավալվում եր, շարժումը դեպի վեր եր ընթանում, և ընտրությունները բանվորների ուշադրությունը կհեռացնեյին անմիջական ընդհարումներից ցարիզմի ուժերի հետ:

Յերբ ռեակցիան հաղթանակեց, ցարական կառավարությունը 1907 թվի հունիսին հայտարարեց Պետական Դումայի ընտրական նոր որենքը: Այդ որենքով պատգամավորական տեղերի կեսից ավելին ստացավ կալվածատերերի խմբակը, տեղերի նշանակալից քանակությունն ստացան բուրժուազիան, կղերը և կուլակները: Բանվորական պատգամավորների թիվը պակասեցվեց մինչև 6 հոգու (պատգամավորների քանակն ընդամենը 500-ից ավելի յեր): Մի շարք հարստահարված ազգություններ միանգամայն զրկված եյին ներկայացուցչությունից:

Սակայն այժմ բոլշևիկները, չնայած նույնիսկ ավելի վատ ընտրական օրենքին, համենայն դեպս արտահայտվեցին հօգուտ ընտրություններին մասնակցելու, որովհետև ռեակցիայի հաղթանակը միանգամայն ակներև դարձավ, և Պետական Դումայի ընտրությունները, և բանվորական պատգամավորների գործունեությունը մասսաների հետ կուսակցության կապն ամրապնդելու փոքրաթիվ լեգալ (բաց) հնարավորություններից մեկն էին:

Լենինը մատնանշում էր, որ հարկավոր է օգտագործել բոլոր հնարավորությունները հօգուտ հաջորդ հեղափոխության նախապատրաստման, որը պետք է անխուսափելիորեն վրա հասնի, որովհետև 1905 թ. հեղափոխությունը ծնող հակասություններից և ոչ մեկը չի լուծվել, բանվոր դասակարգի և գյուղացիության ամենակենսական պահանջներից և ոչ մեկը չի բավարարված: Լենինը, հակառակ միքանի բոլշևիկների բոյկոտիստական տրամադրություններին, մատնանշում էր, որ յեթե I Դումայի ընտրությունների բոյկոտի մեջ իմաստ կար, յերբ վերև ընթացող հեղափոխությունը պետք է սրբեր և այդ ցարական պարլամենտը, ապա III Դումայի ընտրությունները, վորոնք տեղի էյին ունենում ամրապնդվող ռեակցիայի պայմաններում, չի կարելի բոյկոտի յենթարկել: Նրանք պետք է օգտագործվեն ապագա հեղափոխության օգտի համար:

Լենինը հարկադրված էր անողոք, մինչև իսկ մինչև կուսակցությունից վտարելը, պայքարելու բոլշևիկ-ատզովիստների դեմ, վորոնք դեմ էյին Պետական Դումայի մեր Փրակցիայի օգտագործմանը և պահանջում էյին հետ կանչել մեր պատգամավորներին: Այդ նույն ժամանակ Լենինը հարկադրված էր պայքարելու և վորոշ բոլշևիկների դեմ, ինչպես Լունաչարսկին, վորոնք ընկել էյին «աստվածարարության» մեջ և փորձում էյին հեղափոխական մարքսիզմը փոխարինել նույնպիսի փիլիսոփայությամբ, վորն ըստ էյության հանդում էր վորոշ չափով սքողված կրոնի:

Կյանքն ամբողջությամբ հաստատեց Լենինի դիրքը: Իմպերիալիստական պատերազմի սկզբից բոլշևիկների յելույթները Դումայում միակ հնարավոր ազատ յելույթներն էյին Ռուսաստանում: Լենինը ղեկավարում էր մեր բոլշևիկների դումայական փոքրիկ Փրակցիան, վորը կազմված էր այնպիսի պրոլետարներից, ինչպես Պետրովսկին (Ուկրայնայի Կենտգործկոմի ներկա նախագահը), Բադայեվը, Մուրանովը, Շագովը և Սամոյլովը. Լենինը ճառերի պրոյեկտներ էր գրում նրանց համար, հետևում էր նրանց յուրաքանչյուր յելույթին: Բոլշևիկների այդ Փրակցիայի յելույթները Դումայի տրիբունայից ցարական ախրանկան, ցարական վոստիկանությունը չէր կարող թաքցնել, ի վիճակի չէր լռեցնել (դրա համար մեր պատգամավորները ձերբակալվեցին և Սիբիր աքսորվեցին, վորտեղից նրանց ազատեց Փետրվարյան հեղափոխությունը): Լենինը գրում էր, վոր լեգալ և անլեգալ աշխատանքի զուգորդումը, առանց բոլշևիզմի դիրքերը հանձնելու, միանգամայն լուծելի յե, վոր մեր բանվորական պատգամավորները Դումայում ցույց տվին, թե ինչպես պետք է անլեգալ հեղափոխական աշխատանքը զուգորդել լեգալ հեղափոխական աշխատանքի հետ պարլամենտում:

Կոմունիստական Ինտերնացիոնալը կապիտալիստական յերկրների կոմկուսակցություններից պահանջում է անպայման հեղափոխական աշխատանքի լեգալ մեթոդները զուգորդել անլեգալ կազմակերպության հետ: Իսկ այնտեղ, վորտեղ կուսակցություններն ամբողջությամբ գտնվում են ընդհատակում, ինչպես՝ Լեհաստանում, Ռումինիայում, Ֆինլանդիայում, Բուլղարիայում և այլն,—պարլամենտը և այլ կազմակերպությունները պետք է օգտագործել ագիտացիայի և մասսաների կազմակերպության համար:

Լենինը (բոլշևիկները) համառագույն պայքար էր մղում կուսակցության համար, նրա կադրերի պահպանման համար, նրա շարքերի ամրապնդման համար, ընդդեմ կուսակցությունը կազմալուծելու և պայթեցնելու փորձերի՝ մենշևիկ-լիկվիդատորների կողմից, Տրոցկու և կուսակցության և կուսակցականության թշնամիների կողմից՝ «ձախից»:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
## ՎԵՐԵԼՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
## ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բոլշևիկների ջանքերը, չնայած մեծագույն դժվարություններին և դավաճանություններին, հաջողությամբ պսակվեցին: «Բոլոր ջախջախված ոպոզիցիոն և հեղափոխական կուսակցություններից,—նշում էր Լենինը,—բոլշևիկները նահանջեցին ամենից ավելի կարգապահ, ամենից քիչ կազմալուծված, ամենից ավելի ընդունակ աշխատանքը լայնորեն, ճիշտ ու յեռանդագին վերսկսելու համար»: Լենինի ղեկավարությամբ մեր կուսակցությունը նախապատրաստված դուրս յեկավ այն բանի համար, վորպեսզի գլխավորեր 1910 թ. ամռանից սկսված մասսայական բանվորական շարժման նոր վերելքը:

«Ընթացիկ տարվա ամռանից,—գրում էր Լենինը,—նորից վերելք է սկսվում: Տնտեսական գործադուլների թիվն աճում է, և աճում է շատ ուժեղ: Սևհարյուրյակային ռեակցիայի լիակատար տիրապետության շրջանը վերջացավ: Սկսվում է նոր վերելքի շրջան: Պրոլետարիատը, վորը նահանջել էր, թեև մեծ ընդմիջումներով — 1905 թվից մինչև 1909 թ., հավաքում է իր ուժերը և սկսում է հարձակման անցնել:





Բ. Վոլին, II – 12

Արդյունաբերության մեջքանի ճյուղերի աշխուժացումն իսկույն ներգործում է պրոլետարական պայքարի աշխուժացմանը...

Ռուսաստանում ամենուրեք ժողովներ և միտինգներ են տեղի ունենում. վոստիկանությունը բռնի ուժով ներխուժում է համալսարանները, ծեծում ուսանողներին, ձերբակալում նրանց, հետապնդում և թերթերին՝ հուզումների մասին ամենափոքր ճշմարիտ խոսքի համար և այդ բոլորով միայն ուժեղացնում հուզումները:

Պրոլետարիատն սկսեց: Դեմոկրատական յերիտասարդությունը շարունակում է: Ռուսական ժողովուրդը զարթնում է նոր պայքարի համար, գնում է դեպի նոր հեղափոխություն:

Պայքարի առաջին իսկ սկիզբը մեզ կրկին ցույց տվեց, վոր կենդանի յեն այն ուժերը, վորոնք տատանեցին ցարական իշխանությունը 1905 թվին և վորոնք կխորտակեն նրան այդ գալիք հեղափոխության մեջ: Պայքարի առաջին սկիզբը մեզ կրկին ցույց տվեց մասսայական շարժման նշանակությունը: Վոչ մի հետապնդում, վոչ մի ճնշում չի կարող կանգնեցնել շարժումը, յերբ մասսաները վոտքի յեն յելել, յերբ միլիոններն սկսել են շարժվել»:

Լենինի՝ այն ժամանակ տված գնահատականը մարգարեաբեն նախագուշակել է դեպքերի հետագա ծավալումը: Հանճարեղ առաջնորդը կարողանում էր առանձին փաստերի, անջատ-անջատ դեպքերի հետևում տեսնել այն ուղիները, վորով միլիոններն են գնում: Ռեակցիայի ամենամռայլ շրջանում Լենինը, գտնվելով արտասահմանում, առանձին բռնկումներից զգում էր վերահաս հեղափոխության շունչը և նախագուշակում էր նրա գալուստը: Լենինն այդ գրել է 1910 թվին, յերբ քաղաքական գործադուլներին մասնակցում եյին ընդամենը 4 հազար հոգի: Հաջորդ՝ 1911 թվին նրանց թիվը բարձրացավ մինչև 8 հազարի, վորպեսզի հետո միանգամից ցատկեր մինչև 850 հազար հոգու:

1905 թվի հունվարի 9-ի նման, 1912 թ. սկզբին Սիբիրում Լենայի հեռավոր վոսկեհանքերում բռնկած տնտեսական գործադուլը մասսայական հսկայական շարժման սկիզբը դրեց:

Լենայի հանքերի բանվորները հանձնվել եյին հանքատերերի — ինչպես ռուսական, նույնպես և արտասահմանյան բարձրաստիճան միլիոնատերերի (վորոնց թվում կային և ցարական տան անդամներ) — անողոք շահագործմանը: Յերբ բանվորները տնտեսական գործադուլ հայտարարեցին և ներկայացրին իրենց տնտեսական համեստ պահանջները, հանքերի վարչության ցուցմունքներով գործող ժանդարմները ձերբակալեցին բանվորների պատգամավորներին: Բանվորները շարժվեցին ձերբակալված ընկերների ազատման պահանջով: Ճանապարհին, 1912 թվի ապրիլի 4-ին, նրանց դիմավորեց հանքերի զինված վոստիկանությունը և գնդակահարեց ամբոխին: Ցարական գնդակներից ընկան հարյուրավոր սպանվածներ և վիրավորներ:



Այդ արյունոտ հաշվեհարդարի լուրը տարածվեց ամբողջ Ռուսաստանում: Նա պոռթկեց ցարական Ռուսաստանի պրոլետարիատի մեջ ռեակցիայի բոլոր տարիներին կուտակված վրդովմունքը: Քաղաքական գործադուլներ բռնկեցին, վորի մասնակիցներն արդեն հարյուր հազարներով եյին հաշվվում: Մեծ հաջողություն ունեցան մայիսմեկյան գործադուլները:

«Հեռավոր տայգայում ցարական գնդակներից ընկած ընկերների պայքարը չի մոռացված հաղթանակած պրոլետարիատի կողմից,— մասերս գրել է ընկ. Ստալինը Լենայի բանվորներին ուղղած իր վողջույնի մեջ:—Հետ նայելով անցած ճանապարհին, Միության բանվորները կարող են ասել,—բոդայբինցիների բանվորական արյան և վոչ մի կաթիլը զուր չի կորել, վորովհետև պրոլետարիատի թշնամիները հատուցում ստացան, իսկ պրոլետարիատն արդեն հաղթություն տարավ նրանց նկատմամբ: Այժմ, ցարական և կապիտալիստական կեղեքումից ազատ՝ Վիտիմի ափերին դուք հնարավորություն ունեք վոսկի հանել վոչ թե ձրիակերների հարստացման համար, այլ աշխարհում առաջին, ձեր սեփական բանվորական պետության հզորությունն ամրապնդելու համար»:

Բանվորական շարժումը, սկսած Լենայի գնդակահարությունից, ավելի ու ավելի ուժեղացավ կուսակցության ղեկավարությամբ: 1912 թվի հենց սկզբում, արտասահմանում, Պրագայում հավաքված կուսակցական կոնֆերանսը, քննելով քաղաքական դրությունը, հաստատեց հին հեղափոխական լոզունգներով դուրս գալու անհրաժեշտությունը և վերջնականապես կուսակցությունից դուրս հայտարարեց մենշևիկ-լիկվիդատորներին և մի շարք այլ ոպորտունիստական խմբավորումներին:

Կուսակցությունն այդ կոնֆերանսից դուրս յեկավ ամրացած, մոնոլիտ (միաձուլված) և լենինյան ամուր ղեկավարությամբ, վորի մեջ առաջին անգամ մտավ ընկ. Ստալինը, վորն այն ժամանակ անլեգալ կերպով աշխատում էր Ռուսաստանում և այդ որվանից 20 տարվա ընթացքում անփոփոխելիորեն մեր լենինյան Կենտկոմի անդամ է հանդիսանում:

Վորպես հակադրություն բոլշևիկների Պրագայի կոնֆերանսին, մենշևիկ-լիկվիդատորները և ամեն տեսակ այլ հակակուսակցական խմբակներ՝ Տրոցկու գլխավորությամբ, նախկին «ձախ» բոլշևիկների հետ միասին կազմակերպվեցին և 1912 թ. ոգոստոսին հրավիրեցին իրենց կոնֆերանսը, վորը հայտնի յե «ոգոստոսյան բլոկ» անունով:

Տրոցկին այստեղ էլ կեղծ «հեղափոխական» ֆրազի ոգնությամբ ամենահավատարիմ ծառայություն ցույց տվեց մենշևիկ-«լիկվիդատորներին», վորոնք կողմնակից եյին բանվոր դասակարգի ընդհատակյա հեղափոխական կուսակցության լիկվիդացիային:

Լենինն ամենայն անողոքությամբ մերկացնում էր Տրոցկու անսկզբունք անցումները մեկ դիրքից մյուսին, կուսակցությունը քայքայելու, բոլշևիզմի դեմ պայքարելու համար բոլոր օպորտունիստական տարրերին — սկսած ծայրահեղ աջերից մինչև ծայրահեղ «ձախերը»— միացնելու նրա փորձերը:

«Տրոցկին թունդ «իսկրայական» էր 1901—1903 թվերին,—գրում էր Լենինը,— 1903 թվի վերջերին Տրոցկին թունդ մենշևիկ էր, այսինքն՝ իսկրայականներից «էկոնոմիստների» մոտ փախուստ տված... 1904—05 թվերին նա հեռանում է մենշևիկներից և գրավում է տատանվող դրություն, մեկ աշխատակցելով Մարտովի հետ («էկոնոմիստ»), մեկ էլ ազդարարելով անհեթեթ ձախ «պերմանենտ հեղափոխություն»: 1906—1907 թվերին նա մոտենում է բոլշևիկներին և գարնանը հայտարարում է իր համերաշխության մասին Ռոզա Լյուքսեմբուրգի հետ: Քայքայման շրջանում, «արտաֆրակցիոն» յերկար տատանումներից հետո, նա նորից գնում է դեպի աջ և 1912 թվին լիկվիդատորների հետ բլոկ է կազմում: Այժմ նորից հեռանում է նրանցից, սակայն ըստ էության կրկնելով նրանց գաղափարները... Անհրաժեշտ է, որ բանվորական յերիտասարդ շարժումը լավ գիտենա,—նախազգուշացնում էր Լենինը,—թե ում հետ գործ ունի, յերբ մարդիկ աներևակայելի պրետենզիաներով հրապարակ են գալիս և բացարձակապես չեն ուզում հաշվի նստել ո՛չ կուսակցական որոշումների հետ և ո՛չ էլ ժամանակակից բանվորական շարժման փորձի հետ Ռուսաստանում»:

Տրոցկու պայքարը կուսակցության դեմ անհաջողությամբ վերջացավ: Այն ժամանակ, յերբ Պրագայի կոնֆերանսը համախմբեց և ուժեղացրեց բոլշևիկներին և կուսակցական մարտական ղեկավարություն ստեղծեց, մենշևիկ Տրոցկու «օգոստոսյան բլոկը» դուրս յեկավ այնպիսի մարդկանց անսկզբունք հավաքույթ, որոնց միակ նպատակը հակաբոլշևիկյան պայքարն էր: «Բլոկը,—գրում էր Լենինը 1914 թվին,—լիկվիդատորության դատարկ ծածկոց էր... Բանվորները գործնականում կստեղծեն իրենց միասնականությունն ընդդեմ նրա լիկվիդատորական քայքայիչների»:

«Բլոկը» շուտով քայքայվեց, իսկ կուսակցությունն աճեց և ամրապնդեց իր ազդեցությունը պրոլետարիատի միջավայրում: Պրագայի կոնֆերանսի որոշման համաձայն, կազմակերպվեց մասսայական, լեգալ «Правда» թերթը:

«Դա,—վերհիշում է ընկ. Ստալինը,—1912 թ. ապրիլի կեսերին էր, յերեկոյան, ընկ. Պոլետաևի բնակարանում, որտեղ Դումայի յերկու պատգամավորներ (Պոլետաևը և Պետրովսկին), յերկու գրականագետներ (Օլմինսկին, Բատուրինը) և յես, Կենտկոմի անդամ... համաձայնության յեկանք «Правда»-յի պլատֆորմի մասին և կազմեցինք թերթի առաջին համարը: Հարկավոր էր մենշևիկ-լիկվիդատորներից հետ գրավել այն դիրքերը, որ նրանք գրավել էին զանազան լեգալ կազմակերպություններում: Ընդհատակյա կազմակերպություններում մենք համարյա առիթ չեյինք ունեցել պայքարելու մենշևիկների հետ, որովհետև մենշևիկներն այնտեղից հեռացել էին, առաջադրելով ստոլիպինյան ռեժիմին հարմարվելու թեորիան, ձգտելով «ստոլիպինյան բանվորական կուսակցություն» կազմակերպելուն»:



Լենինի և Ստալինի կողմից ղեկավարված «Правда»-ն հանդիսացավ աշխատավորական մասսաների իսկական բոլշևիկյան կազմակերպիչը, միշտ նոր ուժեր համախմբելով կուսակցության շուրջը, կուսակցության մեջ ներգրավելով բանվոր դասակարգի լավագույն առաջավորներին: Նա հանդիսացավ ժամանակակից բոլշևիկյան մամուլի— միջազգային պրոլետարական շարժման լավագույն մամուլի նախատիպարը: «Правда»-յի ստեղծումը ռուսական պրոլետարիատի խոշորագույն հաղթանակն էր: «Правда»-յի անունը դարձավ ամենահեղինակավորն ու սիրելին բանվորության շրջանում: «Պրավդիստ» բառն սկսեց որակել պրոլետարական հեղափոխականին, բոլշևիկ-լենինցին:

Վերելքի շրջանում կուսակցությունը վերականգնեց իր կազմակերպությունները, ամրապնդեց նրա շարքերը, բանվորական մասսաներին մոբիլիզացիայի յենթարկեց իր լոզունգների շուրջը:

Վերելքի տարիները մասսաների համար հեղափոխության անմիջականորեն նախապատրաստվելու տարիներ հանդիսացան: Այդ շրջանում միջազգային օպորտունիզմի ընդերքում նախապատրաստվում էր բանվոր դասակարգի շահերի լիակատար և բացարձակ դավաճանություն, բացահայտ անցումն բուրժուազիայի կողմը:

II Ինտերնացիոնալի լիդերները (Կաուցկի) լիկվիդատորներին թույլ էին տալիս օգտագործելու իրենց ամսագրերն ու թերթերը Լենինի և կուսակցության դեմ պայքարելու համար, միաժամանակ թույլ չտալով տպագրելու բոլշևիկների պատասխանները: Ձախ Ռոզա Լյուքսեմբուրգը պաշտպանում է մենշևիկներին՝ կուսակցության դեմ նրանց մղած պայքարում, հայտարարելով, որ մեզ մոտ՝ Ռուսաստանում «ֆրակցիոն պայքարի քաոս է»:

Ձախ սոցիալ-դեմոկրատները II Ինտերնացիոնալում (ամենից առաջ գերմանական կուսակցության մեջ) չեյին ընդունում իմպերիալիզմի, որպես պրոլետարական հեղափոխության նախօրյակի, լենինյան գնահատականը, թերագնահատում էին ազգային-ազատագրական շարժման հեղափոխական հնարավորությունները, մշտականորեն տատանվում էին բոլշևիզմի և մենշևիզմի միջև: Ահա թե ինչու բոլշևիկները, պաշտպանելով ձախերի հեղափոխական գործերն ու յե-

*լույթները, միաժամանակ վճռականորեն* քննադատում *էին նրանց կիսատ–պռատությունը, անհետևողականությունը, մենշևիկյան սխալները, բացահայտ օպորտունիստներից անջատվելու երկյուղը:*

Լենինը և բոլշևիկները պայքարում էին օպորտունիզմի դեմ միջազգային թատերաբեմում: *Մասնակցելով միջազգային կոնգրեսներին (Շտուտգարդում — 1907 թ., Կոպենհագենում — 1910 թ. և Բազելում — 1912 թ.), բոլշևիկները մատնանշում էին իմպերիալիստական պատերազմի վտանգը և այն քաղաքացիական պատերազմի վերածելու անհրաժեշտությունը: Լենինը մատնանշում էր, որ իմպերիալիստական բուրժուազիայի գաղութային քաղաքականությունը պաշտպանվում է II Ինտերնացիոնալի լիդերների կողմից: Լենինը մատնանշում էր վրա հասնող հեղափոխական դեպքերի ժամանակ օպորտունիզմի հետ «հաշիվները մաքրելու» անխուսափելիությունը:*

1914 թ. բռնկվեց իմպերիալիստական պատերազմը: II Ինտերնացիոնալի կուսակցությունները բացարձակ դավաճանեցին բանվորական գործին, կանգնելով իմպերիալիզմի կողմը, հօգուտ սեփական բուրժուազիայի շահերի, բանվորներին «պատերազմը մինչև հաղթական վախճան» լոզունգով սպանդանոց ուղարկելով: *Միայն Լենինը, գլխավորելով իր շուրջը համախմբված բոլշևիկներին և յեվրոպական կուսակցությունների առանձին հեղափոխական տարրերին, բարձր պահեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը, քարոզելով* իմպերիալիստական պատերազմի՝ քաղաքացիականի վերածումը, *մերկացնելով II Ինտերնացիոնալի առաջնորդների դավաճանությունը, անդուլ աշխատելով III Կոմունիստական Ինտերնացիոնալի ստեղծման համար:*

*Քաղաքացիական պատերազմի լոզունգը կապված էր մի ուրիշ լոզունգի հետ: Պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունները պետք է աշխատեն հօգուտ* պատերազմում սեփական բուրժուական կառավարության պարտության, *որովհետև պարտությունը թուլացնում է իմպերիալիստական կառավարության դիրքերը և ամրապնդում է պրոլետարիատի հեղափոխական դիրքերը՝ իշխանության համար մղվող պայքարում: Առանց սեփական բուրժուական կառավարության պարտության ձգտումի չկա իսկական պրոլետարական ինտերնացիոնալիզմ:*

*Պատերազմի շրջանում, յերբ օպորտունիզմի թույնով վարակված II Ինտերնացիոնալը քայքայվում է, Լենինը բացառիկ հեղափոխական մոլեգնությամբ դեմ է դուրս գալիս սոցիալ–շովինիստներին և ցենտրիստներին: Նա առանձնապես կրքոտ կերպով խարազանում է Կաուցկուն: «Կաուցկին,—գրում է Լենինը 1915 թվին,— մարքսիզմը հասցրեց անլուր պոռնկացման և դարձավ իսկական տերտեր... Տերտերը* մխիթարում է *հարստահարված մասսաներին..., իսկ ով մխիթարում է ստրուկին, փոխանակ նրան ստրկության դեմ ապստամբության*



*բարձրացնելու, նա օգնում է ստրկատիրոջը»: Յեվ հետո Լենինը տալիս է այն յերկու մեթոդների փայլուն, միանգամայն ժամանակակից բնութագրությունը, որոնց գոյությամբ բուրժուազիան պահպանում է իր տիրապետությունը:*

*«Բոլոր և ամեն տեսակի կեղեքող դասակարգերն իրենց տիրապետությունը պահպանելու համար յերկու սոցիալական ֆունկցիաների կարիք ունեն.—*դահիճի *ֆունկցիայի և* տերտերի *ֆունկցիայի: Դահիճը պետք է ճնշի կեղեքվողների բողոքն ու վրդովմունքը, քահանան նրանց պետք է նկարագրի թշվառությունների և զոհերի մեղմացման հեռանկարները (դա առանձնապես հարմար է անել առանց այդպիսի հեռանկարների «իրագործելիությունը» յերաշխավորելու...) դասակարգային տիրապետության պահպանման պայմաններում, և դրանով իսկ նրանց հաշտեցնի այդ տիրապետության հետ, հեռացնի նրանց հեղափոխական գործողություններից, տապալի նրանց հեղափոխական տրամադրությունը, խորտակի նրանց հեղափոխական վճռականությունը: Կաուցկին մարքսիզմը վերածեց ամենազզվելի և ամենաբթամիտ հակահեղափոխական թեորիայի, ամենակեղտոտ տերտերականության»:*

Կաուցկու մասին Լենինի ասածը հավասարապես վերաբերում է նաև Տրոցկուն: *Վերջինս պատերազմի ժամանակ՝ այսպես կոչված՝ «ռուսական կենտրոնի» դիրք բռնեց: Տրոցկին հանդես յեկավ «վո՛չ հաղթանակ, վո՛չ պարտություն» ֆորմուլայով: «Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու» բոլշևիկյան լոզունգին նա հակադրեց «պայքար խաղաղության համար» մանր–բուրժուական անատամ պահանջը:*

*Միայն լենինյան կուսակցությունը, մինչև վերջը մերկացնելով օպորտունիզմը միջազգային բանվորական շարժման մեջ, իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու հետևողական գիծ էր տանում, դնում էր Կոմունիստական Ինտերնացիոնալի գաղափարական հիմունքները:*

*Պատերազմի տարիներին բոլշևիկյան կուսակցությունը, խոշոր հակապատերազմական աշխատանք տանելով, իր շուրջը համախմբեց բանվոր դասակարգին և տարավ նրան հեղափոխական մարտերի:*

1917 թվի հեղափոխությունը Ռուսաստանում կենսագործեց իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան լոզունգը: 1917 *թվի հոկտեմբերին պրոլետարիատի իշխանությունը նվաճեց և համայն աշխարհի աշխատավորության իմպերիալիստական պատերազմի դեմ հեղափոխական պայքարի օրինակը ցույց տվեց:*

# 4. ՓԵՏՐՎԱՐԻՑ ԴԵՊԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ

## ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ (1917 ԹՎԻ ՄԱՐՏ–ԱՊՐԻԼ)

Լենինյան ուսմունքի ճշտությունը բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական դաշինքի մասին՝ որպես հեղափոխության հաղթության պայմանի՝ փայլուն կերպով ապացուցվեց 1917 թ. փետրվարյան հեղափոխությամբ։ Ցարական ինքնակալությունը տապալվեց Պիտերի ապստամբած բանվորների և զինվորական համազգեստ հագած գյուղացիների ուժերով։ «Պետերբուրգի բանվորները,—գրում էր Լենինը,—հաղթեցին ցարական միապետությանը։ Ոստիկանության և ցարական զորքերի դեմ մղած հերոսական պայքարում, գնդացիրների դեմ ապստամբությունն անզեն սկսելով, բանվորներն իրենց կողմը գրավեցին Պետերբուրգի կայազորի զինվորների մեծ մասին։ Նույնը տեղի ունեցավ Մոսկվայում և մյուս քաղաքներում։ Իր զորքերից լքված ցարը պետք է անձնատուր լիներ»։

Ամենամոտակա քաղաքական խնդիրը, որ դրել էր բոլշևիկների մեր կուսակցությունը,—ինքնակալության տապալումը — լուծված էր։

«Առանց ռուսական պրոլետարիատի 1905—1907 թվերի յերեք տարվա մեծագույն դասակարգային ճակատամարտերի և հեղափոխական էներգիայի,—գրում էր Լենինը,—անհնարին էր այնքան արագ կերպով, նրա սկզբնական էտապի ավարտման տեսակետից, մի քանի օրում կատարել յերկրորդ հեղափոխությունը։ Առաջինը (1905 թ.) խոր կերպով փորել էր հողը, արմատահան էր արել դարավոր նախապաշարմունքները, քաղաքական կյանքի և քաղաքական պայքարի համար զարթեցրել էր միլիոնավոր բանվորներին և տասնյակ միլիոնավոր գյուղացիներին, ցույց էր տվել միմյանց, և ամբողջ աշխարհին—ռուսական հասարակության բոլոր դասակարգերին (և գլխավոր կուսակցություններին) իրենց իսկական բնությամբ, նրանց շահերի, նրանց ուժերի, նրանց գործողության ընդունակությունների, նրանց մոտակա և հեռակա նպատակների իսկական փոխհարաբերությամբ։ Առաջին հեղափոխությունը և նրան հաջորդող հակահեղափոխական էպոխան (1907—1914 թ.թ.) մերկացրեց ցարական միապետության ամբողջ էությունը, հասցրեց նրան մինչև «վերջին գիծը», բաց արեց նրա ամբողջ նողկալիությունը, նեխվածությունը, ցարական շայկայի ամբողջ ցինիզմն ու այլասերությունը՝ հրեշավոր Ռասպուտինի գլխավորությամբ, Ռոմանովների ընտանիքի,—այդ ջարդարարների ամբողջ գազանությունը, որոնք Ռուսաստանը ողողեցին հրյաների, բանվորների, հեղափոխականների արյունով,—այդ «հավասարների մեջ առաջին» կալվածատերերի, որոնք միլիոնավոր դեսյատին հող ունեին և



դիմում էին ամեն տեսակ գազանության, ամեն տեսակ հանցագործության, իրենց ցանկացած քանակությամբ քաղաքացիների քայքայմանն ու խեղդմանը՝ հանուն իրենց և իրենց դասակարգի «սրբազան սեփականության» պահպանման»։

Ինքնակալությունը տապալվեց պրոլետարիատի կողմից մեծ զոհերի գնով։ Սակայն բանվորական և ժողովրդական ամբողջ մասսայի անբավարար կազմակերպվածության և գիտակցության պատճառով, մանր-բուրժուական կուսակցությունների համաձայնողականության և ցարիզմի հետապնդումներից մեր կուսակցական կազմակերպությունների թուլանալու պատճառով, վերջապես, անգլո-ֆրանսիական կապիտալի կողմից բուրժուազիային ցույց տրված ուղղակի օգնության պատճառով իշխանությունը չանցավ պրոլետարիատին, որը հեղափոխության առաջատար ուժն էր, այլ անցավ բուրժուազիայի ձեռքը։ Այն ժամանակ, երբ Պետրոգրադի բանվորները կռվում էին ցարիզմի դեմ՝ ազատության, խաղաղության, հողի և հացի համար, բուրժուազիան, հանձին Պետական Դումայի, կազմակերպեց իր կառավարությունն իշխան Լվովի գլխավորությամբ, մասնակցությամբ խոշոր բուրժուազիայի և հողատերերի ներկայացուցիչների.—վաճառական Գուչկովի, պրոֆեսոր Միլյուկովի, ֆաբրիկանտ Տերեշչենկոյի և այլն։ Սակայն այդ իշխանության հետ միաժամանակ կազմակերպվեց նաև այլ իշխանություն, բանվորական և զինվորական պատգամավորների խորհրդի իշխանությունը, որը հսկայական ազդեցություն ուներ բանվորական և զինվորական մասսաների վրա։

Առաջացավ յուրորինակ յերկիշխանություն.—«ժամանակավոր կառավարության կողքին,—գրում էր Լենինը,—բուրժուազիայի կառավարության կողքին, ձևակերպվեց դեռ թույլ, սաղմային, սակայն համենայն դեպս գործնականում անվիճելիորեն գոյություն ունեցող և աճող ուրիշ կառավարություն — բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդները»։ Լենինը մատնանշում էր, որ այդ մյուս կառավարությունը «հեղափոխական դիկտատուրա յե, այսինքն՝ իշխանություն, որն ուղղակի հենվում է հեղափոխական գրավումների, ժողովրդական մասսաների անմիջական սկզբնավորության վրա ներքևից, և ոչ թե կենտրոնացված պետական իշխանության հրատարակած օրենքների վրա»։

Այսպիսի դրության դեպքում պրոլետարիատը կարող էր տիրանալ ամբողջ իշխանությանը, յեթե համաձայնողական-մենշևիկները և սոցիալիստ-հեղափոխականները, որոնք խորհուրդներում մեծամասնություն էին կազմում, գիտակցորեն և դիտավորյալ ամբողջ իշխանությունը չհանձնեցին իմպերիալիստական բուրժուազիայի ժամանակավոր կառավարությանը։

Լենինին մեծագույն դժվարություններով հաջողվեց անցնել Գեր-

մանիայի ֆրոնտներից, Շվեդիայի և Ֆինլանդիայի վրայով դեպի Պետրոգրադ և ամբողջ Ռուսաստանի աշխատավորական մասսաները։ Պետրոգրադի պրոլետարիատը և զինվորական մասսաներն ապրիլի 4-ին աննախընթաց հանդիսավոր դիմավորություն կազմակերպեցին իրենց առաջնորդին։ Լենինը նույն յերեկոյան բոլշևիկների առաջ հանդես յեկավ իր «Թեզիսներով», վորոնք բոլշևիկյան պատասխան տվին հեղափոխության հիմնական հարցերին։

Լենինը մատնանշեց, վոր հեղափոխությունից հետո էլ կուսակցությունը չի կարող ամենափոքր իսկ չափով պաշտպանել պատերազմը, վորը նորից իմպերիալիստական պատերազմ է, վոր հարկավոր է վոչ թե պատերազմը պաշտպանել, այլ ֆրոնտում յեղբայրացում կազմակերպել։

Ժամանակավոր կառավարության մասին Լենինը հայտարարեց.— «Ո՛չ մի պաշտպանություն ցույց չտալ ժամանակավոր կառավարությանը, բացատրել նրա խոստումների լիակատար կեղծությունը։

Լենինն առաջադրեց խորհուրդների հանրապետության, կալվածատիրական հողերի գրավման, հասարակական արտադրության և մթերքների բաշխման նկատմամբ խորհուրդների կողմից հսկողություն սահմանելու լոզունգները։

Այն ժամանակ (1917 թվի ապրիլին) խորհուրդները դեռ գտնվում էին մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների ձեռքին։ Դրա համար էլ Լենինը պահանջում էր, վոր քանի դեռ խորհուրդը յենթարկվում է բուրժուազիայի ազդեցությանը, «համբերատար, սիստեմատիկ, համառ, հատկապես մասսաների գործնական պահանջներին հարմարվող կերպով բացատրել սխալները ու տակտիկան։ «Քանի մենք փոքրամասնություն ենք կազմում,—ասում էր Լենինը,—մենք քննադատում ու մերկացնում ենք սխալները, միաժամանակ քարոզելով ամբողջ պետական իշխանության բանվորական պատգամավորների խորհրդին անցնելու անհրաժեշտությունը, վորպեսզի մասսաները փորձով ազատվեն իրենց սխալներից»։

«Ընթացիկ մոմենտի առանձնահատկությունը Ռուսաստանում,—մատնանշում էր Լենինն իր Թեզիսներում,—հեղափոխության առաջին էտապից, վորը պրոլետարիատի անբավարար գիտակցության և կազմակերպվածության պատճառով իշխանությունը տվեց բուրժուազիային,—նրա յերկրորդ էտապին անցնելն է, վորն իշխանությունը պետք է տա պրոլետարիատի և գյուղացիության չքավորագույն շերտերի ձեռքը»։

Լենինն առաջարկեց կուսակցության հին «սոցիալ-դեմոկրատական» անունը դեն գցել, մի անուն, վորը յուրացրել են բոլոր յերկրների մենշևիկյան կուսակցությունները, վորոնք ապականել են սոցիալիզմի



դրոշը և դավաճանել են պրոլետարիատի շահերին՝ հօգուտ իմպերիալիստական բուրժուազիայի, և մեր կուսակցությունը կոչել կոմունիստական։

Լենինի «ապրիլյան թեզիսները», վորոնք ընդունվեցին կուսակցության ապրիլյան կոնֆերանսի կողմից, կուսակցության առաջ դրին խորհուրդների հանրապետության՝ վորպես պրոլետարիատի դիկտատուրայի ձևի նվաճման, դեմոկրատական հեղափոխության սոցիալիստականի վերաճման կոնկրետ խնդիրները։

Ընկ. Ստալինը և մյուս բոլշևիկներն ամբողջությամբ պաշտպանում էին լենինյան թեզիսները։ Լենինի դեմ դուրս յեկավ աջ բոլշևիկների խումբը՝ Կամենևի գլխավորությամբ։ Կամենևը, յելնելով այն բանից, վոր «ամբողջությամբ չի ապրված» բուրժուական-դեմոկրատական հեղափոխության էտապը, Ռուսաստանն իր չափազանց հետամնացության պատճառով անընդունակ էր համարում սոցիալիստական հեղափոխություն սկսելու համար։ Կամենևը և նրա համախոհները պաշտպանում էին այն բանը, թե կուսակցության համար անհրաժեշտ է սահմանափակվել բուրժուական-դեմոկրատական հեղափոխության շրջանակներով, «հսկողություն և ճնշում» գործադրել բուրժուական ժամանակավոր կառավարության վրա, «աշխատել մանր-բուրժուական բլոկի հետ, պաշտպանել նրան, մեր տակտիկան դնել այդ բլոկը հքայքայելու հաշվով»։

Կուսակցությունն ամբողջությամբ անցավ Լենինի կողմը՝ ընդդեմ ոպորտունիստների։

«Առաջավոր բանվորների և գյուղացիների կազմակերպությունը խորհուրդներում,—գրում էր այդ ժամանակաշրջանի մասին Լենինը,—անշեղորեն առաջ էր ընթանում։ Կեղեքվող դասակարգերի լավագույն մարդիկ զգում էին, վոր կառավարությունը, չնայած նրա համաձայնությանը Պետերբուրգի խորհրդի հետ, չնայած Կերենսկու ճամարտակությանը, մնում է ժողովրդի թշնամին, հեղափոխության թշնամին։ Մասսաներն զգում էին, վոր յեթե չջախջախվի կապիտալիստների ընդդիմադրությունը, ապա խաղաղության գործը, ազատության գործը, հեղափոխության գործն անխուսափելիորեն տանուլ կտրվի։ Մասսաների մեջ անհամբերություն և զայրույթ էր հասունանում։

Նա պայթեց ապրիլի 20—21-ին։ Շարժումը բռնկվեց տարերայնորեն, վոչ վոքի կողմից չնախապատրաստված»։

## ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԸ (1917 Թ. ՄԱՅԻՍ—ՕԳՈՍՏՈՍ)

Պետրոգրադի պրոլետարիատի ապրիլյան տարերային դեմոնստրացիան ժամանակավոր կառավարության դեմ, պատերազմը ձգձգելու

նրա քաղաքականության դեմ, հայտարարեց մեր կուսակցության ազդեցության ուժեղացումը բանվորական մասսաներում: Դրա հետևանքով ժամանակավոր կառավարությունը կոալիցիայի (միասին մասնակցություն կառավարության մեջ) դիմեց համաձայնողական կուսակցությունների հետ, վորոնք մեծամասնություն եյին կազմում խորհուրդներում — մենշևիկների և սոցիալիստ-հեղափոխականների հետ: Սակայն դա միայն ուժեղացրեց մասսաների հիասթափությունը նրանց քաղաքականությունից:

Հունիսի կեսերին կայացած խորհուրդների համառուսական I համագումարում բոլշևիկները դեռ նշանակալից փոքրամասնություն եյին կազմում: Համագումարը մերժեց իշխանությունը հենց իր՝ խորհուրդների համագումարի ձեռքն առնելու մասին մեր կուսակցության առաջարկությունը և հունիսի 18-ին դեմոնստրացիա նշանակեց, վորը պետք է պաշտպաներ կոալիցիոն կառավարությունը, այն կառավարությունը, վորտեղ միասին նստած եյին կապիտալիստները և համաձայնողական-«սոցիալիստները»: Սակայն դեմոնստրացիան, վորին դուրս եյին յեկել Պետերբուրգի բանվորներն ու զինվորները, հակառակ համագումարի և նրա ղեկավարների կամքի, ամբողջությամբ անցավ «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» բոլշևիկյան լոզունգի ներքո: Դեմոնստրացիան ցույց տվեց, վոր խորհուրդներում մեծամասնություն կազմող մենշևիկներն ու եսեռները մասսաների տրամադրությունը չեն արտացոլում, վոր մասսաները սուր կերպով բողոքում են նրանց քաղաքականության դեմ:

«Հունիսի տասնութը,—գրում եր Լենինը,—այսպես կամ այնպես կմտնի ռուսական հեղափոխության պատմության մեջ վորպես բեկման օրերից մեկը... Դեմոնստրացիան մի քանի ժամվա ընթացքում, վորպես մի ափ փոշի, քամուն տվեց բոլշևիկների՝ վորպես դավադիրների մասին դատարկ խոսքերը և անառարկելի բացահայտությամբ ցույց տվեց, վոր Ռուսաստանի աշխատավորական մասսաների ավանգարդը, մայրաքաղաքի արդյունաբերական պրոլետարիատը և նրա զորքերը մեծ մասամբ կանգնած են այն լոզունգների կողմը, վորոնք միշտ պաշտպանվել են մեր կուսակցության կողմից...»:

Սակայն դա չփոխեց համաձայնողականների քաղաքականությունը: Առաջվա նման վոչ մի միջոց ձեռք չեր առնվում լուծելու համար ժողովրդի անհետաձգելի կարիքներն ու պահանջները — վերջացնել ժողովրդին ուժասպառ արած իմպերիալիստական պատերազմը, բարելավել յերկրի տնտեսական դրությունն՝ ի հաշիվ բուրժուազիայի ռազմական հսկայական շահույթների կրճատման: Գյուղացիներին համոզում եյին հողային հարցի լուծման համար սպասել մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը: Սակայն Սահմանադիր ժողովը հետաձգվում եր



մինչև պատերազմի վերջը: Իսկ պատերազմը վորոշել եյին յերկարաձգել մինչև հաղթական վախճանը: Հուլիսի վերջին ժամանակավոր կառավարությունը, հոգուտ անգլո-ֆրանսիական իմպերիալիստների, իր զինվորական մինիստր «սոցիալիստ» Կերենսկու ձեռքով նորից զինվորներին հարձակման տարավ գերմանական ֆրոնտում, վորը վերջացավ արյունահեղ պարտությամբ:

Հուլիսի 3-ին Պիտերի բանվորների և զինվորների հսկայական մասսաները զենքը ձեռքին նորից դեմոնստրացիայի դուրս յեկան, պահանջելով, վորպեսզի խորհրդի գործադիր կոմիտեն իշխանությունը վերցնի իր ձեռքը: Կուսակցությունն այդ յելույթն անժամանակ եր համարում: Սակայն, յերբ պարզվեց, վոր բանվորներն ու զինվորներն ինչ ել լինի դուրս կգան, կուսակցությունը շարժման գլուխ կանգնեց, վորպեսզի նրան կազմակերպված բնույթ տա: Խորհրդի պարագլուխները — մենշևիկներն ու եսեռները, վորոնք արդեն վերջնականապես և բացահայտորեն միացել եյին հակահեղափոխական բուրժուազիայի հետ, դեմոնստրացիա անող մասսաների դեմ շարժեցին ֆրոնտից կանչված ժամանակավոր կառավարության հավատարիմ զորքերին, վորոնք կրակ բաց արին դեմոնստրացիայի վրա:

Հուլիսի 3—4-ի դեպքերը պարզորոշ կերպով ցույց տվին մասսաներին, վոր մենշևիկների և եսեռների կողմից պաշտպանություն գտնող հակահեղափոխությունը կամավոր կերպով իշխանությունը չի հանձնի: Սկսվեց ռեակցիայի դաժանային խրախճանքը, ավերվեց «Правда»-ն, նրա տպարանը և մի շարք կուսակցական կոմիտեներ: Բոլշևիկները ձերբակալվում ու բանտ եյին նետվում, զինաթափվում եյին հեղափոխական զորամասերը:

Սկսեցին հետամտել Լենինին և վորսալ նրան «սոցիալիստ» Կերենսկու (վորը կոալիցիոն կառավարության գլուխ եր կանգնած) վորոնողները: Լենինը կուսակցության Կենտկոմի վորոշմամբ ընդհատակ անցավ, բանվոր-բոլշևիկների ոգնությամբ թաքնվելով Պետրոգրադի սահմաններից դուրս: Այդտեղից Լենինը չդադարեց հետևել ծավալվող դեպքերին և կուսակցության գործողության համար ղեկավար դիրեկտիվներ տալ: Միայն Հոկտեմբերյան ապստամբությունից մի քիչ առաջ ապստամբությունը ղեկավարելու համար Լենինն անլեգալ կերպով նորից տեղափոխվեց Պետրոգրադ:

Մեր կուսակցության VI համագումարը, վորը գումարվեց հուլիսյան որերից մի ամիս հետո, դարձավ Հոկտեմբերի նախադռներին կուսակցության մարտական նախապատրաստության համագումարը: Լենինի բացակայությամբ, վորը հարկադրված եր թաքնվելու, տեղի ունեցած այդ համագումարն անցկացավ ընկ. Ստալինի անմիջական ղեկավարությամբ: Ընկ. Ստալինը ներկայացրեց Բուխարինի, Պրեոբրա-

ժենսկու, Ցարոսլավսկու և մյուսների ապորտունիստական թեորիաները, վորոնք փորձում եյին աջից ու «ձախից» ապացուցել, թե պրոլետարիատի համար անհնարին է անցնել հեղափոխական զինված պայքարի՝ հանուն իշխանության և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման: Ի պատասխան Պրեոբրաժենսկու տրոցկիստական հայտարարության, թե սոցիալիզմի շինարարությունը հնարավոր է միայն պրոլետարական հեղափոխության հաղթանակի պայմանով՝ Արևմուտքում, ընկ. Ստալինը հայտարարեց.—

«Չի բացառվում այն հնարավորությունը, վոր հենց Ռուսաստանը լինի սոցիալիզմի ուղին հարթող յերկիրը: Մինչև այժմ վոչ մի յերկիր չի ոգտվել այնպիսի բացարձակ ազատությունից, վորպիսին յեղել է Ռուսաստանում և չի փորձել իրագործել բանվորների հսկողությունն արտադրության վրա: Բացի դրանից, մեր հեղափոխության բազան ավելի լայն է, քան Արևմտյան Յեվրոպայում... Մեզնում բանվորներին աջակցում են գյուղացիության չքավորագույն խավերը... Պետք է դեն շպրտել այն հնացած տեսակետը, վոր միայն Յեվրոպան կարող է մեզ ճանապարհ ցույց տալ»:

Կուսակցության VI համագումարը, վորը ղեկավարվում եր Ստալինի կողմից, կուսակցության առաջ դրեց հանուն իշխանության՝ զինված պայքարի, զինված ապստամբության, հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերածելու համար ուժերը նախապատրաստելու անմիջական խնդիրը:

«Հակահեղափոխությունը,— ասում եր ընկ. Ստալինը VI համագումարում,—կարող է դեռ մեկ-յերկու ամիս գոյություն ունենալ: Սակայն, քանի զարգանում են հեղափոխության ուժերը... բանվորները վոտքի կհանեն և իրենց շուրջը կհամախմբեն գյուղացիության չքավոր շերտերին, կբարձրացնեն բանվորական հեղափոխության դրոշը և սոցիալիստական հեղափոխության դարաշրջանը բաց կանեն Արևմուտքում»:

VI համագումարից վոչ շատ առաջ մեր կուսակցության մեջ ընդունվեց Տրոցկին: Յերբ Տրոցկին խզեց մենշևիզմի հետ և կանգնեց բոլշևիկների դիրքի վրա, նա ընդունվեց մեր կուսակցության մեջ: Սակայն դեպքերը ցույց տվին, վոր Տրոցկու բոլշևիկյան դիրքի վրա անցնելը ձևական եր: Հեղափոխության մեջ միայն ամենակարճ ժամանակով Տրոցկին թաքցրեց իր մենշևիկյան բնույթը և արդեն միքանի ամսից հետո, յերբ կուսակցությունը պայքարում եր խաղաղության համար և ստորագրում Բրեստի հաշտության պայմանագիրը, նա նոր վեճի բռնվեց Լենինի և կուսակցության հետ: Հետագայում էլ Տրոցկին վերջ չդրեց իր հարձակումներին կուսակցության դեմ, վորի հետևանքով կուսակցությունը նրան վոչ միայն արտաքսեց իր շարքերից,



այլև Խորհրդային Միության սահմաններից դուրս վտարեց, վորտեղ նա ԽՍՀՄ-ի դեմ հակահեղափոխական պայքարի առաջավոր կազմակերպիչն է հանդիսանում:

1917 թվի ամռանը հեղափոխական ուժերի մոբիլիզացիան տեղի յեր ունենում բացառիկ արագությամբ և յեռանդով: Խորհուրդներն ավելի ու ավելի բոլշևիկյան եյին դառնում: Ժամանակավոր կառավարությունը չկարողացավ բավարարել բանվորների և զինվորների պահանջներից և վոչ մեկը և բազմիցս փորձում եր զինված ուժեր շարժել գյուղացիների դեմ, վորոնք չսպասելով վերևից վորոշման, սկսել եյին կալվածատիրական հողերը բաժանել: Բուրժուազիան և կալվածատերերը տեսնում ու զգում եյին իրենց վրա արշավող սոցիալիստական հեղափոխության ջերմ շունչը: Նրանք փորձ արին՝ իրենց ուժերը Մոսկվայում «պետական խորհրդակցության» հավաքելու, վորտեղ հեղափոխության դեմ ազդակող [?] ճառերով յելույթ ունեցավ Կերենսկին, վորտեղ հակահեղափոխական գեներալները համաձայնության յեկան հեղափոխությունը խեղդելու առթիվ, վորտեղ վաճառական–ֆաբրիկանտ Ռյաբուշինսկիներն սպառնում եյին պրոլետարիատին, վոր նրան կխեղդի «սովի վոսկրոտ ձեռքը»... Մոսկվայի պրոլետարիատը դրան պատասխանեց ընդհանուր գործադուլով, այդ խորհրդակցության պատգամավորներին չտալով վո՛չ ավտոմոբիլ, վո՛չ տրամվայ, վո՛չ էլ ճաշ:

Իսկ յերբ ցարական գեներալ Կորնիլովը, «սոցիալիստ» Կերենսկու ուղղակի համաձայնությամբ, փորձեց արշավել Պետրոգրադի վրա, վորպեսզի այն վողողի բանվորական արյունով, բանվոր դասակարգը վոտքի կանգնեց բոլշևիկների կոչով և ճնշեց այդ հակահեղափոխական միապետական շարժումը:

Հետագայում այդ ամբողջ շրջանը (մայիս—ոգոստոս) բնութագրելով, ընկ. Ստալինը գրում եր.—«Ճգնաժամը Փրոնտում և քայքայումը թիկունքում իրենց գործը տեսնում են, ուժեղացնելով ծայրագույն թևերը և յերկու կողմից սեղմելով համաձայնողական-պաշտպանողականներին (ոբորոնցիներին [?]): Հեղափոխությունը մոբիլիզացիայի յե յենթարկվում, առաջացնելով հակահեղափոխության մոբիլիզացիան: Հակահեղափոխությունն իր հերթին գոտեպնդում է հեղափոխությունը, առաջացնելով հեղափոխական մակընթացության նոր ալիքներ: Իշխանությունը նոր դասակարգին անցնելու հարցը դառնում է որվա ակներև հարց»: Յեվ չնայած յունկերների տեռորին ու համաձայնողականների կառավարության հետապնդումներին, «մասսաների հեղափոխական մոբիլիզացիայի կենտրոնում կանգնած է միասնական և միաձույլ կուսակցությունը,—այսպես է մեր կուսակցության դրության պատկերն այդ ժամանակաշրջանում»:

ժենկու, Ցարոսլավսկու և մյուսների ապորտունիստական թեորիաները, որոնք փորձում էին աջից ու «ձախից» ապացուցել, թե պրոլետարիատի համար անհնարին է անցնել հեղափոխական զինված պայքարի՝ հանուն իշխանության և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման: Ի պատասխան Պրեոբրաժենսկու տրոցկիստական հայտարարության, թե սոցիալիզմի շինարարությունը հնարավոր է միայն պրոլետարական հեղափոխության հաղթանակի պայմանով՝ Արևմուտքում, ընկ. Ստալինը հայտարարեց.—

«Չի բացառվում այն հնարավորությունը, որ հենց Ռուսաստանը լինի սոցիալիզմի ուղին հարթող երկիրը: Մինչև այժմ ոչ մի երկիր չի օգտվել այնպիսի բացարձակ ազատությունից, որպիսին յեղել է Ռուսաստանում և չի փորձել իրագործել բանվորների հսկողությունն արտադրության վրա: Բացի դրանից, մեր հեղափոխության բազան ավելի լայն է, քան Արևմտյան Յեվրոպայում... Մեզնում բանվորներին աջակցում են գյուղացիության չքավորագույն խավերը... Պետք է դեն շպրտել այն հնացած տեսակետը, որ միայն Յեվրոպան կարող է մեզ ճանապարհ ցույց տալ»:

Կուսակցության VI համագումարը, վորը ղեկավարվում եր Ստալինի կողմից, կուսակցության առաջ դրեց հանուն իշխանության՝ զինված պայքարի, զինված ապստամբության, հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերածելու համար ուժերը նախապատրաստելու անմիջական խնդիրը:

«Հակահեղափոխությունը,— ասում էր ընկ. Ստալինը VI համագումարում,—կարող է դեռ մեկ-երկու ամիս գոյություն ունենալ: Սակայն, քանի զարգանում են հեղափոխության ուժերը... բանվորները փոքր կհանեն և իրենց շուրջը կհամախմբեն գյուղացիության չքավոր շերտերին, կբարձրացնեն բանվորական հեղափոխության դրոշը և սոցիալիստական հեղափոխության դարաշրջանը բաց կանեն Արևմուտքում»:

VI համագումարից ոչ շատ առաջ մեր կուսակցության մեջ ընդունվեց Տրոցկին: Երբ Տրոցկին խզեց մենշևիզմի հետ և կանգնեց բոլշևիկների դիրքի վրա, նա ընդունվեց մեր կուսակցության մեջ: Սակայն դեպքերը ցույց տվին, որ Տրոցկու բոլշևիկյան դիրքի վրա անցնելը ձևական էր: Հեղափոխության մեջ միայն ամենակարճ ժամանակով Տրոցկին թաքցրեց իր մենշևիկյան բնույթը և արդեն միքանի ամսից հետո, երբ կուսակցությունը պայքարում էր խաղաղության համար և ստորագրում Բրեստի հաշտության պայմանագիրը, նա նոր վեճի բռնվեց Լենինի և կուսակցության հետ: Հետագայում էլ Տրոցկին վերջ չդրեց իր հարձակումներին կուսակցության դեմ, որի հետևանքով կուսակցությունը նրան ոչ միայն արտաքսեց իր շարքերից,



այլև Խորհրդային Միության սահմաններից դուրս վտարեց, որտեղ նա ԽՍՀՄ-ի դեմ հակահեղափոխական պայքարի առաջավոր կազմակերպիչն է հանդիսանում:

1917 թվի ամռանը հեղափոխական ուժերի մոբիլիզացիան տեղի էր ունենում բացառիկ արագությամբ և յեռանդով: Խորհուրդները ավելի ու ավելի բոլշևիկյան էին դառնում: Ժամանակավոր կառավարությունը չկարողացավ բավարարել բանվորների և զինվորների պահանջներից և ոչ մեկը և բազմիցս փորձում էր զինված ուժեր հանել գյուղացիների դեմ, որոնք չսպասելով վերևից որոշման, սկսել էին կալվածատիրական հողերը բաժանել: Բուրժուազիան և կալվածատերերը տեսնում ու զգում էին իրենց վրա արշավող սոցիալիստական հեղափոխության ջերմ շունչը: Նրանք փորձ արին՝ իրենց ուժերը Մոսկվայում «պետական խորհրդակցության» հավաքելու, որտեղ հեղափոխության դեմ աղաղակող ճառերով յելույթ ունեցավ Կերենսկին, որտեղ հակահեղափոխական գեներալները համաձայնության յեկան հեղափոխությունը խեղդելու առթիվ, որտեղ վաճառական-ֆաբրիկանտ Ռյաբուշինսկիներն սպառնում էին պրոլետարիատին, որ նրան կխեղդի «սովի ոսկրոտ ձեռքը»... Մոսկվայի պրոլետարիատը դրան պատասխանեց ընդհանուր գործադուլով, այդ խորհրդակցության պատգամավորներին չտալով ո՛չ ավտոմոբիլ, ո՛չ տրամվայ, ո՛չ էլ ճաշ:

Իսկ յերբ ցարական գեներալ Կորնիլովը, «սոցիալիստ» Կերենսկու ուղղակի համաձայնությամբ, փորձեց արշավել Պետրոգրադի վրա, վորպեսզի այն վողողի բանվորական արյունով, բանվոր դասակարգը վոտքի կանգնեց բոլշևիկների կոչով, և ճնշեց այդ հակահեղափոխական միապետական շարժումը:

Հետագայում այդ ամբողջ շրջանը (մայիս—օգոստոս) բնութագրելով, ընկ. Ստալինը գրում էր.—«Ճգնաժամը Ֆրոնտում և քայքայումը թիկունքում իրենց գործը տեսնում են, ուժեղացնելով ծայրագույն թևերը և յերկու կողմից սեղմելով համաձայնողական-պաշտպանողականներին (աբորոնեցներին): Հեղափոխությունը մոբիլիզացիայի յե յենթարկվում, առաջացնելով հակահեղափոխության մոբիլիզացիան: Հակահեղափոխությունն իր հերթին գոտեպնդում է հեղափոխությունը, առաջացնելով հեղափոխական մակընթացության նոր ալիքներ: Իշխանությունը նոր դասակարգին անցնելու հարցը դառնում է օրվա ակնբախ հարց»: Յեվ չնայած յունկերների տեռորին ու համաձայնողականների կառավարության հետապնդումներին, «մասսաների հեղափոխական մոբիլիզացիայի կենտրոնում կանգնած է միասնական և միաձույլ կուսակցությունը,—այսպես է մեր կուսակցության դրության պատկերն այդ ժամանակաշրջանում»:

## ԳՐՈՀԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՇՐՋԱՆ
## (1917 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ)

Կորնիլովի խռովությն ամենքին ցույց տվեց, թե ուր են տանում մենշևիկներն ու էսէռները: Նա ամրապնդեց մեր շարքերը, ավելի ժողովրդական դարձրեց մեր կուսակցությունը: Օգտվելով այդ խռովությունից, մենք սկսեցինք բանվորական Կարմիր գվարդիա ստեղծել: Պետրոգրադի և Մոսկվայի խորհուրդները դարձան բոլշևիկյան: Ավելի ու ավելի էր բոլշևիկանում բանակը, որը հեղափոխության նախորդ ամիսների մեծ փորձով համոզվեց, որ միայն բոլշևիկները (և ուրիշ ոչ մի կուսակցություն) կարող են հող տալ տանջված գյուղացուն և խաղաղություն՝ պատերազմի յերկար տարիներին տառապած բանակին: Բոլշևիկների ազդեցությամբ ծավալվում էր գյուղացիական շարժումը՝ կալվածատիրական հողի անմիջական գրավման համար: Կուսակցությունն ընդհուպ մոտեցավ զինված ապստամբությանը:

«Այդ շրջանի (սեպտեմբեր—հոկտեմբեր) բնորոշ գիծը,—ասում է ընկ. Ստալինը,—պետք է համարել ճգնաժամի արագ հասունացումը, իշխող շրջանների լիակատար շփոթությունը, էսէռների և մենշևիկների մեկուսացումը և տատանվող տարրերի մասսայական կերպով բոլշևիկների կողմն անցնելը»:

Լենինն ընդհատակից օր-օրի սովորեցնում էր կուսակցությանը և ժողովրդական մասսաներին, թե ինչպես պետք է գործել, մշտապես հիշեցնելով, որ պետք է պատրաստվել և մասսաներին պատրաստել զինված պայքարի: Լենինն ուշադիր կերպով վերլուծում էր քաղաքական դրությունը, մատնանշում էր, թե ինչպես մասսաներն ավելի ու ավելի ընդհարվում են ժամանակավոր կառավարության հետ, յեզրակացություն էր հանում, որ ապստամբության ժամը հնչել է, և մշակում էր ապստամբության պլանը:

«Այժմ հրաժարվել զինված ապստամբությունից,—գրում էր Լենինը հոկտեմբերի 21-ին,—կնշանակեր հրաժարվել բոլշևիզմի գլխավոր լոզունգից (ամբողջ իշխանությունը խորհուրդներին) և ամբողջ հեղափոխական-պրոլետարական ինտերնացիոնալիզմից ընդհանրապես»:

Սակայն զինված ապստամբությունը քաղաքական պայքարի առանձնահատուկ յեղանակ է, յենթարկված առանձնահատուկ օրենքների, վորոնք պետք է ուշադիր կերպով կշռադատվեն: Այդ ճշմարտությունը բացառիկ ռելյեֆությամբ արտահայտել է Կ. Մարքսը, որը գրել է, թե զինված «ապստամբությունը, ինչպես և պատերազմը, արվեստ է»:

Այդ արվեստի գլխավոր օրենքներից Կ. Մարքսն առաջադրել է.—

1. Վոչ մի ժամանակ չխաղալ ապստամբության հետ, այլ այն սկսելով, հաստատ գիտենալ, որ պետք է մինչև վերջը գնալ:



2. Անհրաժեշտ է վճռական տեղում և վճռական մոմենտին ուժերի մեծ գերակշռություն հավաքել, վորովհետև ավելի լավ նախապատրաստություն և կազմակերպություն ունեցող թշնամին կոչնչացնի ապստամբներին:

3. Յերբ ապստամբությունն սկսված է, պետք է գործել մեծագույն վճռականությամբ և անպայման, անվիճելիորեն հարձակման անցնել: «Պաշտպանությունը մահ է զինված ապստամբության համար»:

4. Պետք է ջանալ թշնամուն հանկարծակի բռնելու, մոմենտը վորսալու, քանի նրա զորքերը ցրված են:

5. Պետք է ամեն օր թեկուզ և փոքրիկ հաջողություններ ձեռք բերել (կարելի յե ասել,—ամեն ժամ, յեթե գործը վերաբերում է մի քաղաքի), ինչ գնով էլ որ լինի «բարոյական գերակշռություն» պահպանելով...

Կիրառելով Ռուսաստանի և 1917 թվի հոկտեմբերի նկատմամբ, դա նշանակում է — միաժամանակ, ըստ հնարավորին հանկարծակի և արագ հարձակում Պիտերի վրա, անպայման և՛ դրսից, և՛ ներսից, և՛ բանվորական թաղամասերից, և՛ Ֆինլանդիայից, և՛ Ռևելից, Կրոնշտադտից, ամբողջ նավատորմի հարձակում, ուժերի վիթխարի գերակշռության կուտակում մեր «բուրժուական գվարդիայի» (յունկերների) 15—20 հազարի (գուցե և ավելիի) հանդեպ, մեր վանդեյան զորքերի (կազակային մասերի) հանդեպ և այլն»:

1917 թ. հոկտեմբերի 10-ին մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեն արդեն անլեգալ կերպով Պիտեր յեկած Լենինի ներկայությամբ, բոլոր ձայներով ընդդեմ յերկուսի (Զինովյևի և Կամենևի) վորոշեց անմիջապես նախապատրաստվել ապստամբության համար:

«Կենտկոմն ընդունում է,—ասվում է Կենտկոմի հոկտեմբերի 10-ի (23-ի) բանաձևում,—որ ինչպես ռուսական հեղափոխության միջազգային դրությունը (գերմանական նավատորմի ապստամբությունը, վորպես ծայրահեղ արտահայտություն ամբողջ Յեվրոպայում համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հասունացման, ապա իմպերիալիստների աշխարհի սպառնալիքը՝ Ռուսաստանում հեղափոխությունը խեղդելու նպատակով), նույնպես և ռազմական դրությունը (ռուսական բուրժուազիայի և Կերենսկու ու Ընկ. անվիճելի վորոշումը՝ Պիտերը գերմանացիներին հանձնելու մասին), նույնպես և պրոլետարական կուսակցության կողմից խորհուրդներում մեծամասնություն ձեռք բերելը — այս բոլորը գյուղացիական ապստամբության և ժողովրդական վստահության դեպի մեր կուսակցությունը կատարած շրջադարձի (ընտրությունները Մոսկվայում) առնչությամբ, վերջապես, յերկրորդ կորնիլովշչինայի բացահայտ նախապատրա-

տումը (զորքերը Պիտերից դուրս հանելը, դեպի Պիտեր կազակներ բերելը, Մինսկի շրջապատումը կազակներով և այլն) — այս բոլորն օրակարգում դնում են զինված ապստամբության խնդիրը:

Այսպիսով ընդունելով, որ զինված ապստամբությունն անխուսափելի է և միանգամայն հասունացած, Կենտկոմն առաջարկում է կուսակցության բոլոր կազմակերպություններին ղեկավարվել դրանով և այդ տեսակետից քննարկել և լուծել բոլոր գործնական հարցերը (Հյուսիսային մարզի խորհուրդների համագումարի, Պիտերից զորքերը հանելու, մոսկովցիների և մինսկցիների ելույթների և այլն)»:

Ապստամբության գործնական ղեկավարության համար կուսակցության Կենտկոմն իր հաջորդ, հոկտեմբերի 16 (29-ի) նիստում կենտրոն ընտրեց, որի մեջ մտան.—Սվերդլովը, Ստալինը, Ձերժինսկին, Բուբնովը և Ուրիցկին:

Կենտկոմում ապստամբության դեմ քվեարկող Զինովևն ու Կամենևը համաձայնողական «Новая Жизнь» թերթում մի նամակ հրապարակեցին, որը ցույց էր տալիս, որ նրանք չեն հավատում պրոլետարիատի ուժին և ընդունակության՝ գյուղացիությանն իր հետևից տանելու և չեն հասկանում լենինյան ուսմունքը դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու մասին: Իրենց նամակում նրանք հաստատում էին, որ պրոլետարիատի ելույթը դատապարտված է ջախջախման, որովհետև նրա դեմ կլինի ոչ միայն բուրժուազիան, այլև գյուղացիությունը. նրանք համոզում էին կուսակցությանը՝ համբերելու Սահմանադիր ժողովի հրավիրմանը. Նրանք կուսակցությանը վախեցնում էին նրանով, որ հակառակորդի ուժերն իբր թե շատ մեծ են և կազմակերպված, և որ պրոլետարիատն ի վիճակի չի լինի նրանց հաղթահարելու: Այդ նամակով Կամենևը և Զինովևը բուրժուազիայի համար բաց էին անում ապստամբության կազմակերպման ծրագիրը, որը կուսակցությունը գաղտնի էր պահում:

Լենինն ամբողջ վճռականությամբ դեմ դուրս եկավ «զույգ ընկերների» այդ անլուր դավաճանությանը, հայտարարեց, որ ինքը նրանց այլևս ընկերներ չի համարում և իրեն համար ամոթ կհամարեր, եթե այդ նախկին ընկերների վերաբերմամբ հին մտերմության պատճառով սկսեր տատանվել նրանց դատապարտելու խնդրում: Լենինը պահանջում էր կուսակցությունից վտարել կուսակցական դիսցիպլինան խախտող Զինովևին և Կամենևին:

«Թող պարոնայք Զինովևն ու Կամենևը,—գրում էր Լենինը,—հիմնեն իրենց կուսակցությունը տասնյակ շփոթված մարդկանցից կամ Սահմանադիր ժողովի թեկնածուներից: Բանվորներն այդպիսի կուսակցության մեջ չեն մտնի... Խնդիրը կլուծվի,—նախագուշակում էր Լենինը,—բանվորները կմիաձուլվեն, գյուղացիական ապստամբությունը և զինվորների ծայրահեղ անհամբերությունը ֆրոնտում իրենց գործը կտեսնեն: Ավելի սեղմ համախմբենք շարքերը,— պրոլետարիատը պետք է հաղթանակի»:



Եվ պրոլետարիատը, չքավորագույն գյուղացիության հետ, զինվորների ակտիվ մասնակցությամբ ֆրոնտում և թիկունքում, 1917 թ. նոյեմբերի 7-ին հաղթանակեց: Հոկտեմբերյան հեղափոխությունն իրագործեց պրոլետարիատի դիկտատուրան, սկիզբ դրեց սոցիալիզմի շինարարությանը յերկրագնդի 1/6-րդ մասում և դրանով կոմունիստական հեղափոխության դարաշրջանը բաց արեց ամբողջ աշխարհում:

«Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային նշանակությունը,—ասում է ընկ. Ստալինը,—միայն այն չէ, որ նա մի յերկրի մեծ նախաձեռնությունն է իմպերիալիզմի սիստեմը ճեղքելու գործում և սոցիալիզմի առաջին օջախն է իմպերիալիստական յերկրների օվկիանոսում, այլև այն, որ նա համաշխարհային հեղափոխության առաջին էտապն է և նրա հետագա ծավալման հզորագույն բազան»:

«Պետության մեջ և վոչ մի դասակարգ չի հասել իր տիրապետությանը, յեթե նա չի առաջ քաշել իր քաղաքական առաջնորդներին, իր առաջավոր ներկայացուցիչներին, վորոնք ընդունակ լինեն կազմակերպելու շարժումը և ղեկավարելու այն»:

ԼԵՆԻՆ

# VI ԳԼՈՒԽ

# ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ԼԵՆԻՆԸ—ՍՏԱԼԻՆԸ

## 1. Ի՞ՆՉ ԲԱՆ Է ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Ստալինը մեր բոլշևիկյան կուսակցության հանրաճանաչ առաջնորդն է, սոցիալիզմ կառուցող Խորհրդային Միության պրոլետարիատի առաջնորդը: Ստալինը Կոմինտերնի, միջազգային պրոլետարական հեղափոխության բանակի, հանրաճանաչ առաջնորդն է:

Ստալինը Լենինի ամենամոտ, ամենալավագույն աշակերտն է, ամենից ավելի փորձված պրոլետարական հեղափոխականը, մեր կուսակցության լավագույն թեորետիկը: Ստալինը յուրացրել է Մարքսի—Լենինի ուսմունքի ամենախորին հիմունքները և այն ավելի զարգացրել է: Ստալինն իսկական լենինեց է: Ստալինին սիրում են, Ստալինով հպարտանում են, Ստալինին ուշադրությամբ լսում են վողջ միջազգային պրոլետարիատը և աշխարհի կեղեքվող մասսաները:

Լենինը Ստալինի և մեր բոլորի, բոլշևիկների, համայն աշխարհի բոլոր պրոլետարների, աշխատավորների ուսուցիչն է: Լենինը բոլշևիզմի հիմնադիրը, մեր կուսակցության ստեղծողն է: Լենինն իր հեղափոխական գործունեության յերեսուն տարիների ընթացքում կռել ու կոփել է բոլշևիկյան կուսակցությունը, նրան որինակ դարձնելով ամբողջ Կոմունիստական Ինտերնացիոնալի համար: Լենինը մարտնչել է բանվոր դասակարգի բոլոր թշնամիների դեմ, մերկացրել և անդուլ պայքարել է մենշևիկների, Տրոցկու և բոլոր ոպորտունիստների դեմ, վորոնք դավաճանել են բանվոր դասակարգի գործին: Լենինը բոլշևիզմի գաղափարները միջազգային պրոլետարիատի սեփականությունն է դարձրել: Լենինը Կոմունիստական Ինտերնացիոնալի կազմակերպիչն է: Լենինի անունն անմահ է, նա ապրում է համայն աշխարհի աշխատավորների սրտերում: Լենինը բոլոր շահագործվողների և կեղեքվողների մեծագույն առաջնորդն է:

Լենինը Մարքսի և Ենգելսի ամենահավատարիմ, ամենահետևողական, ամենահանճարեղ աշակերտն է, վորն ազատել է նրանց հեղափոխական ուսմունքը մենշևիկ—ոպորտունիստների աղավաղումից, լրացրել է այն, զարգացրել ու առաջ է տարել կապիտալիզմի և պրոլետարիատի դասակարգային պայքարի նոր պայմաններում: Լենինի ուսմունքն իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխությունների դարաշրջանի մարքսիզմն է: «Ավելի ճիշտ՝ Լենինի ուսմունքը պրոլետարական հեղափոխության թեորիան ու տակտիկան է՝ ընդհանրապես, պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան ու տակտիկան է՝ առանձնապես»:

Մարքսը և նրա հետ միասին նրա պայքարի ու աշխատանքի անփոփոխ ընկեր Ենգելսը — գիտական սոցիալիզմի հիմնադիրներն են: Նրանք պրոլետարիատի մեծագույն գաղափարախոսներն են, վորոնք բանվոր դասակարգին տվել են ամենասուր զենքը՝ ընդդեմ կապիտալիստական աշխարհի, այն է՝ ուսմունք պրոլետարիատի դիկտատուրայի մասին, կուսակցության՝ վորպես բանվոր դասակարգի ավանգարդի մասին, պրոլետարական հեղափոխության մասին:

Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը միջազգային պրոլետարական հեղափոխության առաջնորդներն են, բանվոր դասակարգի գաղափարախոսներն են, կապիտալիստական աշխարհի դեմ նրա պայքարի ներշնչողներն ու կազմակերպիչներն են:

Նրանք հանդիսանում են մեծագույն, իր գիտական հիմնավորման տեսակետից միակ ճիշտ այն հեղափոխական թեորիայի կրողները, վորի վերջնական հաղթանակը դասակարգային կատաղի պայքարի միջոցով, պրոլետարիատի դիկտատուրայի սահմանման ու ամրապնդման միջոցով տանում է դեպի այնպիսի կարգ, վորտեղ չի լինի վոչ մի տիրապետություն, վոչ մի ճնշում, վորտեղ յուրաքանչյուր վոք կաշխատի «ըստ իր ընդունակությունների և կստանա ըստ իր պահանջների»:

Այս տեսակետից Մարքսը—Ենգելսը—Լենինը—Ստալինը պատկանում են ամբողջ մարդկությանը:

### ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԴՊՐՈՑԸ

Մեծ են այն դժվարությունները, վորոնք կապված են բանվոր դասակարգի գաղափարախոսության մշակման հետ, նրա առաջավորների միավորման և նրա հեղափոխական կուսակցության ստեղծման հետ: Բուրժուազիայի տիրապետության, աշխատավորական մասսաների անլուր չարչարանքների և զրկանքների բազմաթիվ տասնամյակներ անցան, մինչև վոր 1848 թ. յերևան յեկավ «Կոմունիստական մանիֆեստը», վորն ապացուցեց, թե պրոլետարները բուրժուական աշխարհի դեմ մղած պայքարում վոչինչ չունեն կորցնելու, բացի իրենց շղթա-

ներից, վորը միջազգային վողջ բանվոր դասակարգին տվեց «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք» մարտական կոչը:

Հարկավոր յեղավ ավելի քան կես դար, մինչև վոր 1903 թ. յերևան յեկավ բոլշևիզմը, վորը վճռական ազդեցություն ունեցավ վոչ միայն Ռուսաստանի բանվորական շարժման բախտի վրա, այլև ամբողջ ազգային պրոլետարիատի հեղափոխական շարժման վրա: Հարկավոր յեղավ Լենինի կուսակցության մեծագույն ջանքերի ևս 15 տարի, վորպեսզի բանվոր դասակարգը բոլշևիկների ղեկավարությամբ 1917 թվի Հոկտեմբերյան որերին վերջապես դեն գցեր կալվածատերերին ու կապիտալիստներին և հայտարարեր իր դիկտատուրան — պրոլետարիատի դիկտատուրան:

Այդ պայքարը չեր կարող հաջողությամբ պսակվել, պրոլետարիատն իշխանություն չեր նվաճի, յեթե նա առաջ չքաշեր իր քաղաքական առաջնորդներին, վորոնք ընդունակ լինեյին կազմակերպելու և ղեկավարելու բանվորական շարժումը, վորոնք ընդունակ լինեյին ինչպես թեորիայում, նույնպես և պրակտիկայում, ինչպես պրոպագանդիստական աշխատանքում, նույնպես և բարիկադային կռիվներում ավելի բարձր, ավելի կազմակերպված և ավելի հեռատես լինել դասակարգային թշնամու ներկայացուցիչներից և առաջնորդներից: Պրոլետարիատի առաջնորդների նշանակությունն այն է, վոր նրանք իրենց մեջ մարմնավորում են պրոլետարական հեղափոխության հիմնական գծերը, վոր նրանք ղեկավարում են մասսաներին, խոր կերպով հասկանալով այն պայմանները, վորոնց մեջ ապրում են այդ մասսաները, և իմանալով, թե ինչպես պետք է փոխել այդ պայմանները: Մասսաներն այդպիսի մարդկանց վստահում են ղեկավարությունը, այդպիսի մարդիկ գլխավորելով մասսաներին, մեծագույն պատմական դեպքեր են կատարում:

Լենինը սովորեցնում է, վոր քաղաքականությունը լուրջ, դժվարին գիտություն է, վորովհետև քաղաքականությունն այն պայմանները գիտենալն է, վորոնց մեջ ապրում են ժողովուրդները, այն միջոցների ըմբռնումը, վորոնց միջոցով կարելի յե փոփոխել այդ պայմանները, մարդկանց կազմակերպելու ունակությունը, նրանց ղեկավարելու ընդունակությունը: Քաղաքականությանը տիրապետելը մեծ արվեստ է:

Բուրժուազիայի քաղաքագետները, նրա առաջնորդները ստեղծվել են դարերի ընթացքում, քաղաքական ղեկավարության և քաղաքական պայքարի ունակությունները նրանք ստանում եյին սերնդից-սերունդ: Այդ մարդիկ քաղաքականության մասին հասկացողություն ձեռք եյին բերում իրենց կյանքի առաջին գիտակցական որերից — ընտանիքում, դպրոցում, հասարակական ծառայության գործունեության ամբողջ ընթացքում:



Պրոլետարիատի համար անչափ դժվար է իր առաջնորդներին պատրաստելը: Նա չունի այն բարեհաջող պայմանները, վորպիսին ունի բուրժուազիան իր առաջնորդներին դաստիարակելու համար: Պրոլետարիատն այլ առավելություններ ունի.—դարավոր ատելություն դեպի թալանող-շահագործողը, արտադրական փայլուն դպրոց, վորը կազմակերպչական ունակություններ է մշակում, պրոլետարիատն ունի անհուն վրդովմունք, վորը նրան մասսայական յելույթների, ապստամբության է մղում, նա ունի պայքարի մեծագույն կամք և անվեհերություն, նա ունի բերկրալի, լուսավոր ապագայի հեռանկար:

Պրոլետարական քաղաքագետները պետք է բարձր լինեն բուրժուա-



Յա. Մ. Սվերդլով, ընդհատակյա հին գործիչ, հավատարիմ լենինեց, ԿԿ-ի քարտուղար յեվ Համ ԿԳԿ-ի առաջին նախագահ, Մեռավ 1919 թվին:

կան քաղաքագետներից, նրանցից ավելի փորձված, նրանցից ավելի վճռական:

Այդպիսի քաղաքագետ, այդպիսի առաջնորդ եր Մարքսը, վորի մահով «մարդկությունը,—ինչպես ասել է Ենգելսը,—ցածրացավ մի ամբողջ գլխով, ըստ վորում ամենահանճարեղ գլխով այն բոլորից, վորպիսին ունեցել է մարդկությունը վերջին ժամանակներս»:

Այդպիսի առաջնորդ, այդպիսի քաղաքագետ եր Լենինը, վորի մասին Ստալինը, վորպես պատասխան բուրժուական գրողներից մեկի

կողմից Լենինին Պետրոս Մեծի հետ համեմատելուն, ասել է.—«Ինչ վերաբերում է Լենինին և Պետրոս Մեծին, ապա վերջինս մի կաթիլ էր ծովում, իսկ Լենինը — մի ամբողջ օվկիանոս»:

Այդպիսի առաջնորդ, այդպիսի քաղաքագետ է Ստալինը, որի մասին Կոմինտերնը 1929 թ. ասել է, որ Լենինի մահվանից հետո նա հայտաբերեց իրեն, որպես «լենինյան ուսմունքի և բոլշևիզմի փառապանծ տրադիցիաների ամենից ավելի հավատարիմ և ամենից ավելի կայուն կրողը»:

Բանվոր դասակարգը քաղաքականությունը սովորել է իր պրոլետարական կյանքի և պայքարի դժվարին և արյունահեղ փորձի վրա:

«Կուսակցության փորձված և ազդեցիկ առաջնորդների պատրաստումը—երկար, դժվարին գործ է,—ասում էր Լենինը:—Իսկ առանց դրան պրոլետարիատի դիկտատուրան, նրա «կամքի միասնությունը» կմնան որպես փրազ: Մեզ մոտ՝ Ռուսաստանում ղեկավարների խմբի պատրաստումը տևեց 15 տարի (1903—1917 թ.թ.)—մենշևիկների հետ պայքարի 15 տարի, ցարիզմի հետապնդումների 15 տարի, 15 տարի, որոնց մեջ յեղել են առաջին հեղափոխության (1905 թ.), մեծ և զորեղ հեղափոխության տարիները. այնուամենայնիվ մեզ մոտ յեղել են նույնիսկ ամենալավագույն ընկերների «գլուխ կորցնելու» ցավալի դեպքեր»:

## ԼԵՆԻՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՄԱՍԻՆ

Իր ճառում, նվիրված բանվոր դասակարգի առաջնորդներից և մեր կուսակցության փորձված ղեկավարներից մեկի — Կենտկոմի քարտուղարի և Համառուսական Կենտգործկոմի առաջին նախագահի — Յակով Միխայլովիչ Սվերդլովի — հիշատակին, մահացած 1919 թվին, Լենինը տվել է ընդհանուր գնահատական, թե ինչպես պետք է լինի պրոլետարական առաջնորդը:

Այդ ճառում Լենինն ընդգծել է, որ հեղափոխության հաղթանակի կարևորագույն պայմանը պրոլետարական մասսաների կազմակերպումն է: Դրա համար էլ առաջնորդի նշանակությունն ամենից առաջ որոշվում է մասսաները կազմակերպելու նրա ընդունակությամբ: Սվերդլովը լավագույն տիպարն էր այդպիսի պրոլետարական կազմակերպչի:

Սակայն պրոլետարական առաջամարտիկի կազմակերպչական ընդունակությունները վոչինչ են, յեթե նրա մոտ հեղափոխական պայքարի պրակտիկան չի զուգորդվում, չի հյուսվում, չի բեղմնավորվում գիտական թեորիայով, որն ինքը ևս, իհարկե, պետք է ստուգվի պրոլետարիատի դասակարգային պայքարի ամենօրյա փորձով: Սվերդլովի օրինակով Լենինը ցույց է տալիս այնպիսի պրակտիկ-կազմակերպչի տիպարը, որը զուգորդում էր մարքսիզմ-լենինիզմն ամենօրյա հեղափոխական գործի հետ:

Սվերդլովն այն պրոլետարական առաջնորդներից մեկն էր, որոնք ամենասերտ կերպով կապված են իրենց հեղափոխական դասակարգի հետ: Գտնվելով հեղափոխական պայքարի ամենապատասխանատու պոստերում, նա իր կապը չէր կտրում մասսաներից, առանց որոնց չէր կարող լինել հաղթող պրոլետարական հեղափոխություն: «Հատկապես մարդու անձնուրաց նվիրվածությունը հեղափոխության, մարդու, որն անցել է բազմաթիվ բանտերի և Սիբիրի ամենահեռավոր աքսորների բովով,—ասում էր Լենինը,—ստեղծել է այնպիսի առաջնորդներ, ինչպես Սվերդլովը»: Միայն դա չի կոփել պրոլետարական առաջնորդի կազմակերպչական տաղանդը:

Սակայն այդպիսի առաջնորդի բոլոր արժանիքները նպատակին չեն հասնի, յեթե նա իրեն գերմարդ յերևակայի, յեթե նա իր շուրջը չհամախմբի բանվոր դասակարգի և գյուղացիության ամենից ավելի ակտիվ տարրերին, չաշխատի կոլեկտիվորեն: Սվերդլովը — հատկապես այդպիսի առաջնորդի տիպարն է:

Այդ բոլոր հատկությունները պրոլետարական առաջնորդի համար անառարկելի հեղինակություն են ստեղծում, որն առաջ է բերում մասսաների մեծագույն վստահությունը: Դա — հեղափոխական դասակարգի շարքերի և տողանների առջև և գլխին գտնվող հեղափոխական մարտիկի հեղինակությունն է:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆ Է

Բանվոր դասակարգի այդպիսի առաջնորդների պատրաստման միակ և ամենալավ դպրոցը բոլշևիկների կոմունիստական կուսակցությունն է, քանի որ կուսակցությունն է, որ իր մեջ է առնում պրոլետարիատի լավագույն տարրերին: Միայն լենինյան կուսակցությունն է ընդունակ դաստիարակելու այն հատկությունները, որոնք այնքան անհրաժեշտ են՝ ղեկավարելու պրոլետարիատին՝ իր պայքարում:

Բազմաթիվ տարիների ընթացքում կուսակցության դաստիարակած առաջնորդներից՝ պայքարի այդ հեղինակավոր, ազդեցիկ, փորձված առաջնորդներից՝ ամենաուշադիր ստուգման յենթարկելու միջոցով կազմվում է այն ամենից ավելի հեղինակավոր անձնավորությունների որակապես ամենապատասխանատու խումբը, որոնք կուսակցության կողմից ընտրվում են ամենապատասխանատու պոստերում: Լենինի կողմից դաստիարակված պրոլետարական հեղափոխականների — բոլշևիկների այդպիսի խումբ է մեր լենինյան Կենտրոնական Կոմիտեն:

Կուսակցության այդ բարձրագույն որգանում,—ասում է ընկ. Ստալինը,—«կենտրոնացված է մեր կուսակցության իմաստությունը: Յուրաքանչյուրը հնարավորություն ունի ուղղելու վորևէ մեկի անհատական կարծիքը, առաջարկությունը: Յուրաքանչյուրը հնարավորություն ունի մտցնելու իր փորձը: Յեթե այդ չլիներ, յեթե վորոշումներն ընդունվեյին անհատապես, մենք մեր աշխատանքում կունենայինք ամենալուրջ սխալներ: Քանի վոր յուրաքանչյուրը հնարավորություն ունի ուղղելու առանձին անձնավորությունների սխալները և քանի վոր մենք հաշվի յենք առնում այդ ուղղումները, մեր վորոշումներն ավելի կամ պակաս ճիշտ են լինում»: Կուսակցության լենինյան կենտկոմում տասնամյակների ընթացքում ջոկված են բանվոր դասակարգի լավագույն ղեկավարները, նրա առաջնորդ ընկ. Ստալինի գլխավորությամբ, վորոնք լենինյան կուսակցության մեջ Լենինի ղեկավարությամբ բոլշևիկյան դաստիարակություն և պրոլետարական կոփվածություն են ստացել:

## ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է՝ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻՆ ԶՐԿԵԼ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ

Բուրժուազիան գիտի պրոլետարական կազմակերպվածության ուժը և հասկանում է այն նշանակությունը, վորն ունեն պրոլետարիատի համար նրա առաջնորդները: Ահա թե ինչու նա ձգտում է իր ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով գլխատել բանվոր դասակարգի հեղափոխական շարժումը:

Մարքսը և Էնգելսը, հալածվելով իրենց յերկրի բուրժուական կառավարության կողմից, հարկադրված եյին իրենց հեղափոխական գործունեության յերկար տարիներն անցկացնել էմիգրացիայում, վտարանդիության մեջ: Լենինը, հալածվելով ցարական կառավարության կողմից, բանտ է նստել, աքսորվել և հարկադրվել է արտասահմանում ապրել: Յերբ նա, հաղթահարելով մեծագույն դժվարություններ, 1917 թ. ապրիլին վերադարձավ Ռուսաստան, բուրժուական վարձու մամուլը, մենշևիկների և էսէռների օժանդակությամբ, «սոցիալիստ» Կերենսկու գլխավորությամբ, վորի վորսորդական շները կրնկակոխ հետապնդում եյին Լենինին, սկսեց նրան հալածել: Հուլիսյան օրերից հետո, 1917 թվի համարյա ամբողջ ամառը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը, Լենինը հարկադրված եր թաքնվելու Պետրոգրադի սահմաններից դուրս, անմարդաբնակ մարգագետնում մի բանվոր-բոլշևիկի շինած հյուղակում: Հոկտեմբերից հետո բանվոր դասակարգի թշնամիները շարունակեցին հետապնդել միջազգային հեղափոխության առաջնորդին: 1918 թվին, նախկին Միխելսոնի գործարանում կայացած միտինգից հետո, Զամոսկվորեչյեյում, նա վիրավորվեց հակահեղափոխական էսէրուհի Կապլանի արձակած թունավոր գնդակ-



ներով: Այն ժամանակ մեծ դժվարությամբ հաջողվեց փրկել Վլադիմիր Իլյիչի կյանքը:

Գերմանական փաշիստներն ու սոցիալ-փաշիստները հոշոտեցին գերմանական պրոլետարիատի առաջնորդներին՝ Կարլ Լիբկնեխտին և Ռոզա Լյուքսեմբուրգին:

Հունգարիայում և Չինաստանում մոտերս գլխատվել են ամենից անվեհեր և պրոլետարիատի գործին ամենից ավելի նվիրված առաջնորդները:

Լավագույն հեղափոխական-բոլշևիկներին բոլոր բուրժուական յերկրներում հետապնդում են, ձերբակալում և բանտ նստեցնում:

Սակայն բուրժուազիան չի բավականանում միայն բանվորական առաջնորդների ուղղակի տեռորով, ֆիզիկական վոչնչացումով, կամ ձերբակալմամբ: Նա գաղութների թալանից ստացված հսկայական գերշահույթից կաշառման միջոցով բանվորական դասակարգի շրջանից դաստիարակում է դավաճան-առաջնորդներ, «մասսաների հեղափոխական եներգիան խեղդողներ»: Մակդոնալդը, Հենդերսոնը — Անգլիայում, Ժուոն, Պոլ Բոնկուրը, Ռենոդելը, Լեոն Բլյումը — Ֆրանսիայում, Կաուցկին, Շեյդեմանը, Հիլֆերդինգը — Գերմանիայում, Վանդերվելդեն — Բելգիայում, Հոմպերսը — Ամերիկայում և դեռ սոցիալ-փաշիստների շատ ուրիշ առաջնորդներ, վորոնք կաշառված և այլասերված են բուրժուազիայի կողմից, կատարում են կապիտալի գործակալների դերը բանվոր դասակարգի շրջանում:

Լենինը ցույց է տվել, թե ինչպես II Ինտերնացիոնալում գոյացել և բանվորական արիստոկրատիայի միջավայրից դուրս յեկած առաջնորդների տիպ,—առաջնորդ-դավաճանների, օպորտունիստների, բուրժուազիայի շահերը, «սեփական» բուրժուական պետության շահերը պաշտպանող առաջնորդների տիպ: Լենինը նշավակել է նրանց, անվանելով «բուրժուազիայի գործակալներ բանվորական շարժման մեջ», «կապիտալիստների դասակարգի բանվորական կամակատարներ»:

Լենինը բանվորական գործի այդ դավաճաններին նկատի ուներ, յերբ գրում եր.—«Առաջնորդներին պետք է ստուգել նրանց գործերով և վոչ թե միայն նրանց հայտարարություններով, նրանց դեկլարացիաներով: Քիչ դեպքեր չեն յեղել, յերբ սոցիալիստների լիդերները, առաջնորդները պատրաստ են յեղել ստորագրելու ամեն տեսակ հեղափոխական բանաձևեր, վորպեսզի հետո կյանքի մեջ չկիրառեն»:

Պրոլետարիատի գործին դավաճանող առաջնորդները դադարում են առաջնորդներ լինելուց, նրանք դեն են շպրտվում նրա միջավայրից, և հաստատ կերպով մոռացվում են նրա կողմից: Ստալինն ասում է.— «Ամենախոշոր հեղինակությունները մեզ մոտ անհետանում, առ վոչինչ են դառնում, հենց վոր բանվորական մասսաները դադարում են նրանց

վստահելուց, հենց վոր նրանք բանվորական մասսաների հետ ունեցած իրենց կապը կորցնում են: Պլեխանովը միանգամայն բացառիկ հեղինակություն եր վայելում, և ի՞նչ: Հենց վոր սկսեց քաղաքականապես կաղալ, բանվորները նրան մոռացան, հեռացան նրանից ու մոռացան նրան: Մի ուրիշ որինակ.—Տրոցկին նույնպես մեծ հեղինակություն եր վայելում, իհարկե, շատ ավելի պակաս, քան Պլեխանովը: Յեվ ի՞նչ: Հենց վոր նա հեռացավ բանվորներից, նրան մոռացան... Ինչ վերաբերում է մեր գիտակից բանվորներին, ապա նրանք Տրոցկուն հիշում են բարկությամբ, վրդովմունքով, ատելությամբ»:

Իրադարձությունը չհասկացող, դժվարություններից վախեցող, հեղափոխական գործին դավաճանող առաջնորդները ցած են գլորվում մասսաների կողմից, զրկվում են նրանց վստահությունից: Մոտերս, մեր կուսակցության՝ ամբողջ ֆրոնտով ծավալուն սոցիալիստական հարձակման անցնելու առնչությամբ, այդպես պատահեց այնպիսի «առաջնորդների» հետ, ինչպիսին են Ռիկովը, Բուխարինը, Տոմսկին: Դրանից առաջ, կուսակցության կողմից դեպի ինդուստրացումն արած կտրուկ շրջադարձի ժամանակ, կուսակցական ղեկավարությունից դուրս հանվեցին առաջնորդի կոչման հավակնություն ունեցող Զինովյեվն ու Կամենևը, վորոնք միացել եյին Տրոցկու հետ՝ միասնական հարձակում գործելու համար կուսակցության վրա, նրա Կենտրոնական Կոմիտեյի վրա:

Մեր կուսակցության գործին, Խորհրդային Միության և համայն աշխարհի պրոլետարիատի գործին դավաճանող «առաջնորդները» մըշտապես փորձել են խախտել կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի հեղինակությունը, զրպարտել Լենինին, ապա, նրա մահվանից հետո, նաև Ստալինին: Պրոլետարական կազմակերպվածության և դիսցիպլինայի թշնամիները բամբասել են կուսակցության հասցեյին, մեղադրել են նրան բյուրոկրատացման մեջ, բամբասել են նրա ապարատի վերասերման մասին, դեմագոգորեն աղաղակել են «առաջնորդների դիկտատուրայի» մասին, փորձելով կուսակցության յերիտասարդ սերունդը հակադրել հին բոլշևիկներին, կուսակցությունը հակադրել նրա առաջնորդներին: Թշնամիները գիտեն, վոր պրոլետարիատն անպարտելի յե իր կազմակերպվածությամբ, վոր պրոլետարիատը՝ ղեկավարված իր ավանգարդի կողմից, հաստատորեն գնում է դեպի իր նպատակը: Ահա թե ինչու դասակարգային թշնամու գործակալությունը փորձում է պառակտել կուսակցությունը, նրա ղեկավարությունը, նրա առաջնորդներին:



## ՎՈՐՊԵՍԶԻ ՂԵԿԱՎԱՐԵԼ, ՊԵՏՔ Է ՆԱԽԱՏԵՍԵԼ

Լինել պրոլետարիատի առաջնորդ — նշանակում է գնալ աշխատավորական միլիոնավոր մասսաների շարժման առաջից, անսխալ կերպով ճիշտ ուղի ցույց տալ այդ մասսաներին, կարողանալ ժամանակին, մյուսներից ավելի առաջ, մյուսներից ավելի լավ, մյուսներից ավելի ճիշտ լուծել այն բոլոր հարցերը, վորոնց հանդիպում են մասսաները՝ դասակարգային հեղափոխական պայքարում: Ընդսմին առաջնորդ լինել — նշանակում է կարողանալ զգայուն կերպով ունկնդրել միլիոնավոր մասսաների ձայնին, հաշվի առնել նրանց ամենորյա կարիքները, չկտրվել նրանցից:

Լինել առաջնորդ, պրոլետարական կուսակցության ղեկավար — նշանակում է կարողանալ գնահատել ստեղծված իրադրությունը, հասկանալ այն փոփոխությունները (իսկ հեղափոխական որերում — շատ արագ փոփոխությունները), վորոնք նրանում ստեղծվում են, պարզորոշ տեսնել դասակարգային ուժերի դասավորությունը, վորպեսզի հետ չմնալ շարժումից, այլ գլխավորել նրան:

Չի կարելի առաջ վազել, ցատկել չանցած էտապներից: Եթե դրությունն այնպես է, վոր մասսաները նախապատրաստված չեն, վոր ուղին բավականաչափ մաքրված չէ, վոր թշնամին դեռ միանգամայն չի կազմալուծված և ուժասպառված, ապա մասսաներից անպատասխանատու կերպով առաջ նետված ղեկավարը կարող է կորցնել մասսաների հետ ունեցած իր կապը, խախտել դեպի կուսակցությունը յեղած վստահությունը, մասսաներին մղել դեպի վտանգավոր և վնասակար ավանտյուրա: Իսկ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կորցնել կապը մասսաների հետ — նշանակում է վտանգի յենթարկել դիկտատուրան: «Ձախ» խոտորողները, վորոնք առաջ են վազում, փորձում են բղավոցով, վարչական ճնշմամբ, բյուրոկրատական թելադրումներով կյանքում կիրառել այն, ինչը պրոպագանդիստական, տնտեսական, կազմակերպական մեծ ջանքեր է պահանջում,—կորցնում են իրենց կապը մասսաների հետ, ծաղրի առարկա յեն դառնում մասսաների աչքին, վրդովեցնում են նրանց և կորցնում են նրանց ղեկավարելու իրավունքը:

Ընկ. Ստալինը նախազգուշացնում է, վոր ղեկավարության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի մասսաների ձայնին ուշադիր ունկնդրելու պատրաստակամությունը: «Ով ցանկանում է ղեկավարել շարժումը,—ասում է ընկ. Ստալինը,—և դրա հետ միասին կապ պահպանել միլիոնավոր մասսաների հետ, նա պետք է պայքարի յերկու ֆրոնտի վրա — ընդդեմ հետ մնացողների և ընդդեմ առաջ վազողների»: Մեր կուսակցությունը նրանով է ուժեղ, վոր ղեկավարվելով

այնպիսի առաջնորդի կողմից, վորպիսին Լենինն եր, ղեկավարվելով այնպիսի առաջնորդի կողմից, վորպիսին Ստալինն է, նա կարողացել է և կարողանում է պահպանել ու բազմապատկել իր կապերը բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաների հետ՝ նրանց դեպի կոմունիզմ տանող շարժման ճանապարհին:

Ղեկավարել — նշանակում է կարողանալ համոզել մասսաներին կուսակցության քաղաքականության ճշտության մեջ, առաջադրել և անցկացնել այնպիսի լոզունգներ, վորոնք մասսաներին մոտեցնում են կուսակցության դիրքերին և հեշտացնում են նրանց համար՝ իրենց սեփական փորձով ճանաչելու կուսակցության քաղաքականության ճըշտությունը:

Ղեկավարել — նշանակում է նախատեսել: Մեր կուսակցության ամբողջ հաղթական ուղին յերեք պատմական վճռական տասնամյակների ընթացքում վկայում է այն մասին, վոր Լենինն ու Ստալինն այն միակ առաջնորդներն են, վորոնք այնքան են տիրապետում գիտական սոցիալիզմի ուսմունքին, վոր նրանց ղեկավարությունը — դա բոլոր առկա հնարավորությունների օգտագործման գիտական նախատեսումն է և այդ հնարավորությունների կիրառումը կյանքում:

## 2. ԼԵՆԻՆ

Միջազգային բանվոր դասակարգի առաջնորդ և ուսուցիչ Մարքսի մահվանից տասը տարի հետո ռուսական բանվորական շարժման առաջին շարքերում հանդես յեկավ յերիտասարդ Լենինը, Մարքսի համոզված, հետևողական աշակերտը: Ընկ. Ստալինը Լենինին լեռնային արծիվ է անվանել:

Յերևան յեկավ մի առաջնորդ, վորը, չնայած իր յերիտասարդ հասակին (Լենինը ծնվել է 1870 թ.), իր նշանավոր «Ինչ է «ժողովրդի բարեկամները»» գրքում (վորը գրված է 1894 թվին և տպագրվելով հեկտոգրաֆի վրա, տարածվել է անլեգալ կերպով) տվել է այնպիսի խտացրած գաղափարներ, վորոնք նրա կյանքի հետագա ամբողջ յերեսուն տարվա ընթացքում պահպանել են իրենց ամենասուր քաղաքական և թեորետիկական նշանակությունը, վորոնք համաշխարհային-պատմական հաստատության են դրել:

Այդ գրքի յեզրափակիչ տողերում Լենինը գրում է.—«Յերբ նրա (պրոլետարիատի) առաջավոր ներկայացուցիչները յուրացնեն գիտական սոցիալիզմի գաղափարները, ռուսական բանվորի պատմական դերի գաղափարը, յերբ այդ գաղափարները լայն կերպով տարածվեն և բանվորության շրջանում ստեղծվեն ամուր կազմակերպություններ, վորոնք գիտակցական դասակարգային պայքարի կփոխեն բանվորների ներկա անջատ-անջատ տնտեսական կռիվը — այն ժամանակ ռուսական



բանվորը, բարձրանալով բոլոր դեմոկրատական էլեմենտների գլուխ, կտապալի միապետությունը և բացարձակ քաղաքական պայքարի ուղիղ ճանապարհով ռուսական պրոլետարիատին կտանի (բոլոր յերկրների պրոլետարիատի հետ կողք-կողքի) դեպի հաղթական կոմունիստական հեղափոխություն»:

Այս փոքրիկ հատվածում Լենինը դրել է պրոլետարական հեղափոխության ամենաարմատական հարցերը և հանճարեղ նախատեսությամբ նշել է նրանց լուծման ուղիները: Լենինն այդ գիրքը գրել է այն ժամանակ, յերբ բանվոր դասակարգը վոչ մի կուսակցություն չուներ, յերբ բանվորական խմբերը փոքրաթիվ եյին և ցիրուցան: Դա այն ժամանակն եր, յերբ վոչ մի բանվորական սոցիալիստական ծրագրի մասին խոսք չկար, յերբ մարքսիստական գրականությունը Ռուսաստանում աննշան եր ու արգելված, յերբ հեղափոխական ինտելիգենցիայի ուղեղներին իշխում եյին մանր-բուրժուական սոցիալիստ-նարոդնիկները, վորոնք չեյին տեսնում պրոլետարիատին, վոչ մի նշանակություն չեյին տալիս նրան և իրենց ամբողջ հույսը դրել եյին հետամնաց համայնքի վրա՝ վորպես գյուղացիական սոցիալիզմի հիմքի:

Մարքսի մահվանից տասը տարի հետո Լենինը վորպես լեռնային արծիվ բարձրացավ միջազգային բանվորական շարժման վրա: Նրա ամբողջ հետագա ուղին — դա դեպի վեր արտասովոր թռիչքների, մասսաները կազմակերպելու, նրանց քաղաքականապես լուսավորելու, հանուն կոմունիզմի նրանց պայքարը հանճարեղորեն ղեկավարելու լարված պայքարի ուղի յե:

Վորտեղ ել վոր գտնվելիս լիներ Լենինը,—թե՛ Պավոլժիեյի խոշորագույն քաղաքներ՝ Սիմբիրսկում, Կազանում, Սամարայում, թե՛ Պետերբուրգում, Մոսկվայում կամ Պսկովում, թե՛ իր յերկարատև միայնակ բանտարկության ժամանակ կամ Տուրուխանի յեռամյա տանջալից աքսորում, թե՛ արտասահմանում — շվեյցարական, անգլիական, գերմանական, գալլիական եմիգրացիայում,—Լենինը միշտ ել խոր թեորետիկական մարքսիստական անալիզը միահյուսում եր ամենօրյա գործնական հեղափոխական աշխատանքի հետ: Մարքսի ուսմունքը նա զարգացնում, լրացնում և կապիտալիզմի զարգացման և միջազգային պրոլետարական շարժման նոր ետապին համապատասխանող բարձրության վրա յեր դնում. նա հեռավոր պատմական հեռանկարների նախատեսությունը հանճարեղորեն զուգորդում եր ամենօրյա համարձակ և բազմակողմանի հեղափոխական գործունեյության հետ:

«Լենինը ծնվել եր հեղափոխության համար,—ասում է ընկ. Ստալինը:—Նա իսկապես հեղափոխական պոռթկումների հանճար եր և հեղափոխական ղեկավարության մեծագույն վարպետ: Վոչ մի ժամանակ նա իրեն այնքան ուրախ և ազատ չեր զգում, վորքան հեղափոխական

ցնցումների եղովտայում»։ Նախատեսության, դասակարգային ուժերի դասավորության ճիշտ հաշվառքի նրա հանճարեղ ընդունակությունը, ըմբռնելու նրա կարողությունը՝ թե միլիոններն ուր և ինչպես են շարժվում և կշարժվեն — առանձնապես ամբողջական և բացորոշ յերևան եյին գալիս պատմության բոլոր խոշոր շրջադարձերի ժամանակ։ 1905 թվի հեղափոխության և ռեակցիայի հետագա տարիների փորձը, հեղափոխական շարժման վերելքը 1910—1912 թվերին, փետրվարյան օրերը 1917 թվին (Շվեյցարիայից ուղարկած՝ Լենինի «Նամակներ հեռվից»-ը, նրա «ապրիլյան թեզիսները» և զեկուցումները), Նախահոկտեմբերյան օրերը (նրա նամակները, հոդվածները և ելույթներն ապստամբության նախօրյակին) — այս բոլորը խոսում են լենինյան անվրեպ բացառիկ խորության մասին, նրա գիտական նախատեսության բացառիկ ճշտության, լենինյան լոզունգների պարզության, Լենինի մտահղացումների հեղափոխական համարձակության մասին։

Լենինն իր հանճարեղ զգոնությամբ ըմբռնում եր միլիոնավոր մասսաների տրամադրությունը, իր պայծառատես հայացքով շատ առաջուց տեսնում եր դեպքերի հնարավոր ընթացքը, հենվելով հեղափոխական մարքսիզմի գրանիտյա թեորետիկական բազայի վրա, հաշվի առնելով հեղափոխական շարժումների բոլոր ուղիներն ու շեղումները։ Լենինը, շնորհիվ հանճարեղ առաջնորդի իր այդ հատկությունների, կարողանում եր արագորեն ընդգրկել և հասկանալ վրա հասնող դեպքերի իմաստը և գործելակերպի պարզորոշ գիծ տալ հեղափոխական շարժման բոլոր շրջադարձերի ժամանակ։

Իր բազմափորձ, յերեսնամյա հեղափոխական ուղու ամբողջ ընթացքում Լենինն անքակտելիորեն կապված եր մասսաների հետ։ Բանվորական խմբերը նրա հեղափոխական գործունեության արշալույսին, բանվորներին ուղղած պրոկլամացիաները, նույնիսկ բանտից, նրա կապը բոլշևիկյան կադրերի և անկուսակցականների հետ՝ էմիգրացիայի դժվարին տարիներին, նրա նամակների անընդհատ հոսանքը դեպի Ռուսաստան և բանվորական թղթակցությունները նրան, բանվորական ժողովների հաճախումն արտասահմանում, անդադրում ելույթները բանվորական ժողովներում, համագումարներում և կոնֆերանսներում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, զրույցները տեղերի աշխատողների հետ, բանվորների և գյուղացիների հետ՝ քաղաքացիական պատերազմների տարիներին — այս բոլորը հնարավորություն եյին տալիս Լենինին ճանաչելու աշխատավոր մասսաներին, հավատալու պրոլետարիատի ստեղծագործական ուժերին։

Յուրաքանչյուր պիոներ գիտի լենինյան անհաշտության մասին դեպի բանվորական շարժման կազմալուծիչները, դեպի օպորտունիստները, դեպի բոլոր գույնի թերահավատները և դեպի նվացող ինտե-



լիգենտները։ Լենինյան անհաշտությունը դեպի ֆրակցիոնականությունը և դեպի հակակուսակցական օպոզիցիաները նրա շուրջը համախմբից բանվոր դասակարգի լավագույն և ամենից ավելի նվիրված տարրերին։ Նա անողոք կերպով հարձակվում եր Տրոցկու վրա, վորը թռչում եր մենշևիկներից դեպի բոլշևիկները և՝ հակառակը, իսկ գործնականում ամենահավատարիմ ծառայություն եր մատուցում մենշևիկ-լիկվիդատորներին, վորոնք բոլոր օպորտունիստներից ամենից ավելի վտանգավորներն եյին։ Նա պահանջում եր կուսակցությունից վտարել «զույգ ընկերներին» — Զինովյեվին և Կամենևին, վորոնք փորձում եյին կազմալուծել հոկտեմբերյան ապստամբության սկիզբը, վոչ-կուսակցական մամուլում հրապարակելով կենտկոմի վորոշման դեմ ուղղված իրենց նամակը։ Նա պնդում եր վտարել Շլյապնիկովին, վորը, կենտկոմի անդամ լինելով, խախտել եր կենտկոմի վորոշումը՝ մետալիստների ֆրակցիայում կենտկոմի վորոշման դեմ ելույթ ունենալով։

Լենինը միշտ բարձր եր պահում կուսակցականության դրոշը, Նա վոչ մի ժամանակ չի մտել անսկզբունք համաձայնությունների մեջ, կուսակցությանը սովորեցնում եր, թե ամենակուսակցական քաղաքականությունը — դա սկզբունքային, տոկուն քաղաքականությունն ե։

Լենինն ամբողջ ուժով պայքարում եր ամեն տեսակ պարծենկոտության դեմ, կոմճամպարծության դեմ։ «Կոմունիստական ամպարծությունը, — ասում եր Լենինը, — նշանակում ե այն, վոր մարդը, գտնվելով կոմունիստական կուսակցության մեջ և դեռ այնտեղից վտարված չլինելով, յերևակայում ե, վոր բոլոր խնդիրները նա կարող ե լուծել կոմունիստական դեկրետավորմամբ»։ Նա պայքարել ե թեթևամիտ վերաբերմունքի դեմ դեպի կուսակցության լոզունգները, դեպի ղեկավարության հարցերը։

Նա իր մեծ հեղափոխական ուղու ամբողջ ընթացքում Ռուսաստանի պրոլետարիատի շահերն անխզելիորեն կապում եր միջազգային հեղափոխական շարժման շահերի հետ։ Նա անդադար ապացուցում եր բոլշևիզմի միջազգային նշանակությունը, պրոլետարական հեղափոխականի ամբողջ կրքոտությամբ մերկացնում եր ֆրանսիական, անգլիական, գերմանական, ավստրիական սոցիալ-դեմոկրատական «առաջնորդների» դավաճանությունը։ Իր բոլոր ելույթներում՝ թե՛ միջազգային արենայում և թե՛ մեր յերկրում, սկսած մեր կուսակցության ստեղծման առաջին տարիներից, Լենինը վճռականորեն և հետևողականորեն պաշտպանում եր պրոլետարիատի ինտերնացիոնալ շարժման շահերը, մարքսյան ուսմունքի անաղարտությունն ընդդեմ միջազգային օպորտունիստների, մարքսիզմն աղավաղողների, հետևողական պրոլետարական ինտերնացիոնալիզմը գռեհկացնողների ու նեոքինացնողների։

Լենինի ղեկավարությամբ մեր կուսակցությունը ցարերի, կալվածատերերի ու կապիտալիստների յերկիրը, հրեշավոր շահագործման, կեղեքման և ազգային ստրկացման յերկիրը — աղքատ, քայքայված, թշվառ Ռուսաստանը — հանեց սոցիալիստական շինարարության լայն ճանապարհի վրա: Լենինի ղեկավարությամբ մեր կուսակցությունը դարձավ Կոմինտերնի առաջավոր, ղեկավար կուսակցությունը: Լենինի ղեկավարությամբ մեր կուսակցությունը ղատախարակել և յերեք հեղափոխություն կատարած բոլշևիկյան գվարդիայի փառապանծ սերունդը:

Ընկ. Ստալինը Լենինի մեծ ուսմունքը — լենինիզմը — բնորոշել է վորպես «իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության դարաշրջանի մարքսիզմ»: Վոչ վոք Լենինից ավելի լավ չի ներթափանցել Մարքսի ուսմունքի հիմունքների մեջ: Նա իր հեղափոխական ուղու առաջին քայլերից մինչև իր կյանքի վերջին որերը շղաղարեց մշակելուց Մարքսի ուսմունքը նոր խնդիրների լուսաբանությամբ, վորոնք դրված են իմպերիալիզմի և համաշխարհային պատերազմից անմիջապես հետո սկսված կոմունիստական հեղափոխության կողմից:

Լենինի հանճարեղ թեորետիկական աշխատանքներն անխզելիորեն կապված են նրա հեղափոխական գործի ամբողջ պրակտիկայի հետ: Նա ցույց է տվել, թե հեղափոխական թեորիան ինչ մեծ վճռական նշանակություն ունի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի համար: Լենինի ուսմունքը թափանցել է մարդկային հասարակության մասին գիտության բոլոր բնագավառները, սկսած փիլիսոփայությունից, վորտեղ նա փայլուն կերպով պաշտպանել է դիալեկտիկական մատերիալիզմը և նրա գործադրության անգերազանցելի նմուշներ է տվել, և վերջացրած հեղափոխական շարժման ամենաբազմազան եղանակների քաղաքական պատմությամբ:

Լենինը մշակել է իմպերիալիզմի հարցերը, խոր կերպով հետազոտել է մոնոպոլիստական կապիտալիզմի բնույթն ու նշանակությունը և ցույց է տվել, վոր դա նեխվող կապիտալիզմ է, մահացող կապիտալիզմ, վոր իմպերիալիզմը սոցիալիստական հեղափոխության նախորյակն է: Լենինը միակն եր, վորը հետազոտեց և մերկացրեց իմպերիալիստական պատերազմների եյությունը, վորոնք նյութվում են բուրժուազիայի կողմից՝ հանուն աշխարհի նոր վերաբաժանումների, թալանված գաղութային և կիսագաղութային յերկրներից գերշահույթներ ստանալու համար:

Լենինը մշակեց պրոլետարիատի դիկտատուրայի, պրոլետարական հեղափոխության ուսմունքը, մերկացրեց սոցիալ-դավաճաններին, վորոնք ֆալսիֆիկացիայի յեն յենթարկել Մարքսին, փորձում են ապացուցել, վոր Մարքսը կողմնակից չի յեղել պրոլետարիատի դիկտա-



տուրային: Լենինն իր մի շարք աշխատություններում և հատկապես «Պետություն և հեղափոխությունը» գրքում, վորը մտածված եր դեռ եմիգրացիայում և ավարտված ամենադժվարին և վտանգավոր որերին, յերբ Կերենսկու վորսորդական շներից Լենինը հարկադրված եր թաքնվելու Պետրոգրադի մոտերքում,—լայն ծավալեց պրոլետարիատի դիկտատուրայի հարցը և խորհուրդների՝ վորպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևի հարցը:

Լենինը մշակեց ուսմունքը՝ պրոլետարիատի կուսակցության մասին, վորպես բանվոր դասակարգի, նրա ավանգարդի դասակարգային, վորպես պրոլետարական դիկտատուրայի բարձրագույն կազմակերպություն, վորպես պրոլետարական կուսակցության զենք: Լենինն անուշադիր չթողեց պրոլետարական կուսակցության վերաբերող և վոչ մի հարց: Մի շարք տաղանդավոր անմահ աշխատություններում («Ի՞նչ անել», «Մի քայլ առաջ, յերկու քայլ հետ», «Մանկական «ձախության» հիվանդությունը» կոմունիզմի մեջ» և այլն) մշակել է կուսակցության կազմակերպչական սկզբունքները, կուսակցության պարզությամբ և ամբողջականությամբ մշակել է կուսակցության, բանվոր դասակարգի և մասսաների փոխհարաբերությունը, կուսակցական ապարատի, կուսակցական կադրերի, կուսակցական մամուլի նշանակության հարցերը:

Մերկացնելով II Ինտերնացիոնալի դավաճանությունը, նրա քայքայումն ու անկումը, Լենինը դրեց նոր տիպի միջազգային պրոլետարական կազմակերպության ստեղծման անհրաժեշտության հարցը: Նրա անմիջական ղեկավարությամբ կազմակերպվեց III կոմունիստական Ինտերնացիոնալը:

Լենինը դեռ իր առաջին «Ինչ է «ժողովրդի բարեկամները»» գրքում, 1905 թվի հեղափոխությունից 11 տարի առաջ, դրեց՝ կուսակցության ղեկավարությամբ պրոլետարիատի հեգեմոնիայի պայմաններում, բուրժուական – դեմոկրատական հեղափոխության սոցիալիստական հեղափոխության վերաճելու հարցը: Նա կուսակցությունը նախապատրաստում եր այդ վճռական պատմական ետապին, վորը նոր դարաշրջան պետք է բանար և խկապես բանվոր դասակարգին մարդկության պատմության մեջ:

Լենինի համար բուրժուական-դեմոկրատական հեղափոխության հաղթական ավարտումը Ռուսաստանում և նրա վերաճումը սոցիալիստական հեղափոխության անխուսափելիորեն պետք է անդրադառնար միջազգային պրոլետարական հեղափոխության զարգացման վրա: Այդ վերջինս իր հերթին կհեշտացներ մեր հեղափոխության զարգացումը: Սակայն Լենինը պրոլետարական հեղաշրջումն Արևմուտքում պարտադիր պայման չեր համարում մեզ մոտ՝ Ռուսաստանում բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու համար:

մար: Նրա տեսակետը հանգում էր այն բանին, որ ռուսական պրոլետարիատը, կուսակցության ղեկավարությամբ, անմիջապես պետք է դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականի անցնել՝ պրոլետարիատի և գյուղական չքավորության դաշինքի հիման վրա, դրանով իսկ օժանդակելով հեղափոխությունը միջազգային արենայի վրա փոխադրելուն:

Լենինը, հետազոտելով կապիտալիստական աշխարհի դրությունը պատերազմի տարիներին, հրապարակ նետեց կապիտալիզմի ժամանակ զարգացման անհամաչափության հարցը, իմպերիալիստական շղթայի՝ ամենաթույլ օղակներից մեկում քանդվելու հնարավորության հարցը (այդպիսի թույլ օղակ հանդիսացավ ցարական Ռուսաստանը 1917 թվին) և դրա հետևանքով մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության հարցը:

1916 թվին նա բառացի մարգարեորեն նախատեսնում էր, որ «սոցիալիզմը սկզբնապես կհաղթանակի մեկ կամ միքանի յերկրներում, իսկ մնացած յերկրները որոշ ժամանակի ընթացքում կմնան բուրժուական կամ մինչ-բուրժուական: Դա ոչ միայն բախում կառաջացնի, այլև մյուս յերկրների բուրժուազիայի ուղղակի ձգտումը ջախջախելու հաղթական պրոլետարական սոցիալիստական պետությունը»: Ինչպես հայտնի է, դա փայլուն կերպով արդարացավ Խորհրդային Միության համաշխարհային պատմական փորձով:

Լենինը մեծ ուշադրություն էր հատկացնում գյուղացիական և հողային հարցերի մշակմանը: Կիրառելով իր մարքսիստական բազմակողմանի գիտությունը, օգտագործելով մինչ-հեղափոխական Ռուսաստանի զարգացումը բնութագրող հսկայական մատերիալը, նա, հակառակ նարոդնիկների և սոցիալիստ-հեղափոխականների, ապացուցեց կապիտալիզմի զարգացման և մինչ-հեղափոխական գյուղի դասակարգային շերտավորման անխուսափելիությունը, և հակառակ մենշևիկների՝ պարզաբանեց այն հսկայական նշանակությունը, որը գյուղացիությունը պետք է ունենա հեղափոխության մեջ՝ որպես պրոլետարիատի դաշնակից: Նա ցույց տվեց այն ուղիները, որով պետք է ընթանա պրոլետարիատի և նրա կուսակցության քաղաքականությունը, որպեսզի իր հետևից տանի գյուղացիությունը, պահպանելով այդ դաշինքում բանվոր դասակարգի ղեկավարությունը:

Լենինը մշակեց ազգային-գաղութային պրոբլեմը՝ որպես պրոլետարական հեղափոխության և պրոլետարիատի դիկտատուրայի մասին ուսմունքի բաղադրիչ մաս: «Լենինիզմը,— ասում է ընկ. Ստալինը,— ինքնորոշման հասկացողությունն ընդլայնեց, մեկնաբանելով այն որպես կախյալ յերկրների և գաղութների ճնշված ժողովուրդների լիակատար բաժանման իրավունք, որպես ազգերի ինքնուրույն պետական գոյության իրավունք»: Լենինը սովորեցրել է, թե ինչպես պետք է



զուգակցել ազգային-ազատագրական և պրոլետարական-հեղափոխական շարժումը, ինչպիսի խնդիրներ են կանգնած Խորհրդային պետության առաջ՝ վոչնչացնելու համար ցարիզմի կողմից ճնշված ազգությունների տնտեսական և կուլտուրական հետամնացությունը:

Լենինը սովորեցրել է կուսակցությանը, որ պետք է շարժման յուրաքանչյուր էտապում բռնել հիմնական օղակից, վորպեսզի կարողանալ դրված խնդիրների ամբողջ շղթան դուրս քաշել: Լենինը սովորեցրել է կուսակցությանը, թե ինչպես պետք է մոտեցնել մասսաներին դեպի հեղափոխական դիրքերը, ինչպես հասնել այն բանին, վորպեսզի մասսաներն իրենց սեփական փորձով համոզվեն բոլշևիկյան լոզունգների ճշտության մեջ: Կուսակցությունը, յելնելով Լենինի այդ ցուցումներից, միշտ կարողացել է մասսաների ջանքերը կենտրոնացնել սոցիալիզմի շինարարության հիմնական խնդիրների վրա (յերկրի ինդուստրացումը, առևտուրը, տրանսպորտը, հացի և մսի պրոբլեմները, տեխնիկային տիրապետելը, կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդումը և այլն):

Լենինը մշակել է զինված ապստամբության թեորետիկական հարցերը, նա գիտեր, որ իշխանության խաղաղ նվաճման մասին խոսք լինել չի կարող: Նա, ճնշված և ստրկացած մասսաների բազմաթիվ ապստամբությունների ու հեղափոխությունների փորձի հիման վրա ամբողջ աշխարհում, մի շարք փայլուն ցուցումներ է տվել փողոցային կռվի տակտիկայի և տեխնիկայի հարցերի մասին, Մարքսից և Էնգելսից հետո մշակել է զինված ապստամբության հիմնական սկզբունքները: Նա ինքը պատրաստվում էր ղեկավարելու թշնամական դիրքերի վրա զինված գրոհը և այդ բանի համար պատրաստում էր կուսակցությանը:

Ինտերվենցիայի և քաղաքացիական կռիվների ամբողջ ընթացքում Լենինը հրապարակ է գալիս որպես հաղթանակի իսկական կազմակերպիչ: Խորհրդային հանրապետության ամենադժվարին րոպեներին, յերբ թշնամիներն ամեն կողմից օղակել էին միջազգային հեղափոխության օջախը — ՌՍՖԽՀ-ն — Լենինը կարողանում էր իր մերձավոր զինակիցներին, ամբողջ կուսակցությանը և վողջ պրոլետարիատին հաղթանակի վստահություն ներշնչել: Նա այդ շրջանում յեռանդուն գործունեություն էր հայտաբերում, անմիջականորեն ղեկավարելով մի կողմից տնտեսական, քաղաքական և ներկուսակցական կյանքի հարցերը, իսկ մյուս կողմից — հիմնական ուղղություններ, ղեկավար ցուցումներ տալով և անմիջական օգնություն ցույց տալով Կարմիր բանակի գործողություններին:

1921 թվին, քաղաքացիական պատերազմների վերջանալու ժամանակ, Լենինը հայտարարում է նոր տնտեսական քաղաքականության

անցումը: Նեպին անցնելն իր մեջ պարփակում էր և՛ նահանջի մոմենտ, և՛ ուժերի վերախմբավորման մոմենտ, և՛ հարձակման մոմենտ: Նեպին անցնելը պահանջվեց պրոլետարիատի և գյուղացիության տնտեսական կապի ամրապնդման անհրաժեշտությամբ,— մի ամրապնդում, վորն աչքի առաջ ուներ՝ սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում, մեր ծանր արդյունաբերության — սոցիալիզմի հիմքի և ֆունդամենտի — վերելքը, գյուղատնտեսության վերակառուցումը սոցիալիստական սկզբունքներով:

Միայն Լենինի ղեկավարությամբ կուսակցությունը կարողացավ հաջողությամբ իրագործել այդ անցումը, միայն Լենինի ղեկավարությամբ կուսակցությունը կարողացավ ճիշտ վորոշել նահանջի դադարեցման մոմենտը՝ ուժերի հետագա վերախմբավորման և նոր հարձակման անցնելու համար:

Լենինը ցույց է տվել այն հիմնական ուղիները, վորով պետք է ընթանա սոցիալիզմի շինարարությունը մեր յերկրում: Նա դրել է ծանր արդյունաբերության՝ վորպես սոցիալիզմի ֆունդամենտի՝ ստեղծման խնդիրը, այդ հարցը կապել է գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հետ, մշակել է գյուղատնտեսության վերակառուցման կոոպերատիվ պլանը:

Լենինի կյանքի և աշխատանքի ամբողջ շրջանում կուսակցական բոլոր հիմնական դոկումենտները գրված կամ խմբագրված են անձամբ Լենինի կողմից: Կուսակցության ծրագիրը, նրա նախնական նախագծերը, կուսակցության կանոնադրությունը, Կոմինտերնի հիմնական դոկումենտները, Խորհրդային իշխանության գլխավոր դեկրետները, կուսակցական համագումարների հիմնական վորոշումները ծրագրային, տակտիկական, տնտեսական, քաղաքական, ներկուսակցական, ռազմական հարցերի մասին մինչև XI համագումարը, վորտեղ նա վերջին անգամ յելույթ ունեցավ Կենտկոմի հաշվետվությամբ,— այս բոլորն ստեղծված են նրա հանճարեղ ուղեղով, գրված են լենինյան ձեռքով: Լենինի կյանքը — դա մեր կուսակցության պատմության, բոլշևիզմի պատմության կենդանի մարմնավորումն է: Լենինը և կուսակցությունը — դա միասնական անխզելի ամբողջություն են:

Իր մահվանից վոչ շատ առաջ Լենինը մի շարք հոդվածներ է գրում — «Կոոպերացիայի մասին», «Ավելի լավ է քիչ, բայց լավ», «Ինչպես վերակառուցել Բանգյուղտեսչությունը» և այլն: Այդ հոդվածները ըստ էության նրա քաղաքական կտակն են: Այդ հոդվածներում նա ամենից առաջ ընդգծում է մեր կուսակցության շարքերի միասնության պահպանման, պրոլետարիատի ղեկավարությամբ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի պահպանման անհրաժեշտությունը, առաջադրում է յերկրի սոցիալիստական ինդուստրաց-



ման համար միջոցների կուտակման ու խնայման խնդիրները: «Կոոպերացիայի մասին» հոդվածում նա բաց է անում մեր կոոպերացիայի մեծագույն նշանակությունը՝ սոցիալիստական սկզբունքներով գյուղատնտեսության արտադրական հիմունքները վերափոխելու տեսակետից: Այդ նույն հոդվածում Լենինը հայտարարում է կուլտուրական հեղափոխության լոզունգը: Նա կտակում է կուսակցությանը և պրոլետարիատին՝ ամրապնդելու մեր յերկրի պաշտպանունակությունը, և առանձնապես ընդգծում է այն մեծագույն պարտավորությունները, վորոնք ընկնում են մեր կուսակցության վրա, մեր պրոլետարիատի վրա հանդեպ համայն աշխարհի պրոլետարիատի:

Լենինն ստեղծել է առանձնահատուկ վոճ, առանձնահատուկ սովորք աշխատանքի մեջ: Ընկ. Ստալինը խոսում է աշխատանքի լենինյան վոճի մասին վորպես թեորետիկական և պրակտիկ դպրոցի մասին, վորը կուսակցական և պետական աշխատավորի առանձնահատուկ տիպ է պատրաստում: Աշխատանքի լենինյան վոճը ռուսական հեղափոխական թափի և ամերիկյան գործնականության միացումն է:

«Ռուսական հեղափոխական թափը,— ասում է ընկ. Ստալինը,— հակաթույն է հանդիսանում անշարժության, ռուտինայի, կոնսերվատիզմի, մտքի ճահճացման, դեպի պապական տրադիցիաները ստրկական վերաբերմունքի դեմ: Ռուսական հեղափոխական թափը — դա այն կենսարար ուժն է, վորը զարթեցնում է միտքը, առաջ է շարժում, ջարդում է անցյալը, հեռանկար է տալիս: Առանց դրան հնարավոր չէ առաջադիմական և վոչ մի շարժում»: Սակայն այդ ռուսական թափը կարող է այլասերվել, դառնալ դատարկահնչյուն «հեղափոխականության», անիրական յերևակայության, յեթե այն չկապենք ամերիկյան գործնականության հետ աշխատանքում:

«Ամերիկյան գործնականությունը,— շարունակում է ընկ. Ստալինը,— դա այն անզուսպ ուժն է, վորը չգիտի և չի ճանաչում արգելքները, վորն իր գործնական համառությամբ վողողում է բոլոր և ամեն տեսակի արգելքները, վորը չի կարող մինչև վերջը չհասցնել մի անգամ սկսված գործը, յեթե նույնիսկ դա փոքրիկ գործ է, և առանց վորի անհնար է լուրջ շինարարական աշխատանք: Սակայն ամերիկյան գործնականությունը բոլոր շանսերն ունի նեղ և անսկզբունք գործնականության փոխվելու, յեթե նա չկապվի ռուսական հեղափոխական թափի հետ»:

Լենինը ծաղրել է նեղաճակատ գործնականությունը, անգլուխ գործարարությունը, կարճատես բծախնդրությունը: Նա ձգտում էր կենդանի, մարտական վերաբերմունքի դեպի կուսակցության հանձնարարած յուրաքանչյուր աշխատանքը, նա պնդում էր ամենայն պրակտիկ գործունեությունը պրոլետարական հեղափոխության ընդհանուր

դասակարգային ինտերնացիոնալ խնդիրների հետ զուգորդելու անհրաժեշտությունը: «Անսկզբունք գործարարությունը ներհակ է իսկական լենինիզմին, վորքան վոր ներհակ է և «հեղափոխական» հոբինարանությունը»:

Լենինն իր մեջ միացնում էր ռուսական հեղափոխական թափի և ամերիկյան գործնականության ամենաբարձր հատկություններն ու առավելությունները: Լենինը հանճարեղորեն իր մեջ զուգորդում էր հեղափոխական-պրոլետարական թեորետիկի անհասանելի բարձունքները և հեղափոխական-պրոլետարական պրակտիկի անհուն լայնությունները:

Ահա թե ինչու լենինիզմը սուր զենք է կապիտալիստական շահագործումից ազատագրվող աշխատավոր մարդկության ձեռքում: Ահա թե ինչու Լենինն անմահ է կոմունիզմի համար պայքարող ու մարտնչող միլիոնավոր աշխատավորական մասսաների սրտերում:

Լենինի բոլոր գրածները, նրա բոլոր ասածները համարյա ամբողջությամբ հավաքված են նրա յերեսուն հատորյա յերկերի լիակատար ժողովածուի մեջ, լենինյան ժողովածուների քսան տպագրված հատորների մեջ (դրանք նշանակալից չափով ավելի կլինեն): Նրա մի շարք գլխավոր աշխատությունները հավաքված են ընտիր յերկերի վեցհատորյակում: Նրա յերկերը թարգմանված են աշխարհի համարյա բոլոր լեզուներով: Յերկրագնդի յերեսին չկա այնպիսի անկյուն, վորտեղ չկարդան Լենինին: Լենինյան ձեռագրերը, վորոնք հազարներով են հաշվվում, պահպանվում են Մարքս-Ենգելս-Լենինի Ինստիտուտում (ИМЭЛ): Լենինի կյանքի և մահվան վերաբերող մատերիալներն ու իրերը հավաքված են Լենինի Թանգարանում:

Լենինի ուսմունքի ամենախոր և հավատարիմ շարունակությունը, լենինիզմի գաղափարների ամենաճիշտ կուսակցական մեկնաբանությունը և դրանց հետագա մշակումը տրված են «Լենինիզմի հարցերը» գրքում՝ անսասան բոլշևիկ և լավագույն լենինեց ընկ. Ստալինի կողմից:

## 3. ՍՏԱԼԻՆ

Ենգելսը Մարքսի մահվան որերին գրում էր.—«Պրոլետարիատի շարժումը կգնա իր ուղիով, սակայն այլևս չի լինի այն կենտրոնը, դեպի վորը տագնապալից րոպեներին ոգնություն ստանալու համար շտապում էին ֆրանսացիները, ռուսները, ամերիկացիները և գերմանացիները, վորոնք նրանից միշտ պարզորոշ ու հաստատուն խորհուրդներ էին ստանում, այնպիսի խորհուրդներ, վորոնք կարող էր տալ հանճարը և մարդը, վորը կատարելապես տիրապետում էր առարկային»: Ենգելսն այս գրում էր 1883 թվականին, չենթադրելով, վոր



պրոլետարիատի շարժումը տասը տարի հետո կառաջադրի նոր առաջնորդ, վորը շատ առաջ կտանի Մարքսի գործը, կդառնա միջազգային բանվոր դասակարգի նոր կենտրոնը:

Լենինը յերեք տասնամյակի ընթացքում կոփեց մարտական պրոլետարական կուսակցություն և դաստիարակեց բոլշևիկյան գվարդիայի կադրեր, վորի լավագույն ներկայացուցիչները կազմում են լենինյան Կենտրոնական Կոմիտեն — մեր կուսակցության այդ կազմակերպական, թեորետիկական և քաղաքական կոլեկտիվ շտաբը:

Մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի հնագույն անդամը, Լենինի գործի ամենափորձառու և ամենափորձված շարունակողը, մարքսիզմ-լենինիզմի ամենալավագույն թեորետիկը Կենտրոնական Կոմիտեյում հանդիսանում է ընկ. Ստալինը: Լենինի մահվանից վոչ թե 20—30 տարի և վոչ էլ 2—3 տարի հետո, այլ մեր կուսակցության շարքերում նրա սաղմնավորման առաջին որերից, իսկ լենինյան Կենտկոմի կազմում՝ 1911 թվից աշխատել ու պայքարել է բոլշևիկ Ստալինը:

Դեռ 1922 թվին, կուսակցության XI համագումարում, Լենինի մահվանից յերկու տարի առաջ, ընկ. Ստալինն ընտրվել է Կենտկոմի քարտուղար: Նրա շուրջը համախմբվել է մեր կուսակցությունը, նրա լենինյան հին գվարդիան:

Ընկ. Ստալինը (ծնվել է 1879 թ.) անցավ Լենինի մարտական դրոշի ներքո՝ բոլշևիզմի ծագման առաջին որերից: Ստալինն իր՝ վորպես պրոֆեսիոնալ հեղափոխականի աշխատանքի առաջին իսկ որերից իրեն հայտաբերեց իբրև Լենինի ամենահավատարիմ աշակերտ: Դեռ 1903 թվին, բանտում նստած ժամանակ, վերադարձած ընկերներից իմանալով կուսակցության II համագումարում բոլշևիկների ու մենշևիկների միջև տեղի ունեցած տարաձայնությունների մասին, Ստալինը վճռականորեն հարում է բոլշևիկներին: Ռուսական առաջին հեղափոխության ժամանակ նա Թիֆլիսում էր, վորտեղ նա ընդհատակյա հեղափոխական լարված աշխատանք էր տանում կովկասյան բանվորների շրջանում և անդրկովկասյան բոլշևիկների գլուխն անցած՝ անողոքաբար կռվում էր մենշևիկների դեմ: 1905 թվի վերջին Ստալինը վորպես պատգամավոր գնում է բոլշևիկյան կոնֆերանսին՝ Ֆինլանդիայում, հանդիպում է անձամբ Լենինին, վորի ամենահավատարիմ զինակիցը, աշակերտը և աշխատանքի ընկերն է մնում ամբողջ ժամանակ: Իր գործունեության ամբողջ ընթացքում Ստալինը վոչ մի անգամ չի նահանջել Լենինից ինչպես իր թեորետիկական-սկզբունքային գրքերում, նույնպես և իր ամբողջ պրակտիկ աշխատանքում:

Այնտեղ, վորտեղ սուր պայքար է, այնտեղ, վորտեղ հարկավոր է լենինյան վողջ անողոքությամբ պայքարել պրոլետարիատի գործի համար՝ ընդդեմ նրա բոլոր և ամեն տեսակի թշնամիների — մշտապես այնտեղ է Ստալինը:

Ընդհատակի դաժան տարիները, ցարիզմի խստագույն հետապնդումները, բանտերն ու աքսորները կոփել են ստալինյան պողպատյա կամքը և նրա հեղափոխական համառությունը: Ընկ. Ստալինը վեց անգամ ձերբակալվել և աքսորվել է: Ձերբակալությունների և աքսորների արանքում նա մշտական կուսակցական ղեկավար աշխատանք է տարել նախ Կովկասում, ապա Պիտերի ընդհատակում: 1912 թվին, Պրագայի կոնֆերանսից հետո, Լենինի առաջարկությամբ ընկ. Ստալինն ի բացակայության մտցվում է կուսակցության Կենտկոմի կազմի մեջ: Նույն տարին նա գաղտնի գնում է արտասահման՝ Կրակով, Լենինի մոտ, շուտով վերադառնում է, ղեկավարում Պետական Դումայի բոլշևիկյան ընդհատակյա ֆրակցիան, փաստորեն խմբագրում պիտերյան մեր պանծալի «Правда»-ն և մի մեծ աշխատություն է գրում մարքսիզմի ու ազգային հարցի մասին:

Պարտությունների ծանր տարիներին և հեղափոխական վերելքի տարիներին Ստալինը միշտ աննկուն ու անսասան է մնացել. միշտ Լենինի հետ, նրա ղեկավարությամբ, նա իրագործել է բոլշևիկյան հետևողական գիծ, ամբողջ վճռականությամբ դեմ է դուրս եկել օպորտունիզմին, ինտելիգենտական ֆրակցիոնությանը, տատանումներին և բացահայտ դավաճանությանը: 1913 թվին ձերբակալվելով, Ստալինը մի քանի ամսից հետո աքսորվել է Տուրուխանի կործանարար երկրամասը, վորտեղից նրան ազատում է միայն Փետրվարյան հեղափոխությունը: Ստալինը կրկին Պիտերում՝ վորպես Կենտկոմի անդամ, մասնակցում է կուսակցության ղեկավար աշխատանքին: Ապրիլյան կոնֆերանսում, վորտեղ ելույթ է ունենում արտասահմանից հենց նոր եկած Լենինը, Ստալինը վճռականորեն պաշտպանում է Լենինի գիծը: 1917 թվի մայիսին ընտրվում է Քաղբյուրոյի կազմի մեջ, վորի անփոփոխ անդամ է մնում մինչև օրս:

1917 թվի ամբողջ ամառը, երբ Կամենևը, իսկ հետո Զինովևը ձգտում էին տապալել կուսակցության միասնությունը և փաստորեն դավաճանում էին նրան, խափանում էին կուսակցության վորոշումները՝ ոչ-կուսակցական մամուլում հրապարակ գալով ընդդեմ դրության լենինյան գնահատականի և զինված ապստամբության անցնելու նրա պահանջի, Ստալինը Լենինի հետ կուսակցությանը նախապատրաստում է Հոկտեմբերյան գրոհի համար:

Հուլիսյան դեմոնստրացիայից հետո (1917 թ.) ամբողջ ժամանակաշրջանում մինչև հոկտեմբեր, երբ Լենինը թաքնվում էր ընդհատակում, Ստալինը փաստորեն հանդիսանում էր կուսակցության կենտրոնական օրգանի («Рабочий и солдат», «Рабочий») ղեկավարը: Հանդուցյալ Սվերդլովի հետ միասին այդ ժամանակ Ստալինը ղեկավարում էր կուսակցության 6-րդ կիսալեգալ համագումարի աշխատանքները:



Ստալինի համաշխարհային-պատմական դերն այդ ժամանակաշրջանում առանձնապես հայտաբերվեց համագումարում ունեցած նրա այն յելույթով, վորով պաշտպանվում էր մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության լենինյան թեորիան:

Մեծ Հոկտեմբերի օրերին Ստալինը լենինյան գվարդիայի առաջին շարքերումն էր՝ վորպես հոկտեմբերյան հաղթանակների ականավոր կազմակերպիչը: Բրեստի ծանր օրերին, երբ վճռվում էր հեղափոխության բախտը, ընկ. Ստալինը Լենինի հետ միասին հաստատորեն պաշտպանում էր բոլշևիկյան ստրատեգիան ընդդեմ Տրոցկու և այն օպորտունիստների, վորոնք մանր բուրժուականության «ձախության» դրոշի ներքո (ինչպես Բուխարինը, Յարոսլավսկին և ուրիշները) պառակտում էին կուսակցությունը, ջլատելով նրա բոլշևիկյան միասնությունը:

Լենինի նախագահությամբ Խորհրդային կառավարության ստեղծման առաջին իսկ օրերից Ստալինը — ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար է, իսկ 1919 թվից — Բանվորագյուղացիական Տեսչության ժողովրդական կոմիսար: 1922 թվին Լենինը կուսակցության XI համագումարում ելույթ ունենալով, հայտարարեց, վոր դժվար է Ստալինից բացի ուրիշ մարդ գտնել, «վորին ազգությունների ներկայացուցիչներից վորևէ մեկը կարողանար գնալ և պատմել գործի էությունը»: Նույնն էր ասում Լենինն Ստալինի մասին վորպես ԲԳՏ ժողկոմատի ղեկավարի. «գործը վիթխարի է,—ասում էր Լենինը,—սակայն ստուգման հետ վարվել կարողանալու համար հարկավոր է, վորպեսզի գործի գլուխ կանգնած լինի հեղինակություն ունեցող մարդ, այլապես մենք կխրվենք, կխեղդվենք մանր ինտրիգների մեջ»:

Քաղաքացիական կռիվների տարիներին,—գրում է ընկ. Վորոշիլովը,—«Կենտրոնական Կոմիտեն Ստալինին նետում էր մարտական մի ֆրոնտից մյուսը, ընտրելով հեղափոխության համար ամենից ավելի վտանգավոր, ամենից ավելի սարսափելի վայրերը: Այնտեղ, վորտեղ համեմատաբար խաղաղ էր ու բարենպաստ, վորտեղ մենք հաջողություններ ունեինք, այնտեղ Ստալինը չէր երևում: Սակայն այնտեղ, վորտեղ մի ամբողջ շարք պատճառների բերումով ճարճատում էին կարմիր բանակները, վորտեղ հակահեղափոխական ուժերը, ծավալելով իրենց հաջողությունները, սպառնում էին Խորհրդային իշխանության հենց գոյությանը, վորտեղ շփոթությունն ու պանիկան կարող էին ամեն րոպե վերածվել անզորության, կատաստրոֆայի,—այնտեղ հայտնվում էր ընկ. Ստալինը»: Ամենավտանգավոր, ամենապատասխանատու վճռական ֆրոնտներում — հարավում, հարավ-արևելքում, պիտերյան ֆրոնտում, արևմուտքում ընկ. Ստալինը կազ-

մակերպում և սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը, ապահովում է հաղթանակը քաղաքացիական կռիվներում:

Երբ մահը 1924 թվին, ժողովրդական տնտեսության վերականգնման ամենադժվարին տարիներին, կուսակցության շարքերից պոկեց նրա մեծագույն առաջնորդին և ուսուցչին — Լենինին, Կենտրոնական Կոմիտեն համախմբվեց ընկ. Ստալինի շուրջը՝ վորպես Լենինի գործի ամենահավատարիմ և ամենատաղանդ շարունակողի:

Լենինի մահվան հաջորդ տարիներում Ստալինը — կուսակցության գլխավոր գծի և նրա բոլոր գլխավոր ձեռնարկումների ներշնչողն է՝ սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում:

Ստալինը — պրոլետարական առաջնորդի ամենափայլուն տիպարն է, վորն իր մեջ վիթխարի թեորետիկական պատրաստությունը միացնում է կազմակերպիչ հեղափոխականի անկոտրում կամքի հետ:

Իր աշխատանքներում, զեկուցումներում, զրույցներում և այլն Ստալինը տվել է լենինիզմի էության, դերի և նշանակության յուրաքանչյուր կուսակցականի, յուրաքանչյուր բանվորի և աշխատավորի համար հասկանալի բնորոշումը, պարզացրել ու լրացրել է լենինիզմը՝ համաձայն համայն աշխարհում հեղափոխության և մեր յերկրում սոցիալիզմի շինարարության ընթացքի պահանջների:

Ընկ. Ստալինի արտահայտությունները թեորիայի և պրակտիկայի փոխհարաբերության, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի, պրոլետարիատի դիկտատուրայի, այդ դիկտատուրայի սիստեմում կուսակցության դերի, սոցիալիզմի շինարարության ուղիների և մեթոդների հարցերի մասին — հանդիսանում են լենինիզմի հիմունքների հետագա մշակումը:

Ընկ. Ստալինի ծառայությունն առանձնապես մեծ է մի յերկրում սոցիալիզմի կառուցման լենինյան թեորիայի հետագա մշակման գործում: Այդ հիմնական հարցում կուսակցությունը, ստալինյան ղեկավարության շնորհիվ, հետ մղեց տրոցկիստների հարձակումը, վորոնք մեր յերկրում սոցիալիզմի կառուցման անհնարության իրենց թեզիսով հակահեղափոխական բուրժուազիայի հոգևոր զենք տվին ընդդեմ բոլշևիզմի:

Ստալինի յելույթներն իմպերիալիստական աշխարհի հակասությունների, ազգային-ազատագրական շարժման, բոլշևիզմի միջազգային բնույթի, ինքնաքննադատության, սոցիալիստական մրցակցության, ոպորտունիզմի արմատների, տրոցկիզմի, աջ թեքման և հաշտվողականության էության մասին — այս բոլորը խոսում են մեր առաջնորդի վիթխարի և բազմակողմանի թեորետիկական ուժի մասին, վկայում են այն մասին, թե ինչպես է նա կարողանում առաջնորդել մասսաներին դեպի հեղափոխական դիրքերը, վորպեսզի նրանք սեփական փորձով համոզվեն կուսակցական գծի ճշտության մեջ:



Ընկ. Ստալինի անունն անխզելիորեն կապված է կուսակցության հիմնական տնտեսական-քաղաքական ձեռնարկումների հետ՝ նրա մղած պայքարում՝ հանուն յերկրի ժողովրդական ամբողջ տնտեսության վերակառուցման, սոցիալիստական հասարակության կառուցման:

Կուսակցության XIV համագումարում (1925 թ.) ընկ. Ստալինը, զարգացնելով Լենինի հիմնական գաղափարները, առաջադրում է ինդուստրացման լոզունգը, մի ուղի, վորն ընդունակ է ապահովելու մեր յերկրի տեխնիկական-տնտեսական անկախությունը, նրան հետամնաց ագրարային յերկրից վերածելու առաջավոր արդյունաբերական յերկրի, հասնելու և անցնելու առաջավոր կապիտալիստական յերկրներին:

Դրանից յերկու տարի հետո, կուսակցության XV համագումարում (1927 թ.), յերբ ինդուստրացման հաջողությունները հայտաբերեցին գյուղացիության սուր հետամնացությունը մեր սոցիալիստական արդյունաբերությունից, ընկ. Ստալինը կուսակցության առաջ սրում է մեր ժառանգած աղքատիկ, մանր, փոշիացած գյուղատնտեսության խոշոր համայնականի վերածելու վրա արագ թափով աշխատելու անհրաժեշտության հարցը: Կուսակցությունը բոլոր տարիներում — և՛ մինչև XV համագումարը, և՛ նրանից հետո — իր կենտկոմի ղեկավարությամբ կիրառել է մասսաների դաստիարակության լենինյան քաղաքականությունը, գյուղացիական մասսաներին հետևողականորեն տանելով դեպի կոլտնտեսությունները, դեպի գյուղատնտեսական արտելները՝ վորպես կոլտնտեսական շարժման հիմքը ներկա ետապում: XV համագումարի ժամանակ մեզ մոտ կային բավարար նյութական և կազմակերպական պայմաններ՝ գյուղում արմատական բեկում նախապատրաստելու համար, վորն, ինչպես հայտնի յե, տեղի ունեցավ 1929 թվին: Կոլտնտեսական շարժումը, հիմնված ինդուստրացման լենինյան քաղաքականության վրա, լենինյան կոոպերատիվ պլանի ծավալման վրա, միջակ գյուղացիության վերաբերմամբ ճիշտ քաղաքականության վրա — ամենասերտ կերպով կապված է Ստալինի անվան հետ:

Մեր յերկրի ինդուստրացման բոլշևիկյան տեմպի, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար մղվող լարված պայքարը չեր կարող կործանվող կապիտալիստական ելեմենտների դիմադրությունը չառաջացնել ինչպես քաղաքում, նույնպես և հատկապես գյուղում: Կուլակը կատաղի դիմադրություն է ցույց տալիս սոցիալիստական ծավալուն հարձակմանը, փորձելով տապալել կուսակցության միջոցառումները: Սրված դասակարգային պայքարի այդ պայմաններում, յերբ կուլակության դեմ հարձակումը դարձավ հասունացած կոլեկտիվացումն իրագործող չքավոր-միջակ մասսաների գործը, ընկ. Ստալինը դրեց կուլակության, վորպես դասակարգի, համատարած կոլեկտիվացման հիման վրա լիկվիդացիայի յենթարկե-

յու հարցը: Հատկապես Ստալինին է պատկանում գյուղում մեր կուսակցական քաղաքականության այդ մեծ շրջադարձի իրագործման թեորետիկական մշակումը և ղեկավարությունը:

Այժմ ամբողջ յերկրին պարզ է, վոր առանց մեր ծանր արդյունաբերության հետագա վճռական զարգացման, առանց մետալուրգիական և քարածխային բազայի անհնար է յերկրի ինդուստրացումը: «Հասնել և անցնել» լոզունգի իրագործման համար իսկապես, բոլշևիկյան տեմպով պայքարելու համար հարկավոր է ավելի շատ չուգուն, յերկաթ, պողպատ, քարածուխ արտադրել: Այդ առնչությամբ ծագեց յերկրորդ քարածխային-մետալուրգիական բազայի հարցը: Կուզնեցկստրոյը և Մագնիտոգորսկը — մեր քարածխային և մետալուրգիական արդյունաբերության այդ հոյակապ բազաները Արևմուտքում— սերտորեն կապված են ընկ. Ստալինի անվան հետ:

Շախտիի գործը, արդկուսակցության և մենշևիկների դավաճանությունները, վորոնք բաց արին մի շարք մասնագետների — առավելապես ֆրանսական իմպերիալիզմի գործակալների հակահեղափոխական վնասարարությունը — ամբողջ հասակով դրին պրոլետարական մասնագետների կադրերի պատրաստման հարցը:

Ժողովրդական ամբողջ տնտեսության վերակառուցումը, նոր արտադրությունների կազմակերպումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, մեր ամբողջ տնտեսության կառավարման աճող խնդիրները — կադրերի հարցը դարձրին «սոցիալիստական շինարարության վճռական պրոբլեմ»: Ստալինի անվան հետ կապված են կուսակցության կարևորագույն վորոշումները կադրերի մասին, բարձրագույն դպրոցի մասին, մասնագետների նկատմամբ ճիշտ, լենինյան վերաբերմունքի մասին, տեխնիկայի տիրապետման մասին:

«Ռեկոնստրուկցիայի շրջանում տեխնիկան վճռում է ամենայն ինչ» ստալինյան լոզունգը դարձավ միլիոնավոր պրոլետարների ու կոլտնտեսականների, մասնագետների ու գիտության մարդկանց, կուսակցության և տնտեսության աշխատողների գործողության լոզունգը:

Ինչքան լայն է ծավալվում սոցիալիզմի շինարարությունը, այնքան ավելի համառ կերպով է դրվում աշխատանքի կազմակերպության, ոպերատիվ կոնկրետ ղեկավարության, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու միջոցառումների հարցը: Այդ հարցերի ճիշտ, բոլշևիկյան լուծումից է կախված սոցիալիստական շինարարության բախտը: Վոչ այլ վոք, քան Ստալինը, իր զեկուցումով կուսակցության XVI համագումարում, իր յելույթներով տնտեսավարների խնդիրների մասին, տնտեսական շինարարության նոր պայմանների ու նոր խնդիրների մասին դրել է նոր ձևով աշխատելու խնդիրը, առաջադրել է հաղթանակի վեց պայմանները, սրել է կուսակցության ուշադրությունը — բավարարելու բանվորական մասսաների ամենօրյա կարիքները, պարզաբանել է, վոր աշխատանքը մեզ մոտ պատվի գործի, փառքի գործի, հերոսության և արիության գործի նշանակություն է ստանում: Ընկ. Ստալինը սոցիալիզմի շինարարության համար վճռական այդ հարցերի դրույթով տվել է սոցիալիստական շինարարության դժվարությունների հաղթահարման համար մղվող պայքարի հիանալի զենք:



Մեր յերկիրը շատ ազգություններ ունեցող յերկիր է: Միության ազգային ռայոնների մեծ մասը գյուղացիական ռայոններ են, տնտեսական տեսակետից հետամնաց ռայոններ: Ազգային հարցում ճիշտ քաղաքականությունը — ցարիզմի կրկնակի ճնշման տակ գտնվող հետամնաց ծայրամասերի լայն մասսաներին սոցիալիզմի շինարարության մեջ ներգրավելու քաղաքականություն է: Մեր կուսակցության ազգային ճիշտ քաղաքականությունը — կարևորագույն ղեկավարություն է Կոմունիստական Ինտերնացիոնալի բոլոր յեղբայրական կուսակցությունների համար: Ընկեր Ստալինին է պատկանում ազգային հարցի խոր մարքսիստական-լենինյան մշակման ծառայությունը: Դեռ ընդհատակի օրերին նա հիանալի աշխատություն է գրել մարքսիզմի և ազգային հարցի մասին, վորն այն ժամանակ ամբողջությամբ հավանության գտավ Լենինի կողմից: Մեր համագումարներում և կոնֆերենցիաներում ազգային հարցի մասին լենինյան դրույթները զարգացնող հիմնական զեկուցումներն ու յելույթներն արվել են Ստալինի կողմից: Ստալինի անվան հետ է կապված կուսակցության ու Խորհրդային իշխանության հետ-հեղափոխական շրջանի ազգային ամբողջ քաղաքականությունը,—ազգային ծայրամասերի և ռայոնների ինդուստրացման, ձևով՝ ազգային, բովանդակությամբ՝ պրոլետարական ազգային կուլտուրայի ծավալման, տեղական ազգային կադրերի ստեղծման, մեծապետական նացիոնալիզմի՝ վորպես գլխավոր վտանգի և տեղական շովինիզմի դեմ պայքարելու նկատմամբ անշեղորեն կիրառվող գիծը:

Ընկ. Ստալինը լենինյան ամբողջ անհաշտությամբ, բոլշևիկյան անողոքությամբ և պրոլետարական վճռականությամբ վարում է պայքարը յերկու ֆրոնտի վրա.—աջ և «ձախ» ոպորտունիզմի դեմ և կուսակցության լենինյան գծից շեղումների վերաբերմամբ հաշտվողականության դեմ:

Այն պայքարը, վոր Կոմինտերնը մղում է՝ հանուն իր կուսակցությունների բոլշևիզացիայի՝ հակահեղափոխական տրոցկիզմի, դավաճան ռենեգատների, աջ ու «ձախ» ոպորտունիստների դեմ — ընթանում է ստալինյան ղեկավարությամբ:

Ընկ. Ստալինի ծառայությունները հատկապես մեծ են լենինիզմի թեորետիկական և սկզբունքային դիրքերի պաշտպանության գործում Լենինի մահից հետո, յերբ Տրոցկին, մենշևիզմին հավատարիմ մնալով, սակայն մեր կուսակցության մեջ մտնելիս ժամանակավորապես թաքցնելով իր մենշևիկյան բաղաժը, հանդուգն եր դարձել և հարձակում

նը գործում կուսակցության վրա թեորիայի և քաղաքականության հիմնական հարցերում: Ստալինն առաջինը վճռականորեն, համարձակ ամբողջ կուսակցության առաջ հայտարարեց Տրոցկու մենշևիզմի մասին, կոչ արեց կուսակցությանը վճռական պայքար մղելու տրոցկիզմի դեմ, պրոլետարական հեղափոխության հիմնական հարցերի շուրջը լենինյան ռեվիզիայի ենթարկելու փորձերի դեմ: Այդ պայքարն առանձնահատուկ սուր բնույթ ստացավ, երբ Զինովևն ու Կամենևը, փքված անցյալում Լենինի հետ իրենց ունեցած մոտիկությամբ, հրապարակ դուրս եկան կուսակցության և նրա Կենտրոնական Կոմիտեի դեմ, բլոկ կազմելով դեպի հակահեղափոխությունն ընթացող Տրոցկու հետ: Հարկավոր էր երկաթյա կամք, տոկունություն, ինչ վոր գլխավորն է — լենինիզմի խոր թեորետիկական հասկացողություն, վստահություն իր իրավացիության նկատմամբ, վորպեսզի ամբողջ կուսակցության գլուխն անցած կարելի լիներ հետ մղել լենինիզմի թշնամիների հարձակումը: Տրոցկու և Զինովևի ոպոզիցիան ջախջախվեց կուսակցության միաձայն կամքով, տրոցկիստները վտարվեցին կուսակցության շարքերից: Կուսակցության հաղթանակը տրոցկիզմի դեմ մղվող պայքարում անմիջականորեն կապված է ընկ. Ստալինի անվան հետ:

Ընկ. Ստալինի մեծագույն ծառայությունն այն է, վոր նա վճռականորեն բաց արեց աջ թեքման — կուսակցության մեջ դասակարգային թշնամու այդ ուղղակի գործակալության — կուլակային և հակակուսակցական էությունը, մինչև վերջը մերկացրեց այն թե՛ թեորիայում և թե՛ պրակտիկայում: Ստալինն ամբողջ վճռականությամբ հարձակվեց «ձախ» խոտորողների վրա, վորոնք իրենց ցատկումներով մեծագույն վնաս են հասցնում կուսակցությանը, ջուր են լցնում աջ ոպորտունիզմի ջրաղացին: Ընկ. Ստալինը մերկացրեց թեքումների նկատմամբ հաշտվողականության հակակուսակցական բնույթը:

Ստալինն սկզբունքային մեծ բարձրության վրա դրեց բոլշևիզմի պատմության հարցերը, ցույց տվեց բոլշևիզմի պատմության և նրա միջազգային դերի ուսումնասիրության թեորետիկական և պրակտիկ խոշոր նշանակությունը: Նա դրեց կուսակցության ուշադրությունը՝ պայքարելու ինչպես նրանց դեմ, ովքեր մաքսանենգորեն տրոցկիստական բամբասանք են թափում բոլշևիզմի հասցեին, աղավաղում են մեր կուսակցության լենինյան պատմությունը և բամբասում են Լենինի հասցեին, նույնպես և նրանց դեմ, ովքեր բոլշևիկյան զգոնության պակասության պատճառով սատարում են տրոցկիստ մաքսանենգներին՝ իրենց հակահեղափոխական գործում: Փտած լիբերալիզմի դեմ պայքարելու մասին ընկ. Ստալինի լոզունգը վոտքի հանեց կուսակցությանը վոտքի հանեց պայքարելու հանուն լենինյան գծի մաքրության՝ իդեոլոգիական ֆրոնտի բոլոր բնագավառներում:



Ընկ. Ստալինը կուսակցական բոլոր լոզունգները կապում է կուսակցության միասնության, նրա շարքերի մաքրության համար մղվող պայքարի հետ: Նա աշխատում է կուսակցության մարտական շտաբի, նրա Կենտրոնական Կոմիտեի հետ լիակատար կոլեկտիվության հիմունքով, մշտապես ուժեղացնելով նրա ռժանդակությունը: Վորպես իսկական լենինեց ընկ. Ստալինը պայքարել է կուսակցության միասնության համար վոչ թե ոպորտունիզմին զիջումներ անելու գնով, այլ կատաղյալ անհաշտությամբ ոպորտունիզմի բոլոր արտահայտությունների դեմ: Հատկապես այդ պատճառով կուսակցության թշնամիների կողմից Կենտրոնական Կոմիտեն Ստալինին հակադրելու վողորմելի փորձերը ջախջախվեցին: Լենինիզմի թշնամիները մի անգամ չէ, վոր առիթ ունեցան համոզվելու, թե Կենտրոնական Կոմիտեն և նրա ղեկավար ընկ. Ստալինը լենինյան անխզելի միասնական ամբողջություն են կազմում:

Ընկ. Ստալինը միջազգային պրոլետարական հեղափոխության և նրա մարտական շտաբի — Կոմունիստական Ինտերնացիոնալի հանրաճանաչ առաջնորդն է: Ստալինը — հին բոլշևիկյան գվարդիայի այդ փորձված ներկայացուցիչը — հանդիսացել է լենինյան ուսմունքի և բոլշևիզմի փառապանծ տրադիցիաների ամենահավատարիմ և ամենատոկուն կրողը, ոգնելով Կոմինտերնին՝ ճիշտ և հաջող կերպով կիրառելու միջազգային կոմունիստական շարժման ղեկավարության լենինյան մեթոդները:

Ընկ. Ստալինը բացառիկ դեր է խաղում արտասահմանյան կոմկուսակցությունների բոլշևիկյան դաստիարակության գործում, ինչպես համաշխարհային կոմունիստական շարժման մեջ փոխադրելով Համ. Կ(բ)Կ հեղափոխական փորձը, նույնպես և իր անմիջական մասնակցությամբ միջազգային հեղափոխական շարժման ղեկավարության մեջ: Ստալինին է պատկանում Կոմինտերնի ծրագրի — համաշխարհային պրոլետարական հեղափոխության ղարաշրջանի մեծագույն դոկումենտի — մշակման մեջ ղեկավար դերը:

Վորքան ավելի յեն մեծանում Խորհրդային Միության հաջողությունները, այնքան բոլոր յերկրների պրոլետարներն ավելի յեն սեղմվում միջազգային կոմունիստական հեղափոխության այդ հարվածային բրիգադի շուրջը, այնքան ավելի յեն բամբասում միջազգային մենշևիկները, սոցիալ-ֆաշիստները, տրոցկիստները, աջ ոպորտունիստներն ընկ. Ստալինի հասցեին, այնքան ավելի ուժեղ է ատում նրան բուրժուազիան, սակայն այնքան ավելի մեծ սիրով են շրջապատում բոլոր յերկրների պրոլետարները միջազգային պրոլետարական հեղափոխության առաջնորդին:

Ընկ. Ստալինը տիպար է ամբողջ կուսակցության և Կոմինտերնի համար, բոլոր աշխատավորների համար, տիպար է այն բանի, թե ինչ-

պես պետք է հեղափոխական թեորիան զուգորդել հեղափոխական պրակտիկայի հետ, թե ինչպես պետք է ղեկավարել մասսաներին, թե ինչպես պետք է աշխատանքում կիրառել բոլշևիկյան տեմպ ու մեթոդներ, թե ինչպես պետք է ապրել, վորպեսզի հեղափոխական գործն ամեն բանից բարձր լինի:

*Մեր դասակարգային թշնամիներից մեկն արտասահմանյան սպիտակ-գվարդիական մամուլում պատմել է, թե ինչպես համարյա քառորդ դար առաջ ցարական դահիճները ձերբակալված Ստալինին անց են կացրել զորաշարքի միջով և թե ինչպես նա, Ստալինը, գիրքը ձեռքին գնացել է հրացանների կոթերի հարվածների տակ՝ գլուխը չխոնարհած:*

*Ընկ. Ստալինի աննկուն, անխորտակելի կամքի մեջ, կոմունիզմի գործի համար մարտնչողի նրա անսասան անվեհերության մեջ, պրոլետարիատի ազատագրության գործին նրա անձնուրաց նվիրվածության մեջ է մարմնավորված այն դասակարգի ուժը, վորը կոչված է իր սեփական ազատագրության հետ միասին ազատագրել նաև վողջ ճնշված մարդկությունը:*

«Պրոլետարիատի դիկտատուրան,— յեթե այդ գիտական, պատմափիլիսոփայական լատինական արտահայտությունը փոխադրենք ավելի պարզ լեզվի, ահա թե ինչ է նշանակում.—միայն վորոշ դասակարգ, հատկապես քաղաքային և ընդհանրապես ֆաբրիկա-գործարանային, արդյունաբերական բանվորները ի վիճակի յեն ղեկավարելու աշխատավորների և շահագործվողների վողջ մասսային կապիտալի լծի տապալման պայքարում, տապալման ընթացքում, հաղթանակի պահպանման և ամրապնդման պայքարում, սոցիալիստական նոր հասարակակարգի ստեղծման գործում, դասակարգերի լիակատար վոչնչացման ամբողջ պայքարում»:

ԼԵՆԻՆ

# VII ԳԼՈՒԽ

# ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

## 1. ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇՄԱՆ ՈՐԳԱՆ Ե

*Ամեն տարի յերկրագնդի բոլոր ծայրերից, կապիտալիստական արդյունաբերական մեծ կենտրոնների բազմազան բանվորական Թաղամասերից իրենց կառավարություններից հետապնդված պրոլետարներ և պրոլետարուհիներ — կոմունիստ, սոցիալ-դեմոկրատ, անկուսակցական — մայիսմեկյան և Հոկտեմբերյան տոնակատարություններին գալիս են Խորհրդային Միություն: Նրանք գալիս են ամբողջ պատվիրակություններով, ընտրված իրենց ձեռնարկությունների կողմից, գալիս են տեսնելու, ուսումնասիրելու, թե ինչ է կատարվում Խորհուրդների յերկրում, այդ զարմանալի յերկրում, վորը չնայած բուրժուազիայի ատելությանը, կապիտալիստական աշխարհի պատճառած դժվարություններին, ահա արդեն 15 տարուց ավելի յե, ինչ գոյություն ունի, աճում է, զարգանում և ամրապնդվում:*

*Այդ բանվորական պատվիրակությունները Խորհրդային Միության մեջ սկզբում կարծես թե հանդիպում են այնպիսի յերևույթների, փաստերի, իրերի, վորոնք առատությամբ կան նրանց «սեփական» յերկրներում: Նրանց մոտ — պետություն, այստեղ էլ — պետություն, նրանց մոտ — կառավարական իշխանություն, այստեղ էլ — կառավարական իշխանություն, նրանց մոտ — դատարան, այստեղ էլ — դատարան, նրանց մոտ — բանկեր, այստեղ էլ — բանկեր, նրանց մոտ — գործարաններ, այստեղ էլ — գործարաններ, նրանց մոտ — թերթեր, այստեղ էլ — թերթեր:*

Եվ ինչո՞ւ չեն նրանք մեզ մոտ գալիս։ Ինչո՞ւ չեն նրանք կռվում,
արյուն թափում և հաճախ մեռնում մեզ համար։
Վորովհետև նրանց մոտ և մեզ մոտ — միևնույն չէ։ Այդ բանում
նրանք համոզվում են առաջին քայլից, վոր անում են խորհրդային հո-
ղում, սահմանն անցնելու առաջին մոմենտից։ Նրանք գալիս են իրենց
բանվորական յերկիրը, վորտեղ իշխանությունը պատկանում է իրենց
դասակարգային յեղբայրներին — բանվորներին և աշխատավորներին,
վորտեղ բանակը պաշտպանում է բանվորական և կոլտնտեսական աշ-
խատանքը, վորտեղ բանտերի վանդակների հետևում նստած են բան-
վորական իշխանությանն ընդդիմադրող հակահեղափոխականները,
նախկին կապիտալիստները, ֆաբրիկանտները, կալվածատերերը, կու-
լակները և նրանց գործակալները, վորտեղ բանկերի փողը պատկանում
է բանվորական պետությանը, վորտեղ դպրոցներում սովորում են բան-
վորների և գյուղացիների յերեխաները, վորտեղ յուրաքանչյուր աշ-
խատավորի առաջ բացված են բարձրագույն ուսումնական հիմնարկի
դները, վորտեղ թերթերն աշխատավորությանը կազմակերպում են՝
հանուն կոմունիզմի կառուցման պայքարելու համար։
Այդ և շատ ուրիշ բաներ են տեսնում ու ուսումնասիրում մեր բան-
վոր հյուրերը և մեր յերկրի մասին, Խորհրդային իշխանության մասին
ուրախալի լուրեր են տարածում ամբողջ կապիտալիստական աշխարհի
պրոլետարական թաղամասերում։
Բանվորները մեզ մոտ են գալիս, բանվորները մեր մասին խոսում
են, մեզ համար պայքարում են, վորովհետև մենք ապրում ենք առանձ-
նահատուկ յերկրում, վորովհետև այդ յերկրում գոյություն ունի
Խորհուրդների իշխանություն, վորովհետև յերկրագնդի մեկ վեցերորդ
մասում, վորտեղ առաջ իր ավազակային տնտեսությունն էր վա-
րում կապիտալիստը, կալվածատերը, բանկիրը — այժմ պրոլետարիա-
տի դիկտատուրա յէ։
Բուրժուական պետությունը ճնշման որգան է, աշխատավորության
լայն մասսաների հարստահարման գործիք, պրոլետարիատի նկատմամբ
բուրժուազիայի տիրապետության պահպանման ապարատ։ Մեր խոր-
հրդային իշխանությունը ճնշում է գործ դնում միայն նրանց վերա-
բերմամբ, ովքեր ընդդիմանում են պրոլետարական դիկտատուրային,—
կապիտալիստական էլեմենտների նկատմամբ։
Բուրժուական պետությունը փորձում է ճնշմամբ, խաբեյու-
թյամբ ընդմիշտ ամրապնդել բուրժուազիայի իշխանությունը, պրոլե-
տարիատի շահագործումը։ Բանվոր դասակարգի դիկտատուրան կապի-
տալիզմից կոմունիզմին տանող անցման իշխանություն է, վորն առա-
ջացել է պրոլետարական հեղափոխության մեջ և ամրապնդվել է քա-
ղաքացիական կռիվներում։ Նրա նպատակն է սոցիալիզմ կառուցել
մեր յերկրում, դրանով ոգնել պրոլետարական հեղափոխության ծա-



վալմանը վողջ աշխարհում, պայքարել համաշխարհային պրոլետա-
րիատի վերջնական նպատակի — կոմունիզմի համար։ Պրոլետարիատի
դիկտատուրայի նպատակն է վոչ թե պետության հավերժացումը, այլ
անդասակարգ և անպետություն հասարակության կառուցումը։
Բանվոր դասակարգը, գյուղացիության չքավոր-միջակ մասսանե-
րի ոժանդակությամբ, ղեկավարվելով բալշևիկների կողմից՝ Լենինի
գլխավորությամբ, ջախջախեց, ջարդ ու փշուր արեց բուրժուական
պետական մեքենան։ Դրան են ձգտում այն յերկրների կոմունիստները,
վորտեղ իշխանությունը պատկանում է կապիտալիստներին, նրանք այդ
բանի համար են պատրաստում քաղաքի պրոլետարներին և գյուղի
աշխատավորությանը։ Սոցիալիստական հեղափոխության միջոցով
տիրանալ պետական իշխանությանը, ջախջախել բուրժուական ճնշման
հին մեքենան, իրագործել պրոլետարիատի դիկտատուրան խորհրդա-
յին իշխանության ձևով — այս է համայն աշխարհի հեղափոխական
գիտակից բանվորների լոզունգը, այս է յեղբայրական կոմունիստական
կուսակցությունների խնդիրը։
Բուրժուազիան ընդդիմանում է, բուրժուազիան հարձակվում է
բանվոր դասակարգի վրա, նա չի ցանկանում, չի կարող թույլ տալ
իր պետության, իր տիրապետության վոչնչացումը։ Բուրժուական
գրողներն ու գիտնականները, պատմաբաններն ու իրավաբանները,
ժուրնալիստներն ու փիլիսոփաները գիտավորյալ կերպով մթագնել են
պետության հարցը, նրա ծագման ու նրա նշանակության հարցը։ Բուր-
ժուազիայի ներկայացուցիչները, բուրժուական ինտելիգենտներն ստեղ-
ծել են այնպիսի ուսմունք, վոր իբր թե պետությունն ինչ-վոր «համա-
ժողովրդական», դասակարգերից վեր գտնվող բան է, և գոյություն
ունի դարերից ի վեր։ Ստրկատերերն ու ճորտատերերը, կալվածատե-
րերն ու կապիտալիստները պետական իշխանության դեմ ապստամբե-
լու համար ճնշվածներին յենթարկել են հալածանքի, մահապատժի,
տաժանակիր աշխատանքի ու աքսորի։
Պետության մասին բուրժուական ուսմունքները ծառայում են վոր-
պես հասարակական պրիվիլեգիաների (առավելությունների) արդա-
րացում, շահագործման գոյության արդարացում, կապիտալիզմի գո-
յության արդարացում։

## Ի՞ՆՉՊԵՍ Է ԱՌԱՋԱՑԵԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Պետությունը հավերժական գոյություն չունի։ Հասարակություն-
ներ են յեղել, վորոնք յոլա յեն գնացել առանց պետության, վորոնք
հասկացողություն չեն ունեցել պետության և պետական իշխանության
մասին։ Նախնադարյան հասարակության մեջ, հազարամյակներ առաջ,

յերբ մարդիկ գտնվելով իրենց զարգացման ցածր աստիճանի վրա, ապրում եյին վոչ մեծ համայնքներով, պետություն գոյություն չուներ: Իշխում եյին սովորույթները, իսկ ցեղապետները, վորոնք հարգանք, հեղինակություն եյին վայելում, իրագործում եյին իշխանությունը: Վոչ մի հատուկ, առանձնապես հարկադրման հարմարեցրած որգաններ — բանակ, վոստիկանություն և այլն այն ժամանակ չկար: Հասարակությունը պահպանվում եր ընդհանուր կարգով, սովորույթի ուժով, ցեղապետների վայելած հեղինակությամբ: Նրանց ընտրում ու փոփոխում եյին ընդհանուր ժողովներում: Այնպիսի մարդիկ, վորոնց մասնագիտությունը կառավարելը լիներ, գոյություն չունեյին:

Մարքսը և Ենգելսը պատմական մեծ մատերիալների հիման վրա ուսուցանում են, վոր պետությունը վորպես հարկադրման հատուկ ապարատ, ծագել է միայն այն ժամանակ, յերբ հասարակությունը բաժանվել է դասակարգերի, յերբ յերևացել են ուրիշների աշխատանքը յուրացնող մարդկանց խմբեր: Աշխատանքի բաժանումը հանգեցրել է հասարակության բաժանմանը մարդկանց այնպիսի խմբերի, վորոնք զբաղվում են վորոշ պրոֆեսիայով, աշխատանքի վորոշ ճյուղով (անասնապահություն, հողագործություն, արհեստներ): Շնորհիվ դրա աճել է աշխատանքի արտադրողականությունը, իսկ աշխատանքի արտադրողականության աճը հնարավոր է դարձրել ավելի շատ մթերքներ արտադրել, քան հարկավոր է նրանց արտադրության վրա ծախսված բանվորական ուժը պահպանելու համար:

Առաջացել է հասարակություն, վորտեղ սկսել են շահագործել ռազմագերիներին, ստրուկներին — ստրկության վրա հիմնված հասարակություն: Ստրկատիրական հասարակության մեջ հիմնական խմբերը, դասակարգերը յեղել են ստրկատերերն ու ստրուկները: Ստրկատերերն իրենց ձեռքում կենտրոնացրել եյին արտադրության բոլոր միջոցները — հողը, գործիքները, նրանք տիրում եյին նույնպես և մարդկանց: Ստրուկներն աշխատում եյին հողի և արտադրության միջոցների տերերի — ստրկատերերի համար: Ստրկատիրական հասարակության մեջ առաջին անգամ յերևան է գալիս պետությունը վորպես ճնշման ապարատ՝ տիրապետող դասակարգի ձեռքին:

Այդ հասարակության զարգացման, աշխատանքի արտադրողականության աճման համեմատ, փոփոխվել և բարելավվել են արտադրության միջոցները, ստրկությունը մեծ մասամբ վերածվել է ճորտատիրության: Ստրկատիրական հասարակությանը փոխարինել է ֆեոդալական, ճորտատիրական հասարակությունը: Հասարակությունն սկսել է բաժանվել յերկու հիմնական դասակարգերի — ֆեոդալների, կալվածատերերի, ճորտատերերի՝ մի կողմից, և ճորտ գյուղացիների՝ մյուս կողմից: Ստրկատիրական հասարակության մեջ ստրուկները համարվում եյին ստրկատիրոջ սեփականությունը, որենքը նրանց ճանաչում



եր վորպես ստրկատիրոջը պատկանող առարկա: Ճորտատիրական կար-
գում կեղեքումը նոր ձևեր է ընդունել:
Ճորտատեր – կալվածատերը չէր համարվում գյուղացու՝ վորպես
առարկայի տերը, այլ միայն իրավունք ուներ նրա աշխատանքի վրա:
Հազարավոր գյուղացիներ պարտավոր եյին ձրի մշակել նրա հողը, ծա-
ռայել նրան: Իսկ գործնականում, ինչպես այդ շատ լավ հայտնի յե
ռուսական ճորտատիրությունից, ճորտերը վոչնչով չեյին զանազան-
վում ստրուկներից,—նրանց նույնպես փոխանակում, վաճառում եյին:
Այդ հասարակության մեջ պետությունը — ճնշման ապարատ եր կալ-
վածատեր–ճորտատերերի ձեռքում: Նա ամբողջ ուժով ծանրանում եր
գյուղացիների և արհեստավորների վրա: Ճորտատիրական ստրկության
դեմ յուրաքանչյուր բողոքի փորձն անխնա ճնշվում եր.—բավական է
հիշել բազմաթիվ գյուղացիական ապստամբությունների գազանաբար
և արյունահեղ ճնշումը Ռուսաստանում (Ստենկա Ռազինի — 1667
թվին, Պուգաչովի — 1773 թվին և այլն):
Ֆեոդալական հասարակության մեջ գոյություն ունեցող արտա-
դրության յեղանակն ի վիճակի չէր բավարարելու նոր շուկաների բաց-
ման առնչությամբ զարգացած պահանջը (Ամերիկայի գյուտը 1492 թ.,
շուրջաֆրիկյան ծովային ճանապարհի գյուտը): Խոշոր արդյունաբերա-
կան արտադրության ստեղծման պահանջ է ծագում: Մեքենաների գյու-
տը, շոգու գործադրումը ճանապարհ բաց արին խոշոր արդյունաբերու-
թյան զարգացման համար:
XVIII և XIX դարերին ճորտատիրական, ֆեոդալական հասարա-
կությանը գալիս է փոխարինելու կապիտալիստական հասարակությու-
նը: Այդ հասարակության մեջ յերկու դասակարգեր կանգնած են դեմ
հանդիման.— բուրժուազիայի դասակարգը, վորը տիրապետում է ար-
տադրության բոլոր միջոցներին ու գործիքներին, և պրոլետարների
դասակարգը, վորը, բացի սեփական բանվորական ուժից, վոչինչ չու-
նի: Այդ հասարակության մեջ պետությունը ծառայում է շահագործող-
ների դասակարգին՝ վորպես ճնշման միջոց բանվորների և աշխատավոր-
ների նկատմամբ:
Դարերի ու հազարամյակների ընթացքում, կատաղի դասակարգա-
յին պայքարում, ապստամբություններում և հեղափոխություններում
մեկ ձևը փոխարինել է մյուսին — նախնական անդասակարգ հասարա-
կությունից ստրկության, ֆեոդալիզմի, ճորտատիրության միջով դե-
պի կապիտալիստական կարգը: Այդ ճանապարհին աստիճանաբար ա-
ռաջանում, աճում ու զարգանում է պետությունը, ճնշման և հարկա-
դրման հատուկ ապարատը, վորը նախ՝ ստրուկներին, ապա՝ գյուղա-
ցիներին, ճորտերին և պրոլետարներին — հպատակության մեջ է պա-
հում, հարկադրում է աշխատել ստրկատիրոջ, ֆեոդալի, ճորտատի-
րոջ և կապիտալիստի համար:

# ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ — ՄԱՍՍԱՆԵՐԻՆ ԽԱԲԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Պետությունը զանազան ձևեր է ընդունել — միապետություն՝ *ցարի կամ թագավորի ցմահ, ժառանգական գլխավորությամբ*, հանրապետություն՝ *ընտրովի նախագահով, պետության ղեկավարով*: Սակայն դրանից շահագործական պետության էությունը չի փոխվել: *Պետությունը մնացել է որպես կեղեքման ու ճնշման ապարատ, մեքենա, մահակ և հենվել է ստրուկների, ճորտերի աշխատանքի վրա, ինչպես այժմ բուրժուական պետությունը հենվում է շահագործվող բանվորների աշխատանքի վրա*:

*Բուրժուական հեղափոխությունների ժամանակ (Անգլիայում — XVII դարում, Ֆրանսիայում — XVIII դարում, Գերմանիայում, Ավստրիայում և Իտալիայում — XIX դարում), երբ բուրժուազիան իշխանության համար պայքարում էր ֆեոդալիզմի դեմ, նա հողատերերի միապետական իշխանությանը՝ որպես հակադրություն՝ առաջադրեց դեմոկրատիայի գաղափարը, պահանջեց միապետության սահմանափակումը պարլամենտով, մամուլի, խոսքի, ժողովների, ընտրական իրավունքի ազատություն և այլն: «Մարդկային անհատի հավասարության դիմակի տակ ընդհանրապես,— ասում է Լենինը,— բուրժուական դեմոկրատիան հայտարարում է սեփականատիրոջ և պրոլետարի, շահագործողի և շահագործվողի ձևական և իրավական հավասարությունը, դրանով մեծագույն խաբեության մեջ գցելով կեղեքվող դասակարգերին»: Տիրապետելով արտադրության գլխավոր միջոցներին և հսկայական կապիտալներին, բուրժուազիան ստրկացնում է աշխատավորներին և դեմոկրատիան դարձնում է «դեմոկրատիա չնչին փոքրամասնության համար, միայն ունևոր դասակարգերի համար, միայն հարուստների համար»* (Լենին): *Բուրժուազիան իր ձեռքում ունի պետական իշխանության բոլոր օրգանները — մամուլ, տպարաններ, շենքեր, պարլամենտի պատգամավորներին կաշառելու միջոցներ և այլն: Բուրժուազիան բոլոր միջոցներով թունավորում է մասսաների գիտակցությունը, մթագնում է նրանց, հեռացնում է նրանց հասարակական-քաղաքական կյանքի մասնակցությունից: Բուրժուական դեմոկրատիան, բուրժուական «ազատությունները» — բուրժուական դիկտատուրայի դիմակավորված ձևն է*:

*Բուրժուական «ազատությունները»*, բուրժուական դեմոկրատիան խաբեություն է, քանի որ շահագործումը, դասակարգային կեղեքումը մնում է, *քանի որ իշխանությունը և պետական ապարատը գտնվում են տիրապետող դասակարգերի ձեռքում*:

*Բուրժուական դեմոկրատիան, որի դրոշի տակ բուրժուազիան իշխանության դիմեց, իր դարն ապրել է: Մեր ներկայումս ապրած*



*եպոխայում, պատերազմների և պրոլետարական հեղափոխությունների եպոխայում, բուրժուազիան հետզհետե ավելի ու ավելի յե դիմում* իր դիկտատուրայի բացահայտ ձևին — ֆաշիզմին: *Բուրժուական պետության ֆաշիզացումը նշանակում է բուրժուական «ազատությունների» լիկվիդացիա, բացարձակ հարձակում բանվոր դասակարգի վրա, նրա բոլոր կազմակերպությունների ջախջախում, կոմունիստական կուսակցության հետապնդում ու արգելում և հաշվեհարդար բանվոր դասակարգի հեղափոխական կազմակերպությունների հետ: Իտալիայում, Լեհաստանում և այլ երկրներում բուրժուազիան բուրժուական «ազատությունների» խաբեությամբ վարագուրված դեմոկրատիան փոխարինել է* ֆաշիզմի դիկտատուրայով — կապիտալի բացահայտ դիկտատուրայով:

*Բուրժուական գիտնականները, փիլիսոփաները և պատմաբանները գործն այնպես են պատկերացնում, որ իբր պետությունը գոյություն ունի դասակարգերից վեր, իբր նա ստեղծված է ոչ թե մի դասակարգի կողմից մյուսին կեղեքելու, ճնշելու համար, այլ դասակարգերի հաշտեցման համար, դասակարգային պայքարը մեղմացնելու համար: Սակայն զանազան երկրների բանվորներն իրենց դժվարին, արյունահեղ փորձով սկսում են ավելի ու ավելի պարզորեն հասկանալ, որ* այդ պետությունը հանդիսանում է կեղեքման և ճնշման հզոր ապարատ, բուրժուազիայի դիկտատուրայի ապարատ:

*«Այն մեքենան, որը կոչվում է պետություն,— ասում է Լենինը «Պետության մասին» իր դասախոսության մեջ,— որի առաջ մարդիկ կանգ են առնում սնահավատ հարգանքով և հավատում են հին հեքիաթներին, թե դա համաժողովրդական իշխանություն է,— պրոլետարիատն այդ մեքենան դեն է շպրտում և ասում է.— սա բուրժուական խաբեություն է: Մենք այդ մեքենան խլեցինք կապիտալիստներից, մերը դարձրինք: Այդ մեքենայով կամ մահակով մենք ջախջախեցինք ամեն տեսակ շահագործում: Եվ երբ աշխարհում շահագործելու հնարավորություն չի մնա, չեն մնա հողատերեր, չեն մնա գործարանատերեր, չի լինի այնպես, որ ոմանք չափից դուրս հագենում են, իսկ մյուսները՝ քաղցում,— միայն այն ժամանակ, երբ դրանց հնարավորությունները կվերացվեն, մենք այդ մեքենան կհանձնենք ջարդելու: Այն ժամանակ չի լինի պետություն, չի լինի շահագործում»*:

Բոլշևիկների կուսակցությունն իր մինչ-հոկտեմբերյան ուղու ամբողջ ընթացքում իր առաջ ուներ մեծագույն պատմական խնդիր — նախապատրաստել բանվոր դասակարգին՝ ջախջախելու բուրժուական պետական մեքենան, հաստատելու պրոլետարիատի դիկտատուրա, որն իրագործի անդասակարգ կոմունիստական հասարակության կառուցումը:

## 2. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է

Պրոլետարիատի դիկտատուրան հանդիսանում է Լենինի ուսմունքի հիմնական հարցը: «Մարքսիստը միայն նա է,—գրում էր Լենինը,—ով դասակարգերի պայքարի ընդունումը հասցնում է մինչև պրոլետարիատի դիկտատուրայի ընդունմանը»:

*Չի կարելի, կարիք չկա, որ պրոլետարիատը հեղափոխություն անի, եթե այդ հեղափոխությամբ նա չի նվաճելու իշխանությունը, չի կազմակերպվելու և իր հետևից չի տանելու դաշնակիցներին, չի տիրանալու իշխանությանը, չի օգտագործելու այն՝ պրոլետարիատի դիկտատուրայի՝ անցման ժամանակաշրջանի այդ պետության հաստատման համար:*

*Զինովևը, հակառակ Լենինի ուսմունքին, որը պնդում էր, թե* պրոլետարիատի դիկտատուրան «հեղափոխության արմատական բովանդակությունն է», *փորձում էր վստահեցնել կուսակցությանը, որ լենինիզմի մեջ գլխավորը գյուղացիության հարցն է: Զինովևն աղավաղում էր Լենինի ուսմունքը, և այդ անում էր նրա համար, որ չէր հավատում պրոլետարիատի ուժին՝ որպես հեղափոխության առաջնորդի և ղեկավարի, որպես հեղափոխության հեգեմոնի: Նա հարցը դնում էր այդպես, որովհետև ցանկանում էր լենինիզմը պատկերացնել որպես զուտ ռուսական երևույթ և ոչ թե որպես միջազգային պրոլետարիատի ուսմունք: Որովհետև, եթե լենինիզմի մեջ գլխավորը համարենք* գյուղացիական հարցը, *ապա այստեղից բխում է, որ լենինիզմը պիտանի է միայն նվազ զարգացած՝ գյուղացիական էկոնոմիկայով գերակշռող երկրների համար:*

*Հատկապես նրա համար,* որ լենինիզմի մեջ գլխավորը պրոլետարիատի դիկտատուրան է, իսկ գյուղացիության հարցը, դա հեղափոխության մեջ պրոլետարիատի դաշնակցի հարցն է, *հատկապես դրա համար* լենինիզմը դարձավ ինտերնացիոնալ ուսմունք, *պիտանի բոլոր երկրների համար, այդ թվում նաև կապիտալիստորեն բարձր զարգացած երկրների համար:*

*Իշխանությունն իր ձեռքը գրավելով, պրոլետարիատը ջարդում է բուրժուական տիրապետության պետական մեքենան, կալվածատերերից և կապիտալիստներից վերցնում է հողը, ֆաբրիկաները, գործարանները, արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը դարձնելով պետական սեփականություն:* Իրագործելով իր դիկտատուրան, պրոլետարիատը բռնություն է գործ դնում բուրժուազիայի վրա, ճնշում է նրան: *Բուրժուազիան էլ, ինչպես յուրաքանչյուր այլ տիրապետող դասակարգ, պատմական ասպարեզից չի հեռանում առանց կատաղի դասակարգային պայքարի և ընդդիմադրության:*

*«Առաջին լուրջ պարտությունից հետո,—ասում է Լենինը,—տապալված շահագործողները, որոնք չէին սպասում իրենց տապալումը, չէին հավատում դրան, չէին ենթադրում այդ մասին, տասնապատիկ եռանդով, կատաղի մոլեգնությամբ, հարյուրապատիկ աճած ատելությամբ կռվի յեն նետվում՝ հետ վերադարձնելու համար խլված «դրախտն» իրենց ընտանիքների համար, որոնք այնքան քաղցր էին ապրում և որոնց այժմ «ռամիկ սրիկաները» դատապարտում են քայքայման ու աղքատության (կամ «հասարակ» աշխատանքի): Իսկ շահագործող-կապիտալիստների հետևից ձգվում է մանր բուրժուազիայի լայն մասսան, որի մասին բոլոր երկրների պատմական փորձի տասնյակ տարիները վկայում են, որ նա ճոճվում ու տատանվում է, այսօր գնում է պրոլետարիատի հետևից, վաղը վախենում է հեղաշրջման դժվարություններից, պանիկայի մեջ է ընկնում բանվորների առաջին պարտությունից կամ կիսապարտությունից, ջղայնանում է, զարնվում է այս ու այն կողմ, տրտնջում է, լացերից լացեր և փախչում»:*

1871 *թվականի Փարիզյան կոմունայի փորձը, որը պրոլետարիատի դիկտատուրայի նախատիպն էր, իշխանությունն իր ձեռքը գրավելու բանվոր դասակարգի առաջին փորձը, Բավարական խորհրդային իշխանության, Հունգարական խորհրդային իշխանության պատմությունը, քաղաքացիական կռիվների պատմությունը մեր երկրում վկայում են այն անցքերի մասին, որոնց ընդունակ է իր կապիտալիստական «դրախտի» վերադարձման համար պայքարող բուրժուազիան:*

*Հատկապես դրա համար պրոլետարիատը բուրժուական բռնության հին մեքենայի ավերակների վրա իր ստեղծած սեփական իշխանությունն օգտագործում է ճնշելու համար իր դասակարգային թշնամիների ընդդիմադրությունը:* Պրոլետարիատն իր պետությունն օգտագործում է ճնշելու համար բուրժուազիային, իրագործում է շահագործվող մեծամասնության ճնշումը շահագործող փոքրամասնության նկատմամբ:

*Հոկտեմբերյան հեղափոխության պատմությունն ապացուցում է, որ նույնիսկ մեր սեփական միջավայրում, բանվոր դասակարգի և նրա կուսակցության միջավայրում գտնվել էյին մարդիկ, որոնք ենթադրում էյին, որ իշխանության գրավմամբ, քաղաքացիական կռիվների ավարտմամբ և խաղաղ շինարարության անցնելով՝ հեղափոխության գործը բարեհաջող կերպով վերջանում է: Հետագայում դասակարգային պայքարը մարում է: Աջ օպորտունիստները պնդում էյին (Բուխարին, Ռիկով և այլն), որ սոցիալիստական շինարարությունը կգնա ինքնահոսով, առանց լարման, առանց դասակարգային պայքարի:*

*Գործնականում, իհարկե, այդպիսի բան չկար և չէր կարող լինել:*

Պրոլետարիատի ուղին դեպի իշխանությունը — հեղափոխության ճանապարհ է, դասակարգային յերկարատև պայքարի ճանապարհ: *Այդ դասակարգային պայքարում նա հրապարակ է յեկել վորպես անհաշտ ուժ շահագործողների վերաբերմամբ, բուրժուական հասարակության վերաբերմամբ: Այդ դասակարգային պայքարում պրոլետարիատն իր պայքարի ձևերից մեկը փոխարինել, լրացրել է մի ուրիշով — գործադուլներ, դեմոնստրացիաներ, բարիկադներ, ապստամբություններ — այս բոլորը հաջորդել են մեկը մյուսին, այս բոլորը լրացրել են մեկը մյուսին:* Հեղափոխությունը, *իշխանության համար անմիջական, զինված, արյունահեղ, հերոսությամբ և անձնուրացությամբ լի պայքարը* — դասակարգային պայքարի բարձրագույն լարումն է:

*Կռվում իշխանություն գրավելը, պրոլետարիատի դիկտատուրա հաստատելը դասակարգային պայքարի ընդհատում չէ, այլ ընդհակառակը*, դասակարգային պայքարի շարունակությունն է նոր ձևերով: *Հաղթելով զինված պայքարում, քաղաքական իշխանությունն իր ձեռքը վերցնելով, իրագործելով իր դիկտատուրան, պրոլետարիատը շարունակում է իր դասակարգային պայքարն ընդդեմ պարտված, բայց դեռ չվոչնչացված, համառորեն դիմադրող բուրժուազիայի և կալվածատերերի:*

«Պրոլետարիատի դիկտատուրան,— *ասում է Լենինը*,— նոր դասակարգի ամենաանձնուրաց, ամենաանողոք կռիվն է ընդդեմ ավելի ուժեղ թշնամու, ընդդեմ բուրժուազիայի, վորի ընդդիմադրությունը տասնապատկված է իր տապալման հետևանքով»:

Պրոլետարիատն իր դիկտատուրայի ժամանակաշրջանում այդ դասակարգային պայքարը մղում է զանազան բնագավառներում, զանազան ձևերով:

*Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջին տարիներին — կատաղի քաղաքացիական կռիվների տարիներին, Հոկտեմբերին ջախջախված կապիտալիստներն ու կալվածատերերը փորձեցին զենքը ձեռքին վերադարձնել իրենց կորցրած իշխանությունը, յերկիրը վողողել արյան մեջ, վերականգնել թալանի և շահագործման իշխանությունը: Սպիտակ-գվարդիական բանակներն ու բանդաները, արտասահմանյան իմպերիալիստների ոգնությամբ, չորս կողմից ողակեցին յերիտասարդ խորհրդային հանրապետությունը, վորը մոլեգնորեն կռվում եր իր գոյության համար: Հյուսիսից — անգլիացիները և ամերիկացիները, վորոնք գրավել եյին Արխանգելսկը, հյուսիս-արևմուտքից — Յուդենիչը, վորն արշավում եր Լենինգրադի վրա, արևելքից — ցարական ծովակալ Կոլչակը, ճապոնացիները, վորոնք գրավել եյին Սիբիրի և Հեռավոր Արևելքի հսկայական տարածությունները, հարավից — Կրասնովը, Դենիկինը, վորոնց ոգնում եյին անգլո-ֆրանսական զորքերը, արևմուտքից — ֆրանսական իմպերիալիստների կողմից ղեկավարված սպիտակ լեհերը, յերկրի ներսում — միջազգային իմպերիալիզմի գործակալների կողմից կազմակերպված կուլակային բանդաները և պարտիզանական ջոկատները: Միջազգային բուրժուազիան, շրջապատելով խորհրդային յերկիրը բլոկադայի և ինտերվենցիայի ողակով, ձգտում եր հարկադրել յերիտասարդ հանրապետությանը՝ հանձնվելու թշնամիների բարեհոգությանը: Սակայն մեր յերկրի բանվոր դասակարգը, դաշնակցելով գյուղացիության չքավոր-միջակ մասսաների հետ և ղեկավարելով նրանց, արևմտյան-յեվրոպական պրոլետարիատի ոժանդակությամբ, Լենինի կուսակցության ղեկավարությամբ՝ պաշտպանեց խորհուրդների յերիտասարդ հանրապետությունը, ջախջախեց ինտերվենտների և սպիտակ-գվարդիականների բանակները:*

Պրոլետարական դիկտատուրայի յերկրում դասակարգային պայքարը նոր ձևեր ընդունեց: *Տնտեսական խաղաղ շինարարության տարիներին, ժողովրդական ամբողջ տնտեսության վերականգնման, ապա նաև նոր սոցիալիստական հիմունքների վրա վերակառուցման տարիներին, պրոլետարիատի դիկտատուրան անողոք կերպով ճնշեց բուրժուազիայի և կուլակության փորձերը՝ տապալելու սոցիալիստական շինարարությունը (վնասարարություն, կուլակության պայքարը կոլեկտիվացման դեմ և այլն, և այլն):*

Ժամանակակից ետապում — *յերբ լենինյան «ով-ում» հարցը լուծված է հոգուտ սոցիալիզմի, յերբ ավարտված է սոցիալիստական եկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը, յերբ լիկվիդացիայի յե յենթարկվում վերջին կապիտալիստական դասակարգը՝ կուլակությունը, յերբ Խորհրդային Միությունը վերջնականապես հաստատվել է սոցիալիզմի ուղու վրա* — դասակարգային պայքարը չի մարում: *Կապիտալիստական էլեմենտների մնացորդները, իմանալով, վոր մոտենում է իրենց վերջնական կործանման ժամը, իրենց ամբողջ ուժերը լարում են, վորպեսզի տապալեն սոցիալիստական շինարարության տեմպերը: Այդ պայքարում նրանք ոգտագործում են բոլոր միջոցները, բոլոր մեթոդները, նրանք խցկվում են կոլտնտեսությունները, ոգտագործելով հետամնաց կոլտնտեսականների մանր-սեփականատիրական տրամադրությունները, ագիտացիա յեն մղում հացը պետությանը հանձնելու դեմ, փորձում են տապալել կոլտնտեսական առևտուրը, հափշտակում են կոլտնտեսական սեփականությունը և այլն: Դասակարգայնորեն անհարազատ էլեմենտները, ներթափանցելով գործարանները, փորձում են ոգտագործել հետամնաց բանվորների տրամադրությունները, հակասարեցում քարոզելով, պայքարում են աշխատանքային դիսցիպլինայի դեմ, աշխատանքի ճիշտ կազմակերպման դեմ և այլն: Դասակարգային պայքարը շարունակվում է:*

«Հետագայում էլ դեռևս անխուսափելի յե դասակարգային պայքարի սրումն առանձին մոմենտներում և հատկապես սոցիալիստական

կառուցման առանձին ռայոններում և առանձին բնագավառներում».— ասում է XVII կուսկոնֆերենցիան:

Դասակարգային այդ պայքարում պրոլետարիատը, վորպես տիրապետող և իր պետության մեջ կազմակերպված դասակարգ, բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ, դաստիարակում ու կոփում է իրեն, վերադաստիարակում է ու վերափոխում մանր-բուրժուական մասսաներին, առանձնապես իր հիմնական դաշնակցին — գյուղացիությանը:

## ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԱՇԻՆՔՆ Է ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Բանվոր դասակարգը հեղափոխության ղեկավար դասակարգն է, հեգեմոնը: Նա քաղաքականապես ավելի գիտակից է, սոցիալապես ավելի միատարր, նա ավելի անձնուրաց է, ավելի կազմակերպված, քան աշխատավոր գյուղացիությունը, վորը գործում է նրա հետ միատեղ և ոգնում է նրան վորպես դաշնակից: Դրա համար պրոլետարիատը հեղափոխության ղեկավար ուժն է, հեղափոխության հեգեմոնը:

Հեղափոխության վերջնական նպատակներն իրագործելու, սոցիալիզմի կառուցումն ավարտելու համար անհրաժեշտ է պրոլետարների դասակարգի դաշինքը գյուղացիության աշխատավոր մասսաների հետ: Լենինն անդադար սովորեցնում եր կուսակցությանը, վոր «միայն համաձայնությունը գյուղացիության հետ կարող է փրկել սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում, քանի դեռ հեղափոխություն չի կատարված մյուս յերկրներում»: Կուսակցության և Խորհրդային իշխանության վողջ քաղաքականությունը յեղել է որ-որի ամրապնդել բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հիմնական մասսաների հետ: Կուսակցությունն այդ քաղաքականությունն անց է կացրել, ամուր հենվելով չքավորության վրա, անողոքաբար պայքարելով կուլակության դեմ, իր կողմը գրավելով միջակին, մեքենաների, սերմացվի, պարարտանյութի, ագրոնոմիական ուժերի և այլն միջոցով, նյութական ոգնություն հասցնելով գյուղատնտեսությանը, կոլտնտեսական շինարարության հարցերում լենինյան քաղաքականություն կիրառելով, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բազան — ծանր արդյունաբերությունը — ծավալելով: Շնորհիվ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդմանը, ինդուստրացման հաջողություններին և գյուղացիության հիմնական մասսաների շրջադարձին դեպի կոլտնտեսական ուղին, կուսակցությունը համատարած կոլեկտիվացման հիման վրա անցավ կուլակության՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիային:



Կուսակցությունն անհաշտ պայքար մղեց հակահեղափոխական
տրոցկիզմի դեմ, վորն անխուսափելի յեր համարում պրոլետարիատի
խզումը գյուղացիության հետ, վորը պնդում եր, թե մենք ուժ չենք
ունենա գյուղացիական մանր, անհատական տնտեսությունները կոլեկ-
տիվ ռելսերի վրա փոխադրելու, վոր դրա համար էլ անխուսափելի յե
պրոլետարական դիկտատուրայի խորտակումը մեր յերկրում, յեթե
ոգնության չհասնի հեղափոխությունն Արևմուտքում:
Տրոցկին յերբեք չեր հավատում, վոր բանվոր դասակարգը կկա-
րողանա պահպանել և ամրապնդել իր դաշինքը միջակի հետ: Նա չեր
հավատում, վոր բանվոր դասակարգն ընդունակ է ղեկավարելու միջակ
գյուղացիությանը, և, հետևաբար, հաղթականորեն սոցիալիզմ կա-
ռուցելու: Տրոցկու կարծիքով, միջակ գյուղացիությունը հող ստանա-
լով, այսինքն՝ բավարարելով մանր սեփականատիրոջ իր բնությունը,
պետք է յերես թեքի բանվոր դասակարգից և գնա կուլակի հետևից:
Յեվ քանի վոր միջակ գյուղացիությունը բնակչության մեծամասնու-
թյունն է կազմում, պնդում եյին տրոցկիստները, ապա պրոլետարիատի
դիկտատուրան ՍՍՀՄ-ում կկործանվի գյուղացիության հետ յեղած
հակասությունների պատճառով: Միայն ջախջախելով հակահեղափո-
խական տրոցկիզմը, հնարավոր եր հասնել այն հաջողություններին՝
բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի ամրապնդման բնա-
գավառում և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման
բնագավառում, վորոնցով իրավունք ունեն հպարտանալու կուսակցու-
թյունը և Խորհրդային իշխանությունը:
Կուսակցությունն ամենայն անողոքությամբ հարձակվեց աջ ոպոր-
տունիստների վրա, վորոնք չեյին հասկանում և չեյին ճանաչում պրո-
լետարիատի ղեկավար դերը բանվորների և գյուղացիների դաշինքում,
քարոզում եյին դասակարգային պայքարի թուլացման քաղաքականու-
թյունը գյուղում, կուլակին մշտական զիջումներ անելու քաղաքակա-
նությունը և «կուլակի սոցիալիզմի մեջ ներաճման» թեորիան: Կուսակ-
ցությունն անհաշտ պայքար մղեց լենինյան կոոպերատիվ պլանի ամեն
տեսակ աղավաղումների դեմ, և առաջին հերթին՝ աջ ոպորտունիստ-
ների դեմ, վորոնք չեյին հասկանում լենինյան կոոպերատիվ պլանը
և փորձում եյին կոոպերացիայի ստորին ձևերը (մատակարա-
րողական և վաճառահանման) հակադրել բարձրագույն ձևին — կոլ-
տնտեսություններին:
Կուսակցությունն ամենայն անհաշտությամբ մերկացրեց և հար-
վածեց «ձախ» խոտորողներին, նրանց, վորոնք փորձում եյին սատե-
լով, բռնությամբ ներգործել չքավոր-միջակ մասսաների վրա, նրանց
կուլակների հետ մի աստիճանի դնել, հարկադրական միջոցներով
ներգրավել կոլտնտեսությունների մեջ: Տրոցկիզմի այդ բզկումները
պրակտիկայում կարող եյին գյուղացիական մասսաներին հետ հրել

*պրոլետարիատի հետ ունեցած դաշինքից, վտանգի տակ դնել այդ միությունը և դրանով թուլացնել պրոլետարիատի դիկտատուրան:*

Վճռական պայքար մղելով դասակարգային թշնամու դեմ, ամեն գույնի ոպորտունիզմի դեմ, կուսակցությունն ամրացնում է բանվոր դասակարգի դաշինքն աշխատավոր գյուղացիության հետ, ամրապնդում է պրոլետարիատի ղեկավարությունն այդ դաշինքում:

*Դրանում է կայանում պրոլետարիատի դիկտատուրայի գլխավոր բովանդակությունը, վորը Լենինի կողմից ձևակերպված է այսպես.—* «Դիկտատուրայի բարձրագույն սկզբունքը — դա պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի պահպանումն է, այնպես վոր պրոլետարիատը կարողանա ապահովել ղեկավար դերը և իր ձեռքում պահել պետական իշխանությունը»:

*Ահա թե ինչու մեր կուսակցությունն անողոք պայքարել է և պայքարում է հանուն պրոլետարիատի և գյուղացիության աշխատավորական մասսաների զոդման լենինյան գաղափարի իրագործմանը:* Զոդման ճիշտ իրագործումը *կուսակցության համար վիթխարի հաջողություններ է ապահովել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում, հասցրել է այն բանին, վոր գյուղում սոցիալիստական սեկտորը բացարձակ գերակշռող է դարձել:* Կոլտնտեսականը դարձել է խորհրդային իշխանության հիմնական և գլխավոր հենարանը գյուղում, հողագործության կենտրոնական դեմքը:

*Պրոլետարիատն աշխատավոր գյուղացիության հիմնական մասսաների ոժանդակությամբ ջախջախեց բուրժուական տիրապետության հին մեքենան և կազմակերպեց իր իշխանությունը, իր պրոլետարական պետությունը: Ոգտագործելով իր դիկտատուրան, պրոլետարիատը պետական ղեկավարություն է ցույց տալիս իր դաշնակցին՝ օգնելով նրան փոփոխելու, բարելավելու գյուղատնտեսության պայմանները, նրան ամուր մեքենայական բազայի վրա դնելու և փոխադրելու այն սոցիալիստական ռելսերի վրա:*

## ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՅԵՐԵՔ ԿՈՂՄԵՐԸ

*«Պրոլետարիատի դիկտատուրան,—ուսուցանում էր Լենինը,—դա համառ, արյունահեղ և անարյուն, բռնի և խաղաղ, ռազմական և տնտեսական, մանկավարժական և վարչական պայքար է ընդդեմ հին հասարակության ուժերի և տրադիցիաների»:*

Ընկ. Ստալինը նշում է պրոլետարիատի դիկտատուրայի յերեք կողմերը:

*ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԿՈՂՄԸ:* Պրոլետարիատը, նախ՝ իր իշխանությունն ոգտագործում է ճնշելու համար շահագործողներին, յերկիրը պաշտպանելու, բոլոր յերկրների պրոլետարների հետ կապն ամրապնդելու, բոլոր յերկրներում հեղափոխության զարգացման և հաղթանակի համար:

*Պրոլետարիատի դիկտատուրայի ամբողջ տասնհինգ տարվա պատմությունը վկայում է այն մասին, վոր մեր պետությունն ու կառավարությունը հետևողականորեն, պրոլետարականորեն, լենինորեն կատարել են այդ հիմնական խնդիրը: Պրոլետարիատն անողոք է յեղել շահագործողների նկատմամբ, վորոնք փորձել են տապալել Խորհրդային իշխանությունը, վորոնք դիմել են տեռորի, մյուս յերկրների կապիտալիստների հետ դավադրություն են կազմակերպել սոցիալիստական շինարարությունը ձախողելու համար: Պրոլետարիատը կռել ու կոփել է իր դիկտատուրայի ամենահատու սուրը —* Միացյալ Պետքաղվարչությունը, *վորը հաջող կերպով բաց է անում և լիկվիդացիայի յենթարկում Խորհրդային իշխանության դասակարգային թշնամիների հակահեղափոխական վոտնձգությունները: Պրոլետարիատն իր ամբողջ քաղաքականությամբ սահմանափակել ու արտամղել է կապիտալիստական էլեմենտներին և վերջապես անցել է կուլակության — յերկրում այդ վերջին շահագործող դասակարգի — լիկվիդացիային՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա: Պրոլետարիատը ճնշում է գյուղացիության հետ դաշինքը թուլացնելու, գյուղացիությունը բանվոր դասակարգի դեմ հանելու կապիտալիստական էլեմենտների ամեն տեսակի փորձերը:*

*Լենինը մեզ կտակել է վորպես աչքի լույս պահպանել Բանվորագյուղացիական Կարմիր բանակը — պրոլետարիատի ձեռքին՝ իր նվաճումների պահպանության, համայն աշխարհում սոցիալիզմի միակ յերկրի պաշտպանության, բանվորների և գյուղացիների խաղաղ աշխատանքի ապահովման այդ ամենահավատարիմ զենքը:* Կուսակցությունը և խորհրդային իշխանությունն ստեղծել են այնպիսի բանակ, վորի նմանը չկա աշխարհում.—*նրա կազմը — գիտակից, կարգապահ բանվորներ և գյուղացիներ են. Նրա հրամանատարները — փառապանծ, մեծ մասամբ քաղաքացիական կռիվների հերոսական գպրոցում կոփված բանվորներ և գյուղացիներ են, նրա առաջնորդը —* Կլիմ Վորոշիլովը — *Լուգանսկի փականագործ, հին բոլշևիկ, Լենինի լավագույն աշակերտներից մեկն է, վորը գործով ապացուցել է իր նվիրվածությունը հեղափոխության գործին, կոմունիզմի գործին:*

*Հոկտեմբերյան հեղափոխությունը, Խորհրդային Միության բանվոր դասակարգի պայքարն անդասակարգ հասարակության կառուցման համար* համաշխարհային-պատմական նշանակություն ունի: *Մեր կուսակցությունը Կոմունիստական Ինտերնացիոնալի կազմակերպիչն ու ղեկավար կուսակցությունն է: Մեր կարմիր մայրաքաղաքը Կրեմլինը — համաշխարհային պրոլետարիատի այդ մարտական*

շտաբը — մայրաքաղաքն է: Միջազգային պրոլետարիատը հանձին մեր յերկրի տեսնում է անառիկ ամրոց, վորը խանդարում է, դժվարացնում կապիտալի հաշվեհարդարն իրենց (պրոլետարիատի) վերաբերմամբ:

Կոմունիստական Ինտերնացիոնալի միջոցով մեր կուսակցությունն իրագործում ու ամրապնդում է Խորհրդային Միության աշխատավորության կապը մյուս յերկրների պրոլետարների հետ. սոցիալիստական շինարարության հաջողություններով նա մոբիլիզացիայի յե յենթարկում համայն աշխարհի բանվորական մասսաներին՝ պաշտպանելու իրենց սոցիալիստական հայրենիքը. իր խաղաղության քաղաքականությամբ նա գրավում է համայն աշխարհի լայն աշխատավորական մասսաների համակրանքը: Վորքան ավելի խոշոր են Խորհրդային Միության հաջողությունները սոցիալիստական շինարարության ֆրոնտում, վորքան ավելի խորտակիչ են դասակարգային թշնամուն ուղղված հարվածները, վորքան ավելի պայծառ են Սոցիալիզմի յերկրի հաջողությունները նեխվող կապիտալիզմի ֆոնի վրա, այնքան ավելի ԽՍՀՄ-ի պրոլետարիատն ոժանդակում է հեղափոխության իրագործմանը, զարգացմանը և հաղթանակին բոլոր յերկրներում:



Ընկ. Ֆրունզե՝ հին բոլշևիկ, Կարմիր բանակի կազմակերպիչ (Մեռել է 1925 թ.):



Ֆելիքս Ձերժինսկի՝ հին բոլշևիկ, ՀԱՀ-ի — հեղափոխության ամենահատու սրի—կազմակերպիչը (Մեռել է 1928 թ.):

ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՑԵՐԿՐՈՐԴ ԿՈՂՄԸ: Ցերկրորդ՝ պրոլետարիատն իր իշխանությունն ոգտագործում է աշխատավորությանը և շահագործվող մասսաներին բուրժուազիայից վերջնականապես հեռացնելու համար, պրոլետարիատի դաշինքն այդ մասսաների հետ ամրապնդելու և նրանց սոցիալիստական շինարարության գործի մեջ ներգրավելու համար:



Բուրժուազիան ոգտագործում է բռնության, խաբեության, կաշառման և այլասերման բոլոր միջոցները, վորպեսզի ամրապնդի իր տիրապետությունն աշխատավորների և շահագործվող մասսաների նկատմամբ: Ըստ վորում բուրժուազիան չի գործում միայն իր ռազմական և վոստիկանական ուժով: Կրոնի, դպրոցի, մամուլի, գիտության և արվեստի ոգնությամբ բուրժուազիան խաբում է աշխատավորներին, դաստիարակում է նրանց «աստվածային յերկյուղով», «այս աշխարհի ուժեղների» առաջ, փողի պարկի առաջ, արտադրության գործիքների ու միջոցների, հողի ու վոսկու սեփականատերերի առաջ հարգանքի և հնազանդության վոգով: Գաղութների շահագործումից ստացված գերշահույթով նա կաշառում է բանվոր դասակարգի վերնաշերտին, բանվորական արիստոկրատիա յե ստեղծում, վորը կապիտալիստական գործակալությունն է բանվոր դասակարգի շրջանում: Կուլակությունն սուրկության տակ, իր տնտեսական և հոգևոր ազդեցության տակ է պահում գյուղացիության աշխատավորական մասսաներին:

Պրոլետարիատի դիկտատուրան աշխատավորական մասսաներին ազատագրում է բուրժուազիայի և նրա գործակալների հոգևոր ազդեցությունից, իրագործում է կուլտուրական հեղափոխությունը, ակտիվ պայքար է մղում տերտերականության, սնահավատությունների և կրոնի դեմ, ստեղծում է նոր դպրոց, գիտությունն ու արվեստն է սպասարկում հեղափոխությանը: Պրոլետարիատը վերադաստիարակում է աշխատավորությանը, պայքարում է հանուն կապիտալիզմի մնացորդների վոչնչացման եկոնոմիկայում և մարդկանց գիտակցության մեջ, հանուն բոլոր աշխատավորներին սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողներ դարձնելու:

Պրոլետարական իշխանությունը՝ ղեկավարություն ստանալով լենինյան կուսակցության կողմից, իր ամբողջ քաղաքականությամբ ամրացնում, ամրապնդում ու ընդլայնում է պրոլետարիատի դաշինքն աշխատավորական մասսաների հետ, նրանց ներգրավում է սոցիալիստական շինարարության գործի մեջ՝ վերադաստիարակելով նրանց կոմունիզմի վոգով:

ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՑԵՐՐՈՐԴ ԿՈՂՄԸ: Ցերրորդ՝ պրոլետարիատն իր իշխանությունն ոգտագործում է սոցիալիզմի կազմակերպման, դասակարգերի վոչնչացման, անդասակարգ հասարակության, անպետություն հասարակության անցնելու համար:

Ցերբ բուրժուական հեղափոխություններ կատարվեցին Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլն, կապիտալիստական տնտեսությունը, կապիտալիստական արտադրական հարաբերություն-

ներն արդեն հասունանում էին հին, ֆեոդալական հասարակության շրջանակներում: Ֆեոդալական, կալվածատիրական — ճորտատիրական հին կարգը խանգարում էր կապիտալիզմի զարգացմանը, կապիտալիստական հարաբերություններին: Բուրժուազիային հարկավոր էր տապալել կալվածատերերի իշխանությունը, իշխանությունը գրավել և այն համապատասխանեցնել դեռևս հին հասարակության ծոցում ծնված կապիտալիստական նոր էկոնոմիկայի հետ: Իշխանության գրավմամբ սովորաբար ավարտվում էր բուրժուական հեղափոխությունը: Բուրժուազիան ընդդմին չէր ջախջախում պետական իշխանության հին ապարատը, նա միայն հարմարեցնում էր այն իր կարիքներին և շահերին: Շահագործող — կալվածատերերի, ֆեոդալների մի խմբակի տեղ իշխանության գլուխն էր բարձրանում շահագործողների մի այլ խմբակ — բուրժուազիան:

Այսպես էր, օրինակի համար, 18-րդ դարի վերջերին (1789 թ.) տեղի ունեցած Ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ: Ֆրանսիայի հին, ֆեոդալական կարգը խանգարում էր բուրժուազիային, որն իր ձեռքում էր կենտրոնացրել խոշոր հարստություններ և ստեղծել էր խոշոր արդյունաբերություն: Կալվածատեր — ֆեոդալների իշխանությունն արգելակում էր արդյունաբերության և առևտրի զարգացմանը: Բուրժուազիային հարկավոր էին ազատ բանվորական ձեռքեր, հարկավոր էր ներքին շուկա՝ իր ապրանքների սպառման համար: Իսկ կալվածատեր — ֆեոդալները կեղեքման և շահագործման բոլոր եղանակներով, ամեն տեսակ հարկերով ու տուրքերով ճնշում էին գյուղացիությանը, նրան ամրացնում էին հողին, խանգարում էին ներքին շուկայի ստեղծմանը, կապիտալիզմի գյուղ ներթափանցելուն և գյուղից բուրժուազիայի համար հարկավոր բանվորական ուժ ազատագրելուն: Հին կալվածատիրական կարգի ժամանակ յերկիրը մանրատված էր, պատած ներքին մաքսային հարկումների ցանցով (կալվածատերերը տուրք էին վերցնում իրենց հողամասով ապրանք տեղափոխելու համար և այլն): Հին կարգն արգելակում էր խոշոր արդյունաբերական արտադրության զարգացմանը: Հին կարգը բուրժուազիային թույլ չէր տալիս պետական ղեկավարությանը մերձենալու: Ամբողջ իշխանությունը գտնվում էր կալվածատեր — ազնվականների ձեռքում: Պարզ է, որ բուրժուազիային հարկավոր էր իշխանությունը խլել կալվածատերերի ձեռքից և ճանապարհ բաց անել ազատ կապիտալիստական զարգացման համար:

Միանգամայն այլ է, յերբ սոցիալիստական հեղափոխության մեջ հաղթանակած պրոլետարիատը հաստատում է իր իշխանությունը: Պրոլետարիատը լիկվիդացիայի յէ յենթարկում շահագործության հիմքը — արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը: Պրոլետարիատն իշխանությունը գրավելով, պետք է սկսի նոր, սոցիալիստական էկոնոմիկայի կառուցումը, սոցիալիստական, հասարակական սեփականության պահպանումը: Իշխանության գրավումը հանդիսանում է անցման յերկարատև և դժվարին ժամանակաշրջանի սկիզբը, յերբ հեղափոխականորեն վերակառուցվում է հին բուրժուական էկոնոմիկան և ստեղծվում է նոր սոցիալիստականը:



Դա — դժվարին և բարդ գործ է: Սոցիալիզմ կազմակերպել — նշանակում է այնպես կազմակերպել միլիոնավոր և տասնյակ միլիոնավոր մարդկանց, որպեսզի ամբողջ տնտեսությունը տարվի միասնական պլանով, որն ապահովում է բոլոր բնական հարստությունների և մարդկային ուժերի նպատակահարմար և պլանաչափ օգտագործումը և օժանդակում է արտադրական ուժերի վիթխարի աճմանը: Պրոլետարիատը կառուցում է սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը — ծանր արդյունաբերությունը, որի վրա հենվելով վերակառուցում է ժողովրդական ամբողջ տնտեսությունը, համախմբում է մանր և փոշիացած գյուղացիական տնտեսությունը գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների, աշխատանքի լավագույն կազմակերպության և նրա մեքենայացման վրա հիմնված խոշոր կոլեկտիվ տնտեսության մեջ:

Կազմակերպել սոցիալիզմ — նշանակում է բարձրացնել աշխատավորության բարեկեցությունն ու կուլտուրան, նրանց քաղաքական գիտակցությունը, կազմակերպվածությունը, դիսցիպլինան, աշխատանքը դարձնել մարդու առաջնագույն անհրաժեշտությունը, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնել աննախընթաց աստիճանի:

Կազմակերպել սոցիալիզմ — նշանակում է յերկրի ամբողջ աշխատավոր բնակչությանը դարձնել անդասակարգ, սոցիալիստական հասարակության գիտակից և ակտիվ կառուցողներ, կառուցել անդասակարգ հասարակություն, հող պատրաստել պետության մահացման համար:

Պրոլետարիատի դիկտատուրայի յերեք կողմերը, յերեք խնդիրները անբաժանելիորեն կապված են միմյանց հետ: «Այդ հատկանիշներից թեկուզ և մեկի բացակայությունը բավական է,— ասում է ընկ. Ստալինը,— որպեսզի պրոլետարիատի դիկտատուրան դադարի դիկտատուրա լինելուց՝ կապիտալիստական շրջապատման պայմաններում: Դրա համար էլ այդ յերեք կողմերից ոչ մեկը չի կարող բացառվել՝ առանց պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողությունն աղավաղման վտանգի յենթարկելու: Միայն այդ բոլոր յերեք կողմերը, միասին վերցրած, մեզ տալիս են դիկտատուրայի լիակատար և վերջնական հասկացողությունը»:

## 3. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՁԵՎՆ Ե

1905 թվի և 1917 թ. փետրվար—հոկտեմբերի հեղափոխությունների խորհրդային փորձը դարձավ ամբողջ միջազգային պրոլետարիատի և յուրաքանչյուր բանվորական հեղափոխության սեփականությունը: Ամենուրեք, ուր բանվոր դասակարգն ապստամբել ե շահագործման լծի դեմ, խորհուրդներ են առաջացել: Յերբ Գերմանիայի բանվոր դասակարգը 1918 թվին պայքարի յելավ բուրժուական կարգի դեմ, տապալեց Վիլհելմ II-ի միապետությունը, ամբողջ յերկրում բանվորական պատգամավորների խորհուրդներ առաջացան: Հեղափոխական ճգնաժամի տարիներին (1918—23 թ.թ.) բանվորական ապստամբությունների հրդեհում ստեղծվեցին բավարական և հունգարական խորհրդային հանրապետությունները: Սոցիալ-դեմոկրատիայի ստոր դավաճանության, մանր-բուրժուական ելեմենտների տատանումների, պրոլետարական ուժերի անբավարար կազմակերպվածության, կոմկուսակցությունների թուլության և իր իշխանությունը կորցրած բուրժուազիայի տասնապատկված ընդդիմադրության պատճառով այդ յերկու հանրապետությունները խեղդվեցին արյան մեջ:

Խորհրդային փորձն ոգտագործում են Չինաստանի աշխատավորական մասսաները: Այդ հսկայական յերկրի հենց կենտրոնում գոյություն ունի խորհրդային իշխանություն, վորն ընդգրկում ե 120 ռայոն՝ 50 միլիոն բնակչությամբ: Չինաստանի խորհրդային ռայոններն ահա արդեն ավելի քան յերեք տարի պահպանվում և պաշտպանվում են չինական Կարմիր բանակի կողմից, վորը կոմկուսակցության ղեկավարությամբ պայքարում ե չինական գեներալների և արտասահմանյան իմպերիալիստների դեմ:

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՏԻՊ Ե

Դեռ 1905 թվի առաջին հեղափոխության ժամանակ, վորը Հոկտեմբերյան հեղափոխության ռեպետիցիան (փորձը) հանդիսացավ, մեր յերկրի պրոլետարիատն ստեղծեց խորհուրդները — բանվոր դասակարգի ապագա հեղափոխական իշխանության այդ սաղմերը:

Հեղափոխական սրընթաց վերելքը 1905 թվի կեսերին բանվոր դասակարգի և նրան ղեկավարող բոլշևիկյան կուսակցության առաջ դրեց այնպիսի կազմակերպությունների ստեղծման խնդիրը, վորոնք հեղափոխական մասսաների անմիջական ղեկավարման մարտական կենտրոնները հանդիսանային: Այդպիսի կազմակերպությունների դերը ստանձնեցին բանվորական պատգամավորական խորհուրդները, վորոնք առաջացան Ռուսաստանի խոշորագույն կենտրոններում (Իվանովո-Վոզնեսենսկ, Մոսկվա, Պետերբուրգ, Ռոստով Դոնի վրա և այլն): 1905 թվի հեղափոխության հրդեհում ծնվեցին խորհուրդները— բանվոր դասակարգի հեղափոխական իշխանության սաղմային որգանները:

Լենինը խորհուրդներն անվանում ե ռուսական հեղափոխության ժողովրդական ստեղծագործություն, մի ստեղծագործություն, վորն անցել ե 1905 թվի մեծ փորձի միջով: Լենինը մատնանշում ե, վոր յեթե ռուսական հեղափոխության ժողովրդական ստեղծագործությունը դեռ 1917 թվի փետրվարին չստեղծեր խորհուրդները, պրոլետարիատը չեր կարողանա Հոկտեմբերին իշխանությունն իր ձեռքը վերցնել: Հաջողությունը կախված եր միլիոններն ընդգրկած շարժման արդեն պատրաստի կազմակերպական ձևերի առկայությունից: Այդ նոր ձևերը հանդիսացան խորհուրդները:

Բանվոր դասակարգի մասսայական քաղաքական կազմակերպության նոր ձևը — խորհուրդները հեղափոխությունից դուրս, պրոլետարական մասսաների ապստամբությունից դուրս գոյություն չունեն և չեն կարող գոյություն ունենալ, վորովհետև խորհուրդները — դրանք պրոլետարական իշխանության որգաններն են: Խորհուրդներն անմիջականորեն աճում են աշխատավորության ամենալայն շարժումից և, ղեկավարվելով կոմունիստական կուսակցության կողմից, ապահովում են մասսաների ամենամեծ ակտիվությունը, հետևաբար նաև հաղթանակի ամենալավագույն պայմանները:

Չկա պրոլետարիատի ավելի համապարփակ մասսայական կազմակերպություն, քան խորհուրդները: Ամբողջ մեծահասակ աշխատավոր բնակչությունը, սկսած 18 տարեկան հասակից, բոլոր ազգությունների տղամարդիկ և կանայք, կուսակցականներ և անկուսակցականներ — իրենց պատգամավորներն են ուղարկում խորհուրդները: Բոլոր բանվորները և գյուղացիները, զինվորներն ու նավաստիներն ընդգրկվում են խորհուրդների կողմից՝ գլխովին մի միասնական կազմակերպության մեջ, վորը նրանց մերձավորն ե և հասկանալի, իր կառուցվածքով՝ հասարակ, իր խնդիրներով՝ մարտական: Դա հեշտացնում ե բանվոր դասակարգի կազմակերպված ավանգարդին՝ ղեկավարելու աշխատավոր մասսաներին, իր վորոշումներն անցկացնելով խորհուրդներում ընտրված կոմունիստ-բոլշևիկների միջոցով:

Չկա աշխատավորական մասսաների ավելի դեմոկրատական կազմակերպություն, քան խորհուրդները, վորոնք ի վիճակի յեն լայն աշխատավորական մասսաներին ներգրավելու նոր պետության կազմակերպման մեջ, նրա որգանների մեջ, առավելագույն չափով ծավալելու մասսաների հեղափոխական ստեղծագործական եներգիան, նախաձեռնությունը, մոբիլիզացիայի յենթարկելու աշխատավորության հսկա-

յական ստեղծագործական ընդունակությունները, որ խեղդված էին կապիտալիզմի ժամանակ:

Խորհուրդների կազմակերպական պարզությունն ու հստակությունը շատ հեշտ և պարզ են դարձնում նրանց միացումը, նրանց վերածումը ընդհանուր պետական կազմակերպության, Խորհուրդների հանրապետության:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

«Խորհուրդների հանրապետությունը,— ասում է Լենինը,— ոչ միայն դեմոկրատական հաստատությունների ավելի բարձր տիպի ձև է, այլև միակ ձևը, որն ընդունակ է ապահովելու ամենից անհիվանդագին անցումը սոցիալիզմին»:

Վորո՞նք են Խորհրդային իշխանության գլխավոր բնորոշ գծերը:

Հայտնի յե, վոր շահագործողները փոքրամասնություն են կազմում: Նրանց համար աշխատում է, նրանց պատճառով քաղցած է մնում, հանուն նրանց կուշտ կյանքի այլասերվում, մեծ քաղաքների խուլ անկյուններում ապրում ու գործազրկությունից վոչնչանում է կապիտալիստական յերկրների բնակչության խոշոր մեծամասնությունը: Սակայն շահագործողների այդ փոքրամասնությունը, կապիտալիստական յերկրներում տիրապետելով արտադրության գործիքներին ու միջոցներին, իշխանությունը պահում է իր ձեռքում: Փոքրամասնությունը — շահագործողների, դատարկապորտների, ձրիակերների խմբակը — իրագործում է իր իշխանությունը բնակչության մեծամասնության — աշխատավորական մասսաների նկատմամբ: Իսկ խորհրդային իշխանությունն աշխատավորական մեծամասնության իշխանությունն է, այդ մեծամասնության պետությունը: Դրա համար էլ նա, այդ իշխանությունը, յերկրագնդի ամենից հայտնի և յերբևիցե գոյություն ունեցած բոլոր պետական կազմակերպություններից ամենից ավելի մասսայական ու ամենից ավելի դեմոկրատականն է:

Խորհրդային իշխանությունը վոչ միայն դեմոկրատական է, այլև ամենաինտերնացիոնալիստական իշխանությունն է: Խորհուրդները քանդում են ամեն տեսակ ազգայնական բռնություն: Խորհրդային իշխանությունը լիկվիդացիայի յե յենթարկում ազգային անհավասարությունը և անհաշտ պայքար է մղում ինչպես մեծապետական շովինիզմի մնացորդների, նույնպես և հնում հարստահարվող ազգությունների ազգայնական մնացորդների դեմ: Խորհրդային իշխանությունը հսկայական աշխատանք է տանում ազգային մարզերի և հանրապետությունների տնտեսական և կուլտուրական շինարարության գծով: Նա իր առաջ խնդիր է դրել՝ յերկրորդ հնգամյակում հասնելու ազգային հան-



րապետությունների տնտեսական հետամնացության լիակատար վերացմանը:

Խորհրդային իշխանությունը, հենվելով զանազան ազգությունների աշխատավորական մասսաների յեղբայրական համագործակցության վրա, այդ մասսաներին միացնում է՝ պայքարելու հանուն պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման, հանուն անդասակարգ հասարակության կառուցման: Խորհրդային իշխանությունն ըստ իր կառուցվածքի պրոլետարիատի համար հեշտացնում է հարստահարված և շահագործված մասսաներին ղեկավարելը, նրանց միացնելը և սոցիալիզմի վոգով դաստիարակելը:

Խորհրդային իշխանությունը, կազմակերպելով պատգամավորների ընտրությունը հենց գործարաններում ու փաբրիկաներում, առանձին ցեխերում և արհեստանոցներում, գյուղերում և զորանոցներում, բանվորական և գյուղացիական մասսաներին ամենասերտ կերպով կապում է իրենց պատգամավորների հետ՝ խորհուրդների հետ: Նա յուրաքանչյուր պատգամավորի մասնակից է անում վորոշ պետական պարտավորությունների կատարմանը, ձեռնարկություններում պատգամավորական խմբակներ կազմակերպելու, սոցիալիստական համատեղության ինստիտուտի ստեղծման և սեկցիոն աշխատանքի լայն ծավալման միջոցով մասսաներին ներգրավում է յերկրի կառավարման մեջ: Նա իրագործում է Իլյիչի լոզունգը, թե յուրաքանչյուր խոհարարուհի պետք է սովորի պետություն կառավարել:

Բուրժուական պետությունը հենվում է մինչև ատամները զինված բանակի վրա: Այդ բանակը, թեկուզ և առավելապես կազմված է բանվորներից և գյուղացիներից, սակայն այնպես է կազմակերպված, վոր ամբողջությամբ հպատակեցված է բուրժուական հրամանատարության, վորն այդ զինված ուժերն ուղղում է աշխատավորության դեմ: Խորհրդային իշխանությունը բանակը ժողովուրդների ճնշման զենքից դարձնում է ժողովրդի ազատագրման և նրա հեղափոխական նվաճումների պաշտպանության զենք: Կարմիր բանակը պաշտպանում է սոցիալիզմի շինարարությունը մեր յերկրում, հանդիսանում է միջազգային պրոլետարական հեղափոխության ամենահավատարիմ զինված ուժը:

Բանվորական դեմոկրատիան, անպետք, վստահությունը չարդարացրած պատգամավորներին հետ կանչելու իրավունքը, բանվորական մասսաների հսկողությունը վարչական ապարատի գործունեության վրա, յուրաքանչյուր պետական ծառայողի խիստ պատասխանատվությունը (մինչև նույնիսկ նրան հասարակական և պետական դատի տալը) բյուրոկրատիզմի համար, աշխատավորության շահերին անհոգի վերաբերվելու համար, ուշադիր վերաբերմունքը դեպի մարդկանց ընտրությունը և կատարման ստուգումը — ապահովում են իրական պայքարը բյուրոկրատիզմի դեմ՝ պետական ապարատում:

յական ստեղծագործական ընդունակությունները, վոր խեղդված էին կապիտալիզմի ժամանակ:

Խորհուրդների կազմակերպական պարզությունն ու հստակությունը շատ հեշտ և պարզ են դարձնում նրանց միացումը, նրանց վերածումն ընդհանուր պետական կազմակերպության, Խորհուրդների հանրապետության:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

«Խորհուրդների հանրապետությունը,— ասում է Լենինը,— վոչ միայն դեմոկրատական հաստատությունների ավելի բարձր տիպի ձև է, այլև միակ ձևը, վորն ընդունակ է ապահովելու ամենից անհիվանդագին անցումը սոցիալիզմին»:

*Վորո՞նք են Խորհրդային իշխանության գլխավոր բնորոշ գծերը:*

*Հայտնի յե, վոր շահագործողները փոքրամասնություն են կազմում: Նրանց համար աշխատում է, նրանց պատճառով քաղցած է մնում, հանուն նրանց կուշտ կյանքի այլասերվում, մեծ քաղաքների խուլ անկյուններում ապրում ու գործազրկությունից վոչնչանում է կապիտալիստական յերկրների բնակչության խոշոր մեծամասնությունը: Սակայն շահագործողների այդ փոքրամասնությունը, կապիտալիստական յերկրներում տիրապետելով արտադրության գործիքներին ու միջոցներին, իշխանությունը պահում է իր ձեռքում: Փոքրամասնությունը — շահագործողների, դատարկապորտների, ձրիակերների խմբակը — իրագործում է իր իշխանությունը բնակչության մեծամասնության — աշխատավորական մասսաների նկատմամբ:* Իսկ խորհրդային իշխանությունն աշխատավորական մեծամասնության իշխանություն է, այդ մեծամասնության պետությունը: *Դրա համար էլ նա,* այդ իշխանությունը, *յերկրագնդի ամենից հայտնի և յերբևիցե գոյություն ունեցած բոլոր պետական կազմակերպություններից* ամենից ավելի մասսայական ու ամենից ավելի դեմոկրատականն է:

Խորհրդային իշխանությունը *վոչ միայն դեմոկրատական է, այլև* ամենաինտերնացիոնալիստական *իշխանությունն է: Խորհուրդները քանդում են ամեն տեսակ ազգայնական բռնություն: Խորհրդային իշխանությունը լիկվիդացիայի յե յենթարկում ազգային անհավասարությունը և անհաշտ պայքար է մղում ինչպես մեծապետական շովինիզմի մնացորդների, նույնպես և հնում հարստահարվող ազգությունների ազգայնական մնացորդների դեմ: Խորհրդային իշխանությունը հսկայական աշխատանք է տանում ազգային մարզերի և հանրապետությունների* տնտեսական և կուլտուրական շինարարության գծով: *Նա իր առաջ խնդիր է դրել՝ յերկրորդ հնգամյակում հասնելու ազգային հան-*



*բապետությունների տնտեսական հետամնացության լիակատար վերացմանը:*

*Խորհրդային իշխանությունը, հենվելով զանազան ազգությունների աշխատավորական մասսաների յեղբայրական համագործակցության վրա, այդ* մասսաներին միացնում է՝ *պայքարելու հանուն պրոլետարական դիկտատուրայի ամրապնդման, հանուն անդասակարգ հասարակության կառուցման: Խորհրդային իշխանությունն ըստ իր կառուցվածքի* պրոլետարիատի համար հեշտացնում է հարստահարված և շահագործված մասսաներին ղեկավարելը, *նրանց միացնելը և սոցիալիզմի վոգով դաստիարակելը:*

*Խորհրդային իշխանությունը, կազմակերպելով պատգամավորների ընտրությունը* հենց գործարաններում ու փաբրիկաներում, *առանձին* ցեխերում և արհեստանոցներում, գյուղերում և զորանոցներում, *բանվորական և գյուղացիական մասսաներին ամենասերտ կերպով կապում է իրենց պատգամավորների հետ՝ խորհուրդների հետ: Նա յուրաքանչյուր պատգամավորի մասնակից է անում վորոշ պետական պարտավորությունների կատարմանը, ձեռնարկություններում պատգամավորական խմբակներ կազմակերպելու, սոցիալիստական համատեղության ինստիտուտի ստեղծման և սեկցիոն աշխատանքի լայն ծավալման միջոցով մասսաներին ներգրավում է յերկրի կառավարման մեջ: Նա իրագործում է Իլյիչի լոզունգը, թե յուրաքանչյուր խոհարարուհի պետք է սովորի պետություն կառավարել:*

*Բուրժուական պետությունը հենվում է մինչև ատամները զինված բանակի վրա: Այդ բանակը, թեկուզ և առավելապես կազմված է բանվորներից և գյուղացիներից, սակայն այնպես է կազմակերպված, վոր ամբողջությամբ հպատակեցված է բուրժուական հրամանատարության, վորն այդ զինված ուժերն ուղղում է աշխատավորության դեմ: Խորհրդային իշխանությունը բանակը ժողովուրդների ճնշման զենքից դարձնում է ժողովրդի* ազատագրման *և նրա հեղափոխական նվաճումների պաշտպանության* զենք: Կարմիր բանակը պաշտպանում է սոցիալիզմի շինարարությունը մեր յերկրում, հանդիսանում է միջազգային պրոլետարական հեղափոխության ամենահավատարիմ զինված ուժը:

Բանվորական դեմոկրատիան, *անպետք, վստահությունը չարդարացրած պատգամավորներին* հետ կանչելու *իրավունքը, բանվորական մասսաների* հսկողությունը *վարչական ապարատի գործունեության վրա, յուրաքանչյուր պետական ծառայողի խիստ* պատասխանատվությունը *(մինչև նույնիսկ նրան հասարակական և պետական դատի տալը) բյուրոկրատիզմի համար, աշխատավորության շահերին անհոգի վերաբերվելու համար, ուշադիր վերաբերմունքը դեպի մարդկանց ընտրությունը և կատարման ստուգումը — ապահովում են իրական պայքարը բյուրոկրատիզմի դեմ՝ պետական ապարատում:*

Բյուրոկրատիզմի դեմ պայքարելու հիմնական մեթոդը — դա աշխատավորական լայն մասսաներին պետական կառավարման մեջ ներգրավելն է: *Հատկապես այդ ճանապարհով է գնում Խորհրդային իշխանությունը, տասնյակ և հարյուր հազարավոր աշխատավորների ներգրավելով պետական կառավարման մեջ՝ —պետական հիմնարկների նկատմամբ ֆաբրիկների և գործարանների շեֆության, սոցիալիստա-*




*ԽՍՀՄ-ի իշխանության օրգանների ստրուկտուրան: Ձախից—համամիութենական ժողովրդական կոմիսարիատները (ԺԿ). այս ժողկոմատները միութենական հանրապետությունների մեջ չկան: Աջից—միացյալ ժողովրդական կոմիսարիատները (ԺԿ). այս ժողկոմատները միութենական հանրապետությունների մեջ կան:*

*կան համամրցության, պատգամավորական խմբակներ ստեղծելու միջոցով, մասսաներին բանվորա-գյուղացիական տեսչության աշխատանքում, մասնավորապես* Բողոքների բյուրոյի *աշխատանքներում ներգրավելու միջոցով:*

*Խորհրդային իշխանությունը՝ վորպես պրոլետարիատի դիկտատու-*



*րայի պետական ձև՝* փոխանցման *ձև է կապիտալիզմից դեպի կոմունիզմ: Կոմունիզմին — այդ վերջնական նպատակին — հասնելու վրա յեն կենտրոնացված ամբողջ աշխատավորության, կոմունիստական կուսակցության, ամբողջ Կոմունիստական Ինտերնացիոնալի ջահերն ու ուշադրությունը:*

*Խորհրդային իշխանությունը, աշխատավորության ամենալայն մասսաներին ներգրավելով պետական կառավարման մշտական և անմիջական մասնակցության մեջ, դրանով իսկ նախապատրաստում է* պետության մահացումը *և մոտեցնում է կոմունիստական հասարակության, նոր հասարակության ստեղծումը, վորը լինելու յե առանց պետության, առանց հարկադրման և բռնության ապարատի:*

*«Այն մոմենտից,—ասում է Լենինը,—յերբ հասարակության բոլոր անդամները կամ նրանց հսկա մեծամասնությունն* իրենք *սովորեն պետությունն կառավարել, իրենք այդ գործը վերցնեն իրենց ձեռքը, հսկողություն «սահմանեն» կապիտալիստների, պարոնների չնչին փոքրամասնության վրա, վորոնք ցանկանում են պահպանել բուրժուական սովորույթները, և բանվորների վրա, վորոնք խոր կերպով այլասերվել են կապիտալիզմի կողմից, այդ մոմենտից ընդհանրապես կսկսի վերանալ կառավարելու վորևէ անհրաժեշտությունը: Ինչքան լիակատար է դեմոկրատիան, այնքան մոտ է այն մոմենտը, յերբ նա անպետք է դառնում: Ինչքան ավելի դեմոկրատական է «պետությունը», վորը բաղկացած է զինված բանվորներից և «արդեն պետություն չի բառիս իսկական իմաստով», այնքան ավելի արագ է սկսում մահանալ* յուրաքանչյուր *պետություն: Վորովհետև յերբ* ամենքը *սովորեն կառավարել և իսկապես ինքնուրույնաբար կառավարեն հասարակական արտադրությունը, ինքնուրույնաբար իրագործեն ձրիակերների, պարոնիկների, ավազակների և «բուրժուական տրադիցիաները պահպանողների» հաշվառքն ու հսկողությունը, այն ժամանակ այդ հանուր ժողովրդական հաշվառքից և հսկողությունից չեղվելն անխուսափելիորեն այնպիսի անհավատալի դժվարին, այնպիսի հազվադյուտ բացառիկ կդառնա, հավանաբար կենթարկվի այնպիսի լուրջ և արագ պատժի (վորովհետև զինված բանվորները — գործնական կյանքի մարդիկ են, և վոչ թե սենտիմենտալ ինտելիգենտիկներ, և թույլ չեն տա իրենց հետ հանաք անելու), —վոր յուրաքանչյուր մարդկային հանրության վոչ բարդ, հիմնական կանոնների պահպանելու անհրաժեշտությունը շատ շուտ* սովորական *կդառնա:*

*Յեվ այն ժամանակ դռները լայն կբացվեն կոմունիստական հասարակության առաջին փազից անցնելու նրա բարձրագույն փազին (փուլին, ստադիային), և դրա հետ միասին՝ պետության լիակատար մահացմանը»:*

## 4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տապալված կապիտալիզմի և պրոլետարական պայքարի վերջնական նպատակակետի — կոմունիզմի — միջև ընկած է մեծ, դժվարին, անձնվեր շինարարությամբ և պայքարով լի պատմական շրջան — *անցման ժամանակաշրջան, պրոլետարիատի դիկտատուրան: Անցման ժամանակաշրջանը բնութագրվում է շահագործողների ընդդիմադրության անողոք ճնշմամբ, սոցիալիստական շինարարության կազմակերպությամբ, սոցիալիզմի վոգով լայն մասսաների վերադաստիարակությամբ, դասակարգերի հաղթահարման համար մղվող պայքարով: Միայն* պատմական այդ մեծ խնդիրների կատարման զուգընթաց անցման ժամանակաշրջանի հասարակությունն սկսում է վերածվել կոմունիստական հասարակության:

*Հոկտեմբերյան հեղափոխությունը պրոլետարական դիկտատուրայի ձեռքը տվեց գլխավոր* հրամանատարական բարձունքները.—խոշոր արդյունաբերությունը, հողը, տրանսպորտը, բանկերը և արտաքին առևտրի մոնոպոլիան: *Պրոլետարական դիկտատուրան այդ հրամանատարական բարձունքներն ավելի ու ավելի ամրապնդեց և անառիկ դարձրեց դասակարգային թշնամու համար:*

*«Խորհրդային իշխանությունն իր գոյության առաջին իսկ օրը միանգամից, մեկ հեղափոխական հարվածով,—ասում է Լենինը, —արավ այն, ինչ ընդհանրապես կարելի յե անել միանգամից»: Պրոլետարիատի դիկտատուրայի առաջին իսկ օրը, 1917 թ. հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8-ին), վոչնչացվեց հողի կալվածատիրական սեփականությունը, բանվորական հսկողություն սահմանվեց արտադրության վրա: Միքանի ամսվա ընթացքում եքսպրոպրիացիայի յենթարկվեցին համարյա բոլոր խոշոր կապիտալիստները, ֆաբրիկաների, գործարանների, ակցիոներական ձեռնարկությունների, բանկերի, յերկաթուղիների տերերը և այլն:*

### ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԸ

*Սոցիալիստական հիմունքներով արդյունաբերության սկսված վերակառուցումը, պետական հողերի վրա խոշոր տնտեսության ստեղծումը (խորհտնտեսություններ), պետական ոգնությունը գյուղատնտեսությանը և նրա միացումը կոլեկտիվ տնտեսություններում — Խորհրդային իշխանության այս բոլոր հիմնական ձեռնարկումների կիրառումն արգելակվեց սկսված* քաղաքացիական պատերազմով: *Յերեք տարվա ընթացքում մեր յերկրի պրոլետարիատը, դաշնակցած աշխատավոր գյուղացիության հետ, պայքարում եյին հանուն յերիտասարդ Խորհրդային հանրապետության փրկության, պաշտպանում եյին Հոկտեմբերի նվաճումներն սպիտակ-գվարդիական բանդաներից և ինտերվենտներից:*



*Ռազմական պաշտպանության նպատակով, յերիտասարդ Խորհրդային հանրապետությունը կործանումից փրկելով է բացատրվում ռազմա-տնտեսական քաղաքականությանը, այսպես կոչված՝ «ռազմա*կան կոմունիզմին» *անցնելու անհրաժեշտությունը:*

Ռազմական կոմունիզմի քաղաքականությունն արտահայտվում եր յերկրի ամբողջ տնտեսական կյանքը ֆրոնտի շահերին, խորհրդային հանրապետությունը՝ նրան շրջապատող թշնամիների ողակից պաշտպանելու շահերին հպատակեցնելու մեջ: *Խորհրդային իշխանությունն ազգայնացրել եր, իր ձեռքն եր վերցրել վոչ միայն հողը, բանկերը, խոշոր արդյունաբերությունը, այլև միջակ և նույնիսկ մանր արդյունաբերությունը: Ազգայնացված արդյունաբերության կառավարման համար ստեղծվեց ժողովրդական տնտեսության գերագույն խորհուրդ, վորի խնդիրն եր հանրապետության բոլոր արտադրական ուժերի հաշվառքը, ամբողջ արտադրության և բաշխման կենտրոնացումը:*

*Արդյունաբերության ազգայնացմամբ բուրժուազիային մահացու հարված հասցվեց.—նրանից վերցվեցին նրա հզորության աղբյուրները — արտադրության միջոցների սեփականությունը: Ամբողջ արդյունաբերությունն աշխատում եր ի սպաս բանվորների և գյուղացիների միլիոնավոր բանակի, վորոնք հերոսաբար պայքարում եյին անծայրածիր յերկրի բազմաթիվ ֆրոնտներում:*

*Բանակի և բանվորության կերակրման համար Խորհրդային իշխանությունը հարկադրված եր մտցնելու պարենմասնատրում* (продразверстка): *Գյուղացիները պետությանն եյին հանձնում հացի ամբողջ ավելցուկը, բացառությամբ իրենց ուտելու և ցանքի համար անհրաժեշտ քանակից: Հացի առևտուրն արգելվեց: Պարենմասնատրումն ոգնեց բանվորներին և աշխատավոր գյուղացիներին՝ պաշտպանելու Հոկտեմբերյան նվաճումները: Յեթե այդ տարիներին հացի ազատ առևտուր թույլատրվեր, ապա գյուղական հարուստները — կուլակները, հացի պաշար կուտակելով և սպեկուլյացիա անելով, բանվորությունը և բանակն առանց հացի կթողնեյին:*

*Ռազմական կոմունիզմի տարիներին շուկայական ապրանքաշրջանառությունը փոխարինվեց կենտրոնացված հաշվառքի և բաշխման սիստեմով: Գյուղատնտեսական մթերքների, վառելանյութի, հագուստեղենի, հումույթի ամբողջ պաշարը հաշվառված եր և բաշխվում եր պետության կողմից: Հացը և առաջին անհրաժեշտության մթերքները տրվում եյին միայն աշխատավորներին:*

*Խորհրդային իշխանությունը մտցրեց ընդհանուր* աշխատանքային

պարհակ: Բնակչության վոչ-աշխատավորական շերտերը հաշվառման էյին յենթարկվել և աշխատում էյին հարկադրական կարգով:

Այսպես են այն տնտեսական քաղաքականության գլխավոր հիմունքները, վոր կուսակցությունը վարում էր քաղաքացիական պատերազմի տարիներին, «ռազմական կոմունիզմի» տարիներին: Այլ կերպ քայքայված մանր գյուղացիական յերկրում մենք չէյինք կարող հաղթել կալվածատերերին և կապիտալիստներին: Եվ այն փաստը, վոր մենք հաղթել ենք հակառակ ներքին և արտաքին հակահեղափոխության կատաղի ընդդիմադրության, հակառակ բլոկադայի և ինտերվենցիայի, ցույց է տալիս վոչ միայն այն, թե հերոսության ինչ հրաշքների ընդունակ են իրենց ազատագրության համար պայքարող բանվորներն ու գյուղացիները: «Այդ փաստը ցույց է տալիս նույնպես, թե գործնականում բուրժուազիայի ինչպիսի լակեյների դեր խաղացին մենշևիկները, էսէրները, Կաուցկին և Ընկ., յերբ մեզ մեղադրում էյին այդ «ռազմական կոմունիզմի» համար»:

Սակայն կոմունիստական կուսակցությունը «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը չի դիտել վորպես պրոլետարական իշխանության համար բոլոր պայմաններում ճիշտ և ընդունելի քաղաքականություն: «Ռազմական կոմունիզմի» այդ քաղաքականությունը, վոր յերկրի ներսում բանվոր դասակարգին թշնամի շերտերի նյութական հիմքը քայքայում էր, ապահովում էր արդեն յեղած պաշարի ռացիոնալ (նպատակահարմար) բաշխումը, ոժանդակում էր պրոլետարական դիկտատուրայի ռազմական պայքարին և դրանով գտնում էր իր պատմականորեն հիմնավորումը, այնուամենայնիվ, նա չի կարող դիտվել, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի «նորմալ» տնտեսական քաղաքականության սիստեմ»,—ասում է Կոմինտերնի ծրագիրը:

## ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ռազմական կոմունիզմը պայմանավորված էր պատերազմով և քայքայմամբ: Դրա համար էլ,—ասում է Լենինը,—նա պրոլետարիատի տնտեսական խնդիրներին համապատասխանող քաղաքականություն չէր և չէր կարող լինել: Նա ժամանակավոր միջոցառում էր»: Եվ հենց վոր անմիջական ռազմական վտանգն անցավ, հենց վոր մենք անցանք խաղաղ տնտեսական շինարարության, Լենինը կուսակցության առաջ դրեց «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից հրաժարվելու և նոր տնտեսական քաղաքականության (Նէպ) անցնելու հարցը:

«Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, պարենմասնատրման քաղաքականությունը, շոշափելով գյուղացիության միջակ մասսաների անմիջական շահերը, լուրջ սպառնալիք ստեղծեց գյուղատնտեսության զարգացման համար: Սպառնալիք ստեղծվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրության համար, հետևաբար նաև պրոլետարիատի դիկտատուրայի գոյության համար:



Պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական խնդիրն է՝ սոցիալիզմի շինարարությունը, ամենից առաջ — սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի ստեղծումը: Մինչդեռ Խորհրդային Ռուսաստանի արդյունաբերությունը քաղաքացիական կռիվների վերջին լիակատար քայքայման հասավ: Ինտերվենցիայի և քաղաքացիական կռիվների պատճառով առաջացած տնտեսական քայքայումը հասավ ծայրահեղ չափերի: Քաղաքացիական պատերազմի վերջում արդյունաբերությունը, 1917 թվի համեմատությամբ, տալիս էր միայն մեկ հինգերորդը: Իրենց արտադրությունը կրճատեցին առանձնապես այն ճյուղերը, վորոնք վճռական դեր են խաղում ժողովրդական տնտեսության մեջ և վորոնց ոգնությամբ միայն հնարավոր է ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Առ. 1921 թ. չուգունի արտադրությունն իջավ և հասավ մինչպատերազմյանի 4,1 տոկոսին, քարածխի արդյունաբերությունը — մինչև 35 տոկոսի: Կոտորակված, հետամնաց, մանր և փոշիացած գյուղատնտեսությունն իր նախկին արտադրանքի կեսն էր տալիս: Տրանսպորտը լիակատար քայքայման հասավ: 1921 թվի անբերրիությունը նշանակալից չափով սրեց յերկրի ծանր դրությունը:

Անհրաժեշտ էր անցնել ժողովրդական ամբողջ տնտեսության վերականգնմանը, ձեռնամուխ լինել խոշոր արդյունաբերության վերականգնմանը՝ վորպես սոցիալիստական տնտեսության հիմքի, բազայի: Վորովհետև առանց խոշոր արդյունաբերության խոսք չի կարող լինել սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի մասին, սոցիալիզմի շինարարության մասին: Իսկ խոշոր արդյունաբերության վերականգնմանը լուրջ և սիստեմատիկորեն անցնելու համար անհրաժեշտ էր յերկիրը ապահովել հացով և վառելանյութով, լուրջ ուշադրություն դարձնել գյուղացիական տնտեսությանը, նրա աճին և ամրապնդմանը:

Այդ խնդիրը կարելի յեր լուծել միայն հրաժարվելով «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից: Գյուղացիները, հացը վաճառելու համար շուկա չունենալով և հարկադրված լինելով պարենմասնատրումով տալու իրենց ամբողջ ավելցուկը, շահագրգռված չէյին արտադրությունն ընդարձակելու մեջ: Այստեղից բխում էր պարենմասնատրումը վերացնելու անհրաժեշտությունը, այն բնատուրքով փոխարինելը, վորի կատարումից հետո գյուղացին կարող էր ազատորեն վարվել իր ավելցուկի նկատմամբ: «Ուրեմն, առաջին հերթին անհրաժեշտ են լուրջ և անմիջական միջոցառումներ գյուղացիության արտադրական ուժերը բարձրացնելու համար,—ասում էր Լենինը,—այդ անհրաժեշտ է խոշոր արդյունաբերության վերականգնման համար: Առանց

պարենավորման քաղաքականության լուրջ փոփոխությունների այդ անել անկարելի չէ: Այդպիսի փոփոխություն հանդիսացավ պարենմասնատրումի փոխարինումը պարենհարկով, վորը, հարկի վճարումից հետո, ենթադրում է ազատ առևտուր, համենայն դեպս, տեղական տնտեսական շրջանառության սահմաններում»:

Ի՞նչպիսի ուղիներով այն ժամանակ կարող եր ընթանալ գյուղատնտեսության վերականգնումը: Գյուղատնտեսական մթերք արտադրողների ճնշող մեծամասնությունը — անհատական, մանր-ապրանքային տնտեսություններն եյին: Մեր գյուղի կենտրոնական ֆիգուրան միջակն եր: Մանր ապրանքային տնտեսության սոցիալիստական վերակառուցումը, խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության ստեղծումը — պրոլետարական հեղափոխության ամենակարևոր, ամենադժվարին խնդիրն եր: Նեպին անցնելիս անհնարին եր անմիջորեն լուծել այդ խնդիրը: Զարգացած սոցիալիստական խոշոր արդյունաբերության բացակայության պայմաններում, վորն ընդունակ է հողագործությունը վերակառուցելու նոր տեխնիկայի հիման վրա, մենք այն ժամանակ գյուղատնտեսությունը կարող եյինք բարձրացնել միայն հնարավոր ձևով — անհատական մանր ապրանքային տնտեսության ձևով: Բարձրացնել անհատական մանր ապրանքային տնտեսությունը, հումքային և պարենային բազա ստեղծել սոցիալիստական ինդուստրիայի ծավալման համար և այդպիսով նոր տեխնիկական հիմք ստեղծել ժողովրդական ամբողջ տնտեսության, և առաջին հերթին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար — այսպես եր խնդիրը:

Սպասում եր դժվարին ուղի — զոդել արդյունաբերությունը գյուղատնտեսության հետ, ստեղծել և ամրապնդել պրոլետարիատի զոդումը գյուղացիության հետ, տնտեսական շահագրգռվածություն առաջացնել միջակ գյուղացու մեջ, նրան հնարավորություն տալ ամրապնդելու իր տնտեսությունը: Խնդիրն եր, զոդումն ստեղծել նոր, սոցիալիստական այն եկոնոմիկայի, վորը պրոլետարիատի դիկտատուրան հենց սկզբից սկսեց իրագործել, և գյուղացիական եկոնոմիկայի միջև, վորով ապրում եյին միլիոնավոր գյուղացիներ: Մեր նպատակը,— ասում եր այն ժամանակ Լենինը,— «զոդվել գյուղացիական մասսաների հետ, շարքային աշխատավոր գյուղացիության հետ և սկսել առաջ շարժվել անչափ, շատ ավելի դանդաղ կերպով, քան մենք երազում եյինք, սակայն այնպես, վոր իսկապես մեզ հետ շարժվի ամբողջ մասսան: Այն ժամանակ ապագայում այդ շարժումն այնպես կարագանա, վորի մասին մենք այժմ երազել անգամ չենք կարող»:

1921 թվին նոր տնտեսական քաղաքականության, նեպին անցնելն աչքի առաջ ուներ այն, վորպեսզի նահանջելով ամրապնդել հետ մնացած գյուղացիական տնտեսությունը, ուժերի վերախմբավորում կատարել, և հետո ընդլայնած հիմունքով նոր հարձակման անցնել:

Գյուղացուն ոգնելը, ճիշտ փոխհարաբերությունը նրա հետ պրոլետարիատը տեսնում եր «վոչ թե գյուղացուն չոյելու մեջ», այլ գյուղացուն ոգնություն ցույց տալու մեջ, վորպեսզի նա իր տնտեսությունը փոխադրեր «նոր տեխնիկական բազայի, ժամանակակից արտադրության տեխնիկական բազայի վրա», վորովհետև այդ է գյուղացիության աղքատությունից ազատելու հիմնական ուղին:

Նեպին անցնելը, վորն իրագործվեց 1921 թվին ՌԿ(բ)Կ X համագումարի վորոշմամբ, կուսակցության և բանվոր դասակարգի առաջ դրեց «ով—ում» լենինյան պատմական հարցը: Պարենհարկի, ազատ առևտրի մուծումը չեր կարող չառաջացնել կապիտալիստական ելեմենտների աշխուժացումը յերկրում: Գյուղացին հնարավորություն ստացավ իր հացի ավելցուկը ծախելու, թույլատրվեց մասնավոր առևտուրը, պետությունը մանր ձեռնարկությունները կապալով եր տալիս մասնավոր ձեռնարկատերերին՝ իր ամբողջ ուշադրությունն ու ուժերը փոխադրելով խոշոր արդյունաբերության վրա:

Մանր, կոտորակված գյուղատնտեսության առկայությունն ինքը կապիտալիզմի անմահ աղբյուր է հանդիսանում: Հարստացած գյուղացին աշխատողներ է վարձում, շահագործում է նրանց և դառնում է կուլակ: Յերբ միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ վաճառում են իրենց արտադրանքի ավելցուկն անհատաբար, հայտնվում է մասնավոր միջնորդը, վորն այդ գործով փող է դիզում:

Սակայն կուսակցությունը բավական սեղմ շրջանակներ սահմանեց կապիտալիզմի զարգացման համար: Խորհրդային իշխանությունը սահմանափակում եր կուլակի աճը գյուղում, նրա որենքներն ուղղված եյին սահմանափակելու կուլակության շահագործական տենդենցները: Խորհրդային իշխանությունը սահմանափակում եր մասնավորի աճը: Սոցիալիստական արդյունաբերության, պետական - կոոպերատիվ առևտրի ամրապնդմամբ մասնավորն աստիճանաբար արտամղվում եր:

Նոր տնտեսական քաղաքականության խնդիրն եր կապիտալիզմը մտցնել պետական հաշվառքի, հսկողության և կարգավորման շրջանակների մեջ, սահմանափակել նրա աճը, կարգի դնել սոցիալիստական սեկտորի մրցությունը նրա հետ, վորպեսզի վոչ միայն վարչական և վարկային-հարկային ճնշման միջոցառումներով, այլև տնտեսական գերազանցության միջոցառումներով վերջնականապես արտամղել մասնավոր կապիտալը, վոչնչացնել կապիտալիզմի առաջացման արմատները:

Մասնավոր կապիտալը փորձում եր տիրանալ գյուղացիական շուկային: Մի կողմից պետական առևտրի ու կոոպերացիայի, մյուս կողմից՝ մասնավորի ու կուլակի միջև սկսվեց կատաղի պայքար շուկայի

տիրապետման համար, աշխատավոր գյուղացիության մասսաների վրա ազդելու համար:

«Ամբողջ հարցն այն է,—ասում էր Լենինը,—ո՞ւմ հետևից կգնա գյուղացիությունը,—պրոլետարիատի հետևից, վորը ձգտում է սոցիալիստական հասարակություն կառուցել, թե կապիտալիստի հետևից, վորն ասում է.—«հետ դառնանք, թե չէ՝ ինչ-վոր սոցիալիզմ են հորինել...»: Ահա թե ինչի յե հանգում այժմյան ամբողջ կռիվը,— ո՞վ կհաղթի, ո՞վ ավելի շուտ կօգտվի... կապիտալիստները կկարողանան ավելի շուտ կազմակերպվել,—այն ժամանակ նրանք կոմունիստներին դեն կքշեն, այստեղ այլևս վոչ մի խոսք լինել չի կարող: Կամ թե պրոլետարական պետական իշխանությունը, հենվելով գյուղացիության վրա, ընդունակ կլինի կապիտալիստներին պատշաճ սանձի տակ պահել»:

Պրոլետարիատի ձեռքին էին գտնվում տնտեսության սոցիալիստական սիստեմի բոլոր առավելությունները.—քաղաքական իշխանությունը, հրամանատարական բարձունքները, քաղաքում մասնավոր կապիտալի և գյուղում կուլակության զարգացումը սանձի տակ պահելու հնարավորությունը: Սովորել առևտուր անել, ամրապնդել դաշինքը գյուղացիության լայն մասսաների հետ, կառուցել խոշոր սոցիալիստական արդյունաբերություն, ղեկավարել շուկան և ամբողջ տնտեսական գործունեությունն այնպես, վոր սահմանափակվեն և արտամղվեն կապիտալիստական էլեմենտները — առևտրականը, ձեռնարկատերը, աղան, կուլակը, վորպեսզի ապահովվի սոցիալիստական էլեմենտների հաղթանակը թե՛ գյուղում և թե՛ քաղաքում.—այսպես էր «ով-ում» լենինյան հարցի լուծման և ամբողջ ֆրոնտով սոցիալիզմի վճռական հարձակման նախապատրաստության ուղիները:

«Նեպը պրոլետարական պետության առանձնահատուկ քաղաքականություն է,—ասում է ընկ. Ստալինը,—վորն աչքի առաջ ունի կապիտալիզմի թույլ տալը՝ հրամանատարական բարձունքները պրոլետարական պետության ձեռքում առկայության դեպքում, վորն աչքի առաջ ունի կապիտալիստական և սոցիալիստական էլեմենտների պայքարը, վորն աչքի առաջ ունի սոցիալիստական էլեմենտների դերի աճումն ի վնաս կապիտալիստական էլեմենտների, աչքի առաջ ունի սոցիալիստական էլեմենտների հաղթանակը կապիտալիստական էլեմենտների նկատմամբ, աչքի առաջ ունի դասակարգերի վոչնչացումը, սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը»:

## ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Նեպի առաջին շրջանը վերականգնման շրջանն է: Նրա հիմնական խնդիրն էր — վերականգնել իմպերիալիստական և քաղաքացիական



կռիվների պատճառով քայքայված ժողովրդական տնտեսությունը: Արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրությունը բարձրացնելը մինչպատերազմյան մակարդակին — առաջին խնդիրն էր տնտեսության սոցիալիստական ձևերի հաղթանակի, սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի կառուցման ճանապարհին:

Վերականգնման պրոցեսը հիմնականում ավարտվեց 1926—27 տնտեսական տարում: Այդ ժամանակ պետական արդյունաբերության արտադրանքը 1913 թվի համեմատությամբ հասավ 104,6 տոկոսի, իսկ գյուղատնտեսության արտադրանքը՝ 101,9 տոկոսի:

Հինգ տարվա ընթացքում հաջողվեց վերականգնել յերկրի քայքայված տնտեսությունը, գործարաններն ու ֆաբրիկաները գործի դնել, հող պատրաստել ժողովրդական ամբողջ տնտեսության վճռական վերակառուցման, ռեկոնստրուկցիայի համար, սոցիալիստական արդյունաբերության նոր գիգանտ-ձեռնարկությունների կառուցման համար, գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու համար:

Վերականգնման ժամանակաշրջանի ընթացքում հսկայական տեղաշարժեր կատարվեցին յերկրի ժողովրդական տնտեսության մեջ: Փոխվեցին արտադրության առանձին ճյուղերի փոխհարաբերությունները: Այսպես, օրինակ՝ էլեկտրոկայանների ուժը, մինչպատերազմյան մակարդակի համեմատությամբ, աճեց 85 տոկոսով, այն ժամանակ, յերբ պետական արդյունաբերության ընդհանուր արտադրանքն աճեց միայն 4,6 տոկոսով: Քարածխի հանույթն ավելացավ 11 տոկոսով, տորֆինը՝ 200 տոկոսով: Աշխատանքի արտադրողականությունն աճեց 15,3 տոկոսով: Այս թվերը ցույց են տալիս, վոր դեռ վերականգնման շրջանում աճում էր սոցիալիստական խոշոր արդյունաբերության դերը:

Նեպի վերականգնման շրջանում անդադար աճեցին ժողովրդական տնտեսության սոցիալիստական էլեմենտները: 1926—27 թվերին արդյունաբերության ընդհանուր արտադրանքը հանրայնացվեց 86,1 տոկոսով, առևտրա-միջնորդական շրջանառությունը՝ 81,9 տոկոսով, ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը (վորի թվում և գյուղատնտեսության)՝ 56 տոկոսով, իսկ արդյունաբեյությանը՝ 90,2 տոկոսով: Վերականգնման շրջանում սոցիալիզմը տանում էր մեկ հաղթանակ մյուսի հետևից, վճռականորեն սեղմելով և արտամղելով կապիտալիստական էլեմենտներին:

Նեպի վերականգնման շրջանում մեր յերկրի ժողովրդական տնտեսության մեջ կատարված տեղաշարժերը միայն սկիզբն էին մեր էկոնոմիկան հեղափոխականորեն սոցիալիստականի վերակառուցելու գործի: Ավարտելով ժողովրդական տնտեսության վերակառուցումը, մենք թևակոխեցինք ռեկոնստրուկցիայի շրջանը — նոր տեխնիկական բազայի վրա մեր յերկրի արմատական սոցիալիստական վերակառուցման,

ապա և ամբողջ ֆրոնտով սոցիալիզմի վճռական հարձակման, գյուղատնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիայի շրջանը:

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման բանալին ինդուստրացումն է: Ինդուստրացումը — մեր զարգացման գլխավոր գիծն է: Հատկապես ինդուստրացման հաղթանակները մեզ հնարավորություն տվին անցնելու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը, ամբողջ ֆրոնտով սոցիալիզմի ծավալուն հարձակմանը:

Ռեկոնստրուկտիվ ժամանակաշրջանը — տնտեսության սոցիալիստական ձևերի հարձակման և վերջնական հաղթանակի ժամանակաշրջանն է մեր յերկրում:

## ՆԵՊԻ ՌԵԼՍԵՐԻ ՎՐԱ

Նեպի ռելսերի վրա կուսակցությունն ապահովեց սոցիալիստական ելեմենտների հաղթանակը կապիտալիստական և մանր ապրանքային ելեմենտների նկատմամբ, և «ով-ում» հարցի լուծումը հօգուտ սոցիալիզմի թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության մեջ:

Տարեց-տարի աճում է ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկտորը: Պետտրեստները և կոոպերացիան XVI համագումարի ժամանակ արդեն կարևորագույն բնագավառներից արտամղել եյին մասնավորին և համարյա շուկայի մոնոպոլ տերն եյին դարձել: Արդյունաբերության մեջ կապիտալիստական ելեմենտները հատակը գնացին: Հանձին մեր խոշոր արդյունաբերության մենք սեփական բազա ստեղծեցինք ժողովրդական ամբողջ տնտեսության տեխնիկական վերակառուցման համար:

Սոցիալիստական արդյունաբերության հաջողությունների շնորհիվ վճռական հաղթանակներ ձեռք բերվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պայքարում: Նոր ձևով դրվեց զոդման հարցը: Յեթե նեպի առաջին տարիներին արդյունաբերության և գյուղատնտեսության զոդումը գլխավորապես ձեռք եր բերվում առևտրի միջոցով, գյուղացիության սպառողական կարիքների (չիթ, կոշիկ, մանուֆակտուրա և այլն) բավարարման գծով, ապա սոցիալիստական արդյունաբերության աճը զոդման նոր ձևեր զարգացրեց: Բացի գյուղացու անհատական, սպառողական կարիքների բավարարումը, մենք հնարավորություն ստացանք միշտ ավելի ու ավելի մեծ չափով բավարարել վերակառուցվող գյուղի արտադրական կարիքները, մատակարարել նրան գյուղատնտեսական մեքենաներ, տրակտորներ, սերմացու, պարարտանյութ և այլն: Պրոլետարիատը հանդես է գալիս վորպես գյուղատնտեսությունը՝ կոլեկտիվ սկզբունքներով և նոր տեխնիկական հիմունքներով վերակառուցելու գործի կազմակերպիչ ու ղեկավար:



Ինքնին հասկանալի յե, վոր դա չի վերացնում, այլ ուժեղացնում է մեր պարտավորություններն ու հնարավորությունները քաղաքի և գյուղի միջև առևտրական զոդումն ամրապնդելու տեսակետից:

Սոցիալիզմը հաղթանակեց գյուղատնտեսության մեջ: Այստեղ ել «ով-ում» հարցը լուծված է վերջնականորեն և անդառնալիորեն: Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում նեպի ռելսերի վրա՝ ապահովված է: Կուլակությունը — կապիտալիստական շահագործման այդ վերջին հենարանը մեր յերկրում, վորպես դասակարգ, լիկվիդացիայի յե յենթարկվում համատարած կոլեկտիվացման հիման վրա: Յերկրորդ հնգամյակի ընթացքում մենք մեր առաջ դնում ենք կապիտալիստական ելեմենտների և ընդհանրապես դասակարգերի լիակատար լիկվիդացիայի և անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման խնդիրը:

Այդ փայլուն հաջողությունները հաստատում են նախագծված և բոլշևիկյան ամբողջ համառությամբ կիրառված նոր տնտեսական քաղաքականության ճշտությունը: Դրանք, այդ հաղթանակները, կուսակցությունը ձեռք բերեց աջ և «ձախ» ոպորտունիզմի դեմ մղվող անողոք մարտերում:

Տրոցկիստները ժխտում եյին նեպը, չեյին ցանկանում գյուղացիական եկոնոմիկայի հետ զոդման անհրաժեշտությունը հաշվի առնել, քանդում եյին գյուղացիության հիմնական մասսաների հետ յեղած միությունը: Նրանք չեյին հավատում, վոր նեպի հիման վրա կհաջողվի վերակառուցել միլիոնավոր գյուղացիական տնտեսություններ, տանել նրանց դեպի սոցիալիզմի ճանապարհը: Տրոցկիստները ժխտում եյին մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը և ցանկանում եյին կուսակցությանը թեքել դեպի պրոլետարիատի դիկտատուրայի թուլացման քաղաքականությունը: Կուսակցությունը ջարդ ու փշուր արեց տրոցկիզմը, վորը դարձել է հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր ջոկատը:

Աջ ոպորտունիստները յենթադրում եյին, վոր նեպը միայն նահանջ է, ջանք եյին թափում, վոր նեպն ընդլայնվի հօգուտ կուլակային-կապիտալիստական ելեմենտների: Նրանք համարում եյին, վոր յեթե նեպ է մտցված, ապա պետք է թուլացվի դասակարգային պայքարը, սոցիալիստական ինդուստրացման ծավալման տեմպը պետք է իջեցվի, իսկ կոլտնտեսական շինարարությունը չպետք է խրախուսվի պետական ոգնությամբ: Աջերը պնդում եյին, վոր սոցիալիստական շինարարությունը կարող է ինքնահոսով գնալ, վոր կուլակը կներաճի սոցիալիզմի մեջ: Աջ ուկլոնիստները կուսակցությանը մղում եյին դեպի սոցիալիզմի դիրքերի հանձնում, դեպի կապիտալիստական ելեմենտների ամրապնդում, կուլակի ուժեղացում; հետևաբար նաև պրոլետարիատի դիկտատուրայի թուլացում: Կուսակցությունը ջախջախեց աջերին — կու-

սակցության շարքերում այդ կուլակային գործակալությունը — և նրանց հայացքներն անհամատեղելի հայտարարեց կուսակցության մեջ լինելու հետ։

## ՎԵՐԱՑՎԱ՞Ծ Է ԱՐԴՅՈՔ ՆԵՊԸ

Մենք թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը։ Մենք կառուցել ենք սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը։ «Սոցիալիստական էկոնոմիկայի հիմքը կառուցել,— ասում է ընկ. Ստալինը,— նշանակում է «գյուղատնտեսությունը սոցիալիստական ինդուստրիայի հետ մեկ ամբողջական տնտեսության մեջ միացնել, գյուղացիությունը ենթարկեցնել սոցիալիստական էկոնոմիկայի ղեկավարությանը, գյուղատնտեսության և ինդուստրիայի արտադրանքների ուղղակի փոխանակության հիման վրա կարգավորել քաղաքի և գյուղի հարաբերությունները, փակել և լիկվիդացիայի ենթարկել այն բոլոր խողովակները, որոնց օգնությամբ ծնվում են դասակարգերը և ծնվում է, առաջին հերթին, կապիտալը, վերջիվերջո ստեղծել արտադրության և բաշխման այնպիսի պայմաններ, որոնք ուղղակի և անմիջականորեն տանում են դեպի դասակարգերի վոչնչացում»։

Սակայն արդյոք դա նշանակո՞ւմ է, թե նեպը վերացված է։ Վոչ մի դեպքում։ Մենք թևակոխել ենք սոցիալիզմի ժամանակաշրջանը, միաժամանակ գտնվելով նեպի վերջին ստադիայում։

«Ամբողջ ֆրոնտով հարձակման անցնելով,— ասում է ընկ. Ստալինը,— մենք դեռ նեպը չենք վերացնում, վորովհետև մասնավոր առևտուրը և կապիտալիստական էլեմենտները դեռ մնում են, ապրանքային և փողային տնտեսությունը դեռ մնում է, սակայն մենք անպայմանորեն վերացնում ենք նեպի սկզբնական ստադիան, ծավալելով նրա հետագա ստադիան, նրա ներկա ստադիան, վորը նեպի վերջին ստադիան է»։ Մինչև այն ժամանակ, քանի դեռ անցման ժամանակաշրջանը չի ավարտված, նեպը չի կարող վերացվել։

Կուսակցությունը վճռական հակահարված է տալիս «ձախ» ոպորտունիստների այն փորձերին, վորով նրանք յերկրի՝ սոցիալիզմի շրջան թևակոխելը բացատրում են վորպես նեպի, շուկայի և փողի վերացում։ Կուսակցությունը պահանջում է խորհրդային առևտրի ամրապնդումը, զարգացումը, բարելավումը, կոոպերատիվ և պետական խանութների, կոլտնտեսական շուկաների ավելացումը։ Մասնավորի, սպեկուլյանտի և մասնավոր առևտրի արտամղումը չի նշանակում ամեն տեսակ առևտրի վոչնչացում։ Ընդհակառակը, դա յենթադրում է խորհրդային առևտրի ամեն կերպ զարգացումը և կոոպերատիվային ու պետական առևտրական կազմակերպությունների ցանցի ծավալումը։ Գյուղատնտեսության մթերքները և արդյունաբերության ապրանքները պետք է հասցվեն սպառողին։ Մենք պետք է ստեղծենք իսկական կուլտուրական խորհրդային առևտուր, վորը բացառում է հավասարեցումն ու դիմազրկությունը բաշխման մեջ, և կառուցված է ռայոնների, մարզերի և սպառողների զանազան խմբակների պահանջների ուսումնասիրության հիման վրա։ Մենք չպետք է չարչիորեն առևտուր անենք, պետք է դուրս վտարել նեպմանական վոգին կոոպերացիայից և պետական առևտրից, և խորհրդայնորեն առևտուր անել։ Անհրաժեշտ է ամեն կերպ ծավալել կոլտնտեսական առևտուրը, վորը դառնում է քաղաքի աշխատավորությանը գյուղատնտեսական արտադրության մթերքներով մատակարարելու ավելի ու ավելի լուրջ լրացուցիչ աղբյուր։

Չհասկանալով անցման ժամանակաշրջանի խնդիրները, մոռանալով Լենինի պատգամը՝ նեպի ռելսերի վրա դեպի սոցիալիզմ շարժվելու մասին, «ձախ» խոտորողները կարծում են, վոր յեթե Խորհրդային Միությունը թևակոխել է սոցիալիզմի ժամանակաշրջանը, արդեն հասել է ժամանակը վերացնելու շուկայական ապրանքաշրջանառությունը, վերացնելու փողը։ Նրանք մոռանում են Լենինի ուղղակի ցուցումներն այդ մասին։

«Փողը,— ասում է Լենինը,— միանգամից վոչնչացնել չի կարելի։ Այն վոչնչացնելու համար անհրաժեշտ է կարգավորել հարյուր միլիոնավոր մարդկանց մթերաբաշխումը, իսկ դա յերկար տարիների գործ է»։

«Յերբ մենք հաղթենք համաշխարհային մասշտաբով, մենք, յես կարծում եմ,— գրում է Լենինը,— վոսկուց հասարակական արտաքնոցներ կշինենք աշխարհի միքանի ամենամեծ քաղաքների փողոցներում։ Դա կլիներ վոսկու ամենից ավելի «արդարացի» և դաստիարակիչ գործածությունն այն սերունդների համար, վորոնք չեն մոռացել, թե ինչպես վոսկու համար տասը միլիոն մարդ կոտորեցին և 30 միլիոն մարդ հաշմանդամ դարձրին 1914—1918 թվերի «մեծ ազատագրական» պատերազմում... Առայժմ անհրաժեշտ է հոգատար լինել դեպի վոսկին ՌՍՖԽՀ-ում, այն թանգ ծախել, և նրանով ապրանքն ավելի եժան գնել»։

Մեր արդյունաբերության, ժողովրդական ամբողջ տնտեսության խնդիրն է — խնայել միջոցները, կրճատել ծախսերը, ուժեղացնել ներարդյունաբերական կուտակումը, ավելի լավ ու եժան ապրանք արտադրել։ Տնտհաշվարկը, ռուբլու խիստ հսկողությունը — այդ խնդիրների լուծման լավագույն յեղանակն է։ Իսկ դա, անկասկած, յենթադրում է փողի և խորհրդային առևտրի պահպանումը։ Տնտհաշվարկի և աշխատանքի ճիշտ կազմակերպման հիման վրա պետք է վերջնականապես վոչնչացվի դիմազրկությունն արտադրության, բաշխման և

շրջանառության մեջ, պետք ե լուծվեն աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման խնդիրները:

Սոցիալիստական կուտակման, տնտհաշվարկի, ռուբլու հսկողության, խնայողության ռեժիմի հարցերը — կարևորագույն հարցերն են նեպի վերջին ետապի և սոցիալիզմի այն շրջանի, վոր մենք թևակոխել ենք:

Ընկ. Մոլոտովը խորհուրդների VI համագումարում մատնանշել ե.—«Մենք թևակոխել ենք սոցիալիզմի ժամանակաշրջանը, սակայն միաժամանակ մենք չենք ավարտել նեպն իր առանձնահատկություններով: Վորպես մարքսիստներ մենք չենք կարող մոռանալ, վոր, թևակոխելով սոցիալիզմի ժամանակաշրջանը, մենք դեռ չենք կարող ամբողջությամբ կտրվել այն ամենից, ինչը մենք յերեկ ունեինք»:

Աջ ոպորտունիստները մեզ քաշում են դեպի այդ նեպական յերեկը, դեպի նեպի առաջին տարիների ազատ առևտուրը: Դա յե գլխավոր վտանգը, վորովհետև աջ ոպորտունիստները դրանով ոգնում են դասակարգային թշնամուն, կուլակին, նրա գործակալությանը: «Ձախերն» ուզում են ցատկել նեպի վրայից, նրա վերջին ետապի վրայից: Միայն յերկու փրոնտի վրա մղվող վճռական պայքարով մենք կարող ենք ապահովել սոցիալիզմի հետագա աճը: Անհրաժեշտ ե հիշել բոլշևիկյան պարտականության մասին՝ պայքարելու ընդդեմ աջ ոպորտունիստական ինքնահոսի, բարեհոգության, բոլշևիկյան տեմպից վախենալու, մշտապես հետ, դեպի յերեկը նայելու, «չլինի թե մի բան լինի»-յի դեմ: Հարկավոր ե հիշել և մյուս բոլշևիկյան պարտականության մասին — թույլ չտալ «ձախական» «հաջողությունների գլխապտույտը»:

Հարկավոր ե հիշել, թե ինչ ե ասել ընկ. Ստալինը 1929 թվի դեկտեմբերին «ԽՍՀՄ ագրարային քաղաքականության հարցերի շուրջը» իր ճառում: «Յեթե մենք կողմնակից ենք նեպին, ապա նրա համար, վոր նա ծառայում ե սոցիալիզմի գործին: Յեվ յերբ նա դադարի սոցիալիզմի գործին ծառայելուց, մենք նրան դեն կշպրտենք: Լենինն ասում եր, վոր նեպը մտցված ե լուրջ կերպով և յերկար ժամանակով: Սակայն նա յերբեք չի ասել, վոր նեպը մտցված ե ընդմիշտ»:

Մենք վորքան ավելի հաղթականորեն շարժվենք դեպի սոցիալիզմը, վորքան ավելի հաջող մենք ավարտենք առաջին հնգամյակը, վորքան ավելի լավ նախապատրաստվենք յերկրորդին, այնքան ավելի կկրճատվեն նեպի վերջին ետապի ժամկետները: Նեպը մինչև վերջը պետք ե գործադրվի և ապա սպառվի հոգուտ սոցիալիզմի:

«Մեր յերկիրն ագրարայինից ինդուստրիալ դարձնել, վորպեսզի ընդունակ լինի սեփական ուժերով արտադրելու անհրաժեշտ սարքավորումը — ահա մեր գլխավոր գծի եյությունը, հիմքը... Վորովհետև դրանումն ե մեր յերկրի տնտեսական ինքնուրույնության հիմնական յերաշխիքը: Վորովհետև դրանումն ե հիմնական յերաշխիքը, վոր մեր յերկիրը կապիտալիստական յերկրների կցորդը չի դառնա»:

ՍՏԱԼԻՆ

# VIII
# ԳԼՈՒԽ

# ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՀԻՄՔՆ Ե

## 1. ԴԱՐԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

### ԱՌԱՎԵԼ ՀԵՏԱՄՆԱՑ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՐԿԻՐԸ

Ցարական Ռուսաստանն առավելապես ագրարային, գյուղատնտեսական յերկիր եր.—բնակչության ընդհանուր թվից քաղաքային բնակչությունը կազմում եր մեկ հինգերորդը, իսկ գյուղական բնակչությունը կազմում եր չորս հինգերորդը: Արդյունաբերական արտադրանքի բաժինը ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի ընդամենը միայն 42,1 տոկոսն եր կազմում:

Կապիտալիստական յերկրների մեջ ցարական Ռուսաստանն արդյունաբերական տեսակետից ամենահետամնացն եր: Արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղեր Ռուսաստանում միանգամայն բացակայում եյին: Նրանում միանգամայն չկար տեքստիլ, կաշվի և քիմիական արդյունաբերության մեքենաների և դազգյահների արտադրություն, չեյին արտադրվում տրակտորներ, ավտոմոբիլներ, ոդանավեր, տպագրական մեքենաներ և այլն: Թույլ եր զարգացած գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը.—1913 թվին գյուղմեքենաներ արտադրվել են ընդամենը 67 միլիոն ռուբլու: Նույնիսկ այնպիսի հասարակ գյուղատնտեսական գործիքներ, ինչպիսին գերանդիներն են, արտասահմանից եյին ներմուծվում ցարական Ռուսաստան: Քիմիական արդյունաբերությունը ծայրահեղորեն թույլ եր զարգացած: Ելեկտրական եներգիայի արտադրության գործը սաղմային դրության մեջ եր գտնվում: Իսկ դրանք բոլորն արդյունաբերության այնպիսի

*ճյուղեր են, վորոնք վճռական դեր են խաղում ժողովրդական տնտեսության մեջ։*

*Ցարական Ռուսաստանի գյուղատնտեսության մեջ մեքենաներ շատ ավելի քիչ եյին գործածվում, քան առաջավոր կապիտալիստական յերկրներում։ Գյուղատնտեսական մի ամբողջ շարք աշխատանքներ, վորոնք արտասահմանում (իսկ այժմ նաև մեզանում) մեքենայով եյին կատարվում, ցարական Ռուսաստանում ձեռքով եյին արվում։*

Ցարական Ռուսաստանի ժողովրդական տնտեսության տեխնիկական սպառազինությունը ծայրահեղորեն ցածր եր։ *Հյուսիսային Ամերիկայի մեքենայական շարժիչների մինչպատերազմյան կարողությունը հասնում եր 130 միլիոն ձիու ուժի, իսկ Ռուսաստանինը — միայն 13 միլիոնի։ Այն ժամանակ, յերբ չուգունի մի հոգու տարեկան սպառումն Ամերիկայում 291 կիլոգրամ եր, Գերմանիայում՝ 219, Անգլիայում՝ 137, Ռուսաստանում չուգունի մի հոգու տարեկան սպառումը հասնում եր միայն 18 կիլոգրամի։ Սակայն չե՞ վոր սպառված չուգունի քանակությամբ է վորոշվում յերկրի ինդուստրացման, նրա տնտեսության, նրա հողագործության մեքենայացման աստիճանը։ Նույնը և քարածխի սպառման նորմայի նկատմամբ, վորն Անգլիայում յուրաքանչյուր անձի ընկնում եր տարեկան 586 կիլո, իսկ Ռուսաստանում՝ միայն 218 կիլո։*

*Ռուսաստանը ծայրահեղորեն ցածր տեղ եր գրավում տեքստիլի, կաշվի, ելեկտրականության և սննդամթերքների սպառման տեսակետից։ Ցարական Ռուսաստանը տեխնիկական և կուլտուրական տեսակետից հետամնաց յերկիր եր։*

*Այդ հետամնացության համար,—ասում է ընկ. Ստալինը,—Ռուսաստանին անընդհատ հարվածում եյին.—«Հարվածում եյին մոնղոլական խաները, հարվածում եյին թուրքական բեկերը, հարվածում եյին շվեդական ֆեոդալները, հարվածում եյին լեհ-լիտովյան պանները, հարվածում եյին անգլո-ֆրանսական կապիտալիստները, հարվածում եյին ճապոնական բարոնները, հարվածում եյին ամենքը — հետամնացության համար։ Ռազմական հետամնացության համար, կուլտուրական հետամնացության համար, պետական հետամնացության համար, արդյունաբերական հետամնացության համար, գյուղատնտեսական հետամնացության համար»։*

*Վերջին իմպերիալիստական պատերազմն ավելի քայքայեց առանց այն ել հետամնաց տնտեսությունը, ավելի անողնական դարձրեց առանց այն ել ռուսական թույլ տեխնիկան։ Իսկ քաղաքացիական պատերազմը, բլոկադան և ինտերվենցիան մինչև վերջը քայքայեցին բուրժուական-կալվածատիրական Ռուսաստանից մեզ ժառանգություն մնացած արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը։*



## ՀԱՍՆԵԼ ՅԵՎ ԱՆՑՆԵԼ

*Նշանակալից չափի ծանր արդյունաբերության բացակայություն, տեխնիկայի ծայրահեղ հետամնացություն, բանվոր դասակարգի և գյուղացիության լայն մասսաների քայքայում ու աղքատացում — այսպիսին եր այն ժառանգությունը, վոր պրոլետարիատն ստացավ հին Ռուսաստանից։*

*Կուսակցության և բանվոր դասակարգի առաջ քաղաքացիական պատերազմի վերջանալու հաջորդ որն իսկ վողջ հասակով ծառացան ժողովրդական ամբողջ տնտեսությունը — նախ վերականգնելու, ապա արմատապես վերակառուցելու, նոր տեխնիկական հիմունքների վրա փոխադրելու խնդիրները։ «Հեղափոխությունը,—ասում եր Լենինը,—արավ այն, վոր մի քանի ամսում Ռուսաստանն իր* քաղաքական *կարգի տեսակետից հասավ առաջավոր յերկրներին։ Սակայն դա քիչ է։ Պատերազմն անողոք է, նա ամենաանողոք սրությամբ դնում է հարցը.— կամ կործանվել, կամ թե հասնել առաջավոր յերկրներին ու անցնել նրանց նաև* տնտեսական *տեսակետից։ Կործանվել կամ ամբողջ թափով ձգտել դեպի առաջ։ Պատմությունն այդպես է դրել հարցը»։ Լենինն այս գրում եր Հոկտեմբերյան հեղափոխությունից քիչ առաջ, նախատեսելով զարգացման այն ուղին, վորն իր համար պիտի ընտրեր հաղթական պրոլետարիատը։*

*Կուսակցությունը գնաց Լենինի մատնանշած ուղիով։ Նա իր և բանվոր դասակարգի առաջ դրեց կարևորագույն խնդիր.—*լիկվիդացիայի յենթարկել մեր յերկրի հետամնացությունը, նրան ագրարայինից վերածել ինդուստրիալ յերկրի, *ստեղծել սեփական հզոր ինդուստրիա,* տեխնիկա-տնտեսական տեսակետից հասնել և անցնել առաջավոր կապիտալիստական յերկրներին։

*Վորպեսզի իմպերիալիստական գիշատիչները մեզ չճզմեն, վորպեսզի Խորհրդային յերկիրը տնտեսապես չստրկանա նրանց հանդեպ, վորպեսզի մենք կապիտալիստական ամբողջ սիստեմի նկատմամբ կցորդ չլինենք, հարկավոր եր հասնել խորհրդային եկոնոմիկայի տնտեսական անկախությանը կապիտալիստական յերկրներից, ամենաառաջավոր տեխնիկական բազայի վրա կառուցել սեփական սոցիալիստական արդյունաբերությունը, հասնել աշխատանքի այնպիսի արտադրողականության, վորպեսզի մեր յերկիրը տնտեսապես և նյութապես դառնա աշխարհի ամենաառաջավոր յերկիրը։*

*Բանվոր դասակարգի առաջ կանգնած հիմնական խնդրի — սոցիալիզմի կառուցման — լուծումը պահանջում եր նոր, կապիտալիզմից ավելի բարձր արտադրողության տեխնիկական հիմքի ստեղծում։ Իսկ դա իր հերթին պահանջում եր ծանր արդյունաբերության, այսինքն՝ արտադրության միջոցներ ու գործիքներ արտադրող արդյունաբերության*

(մեքենաներ, դազգյահներ, վառելանյութ) ուժեղացրած զարգացում, նրա առաջատար և վերափոխիչ դերի ուժեղացում ժողովրդական տնտեսության մեջ: Ծանր արդյունաբերությունը սոցիալիզմի հիմքն է:

## ԾԱՆՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄԲՈՂՋ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԼԾԱԿՆ Է

Առանց ծանր արդյունաբերության զարգացման անիմաստ է սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը, անիմաստ է սոցիալիզմի կառուցումը: Առանց ծանր արդյունաբերության զարգացման անիմաստ է ագրարային-արդյունաբերականից արդյունաբերական-ագրարայինի վերածել մեր երկիրը, անիմաստ է լիկվիդացիայի յենթարկել մեր յերկրի տեխնիկական-տնտեսական հետամնացությունը:

«Առանց ծանր արդյունաբերության փրկության, առանց նրա վերականգնման, մենք չենք կարողանա վոչ մի արդյունաբերություն ստեղծել: Առանց նրան մենք ընդհանրապես կկործանվենք վորպես ինքնուրույն յերկիր»,—ասում եր Լենինը:

Ծանր արդյունաբերության զարգացումից հրաժարվելը կթուլացներ պրոլետարիատի դիրքերը և կուժեղացներ կապիտալիզմի դիրքերը: Իսկապես, ինչ նշանակություն կունենար սեփական մեքենաշինության զարգացումից, սեփական վառելանյութային և մետաղաձուլական արդյունաբերությունից, սեփական քիմիական արդյունաբերությունից հրաժարվելը: Դա կնշանակեր ուժեղացնել մեր կախումը կապիտալիստական յերկրներից, վորովհետև մեր տնտեսության յուրաքանչյուր առաջընթացումը կպահանջեր ուժեղացնել մեքենաների, սարքավորման, դազգյահների, քիմիական արդյունաբերության արտադրանքների ներմուծումը և այլն:

Դրա հետ մեկտեղ չի կարելի պաշտպանել յերկրի անկախությունը, առանց պաշտպանության համար լուրջ արդյունաբերական բազա ստեղծելու: Չի կարելի ապահովել յերկրի պաշտպանունակությունը, յեթե այդ արդյունաբերությունը չստեղծվի ամենաառաջավոր, ամենաբարձր տեխնիկական հիմքի վրա: Այս բոլորը չի կարելի ձեռք բերել առանց սեփական ծանր արդյունաբերության — առանց յերկաթի, պողպատի, քարածխի, նավթի, չուգունի,—առանց արտադրության միջոցներ — գործարանների ու ֆաբրիկաների համար մեքենաներ ու դազգյահներ — արտադրող արդյունաբերության հուժկու զարգացման:

Ծանր արդյունաբերությունը — ժողովրդական ամբողջ տնտեսության սոցիալիստական վերակառուցման, և մեքենայացման ու ելեկտրիֆիկացման հիման վրա գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման լծակն է:



Մեր յերկրում, վորտեղ գերակշռում եր մանր, ցիր ու ցան և փոշիացած անհատական գյուղացիական տնտեսությունը, սոցիալիզմի կառուցման խնդիրն իր լուծման ճանապարհին հանդիպում եր առանձնահատուկ դժվարությունների: «Իսկապես, կարելի յե պատկերացնել,—ասում եր ընկեր Ստալինը Սվերդլովի անվան համալսարանում արտասանած իր ճառում,—վոր արդյունաբերության հիմնական կապիտալն արդեն վերասպառազինվում ու ընդարձակվում է, սակայն դա իսկի յել չի նշանակում, վոր դրանով իսկ լուծված է սոցիալիստական տնտեսության կառուցման պրոբլեմը: Սոցիալիստական հասարակությունը ինդուստրիայի և գյուղատնտեսության աշխատողների արտադրողական և սպառողական ընկերություն է: Յեթե այդ ընկերության մեջ արդյունաբերությունը չի կապակցված գյուղատնտեսության հետ, վորը հումք և պարեն է տալիս ու սպառում է արդյունաբերության արտադրանքները, յեթե այդպիսով արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը ժողովրդական-տնտեսական միասնական ամբողջություն չեն կազմում, ապա դրանից վոչ մի սոցիալիզմ չի ստացվի»:

Սակայն ինչ է նշանակում արդյունաբերությունից և գյուղատնտեսությունից ժողովրդական-տնտեսական միասնական ամբողջություն կազմակերպելը: Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի պայմաններում դա կարող է միայն մի բան նշանակել — ստեղծել խոշոր կոլեկտիվ սոցիալիստական գյուղատնտեսություն, գյուղատնտեսությունը փոխադրել առաջավոր տեխնիկական բազայի վրա:

Գյուղատնտեսության վերակառուցում եր պահանջում նաև ինքը՝ զարգացող ինդուստրիան: Չի կարելի մոռանալ, վոր գյուղատնտեսությունը բազա յե ինդուստրիայի զարգացման համար և՛ շուկա, վորը կլանում է ինդուստրիայի արտադրանքը, և՛ վորպես հումք ու պարեն հայթայթող: «Կարելի՞ յե ինդուստրիան առաջ շարժել,—հարցնում եր ընկ. Ստալինը,—գյուղատնտեսությունը թողնելով միանգամայն հետամնաց տեխնիկայի պայմաններում, ինդուստրիայի համար գյուղատնտեսական բազա չապահովելով, չվերակառուցելով գյուղատնտեսությունը, չնախապատրաստելով նրան ինդուստրիայի համար: Վո՛չ, չի կարելի: Այստեղից խնդիր է բխում — գյուղատնտեսությունը մաքսիմալ, ամենամեծ չափով ապահովել արտադրության գործիքներով և միջոցներով, վոր անհրաժեշտ է նրան արագացնելու և նրա ռեկոնստրուկցիայի գործը նոր տեխնիկական հիման վրա առաջ շարժելու համար»:

Միայն յերկրի ինդուստրացումը կարող է տեխնիկական բազա հիմք ստեղծել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար: Հատկապես ինդուստրացման հաջողությունները, ծանր ար-

գյուղաբերության, մեքենաշինության աճը հնարավորություն տվին ամբողջ լայնությամբ դնելու կոլեկտիվացման խնդիրը, սոցիալիստական սկզբունքներով գյուղատնտեսության վերակառուցման խնդիրը: Սոցիալիստական շինարարության ծավալման այդ հետևողականությունը բացահայտ կերպով արտացոլում են մեր կուսակցության համագումարները վերջին տարիների ընթացքում: Մեր կուսակցության XIV համագումարը (1925 թ.) առավելապես ինդուստրացման համագումար էր. XV համագումարը (1927 թ.) առավելապես կոլեկտիվացման համագումար էր. XVI համագումարը (1930 թ.) ամբողջ ֆրոնտով ծավալուն սոցիալիստական հարձակման համագումար էր:

## 2. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Այսպիսով, սոցիալիստական ինդուստրացում նշանակում է այնպիսի հզոր ինդուստրիայի զարգացում, որն ընդունակ լինի բարձր մեքենայական տեխնիկայի բազա անցկացնել ժողովրդական ամբողջ տնտեսության հիմքում:

Սոցիալիստական ինդուստրացումը նշանակում է մեր յերկիրն ագրարայից, գյուղատնտեսական յերկրից վերածել ինդուստրիալ յերկրի:

Սոցիալիստական ինդուստրացում նշանակում է ԽՍՀՄ-ն վերածել մետաղի, ավտոմոբիլիզացիայի, տրակտորիզացիայի, ելեկտրիֆիկացիայի յերկրի, որովհետև «կոմունիզմը — դա խորհրդային իշխանություն է, գումարած ամբողջ յերկրի ելեկտրիֆիկացիան», — ասում էր Լենինը:

Սոցիալիստական ինդուստրացումը նշանակում է ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի համեմատությամբ ծանր ինդուստրիայի առավելապույն զարգացումը: «Ծանր արդյունաբերությունը սոցիալիզմի նյութական հիմքն է»: Միայն ինդուստրացման հաջողությունների հիման վրա կուսակցությունը հնարավորություն ստացավ արագացրած տեմպով առաջ շարժելու նաև թեթև ինդուստրիայի զարգացումը:

Սոցիալիստական ինդուստրացումը նշանակում է տեխնիկական բազա ստեղծել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար:

Սոցիալիստական ինդուստրացումը նշանակում է — ապահովել մեր տնտեսական անկախությունը կապիտալիստական յերկրներից: Սեփական ծանր արդյունաբերությունն ազատում է մեզ արտասահմանից մեքենաներ և սարքավորում ներմուծելու անհրաժեշտությունից: Սեփական ծանր ինդուստրիան նշանակում է ամրապնդել մեր յերկրի պաշտպանունակությունը:

«Մեր ժողովրդական տնտեսության զարգացումն ընթանում է ինդուստրացման նշանաբանով: Սակայն, — ասում է ընկ. Ստալինը, — մեզ հարկավոր չէ ամեն տեսակ ինդուստրացում: Մեզ հարկավոր է այնպիսի ինդուստրացում, որն ապահովի արդյունաբերության սոցիալիստական ձևերի աճող գերակշռությունը ծանր ապրանքային և առավել ևս կապիտալիստական ձևերի նկատմամբ»:

Մեր ինդուստրացումը նրա համար է սոցիալիստական, որ նա ապահովել է սոցիալիստական ելեմենտների վերջնական գերակշռությունը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում, որ արդյունաբերության մեջ կապիտալիստական ելեմենտները խորտակվեցին, որ տնտեսության սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը յերկրի ժողովրդական ամբողջ յեկամտի մեջ 1932 թվին հասնում է մինչև 91 տոկոսի:

Կապիտալիստական ինդուստրացումն ընդարձակվում է բանվոր դասակարգի շահագործման, բուրժուազիայի տիրապետության բազան: Նա քայքայում ու աղքատացնում է միլիոնավոր տնայնագործների ու արհեստավորների և նրանց դարձնում է կապիտալի վարձու ստրուկներ — պրոլետարներ: Նա մասսաների գործազրկության և աղքատության անլուր դժբախտություններ է առաջացնում և միաժամանակ հարստացնում է կապիտալիստների չնչին խմբակը, կապիտալիստների, որոնք միլիոնավորների արյունն ու չարչարանքը վոսկու յեն վերածում:

Սոցիալիստական ինդուստրացումը սիստեմատիկաբար բարձրացնում է աշխատավորության բարեկեցության մակարդակը, լիկվիդացիայի յե յենթարկում գործազրկությունը, անշեղորեն ուժեղացնում է սոցիալիստական ելեմենտներին, սոցիալիստական վերակառուցման է յենթարկում մանր գյուղացիական տնտեսությունը:

Կապիտալիստական ինդուստրացումն ուժեղացնում է ճնշող մեծամասնության շահագործումն ու հարստահարությունը՝ չնչին փոքրամասնության կողմից, սրում է դասակարգերի հակասությունները, արդյունաբերապես զարգացած յերկրների և նրանց գաղութների հակասությունները, պատերազմներ է առաջացնում կապիտալիստական պետությունների միջև:

Սոցիալիստական ինդուստրացումը պրոլետարիատի սոցիալիստական վերադաստիարակության ուղին է և աշխատավոր գյուղացիության սոցիալիստական վերակառուցումն է՝ անդասակարգ հասարակության աշխատողների. դա կապիտալիստական դասակարգերի մնացորդների և կապիտալիզմ սնուցանող բոլոր խողովակների լիկվիդացիայի ուղին է: Սոցիալիստական ինդուստրացումը — դա դեպի աշխատանքը նոր կոմունիստական վերաբերմունքի դաստիարակության, նոր դիսցիպլինայի, սոցիալիստական շինարարության պլանների լավագույն և արագորեն կատարման համար մասսաների հարվածայնության և մրցակցության աճման ուղին է:

## ՎՈՐՏԵՂԻՑ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մանր արդյունաբերությունը պետական սուբսիդիաների (դրամական օգնության) կարիք է զգում: Միայն ժողովրդական տնտեսության վերականգնման համար հարկավոր յեղավ ահագին միջոցներ: Իսկ ժողովրդական տնտեսության ռեկոնստրուկցիան, արդյունաբերության հսկաների կառուցումը, վորոնցով այժմ հպարտանում է մեր յերկիրը, պահանջեցին տասնյակ միլիարդների ահագին նոր լրացուցիչ միջոցներ: Բավական է ցույց տալ, վոր մեր արդյունաբերության հիմնական կապիտալը, այսինքն՝ ֆաբրիկաների շենքերը, մեքենաները, սարքավորումը և այլն, հնգամյակի սկզբի 6 միլիարդից աճեց մինչև 23 միլիարդի՝ հնգամյակի վերջում, այսինքն՝ 1932 թվին:

Վո՞րտեղից կարելի յեր վերցնել այդ ահագին միջոցները յերկրի ինդուստրացման համար:

Կապիտալիստական ինդուստրացման աղբյուրը միշտ էլ յեղել է բանվոր դասակարգի շահագործումը, գյուղացիության և արհեստավորների շահագործումը, ռազմական ջարդերն ու կոնտրիբուցիան (պատերազմատուգանքը), հետամնաց գաղութային ժողովուրդների թալանը, կապիտալիստական փոխառությունները, վարկերը և կոնցեսիաները (ժողովրդական տնտեսության կարևորագույն մասերն արտասահմանյան կապիտալին արենդով տալը): Բուրժուազիան իր ինդուստրացումը կատարել է բանվոր դասակարգի վոսկորների վրա, քաղաքի և գյուղի միլիոնավոր աշխատավորության քայքայման, աղքատացման և քաղցածության գնով:

Անգլիան իր արդյունաբերությունը զարգացրել է շնորհիվ այն բանի, վոր տասնյակ և հարյուրավոր տարիներ թալանել է գաղութները, այնտեղ հավաքել է անհրաժեշտ կապիտալներ և այն ներդրել է արդյունաբերության մեջ: Անգլիայի տեքստիլ արդյունաբերության զարգացման շահերը, սկսած XVI դարից, պահանջել են ազատ բանվորական ձեռքեր և վոչխարաբուծության զարգացումը: Ունևոր դասակարգերը պետության օգնությամբ յերկու-յերեք հարյուրամյակի ընթացքում բռնագրավում եյին գյուղացիական բոլոր հողերը, միլիոնավոր գյուղացիական ընտանիքներ քշում եյին հողից, և ազատված հողն օգտագործում եյին արոտների համար: Վոչխարաբուծության զարգացումը հումք եր տալիս բուռն կերպով աճող տեքստիլ արդյունաբերությանը, իսկ գյուղացիության եքսպրոպրիացիան ազատ բանվորական ձեռքեր եր տալիս արդյունաբերության համար: Գաղութային սարուկների թալանով և աշխատավորության քայքայմամբ անգլիական բուրժուազիան կառուցում եր իր ինդուստրիան:

Գերմանիան արագացրեց իր ինդուստրացումը 1870—71 թ. թ.՝



Ֆրանսիայի դեմ մղած հաղթական պատերազմի հետևանքով: Գերմանական բուրժուազիան Ֆրանսիայից 5 միլիարդ վոսկի ֆրանկ կոնտրիբուցիա (պատերազմատուգանք) ստանալով, այն ներդրեց զարգացող արդյունաբերության մեջ:

Ռուսաստանը կոնցեսիաներ եր տալիս արտասահմանյան կապիտալիստներին և սարկական փոխառություններ եր կնքում, ջանք թափելով այդ միջոցով ինդուստրացման ուղի դուրս գալու: Հայտնի յե, վոր Պիտերի, Մոսկվայի, Դոնբասի, Ուրալի խոշորագույն ձեռնարկությունները պատկանում եյին արտասահմանյան կապիտալիստներին (Գուժոն — ներկա «Սերպ ի մոլոտ» գործարանը Մասկվայում և Յուզովկան — ներկա Ստալինոն պատկանում եյին ֆրանսացիներին. բել-




ԽՍՀՄ-ի արտադրանքի ինքնարժեքը $1\frac{1}{2}\%$-ով բարձրացնել— նշանակում է քամուն տալ մի ամբողջ Դնեպրոստրոյ:

գիացիներին եյին պատկանում տրամվայի ընկերությունները Ռուսաստանում. ֆրանսացիներին, գերմանացիներին, բելգիացիներին եյին պատկանում մեր հանքերը. անգլիացիներին — տեքստիլ ֆաբրիկաները): Բազմաթիվ գործարաններ պատկանում եյին ակցիոներական այն ընկերություններին, վորոնց ակցիաների նշանակալից մասը նույնպես պատկանում եր արտասահմանյան բանկիրներին և ֆաբրիկանտներին:

Գաղութային թալանները, պատերազմատուգանքը, փոխառությունները, բանվոր դասակարգի և աշխատավորական մասսաների անլուր շահագործումը — սրանք են կապիտալիստական աշխարհի ինդուստրացման աղբյուրները:

**Խորհրդային իշխանությունը** ոչ միայն չի թալանում հետամնաց ազգային ռայոնները, որոնք բուրժուական-կալվածատիրական ցարական Ռուսաստանի գաղութներն էին, այլ ընդհակառակն, ամեն կերպ նրանց օգնում է, որ նրանք ըստ հնարավորին ավելի արագ լիկվիդացիայի ենթարկեն տնտեսական և կուլտուրական հետամնացությունը, զարգացնեն ազգային արդյունաբերությունը:

Կուսակցությունը վճռականորեն մերժեց գյուղի վրա ուժեղ ճնշում գործ դնելու միջոցով արդյունաբերության համար լրացուցիչ միջոցներ դուրս քաշելու տրոցկիստների առաջարկը: Կուսակցությունը մերկացրեց տրոցկիստների այդ հակամիջակային դրույթը, որը թուլացնում էր պրոլետարիատի դիկտատուրան, քայքայում էր գյուղի բարեկեցությունը, կործանում էր գյուղատնտեսությունը և հետևաբար տապալում էր ինդուստրացման գործը:

Խորհրդային իշխանությունն իր գոյության առաջին իսկ օրերից անփոփոխ կերպով խաղաղության քաղաքականություն է վարում: Նա չի թալանում ուրիշ ժողովուրդների, նվաճողական պատերազմներ չի մղում:

«Կապիտալիստական յերկրների պատմությունից հայտնի յե,— ասում է ընկ. Ստալինը,—որ ոչ մի յերիտասարդ պետություն, որը ցանկանում է բարձր աստիճանի դնել իր ինդուստրիան, յոլա չի գնացել առանց արտաքին օգնության, յերկարատև վարկերի կամ փոխառությունների ձևով: Արևմտյան յերկրների կապիտալիստները բացահայտորեն մերժեցին մեր յերկրին վարկեր և փոխառություններ տալ, յենթադրելով, որ վարկերի և փոխառությունների բացակայությունն անպայման կխափանի մեր յերկրի ինդուստրացումը: Սակայն կապիտալիստները սխալվեցին: Նրանք հաշվի չառան այն, որ մեր յերկիրը, հակառակ կապիտալիստական յերկրների, կուտակման առանձնահատուկ աղբյուրներ ունի, որոնք բավարար են վերականգնելու և զարգացնելու համար ծանր արդյունաբերությունը»:

Յեվ իսկապես, մենք ոչ միայն վերականգնեցինք արդյունաբերությունը, ոչ միայն վերականգնեցինք գյուղատնտեսությունն ու տրանսպորտը, այլև ծավալեցինք արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի վերակառուցման հոյակապ գործը, այդ ռեկոնստրուկցիայի համար ստեղծելով խոշոր ինդուստրիայի սեփական բազա: Հասկանալի յե, որ այդ գործի վրա ծախսվել են տասնյակ միլիարդներ: Վո՞րտեղից են ստացվել այդ գումարները:

Այն հսկայական միլիարդները, որոնց օգնությամբ մենք մեր հետամնաց, ագրարային յերկիրը վերածում ենք բարձր զարգացած սոցիալիստական արդյունաբերության ինդուստրիալ յերկրի և աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսության յերկրի, մենք ձեռք ենք բերել յերկրի ներսում, ոչ ոքի չթալանելով, ոչ ոքի վրա չհենվելով և կապիտալիզմի հետ ստրկական գործարքների չդիմելով: **Այդ միջոցները մենք ստանում ենք մեր արդյունաբերությունից, ի հաշիվ նրա ներքին կուտակումների, այդ միջոցները մենք ստանում ենք գյուղատնտեսությունից, վերջապես, այդ միջոցները մենք ստանում ենք հարկերից և այլ պետական յեկամուտներից, խնայդրամարկղ մուծված խնայողություններից, ներքին փոխառություններից, որոնք լայնորեն խրախուսվում են աշխատավորական մասսաների կողմից:**

Որքան ավելի վճռական է մեր պայքարը **տնտհաշվարկի** համար, **ինքնարժեքի** իջեցման համար (իսկ մեր արդյունաբերության մեջ ինքնարժեքի միտոկոսյա իջեցումը տարեկան 150 միլիոն ռուբլու խնայողություն է տալիս), **աշխատանքի արտադրողականության** բարձրացման համար, մեր ձեռնարկությունների **ներքին միջոցների** մոբիլիզացիայի համար, **հաղթանակի ստալինյան վեց պայմանների** կատարման համար, այնքան ավելի շատ միջոցներ կլինեն Խորհրդային պետության տրամադրության տակ մեր յերկրի հետագա ինդուստրացման համար, սոցիալիստական շինարարության այնպիսի տեմպի հասնելու համար, որը պետք է յերկրորդ հնգամյակի ընթացքում Խորհրդային Միությանը տեխնիկական տեսակետից Յեվրոպայում առաջին տեղը մղի:

## 3. ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԸ

### Ի՞ՆՉ Է ՊԼԱՆԸ

Մեր յերկրի ժողովրդական տնտեսությունը վիթխարի տնտեսություն է: Յերկրագնդի մեկ վեցերորդ մասի անհուն լայնության վրա ցրված են հսկայական բնական հարստություններ, խոշորագույն ձեռնարկություններ, կառուցումներ, խորհտնտեսություններ և կոլտնտեսություններ: Ժողովրդական տնտեսության բոլոր առանձին ճյուղերը— մետաղը, քարածուխը, նավթը, հացը, յերկաթուղիները, շինարարությունը — այդ բոլորը պետք է մեկը մյուսի հետ կապվեն, բոլորը պետք է հաշվի առնվեն ժողովրդատնտեսական միասնական պլանում:

Ժողովրդական տնտեսության պլանը կազմել — նշանակում է Լենինգրադի կամ Մոսկվայի արդյունաբերության կարիքները զուգորդել Ուրալի հանքի ու մետաղի կամ Միջին Ասիայի բամբակի հետ, Ուկրայինայի տափաստանի հացի կամ Հյուսիսային յերկրամասի անտառանյութի հետ, Կովկասի նավթի կամ Դոնբասի քարածխի հետ: Դա շատ դժվարին գործ է: Ժողովրդական տնտեսության պլանը կազմել — նշանակում է ճիշտ որոշել, թե ինչքան և ինչպիսի մթերքներ ու ապրանքներ պետք է արտադրվեն արդյունաբերության կողմից, գյուղատնտեսության կողմից, յերկրի տնտեսության բոլոր ողակների կողմից:

Տարեց-տարի պլանավորման գործը մեզ մոտ բարելավվում է: Պլա-

*նավորման գործում մեր կուտակած վիթխարի փորձը լրացվում է սոցիալիզմ կառուցող միլիոնավորների մասնակցությամբ՝ պլանավորման մեջ: Իրենց հանդիպական պլաններով, պլանների առանձին դրույթների քննադատությամբ, պլանային նախագծումների դերակատարմամբ՝ բանվորները և կոլտնտեսականներն աշխատանքի պրոցեսում ուղղում են պլանավորման ընդհանուր գործը*, վորը Պետպլանից գնում է դեպի առանձին դազգյահները և դազգյահներից՝ Պետպլան:

*Միայն պրոլետարիատի դիկտատուրան կարող է իրագործել պլանային տնտեսությունը, վորովհետև նրա ձեռքումն են, պրոլետարական պետության ձեռքումն են յերկրի բոլոր հարստությունները, ֆաբրիկաները և գործարանները, տներն ու դպրոցները, յերկաթուղիները, հողի ընդերքը և կուլտուրայի բոլոր միջոցները: Չկան կապիտալիստների — արտադրության միջոցների և գործիքների տերերի — սեփականատիրական, շահախնդրական, թալանչիական շահերի բաղխումներ:* Միայն խորհրդային իշխանությունը կարող է իրագործել պլանային տնտեսությունը:

*Աշխարհի զանազան յերկրներում ուսումնասիրում են մեր պլանային տնտեսությունը, մեր տարեկան և հնգամյա պլանները: Բուրժուական-գիտության առանձին ներկայացուցիչներն առաջադրում են նույնպես պլանների ստեղծման նախագծեր՝ կապիտալիստական յերկրներում:* Սակայն կապիտալիզմն ու պլանն անհամատեղելի յեն — *կապիտալիզմի էությունը հակասում է պլանին: Վոչնչացնել անպլանայնությունը, արտադրության անարխիան, կոնկուրենցիան, շահույթի հետևից ընկնելը և պլանային տնտեսություն սահմանել — նշանակում է վոչնչացնել կապիտալիզմը:*

*Մեր պլանը հաշվառում է* աշխատավորության մասսաների կարիքները: *Հենց այդ կարիքների բավարարման համար է կիրառվում ինդուստրացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը: Մեր պլանը ձգտում է ապահովել մեր յերկրի* տնտեսական ինքնուրույնությունը և ամրապնդել նրա պաշտպանունակությունը: *Սոցիալիստական պլանայնությունը նկատի ունի ապահովել զարգացման այնպիսի տեմպեր, վորպեսզի իրագործվի «առաջավոր կապիտալիստական յերկրներին տեխնիկա-տնտեսապես հասնել և անցնելու» լոզունգը: Պլանայնությունը սոցիալիզմ կառուցողների ջանքերն ուղղում է մի մեծ նպատակի, խնայում է յեռանդը, խնայում է ուժերը, ոժանդակում է բարձրագույն տեխնիկայի կիրառմանը, սոցիալիզմի արագ աճին՝ շինարարության բոլոր բնագավառներում:*





*Տնտեսությունը պլանայնորեն վարելու հարցը դրված եր դեռ կուսակցության ծրագրում, վորը գրված է Լենինի կողմից և ընդունված է կուսակցության VIII համագումարի կողմից 1919 մարտին:*

*«Իմպերիալիստական տնտեսության քայքայումը,— ասում է ՀամԿ(բ)Կ ծրագիրը,— խորհրդային շինարարության առաջին շրջանին՝ արտադրության կազմակերպման և կառավարման գործում՝ վորոշ քաոսայնություն է ժառանգություն թողել: Դրանով ավելի համառորեն, վորպես արմատական խնդիրներից մեկը, առաջադրվում է* յերկրի տնտեսական գործունեության մաքսիմալ միավորումը համապետական միասնական պլանի մեջ»:

*Մեր ժողովրդական ամբողջ տնտեսության* զարգացման առաջին գլխավոր պլանը, *վորը հայտնի յե* ելեկտրիֆիկացման պլան, *Ելեկտրիֆիկացման պետական հանձնաժողովի պլան (ԳՈԵԼՐՈ) անունով, մշակվել է 1920 թվին, Լենինի առաջարկությամբ և ղեկավարությամբ: Այդ պլանում, վորը նկատի յեր առնված 10—15 տարվա համար, նախատեսված եր 30 խոշոր ռայոնական ելեկտրոկայանների կառուցումը: Դրան համապատասխան ել նախագծված եր մեր արդյունաբերության ծավալումը և յերկաթուղային ցանցի կառուցումը: Այդ պլանով մեր արդյունաբերությունը միայն 1931 թվին պետք է հասներ մինչպատերազմյան մակարդակին:*

*Մի շարք տարիների ընթացքում, ղեկավարվելով ԳՈԵԼՐՈ-յի պլանով՝ վորպես ժողովրդատնտեսական զարգացման գլխավոր ծրագրով, սահմանափակվում եյինք միայն տարեկան պլաններ, այսպես կոչված՝ սոցիալիստական շինարարության «ստուգիչ թվեր» կազմելով:*

*Տնտեսական շինարարության հաջողությունները, արդյունաբերության և գյուղատնտեսության վերականգնումը, վորը հիմնականում ավարտվեց մինչև XIV համագումարը, յերկրի ինդուստրացման խնդիրները համառորեն* պահանջեցին ժողովրդական տնտեսության միասնական պլանի ստեղծումը, վորը նկատի ունենար մի քանի տարի: *Վերականգնման ժամանակաշրջանի հանրագումարները, պլանային աշխատանքի փորձը Խորհրդային Միության առանձին ռայոններում և յերկրամասերում՝ կուսակցությանը թույլ տվին անցնելու* ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի ստեղծմանը:

կուսակցության XV համագումարն ստեղծեց հնգամյակը: *Այդ համագումարում, 1928 թվի հունվարին, վորոշում ընդունվեց ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանը կազմելու մասին: Համագումարի տված հիմնական դրույթները հետևյալներն եյին.— Պլանը մշակելիս նկատի ունենալ, ժողովրդական տնտեսության կուտակումների ընդհանուր աճի հիման վրա, պետական ինդուստրիայի*

կապիտալիստական յերկրներից ավելի արագ աճի անհրաժեշտությունը, սոցիալիստական շինարարության զարգացման տեմպի և վերջապես, ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի տեսակարար կշռի (դերի) անպայման և մշտական բարձրացումը։

1929 թվի գարնանը, XVI կուսկոնֆերանսում, ապա նաև խորհուրդների V համագումարում վորոշում ընդունվեց «Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի մասին»։ «Հնգամյակը» համաշխարհային հռչակ ստացավ, դարձավ պայքարի դրոշ հեղափոխության գործին նվիրված բոլոր պրոլետարների և աշխատավորների համար՝ թե՛ մեր յերկրում և թե՛ արտասահմանում։ «Հնգամյակը» ատելի դարձավ Խորհրդային միության բոլոր թշնամիների, կոմունիզմի թշնամիների համար։

## ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԸ

Մեր առաջին հնգամյակը աշխարհում սոցիալիստական մեծ աշխատանքների ամենահոյակապ, աննախընթաց պլանն է, յերկրի սոցիալիստական ինդուստրացման պլանը, սոցիալիստական եկոնոմիկայի փունդամենտի կառուցման պլանը։

Հնգամյա պլանը, վորը հիացրել է մեր բարեկամներին և կատաղեցրել մեր թշնամիներին, տվել է սոցիալիզմի շինարարության պարզորոշ պլանը 1927/28—1933 թ.թ. հնգամյակի ընթացքում։ Այդ ծրագիրը հիմնականում հետևյալն է.—

Կապիտալ ներդրումների, այսինքն շինարարության մեջ ներդրվող միջոցների և ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերի սարքավորման ընդհանուր գումարը վորոշվեց 64·500 միլլիոն ռուբլի՝ ընդդեմ նախորդ հնգամյակում ներդրված 26·500 միլլիոն ռուբլու։

Կապիտալ ներդրումների վիթխարի քանակը պետք է յեռապատկեր արդյունաբերական արտադրանքի մինչպատերազմյան չափը։ Գյուղատնտեսական արտադրանքի մինչպատերազմյան չափի գերազանցումը պլանով վորոշված եր մեկ ու կես անգամ։

Յերկիրն ինդուստրացնելու, Խորհրդային Միության պաշտպանունակությունն ամրապնդելու և ամենակարճ ժամկետում կապիտալիստական յերկրների նկատմամբ տնտեսական կախումից յերկիրն ազատելու համար՝ կապիտալ ներդրումներն առավելապես ուղղվում եյին դեպի արտադրության միջոցներ արտադրող ծանր արդյունաբերությունը (կապիտալ ներդրումների 78 տոկոսը կամ $^3/_4$-ից ավելին արդյունաբերության մեջ)։

Ելեկտրոշինարարության գծով պլանը նախատեսում եր 42 ռայոնական ելեկտրոցենտրալների կառուցումը.—Դնեպրի հիդրոկայանը, Սվիրի հիդրոկայանը, Մալայա Վիշերայի՝ տորֆի վրա աշխատող ելեկտրո-



կայանը, ընդմոսկովյան քարածխի վրա աշխատող Բոբրիկի ելեկտրոկայանը, Զույևի ելեկտրոկայանը՝ Դոնբասում և այլն։ Այդ վիթխարի շինարարությունը յերկրում արտադրվող ելեկտրոեներգիայի քանակը պետք է հնգամյակի սկզբի 5,1 միլիարդ կիլովատ ժամից ավելացներ մինչև 22 միլիարդ կիլովատ ժամի՝ հնգամյակի վերջում, ելեկտրոեներգիայի արտադրությունը մինչպատերազմյանի համեմատությամբ ավելացնելով 11 անգամ։

Սև մետալուրգիայի գծով նախատեսված եր նոր հզոր մետալուրգիական գործարանների շինարարությունը (Մագնիտոգորսկի, Տելբեսկի, Դնեպրի, Կրիվոյ Րոգի և այլն)։ Նոր գործարանների շինարարությունը և գործողների ռեկոնստրուկցիան պետք է չուգունի արտադրանքը 1927–28 թվի 3½ միլիոն տոննից հասցնեյին մինչև 10 միլիոն տոննի՝ հնգամյակի վերջին տարում։

Քարածխի գծով նախագծված եր հանքային հզոր շինարարություն ինչպես Դոնբասում, նույնպես Ուրալում, Կուզբասում, Ընդմոսկովյան ավազանում. ըստ վորում քարածխի հանույթը 1927–28 թվի 35,5 միլլիոն տոննից պետք է հասցվեր 75,3 միլլիոն տոննի հնգամյակի վերջում՝ գերազանցելով մինչպատերազմյան հանույթը 4½ անգամ։




Կապիտալի ներդրումն արդյունաբերության մեջ (համեմատական տվյալներ)։ Ձախից—չորս տարվա, աջից—միմիայն 1932 թվի ընթացքում

Մեքենաշինական նոր գործարանների ռեկոնստրուկցիան և շինարարությունը (ավտոմոբիլի գործարանը Նիժնի-Նովգորոդում, տրակտորի գործարաններն Ստալինգրադում, Խարկովում և Ուրալում, Սվերդլովի անվան ծանր մեքենաշինության գործարանը, Ռոստովի գյուղատնտեսական մեքենաշինական գործարանը, ինստրումենտալ գործարանները և այլն) պետք է մեքենաշինական արդյունաբերության ընդհանուր արտադրանքը 1927–28 թվի համեմատությամբ ավելացնեյին 3½ անգամ, իսկ գյուղատնտեսական մեքենաշինության արտադրանքը՝ 4 անգամ։

Քիմիական արդյունաբերության գծով նախատեսվում եր քիմիա-

կան կոմբինատների շինարարություն (Բերեզնիկովի, Մոսկվայինը՝ յեգորեվյան ֆոսֆորիտների վրա, Դոնբասում և այլն), ըստ որում քիմիական պարարտանյութերի արտադրությունը հնգամյակի սկզբի 175 հազար տոննի դիմաց հնգամյակի վերջում պետք է հասցվեր մինչև 9 միլիոն տոննի։

Հնգամյակը ժողովրդական տնտեսության զարգացման այնպիսի տեմպեր եր նախագծել, վորպիսին չունի աշխարհիս յերեսին կապիտալիստական և վոչ մի յերկիր։ Անման բոլշևիկյան տեմպերը պետք է դեռ առաջին հնգամյակի վերջում մեզ նշանակալից չափով առաջ շարժեյին հասնել և անցնելու խնդրի լուծման տեսակետից՝ եյապես փոփոխելով ԽՍՀՄ տեսակարար կշիռը համաշխարհային արտադրության մեջ։

Չուգունի գծով ԽՍՀՄ-ն վեցերորդ տեղից պետք է անցներ յերրորդ տեղը (Գերմանիայից և ՀԱՄՆ-ից հետո), քարածխի գծով հինգերորդ տեղից՝ չորրորդ տեղը (ՀԱՄՆ-ից, Անգլիայից և Գերմանիայից հետո)։

Նշանակալից տեղաշարժեր նախագծվել են գյուղատնտեսության սոցիալիստական ռեկոնստրուկցիայի բնագավառում — այն է՝ խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների շինարարությունը։ Գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի ցանքատարածը պետք է 1927–28 թ. 2,3 միլիոն հեկտարից հասցվեր մինչև 16 միլիոն հեկտարի՝ 1933 թվին։

Սակայն, վորքան էլ վիթխարի լինեյին սոցիալիզմի շինարարության հնգամյակի նախագծած տեմպերը, նրանք աշխատանքի և հնգամյակի համար մղվող պայքարի ընթացքում մշտապես վերանայվում եյին՝ նրանց հետագա ավելացման տեսանկյունով։ Այսպես, օրինակ, ընկ. Ստալինի առաջարկությամբ կուսակցության XVI համագումարը վորոշում ընդունեց յերկրորդ քարածխա-մետալուրգիական բազայի ստեղծման մասին Ուրալում (առաջինը Դոնբասումն է)։

«Այժմ բանն այնպես է,—ասում է ընկ. Ստալինը,—վոր մեր արդյունաբերությունը, ինչպես և մեր ժողովրդական տնտեսությունը հիմնականում հենվում է Ուկրայնայի քարածխա-մետալուրգիական բազայի վրա... Սակայն կարո՞ղ է հետագայում այդ միակ բազան բավարարել ԽՍՀՄ և՛ հարավին, և՛ արևելքին, և՛ կենտրոնական մասին, և հյուսիսին, և հյուսիս-արևելքին, և Հեռավոր Արևելքին, և Թուրքեստանին։ Բոլոր տվյալներն ասում են, վոր չի կարող։ Մեր ժողովրդական տնտեսության զարգացման մեջ նորն այն է, վոր այդ բազան մեզ համար արդեն անբավարար է դարձել։ Նորն այն է, վորպեսզի ամեն կերպ ծավալելով այդ բազան, հետագայում դրա հետ միասին անմիջապես ստեղծել քարածխա-մետալուրգիական յերկրորդ բազա։ Այդ բազան պետք է լինի Ուրալ-Կուզնեցկի կոմբինատը, Կուզնեցկի կոքսացող քարածխի և Ուրալի հանքի միացումը»։

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ=ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ+ԷԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ




Էլեկտրոէներգիայի արտադրման աճն ըստ տարիների (միլիոն կիլովատ ժամերով)։



XVI համագումարն ընդունեց ընկ. Ստալինի առաջարկը։ Ներկայումս արդեն Մագնիտոգորսկի և Կուզնեցկի հսկաների առաջին դոմեն-ները գործարկվել են։ Խորհրդային Միությունն ինդուստրացման հզոր բազա յե ստեղծում Արևելքում։

Ծանր ինդուստրիայի զարգացման հաջողությունների հիման վրա արդեն կուսակցության XVI համագումարի օրերին պայմաններ եյին ստեղծվել թեթև արդյունաբերության ծավալումն ուժեղացնելու համար, լայն սպառման առարկաների արտադրության համար։ Խորհրդային իշխանությունը հնարավորություն ստացավ ուժեղացրած տեմպով ծավալելու և՛ ծանր, և՛ թեթև ինդուստրիան։

Միաժամանակ մեծ աշխատանքների հնգամյա պլանի կատարումը

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ ԲԱԶԱՆ




Չուգունի հալումը ԽՍՀՄ-ում (միլիոն տոններով)։

պահանջում էր հաղթահարել ներքին և արտաքին բնույթի հսկայական դժվարությունները: Սակայն մեր դժվարությունները սուր կերպով տարբերվում են այն դժվարություններից, վորոնց հանդիպում են կապիտալիստական յերկրները: Նրանց դժվարությունները կապիտալիստական սիստեմի անկման, կործանման դժվարություններ են: Մեր դժվարությունները աճման դժվարություններ են: «Յերբ մենք խոսում ենք մեր դժվարությունների մասին,—հայտարարեց ընկ. Ստալինը կուսակցության XVI համագումարում,—մենք նկատի ունենք զարգացման վոչ թե անկում կամ ճահճացում, այլ մեր ուժերի աճումը, մեր ուժերի վերելքը, մեր էկոնոմիկայի շարժումը դեպի առաջ: Ինչքա՞ն առաջ շարժվել մոտակա ժամկետում, քանի՞ տոկոսով ավելի ապրանք արտադրել, քանի՞ միլիոն հեկտար ավելի ցանել, քանի՞ ամիս առաջ կառուցել ֆաբրիկան, գործարանը, յերկաթուղին,—ահա թե ինչ հարցեր նկատի ունեն մեզանում, յերբ խոսում են դժվարությունների մասին»:

Մեր դժվարությունները հաղթահարել կարելի յե միայն ամբողջ ֆրոնտով բոլշևիկյան հարձակման ռելսերի վրա, վճռական պայքար մղելով հանուն մեր պլանների քանակական և վորակական կատարման:

## 4. ՊԱՅՔԱՐ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ

### ՈՎ ԵՐ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԴԵՄ<br>ՈՎ ԵՐ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՆՐԱ ԿԱՏԱՐՄԱՆԸ

Կապիտալիստական աշխարհն ատամների կրճտոցով դիմավորեց մեր հնգամյակը: Բուրժուական թերթերն սկսեցին արտավորել մեր պլանները.—նրանք գրում եյին, վոր հնգամյակը—դա «անմիտ յերևակայություն է», «խելագար թվերի պար», «ժողովրդական խաբեյություն» և այլն: Մեր յուրաքանչյուր թերությունը, մեր յուրաքանչյուր անհաջողությունը, յուրաքանչյուր ճեղքվածքը նրանց կողմից ոգտագործվում էր աղմուկ բարձրացնելու համար հնգամյակի ձախողման մասին: Հնգամյակի ձախողման «մարգարեների» առաջին շարքերում գտնվում եյին սոցիալ-ֆաշիստները, վորոնք փորձում եյին կապիտալիստական յերկրների բանվորության ուշադրությունը հեռացնել մեր հաջողություններից:

Սակայն, հնգամյակի կատարման համեմատ, կապիտալիստական աշխարհն սկսում էր հասկանալ, թե ինչպիսի սպառնալիք է հնգամյակի կատարումը կապիտալիզմի համար, թե ինչ նշանակություն ունեն մեր հաջողությունները սոցիալիզմի գործի համար վոչ միայն մեզանում, այլև ամբողջ աշխարհում: Հնգամյակի համար մղվող պայքարի մեր չորս տարին լի յեն նրան տապալելու փորձերով կապիտալիստական



աշխարհի կողմից և կապիտալիստական էլեմենտների կողմից—ԽՍՀՄ ներսում:

Լիկվիդացիայի յենթարկվող դասակարգերի ընդդիմադրությունը սոցիալիզմի շինարարությանը մեր յերկրում, հնգամյակի իրագործմանը, կապիտալիստական աշխարհի յերկյուղը մեր հաջողությունների հանդեպ առանձնահատուկ ուժով արտահայտվեցին վնասարարության կազմակերպման մեջ՝ մեր ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Տեխնիկական ինտելիգենցիայի վերնաշերտը, վորը հեղափոխությունից առաջ սերտորեն կապված էր ռուսական բուրժուազիայի և արտասահմանյան կապիտալի հետ, հարաբերության մեջ մտավ արտասահմանում գտնվող սպիտակ-գվարդիական կազմակեր-

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԱՅԻՆ ԲԱԶԱՆ




Ինչպես է աճել մեզնում քարածխի արդյունահանումը՝ համեմատած մինչպատերազմյան ցարական Ռուսաստանի հետ (միլիոն տոններով):

պությունների հետ, մի քանի արտասահմանյան պետությունների՝ առանձնապես Ֆրանսիայի՝ ներկայացուցիչների հետ: Այնտեղից միջոցներ և դիրեկտիվներ ստանալով, պլանավորման բնագավառում և տնտեսական հիմնարկներում աշխատող հին բուրժուական դպրոցի այդ մասնագետները վնասարարական կազմակերպությունների մի ամբողջ ցանց ստեղծեցին: Նրանք խառնում եյին մեր պլանները, անհամապատասխանություն ստեղծելով նրանց ու ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի զարգացման միջև, և ուղղակի վնասում եյին — փչացնելով մեր սարքավորումը, մեքենաները, պայթյուններ և հրդեհներ պատրաստելով, մեր գաղտնիքները հաղորդելով Խորհրդային միության դեմ ինտերվենցիա նախապատրաստող արտասահմանյան կառավարություններին: Աշխատավոր մասսաների զգոնությունը և Միացյալ Պետքաղվարչության սրատեսությունը բաց արին վնասարա-

րական կազմակերպությունները, մերկացրին վնասարարներին, վորոնք կանգնեցին պրոլետարական դատարանի առաջ: Շախտիի գործը, վորը լուրջ վնասարարություն հայտնաբերեց ածխային արդյունաբերության մեջ, «արդկուսակցության» — «արդյունաբերական կուսակցության» մեջ միացած վնասարարների հակահեղափոխական կազմակերպության — դատավարությունը, վնասարարական կազմակերպությունների հայտաբերումն առևտրում և կոոպերացիայում, վնասարարների կապն արտասահմանյան բուրժուազիայի հետ, — այս բոլորը ցույց տվին, վոր դասակարգային թշնամին և յերկրի ներսում, և յերկ-

ՀՆԳԱՄՅԱԿԸ 3 ՏԱՐՈՒՄ




Նավթի արդյունահանման գործում հսկայական թռիչք՝ մինչպատերազմյան ցարական Ռուսաստանից մինչև հնգամյակի սկիզբը և հնգամյակի սկզբից մինչև նրա ավարտումը (միլիոն տոններով)։

րից դուրս դիմում է ամեն միջոցի՝ հնգամյակը տապալելու համար, սոցիալիստական շինարարությունը տապալելու համար:

Հնգամյակի համար մղվող պայքարն ուղեկցվել է մահացող դասակարգերի ջախջախմամբ, գյուղում կուլակության վրա հարձակմամբ՝ մինչև նրա, վորպես դասակարգի, լիկվիդացիան, քաղաքի մանր բուրժուական շերտերի գործունեության ասպարեզի նեղացմամբ: «Հասկանալի յե, — ասում է ընկ. Ստալինը, — վոր այդ բոլորը չեն կարող չսրել դասակարգային պայքարը, մահացող դասակարգերի ընդդիմադրությունը Խորհրդային իշխանության քաղաքականությանը: Ծիծաղելի կլիներ մտածել, վոր այդ դասակարգերի ընդդիմադրությունն իր այս կամ այն անդրադարձումը չի գտնի մեր կուսակցության շարքերում: Յեվ նա իսկապես կուսակցության մեջ գտնում է իր անդրադարձումը: Մահացող դասակարգերի ընդդիմադրության անդրադարձումն են լենինյան գծի բոլոր և ամեն տեսակի թեքումները, վորոնք կան մեր կուսակցության շարքերում:

Կարելի՞ յե հաջող կերպով պայքարել դասակարգային թշնամիների դեմ, միաժամանակ չպայքարելով մեր կուսակցության մեջ յեղած թեքումների դեմ, չհաղթահարելով այդ թեքումները: Վո՛չ, չի կարելի: Չի կարելի, վորովհետև հնարավոր չէ իսկական պայքար ծավալել դասակարգային թշնամիների դեմ, թիկունքում ունենալով նրանց անդրադարձումը կուսակցության մեջ, թիկունքում թողնելով այնպիսի մարդկանց, վորոնք չեն հավատում գործին, և ամեն կերպ ջանք են թափում արգելակելու մեր շարժումը դեպի առաջ:

Տրոցկիստները «ձախ» ֆրազներով դիմակավորում, ծածկում եյին իրենց թերահավատությունը կապիտալիստական էլեմենտների նկատմամբ բանվոր դասակարգի հաղթանակի հնարավորության մասին, իրենց կապիտուլյացիան բուրժուազիայի առաջ: Տրոցկիստները դեմ եյին հնգամյակին: Վերականգնման ժամանակաշրջանում, նրա վերջին, տրոցկիստները հրապարակ դուրս յեկան վորպես թունդ «գերինդուստ-

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ




Մեքենակառուցման աճը (միլիոն ռուբլիներով)։

րիալիզատորներ»: Նրանք պայքարում եյին հանուն ինդուստրիայի գերարագ զարգացման՝ ի հաշիվ գյուղացիության աշխատավոր մասսաների: Դրա փոխարեն ժողովրդական տնտեսության վերակառուցման ժամանակաշրջանում տրոցկիստներն «ամենախայտառակ կապիտուլյանտները» դուրս յեկան: Նրանք հանդես յեկան «մարող կորագծի» թեորիայով, վորով մեր տնտեսության զարգացման տեմպերը տարեցտարի պետք է նվազեյին:

Չեր կարելի վճռականորեն պայքարել հնգամյակի կատարման համար, չջախջախելով «մարող կորագծի» մասին տրոցկիզմի հակահեղափոխական թեորիան: Կուսակցությունը ջախջախեց տրոցկիզմը և ճանապարհ հարթեց հանուն բոլշևիկյան հնգամյակի պայքարելու համար:

Հնգամյակի դեմ պայքարել են նաև աջ ոպորտունիստները: Աջերը հանդիսացել են կուլակի ձայնատար խողովակը, կործանվող բուրժուական-կապիտալիստական էլեմենտների ընդդիմադրության անդրադարձումը և դրա համար ներկա էտապում հանդիսացել են և հանդիսանում են գլխավոր վտանգը կուսակցության շարքերում:

Աջերը պահանջում էյին նախադծված կապիտալ ներդրումների կրճատումը, ծանր արդյունաբերության զարգացման տեմպերի դանդաղեցումը: Նրանք ապացուցում էյին, վոր հացի հիմնական արտադրողները դեռ յերկար ժամանակ կլինեն անհատական և կուլակային տնտեսությունները, վոր խորհտնտեսությունների և կոլտնտեսությունների զարգացումը հեռավոր ապագայի գործ է: Նրանք մեղադրում էյին կուսակցությանը՝ իբր թե գյուղացիությանը չափազանց ճնշելու մեջ, ինչպես նրանք էյին ասում, «գյուղացիության ռազմա-ֆեոդալական շահագործման» մեջ: Հնգամյակին հակադիր՝ աջերը (ընկ. Ռիկովը) առաջադրեցին իրենց «յերկամյակը», այսինքն՝ ըստ էյության հրաժարվեցին ծավալուն սոցիալիստական հարձակումից՝ բոլշևիկյան հնգամյակի հիման վրա:

Չեր կարելի պայքարել հնգամյակի համար, չջախջախելով աջ թեքումը—կործանվող կապիտալիստական էլեմենտների այդ գործակալությունը: Կուսակցությունը մերկացրեց աջերի պայքարը հնգամյակի դեմ և հարց դրեց, վոր աջ թեքման հայացքների պրոպագանդան կուսակցության մեջ մնալու հետ անհամատեղելի յէ:

Հնգամյակի ամբողջ քառամյա ճանապարհին կուսակցությունն անդուլ պայքար էր մղում աջ ոպորտունիստական ինքնահոսի, բարեհոգության, պատեհապաշտության (ставка на авось), ամեն տեսակ նորությունից յերկնչելու—«չլինի թե մի բան լինի»-ի դեմ: Կուսակցությունը հարվածում էր «ձախերին», վորոնց համար «ամեն բան առվոչինչ է», վորոնք մասսաներին բացատրելու և համոզելու փոխարեն փորձում էյին գործել վարչական ցատկումներով, առաջ վազելով, «մի հարվածով» լուծելով այն խնդիրները, վորոնք պահանջում են յերկարատև և համառ աշխատանք մասսաներում, այդպիսով նրանք գռեհկացնում էյին կուսակցության պայքարը սոցիալիզմի համար:

Հնգամյակի յերկրորդ տարվա շեմքին կուսակցությունը բաց արեց այն հակակուսակցական աշխատանքը, վորը կուսակցությունից թաքուն

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ




ավտոմեքենաների արտադրությունը



տանում էր աջ – «ձախ» բլոկը (միությունը)՝ ղեկավարությամբ աջ Սիրցովի և «ձախ» Լոմինաձեյի: Այդ ամենից ավելի անսկզբունք բլոկն իր «ծրագիրը» փոխ էր առել և տրոցկիստներից, և աջ ոպորտունիստներից, մեղադրելով կուսակցությանը «բռնության» մեջ, վախեցնում էր դժվարություններով, իսկ փաստորեն արտացոլում էր մանր բուրժուազիայի և քաղքենիության դժգոհությունները՝ ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակման վերաբերմամբ:

Աջ և «ձախ» ոպորտունիստները հնգամյակի դեմ մղած իրենց պայքարով գործում էյին հոգուտ թշնամու — կուլակի, նեպմանի, վնասարարի, միջազգային բուրժուազիայի: Մերկացնելով ոպորտունիզմի թեորիան ու պրակտիկան, կուսակցությունը մաքրեց իր շարքերն

ԽՍՀՄ-Ի ՏՐԱԿՏՈՐԻԶԱՑԻԱՆ




Տրակտորային կցվող ինվենտարի աճումը ամբողջ գյուղմեքենակառուցման վերաբերմամբ (տոկոսներով)։

անուղղելի ոպորտունիստներից, դրանով ամրապնդելով կուսակցության միասնությունը, նրա շուրջը համախմբելով բանվոր դասակարգի և աշխատավորության լայն մասսաներին, նրանց մոբիլիզացիայի յենթարկելով՝ պայքարելու հնգամյակի համար:

## ՀՆԳԱՄՅԱԿԸ ՉՈՐՍ ՏԱՐՈՒՄ

Ինչքան էլ վիթխարի լինեյին առաջին հնգամյակի խնդիրները, ինչքան էլ կատաղի լինեյին վնասարարների և միջազգային կապիտալի փորձերը տապալելու հնգամյակը, ինչքան էլ մեծ լինեյին հնգամյակի իրագործման դժվարությունները, բոլշևիկյան հնգամյակը, ի պատիվ խորհրդային Միության պրոլետարիատի և գյուղացիության, կատարվում է չորս տարում:

Հնգամյակը կատարելու առաջին իսկ յերկու տարիների աշխատան-

ԱՎՏՈՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՆ




հազարներով

քի հանգամանքները վոչ մի կասկածի տեղիք չեյին տալիս, վոր հնգամյակը չորս տարում կատարելու համար աշխատավոր մասսաների շարժումն ամուր հող ունի իր վոտքի տակ։ Յերեք տարվա ընթացքում— 1927-ից մինչև 1930 թվականը — մենք ավելի քան կրկնապատկեցինք պետական սոցիալիստական արդյունաբերության արտադրանքը։

Յերրորդ տարին վճռական տարի յեղավ.—նա պետք է բոլոր պայմանները նախապատրաստեր հաջորդ՝ չորրորդ տարում հնգամյակն ավարտելու համար։ Խոշորագույն մետալուրգիական, մեքենաշինական, քիմիական և այլ արդյունաբերությունների 518 նորակառույցներ և 1040 ՄՏ կայաններ պետք է գործարկվեյին հնգամյակի յերրորդ տարում։

1932 թիվը,—ըստ պլանի 1933 թվի փոխարեն,—հնգամյակի ավարտական տարին դարձավ։ Արդեն նրա սկզբում, XVII կուսկոնֆե-

ՆՐԱՆՑ ՄՈՏ—ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, ՄԵԶ ՄՈՏ—ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՃՈՒՄ




Վերջին յերամյակում արդյունաբերական պրոլետարիատն աճեց գրեթե յերկու անգամ (միլիոններով)։

րանսում, կուսակցությունը նշեց, վոր հնգամյակի առաջին տարիների հաջողությունները լիակատար հնարավորություն են տալիս 1932 թվին պլանների կատարմամբ հնգամյակն ավարտել չորս տարում։

Տարեց-տարի հսկայական չափով աճում եր արդյունաբերական արտադրանքը։

Այսպես, 1931 թվին, 1930 թվի համեմատությամբ, ամբողջ արդյունաբերության արտադրանքն աճեց 21 տոկոսով, ըստ վորում ծանր արդյունաբերությունն աճեց 28,7 տոկոսով, թեթևը՝ 12,6 տոկոսով,



ածուխը՝ 22 տոկոսով, մեքենաշինությունը՝ 40 տոկոսով, դազգյահաշինությունը՝ 73 տոկոսով, ելեկտրոեներգիան՝ 43 տոկոսով և այլն։

Ամբողջ արդյունաբերության արտադրանքը հնգամյակի սկզբում 10,08 միլիարդ ռուբլի յեր կազմում, 1931 թվին նա հասավ 27 միլիարդ ռուբլու, իսկ ավարտական տարում, ըստ պլանի, նա պետք է կազմի 35,6 միլիարդ ռուբլի, այսինքն՝ հնգամյակի սկզբնական ժամանակաշրջանի համեմատությամբ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը պետք է ավելանա ավելի քան 3 անգամ։

Արդյունաբերության առանձին ճյուղեր հնգամյակը կատարեցին յերեք տարում։ Մեքենաշինությունը հնգամյակի հինգերորդ տարում պետք է 4.350 միլիոն ռուբլու արտադրանք տար, իսկ արդեն 1931 թվին (յերրորդ տարում) 4.730 միլիոն ռուբլու արտադրանք տվեց։ Ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը պետք է հնգամյակի վերջին տարում 895 միլիոն ռուբլու արտադրանք տար, իսկ արդեն 1931 թվին նա տվեց 925 միլիոն ռուբլու։ Վերջին տարում 21,7 միլիոն տոնն նավթ պետք է արտադրվեր, իսկ 1931 թվին արդեն փաստորեն 23,1 միլիոն տոնն արտադրվեց։ Հնգամյակը յերեք տարում գերակատարեցին նույնպես ռեզինի, վագոնաշինական արդյունաբերությունը, տրակտորաշինությունը։ Յերեք տարվա ընթացքում 378 միլիոն ռուբլու տրակտորային գյուղատնտեսական ինվենտար է արտադրվել, այսինքն՝ 32 տոկոսով ավելի, քան նախատեսված եր ամբողջ հնգամյակի համար։ Դրանք հնգամյակը յերեք տարում կատարող և գերակատարող ճյուղերն են։

Մի շարք ուրիշ ճյուղեր թեև չհասան այդպիսի արդյունքների, սակայն նույնպես նշանակալից չափով գերազանցեցին հնգամյակի նախագծումները 1931 թվի համար։

1931 թվին ռայոնական կայաններում 5 միլիարդ կիլովատ-ժամ ելեկտրոեներգիա պետք է արտադրվեր, փաստորեն 6,4 միլիարդ կիլովատ-ժամ է արտադրվել։ Ըստ հնգամյա պլանի՝ յերրորդ տարում պետք է 53 միլիոն տոնն քարածուխ արդյունահանվեր, փաստորեն արդյունահանվել է 56 միլիոն տոնն, տորֆ — 9 միլիոն տոնն, փաստորեն՝ 9,5 միլիոն տոնն, նախատեսված եր 8 հազար հատ տրակտոր արտադրել, արտադրվել է 40 հազար հատ. նախատեսվել է 660 հատ շոգեմեքենա բաց թողնել, փաստորեն բաց է թողված 812 հատ. նախատեսված եր 60 միլիոն զույգ կոշիկ պատրաստել, պատրաստված է 76,8 միլիոն զույգ. կրկնակոշիկ — 51 միլիոն զույգ, փաստորեն բաց է թողված 53,9 միլիոն զույգ։ Դրանք 1931 թվի համար հնգամյակի նշումներից բարձր ընթացող ճյուղերն են։

Ըստ հնգամյա պլանի 1931 թվին ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը պետք է կազմեր 19,6 միլիարդ ռուբլի, իսկ 1931 թվին մենք արդեն ունեյինք 27 միլիարդ ռուբլի։

քի հանգամանքները վոչ մի կասկածի տեղիք չեյին տալիս, վոր հնգամյակը չորս տարում կատարելու համար աշխատավոր մասսաների շարժումն ամուր հող ունի իր վոտքի տակ: Յերեք տարվա ընթացքում—1927-ից մինչև 1930 թվականը — մենք ավելի քան կրկնապատկեցինք պետական սոցիալիստական արդյունաբերության արտադրանքը:

Յերրորդ տարին վճռական տարի յեղավ.—նա պետք է բոլոր պայմանները նախապատրաստեր հաջորդ՝ չորրորդ տարում հնգամյակն ավարտելու համար: Խոշորագույն մետալուրգիական, մեքենաշինական, քիմիական և այլ արդյունաբերությունների 518 նորակառույցներ և 1040 ՄՏ կայաններ պետք է գործարկվեյին հնգամյակի յերրորդ տարում:

1932 թիվը,—ըստ պլանի 1933 թվի փոխարեն,—հնգամյակի ավարտական տարին դարձավ: Արդեն նրա սկզբում, XVII կոնֆերանսում, կուսակցությունը նշեց, վոր հնգամյակի առաջին տարիների հաջողությունները լիակատար հնարավորություն են տալիս 1932 թվի պլանների կատարմամբ հնգամյակն ավարտել չորս տարում:

ՆՐԱՆՑ ՄՈՏ—ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, ՄԵԶ ՄՈՏ—ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՃՈՒՄ




Վերջին յեռամյակում արդյունաբերական պրոլետարիատն աճեց գրեթե յերկու անգամ (միլիոններով):

Տարեց-տարի հսկայական չափով աճում եր արդյունաբերական արտադրանքը:

Այսպես, 1931 թվին, 1930 թվի համեմատությամբ, ամբողջ արդյունաբերության արտադրանքն աճեց 21 տոկոսով, ըստ վորում ծանր արդյունաբերությունն աճեց 28,7 տոկոսով, թեթևը՝ 12,6 տոկոսով,



սննդլինը՝ 22 տոկոսով, մեքենաշինությունը՝ 40 տոկոսով, գազդյահաշինությունը՝ 73 տոկոսով, ելեկտրոտեխնիկան՝ 43 տոկոսով և այլն:

Ամբողջ արդյունաբերության արտադրանքը հնգամյակի սկզբում 10,08 միլիարդ ռուբլի յեր կազմում, 1931 թվին նա հասավ 27 միլիարդ ռուբլու, իսկ ավարտական տարում, ըստ պլանի, նա պետք է կազմի 35,6 միլիարդ ռուբլի, այսինքն՝ հնգամյակի սկզբնական ժամանակաշրջանի համեմատությամբ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը պետք է ավելանա ավելի քան 3 անգամ:

Արդյունաբերության առանձին ճյուղեր հնգամյակը կատարեցին յերեք տարում: Մեքենաշինությունը հնգամյակի հինգերորդ տարում պետք է 4.350 միլիոն ռուբլու արտադրանք տար, իսկ արդեն 1931 թվին (յերրորդ տարում) 4.730 միլիոն ռուբլու արտադրանք տվեց: Ելեկտրոտեխնիկական արդյունաբերությունը պետք է հնգամյակի վերջին տարում 895 միլիոն ռուբլու արտադրանք տար, իսկ արդեն 1931 թվին նա տվեց 925 միլիոն ռուբլու: Վերջին տարում 21,7 միլիոն տոնն նավթ պետք է արտադրվեր, իսկ 1931 թվին արդեն փաստորեն 23,1 միլիոն տոնն արտադրվեց: Հնգամյակը յերեք տարում գերակատարեցին նույնպես ռեզինի, վագոնաշինական արդյունաբերությունը, տրակտորաշինությունը: Յերեք տարվա ընթացքում 378 միլիոն ռուբլու տրակտորային գյուղատնտեսական ինվենտար է արտադրվել, այսինքն՝ 32 տոկոսով ավելի, քան նախատեսված եր ամբողջ հնգամյակի համար: Դրանք հնգամյակը յերեք տարում կատարող և գերակատարող ճյուղերն են:

Մի շարք ուրիշ ճյուղեր թեև չհասան այդպիսի արդյունքների, սակայն նույնպես նշանակալից չափով գերազանցեցին հնգամյակի նախագծումները 1931 թվի համար:

1931 թվին ռայոնական կայաններում 5 միլիարդ կիլովատ-ժամ ելեկտրոեներգիա պետք է արտադրվեր, փաստորեն 6,4 միլիարդ կիլովատ-ժամ է արտադրվել: Ըստ հնգամյա պլանի՝ յերրորդ տարում պետք է 53 միլիոն տոնն քարածուխ արդյունահանվեր, փաստորեն արդյունահանվել է 56 միլիոն տոնն, տորֆ — 9 միլիոն տոնն, փաստորեն՝ 9,5 միլիոն տոնն, նախատեսված եր 8 հազար հատ տրակտոր արտադրել, արտադրվել է 40 հազար հատ. նախատեսվել է 660 հատ շոգեմեքենա բաց թողնել, փաստորեն բաց է թողված 812 հատ. նախատեսված եր 60 միլիոն զույգ կոշիկ պատրաստել, պատրաստված է 76,8 միլիոն զույգ. կրկնակոշիկ — 51 միլիոն զույգ, փաստորեն բաց է թողված 53,9 միլիոն զույգ: Դրանք 1931 թվի համար հնգամյակի նշումներից բարձր ընթացող ճյուղերն են:

Ըստ հնգամյա պլանի 1931 թվին ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը պետք է կազմեր 19,6 միլիարդ ռուբլի, իսկ 1931 թվին մենք արդեն ունեյինք 27 միլիարդ ռուբլի:

Ըստ հնգամյա պլանի ծանր արդյունաբերության գծով մենք 1931 թվին պետք է ունենայինք 7 միլիարդ ռուբլու արտադրանք, իսկ փաստորեն ստացանք 10 միլիարդ ռուբլու: Մենք նշանակալից աճ ունեցանք նաև թեթև արդյունաբերության գծով, լայն սպառման ապրանքների արտադրության գծով:

Այն ժամանակ, երբ կապիտալիստական երկրներում տեղի է ունենում արդյունաբերական արտադրանքի սուր անկում, գործազուրկների քանակը հասնում է 50 միլիոն հոգու, սիստեմատիկաբար ընկնում է աշխատավարձը, երկարացվում է բանվորական օրը, աղքատանում ու մահանում է աշխատավորությունը,—ԽՍՀՄ-ում, երկրի արտադրական ուժերի բուռն զարգացման հիման վրա, սիստեմատիկաբար և անշեղորեն բարձրանում է բանվոր դասակարգի կենսական մակարդակը:

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊԵՐԸ




Արդյունաբերության համախառն արտադրանքի աճը (միլիոն ռուբլիներով):

ՏՐԱՆՍՊՈՐՏԸ—ԽՍՊԱՍ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ




Տրանսպորտի ապրանքաշրջանառությունը մինչպատերազմյան Ռուսաստանում (բեռների միլիոն տոններով):

Խորհրդային Միության բանվոր դասակարգն այլևս չգիտի, թե ինչ է գործազրկությունը, այն վերջնականապես լիկվիդացիայի է ենթարկված: Բարելավվում են բանվոր դասակարգի և աշխատավորության աշխատանքի պայմանները, նյութական-կենցաղային և կուլտուրական մակարդակը: Բանվորների և ծառայողների քանակը 1931 թվին ավելացավ 2 միլիոնով, իսկ առաջին հնգամյակի բոլոր տարիների ընթացքում բանվորների և ծառայողների քանակը 11½ միլիոնից հասավ 18 միլիոնի. Ժողտնտգերխորհրդի արդյունաբերության գծով աշխատավարձը 1931 թվին ավելացավ 16 տոկոսով: Բնակշինարարության վրա 1931 թվին ծախսված է 575 միլիոն ռուբլի, 1929 թվի 175 միլիոնի դիմաց, իսկ 1932 թվին կծախսվի 2 միլիարդ ռուբլի: Երեք տարվա ընթացքում բնակարան է կառուցված 3 միլիոն աշխատավորների համար: Հանգստյան տներ և սանատորիաներ ուղարկված բանվորների թիվը 1928 թվի 340 հազարից՝ 1931 թվին հասավ մեկ միլիոնի: Աշխատավորության նյութական և կենցաղային դրության բարելավման հետևանքով 1931 թվին մահացությունը 1918 թվի համեմատությամբ կրճատվեց 30 տոկոսով:

## ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՄԵՆՔ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ «ՀԱՍՆԵԼ ՅԵՎ ԱՆՑՆԵԼ» ԼՈԶՈՒՆԳԸ

«Մենք ամբողջ թափով ինդուստրացման ճանապարհով գնում ենք դեպի սոցիալիզմ, շատ հետ թողնելով մեր դարավոր «ռուսական հետամնացությունը»,—գրում էր ընկ. Ստալինը 1929 թվին, Հոկտեմբերյան տարեդարձի առթիվ: Այդ ժամանակվանից մենք նշանակելի չափով արագացրել ենք մեր զարգացման տեմպը և արդեն ընդհուպ մոտեցել ենք անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման խնդրի իրագործմանը:

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԳՈՐԾՈՒՄ




Աճում է ծանր արդյունաբերության մեջ զբաղված կանանց թիվը:

Հնգամյակի ընթացքում մենք ոչ միայն վերասարքավորեցինք և ընդլայնեցինք հին գործարանները, ոչ միայն հարյուրավոր նոր գործարաններ կառուցեցինք, այլև մի շարք նոր արտադրություններ կազմակերպեցինք մեզ մոտ: Մենք սովորեցինք ինքներս կառուցել բլյումինգներ, կրեկինգներ, հանածո արդյունահանող մեքենաներ, էքսկավատորներ, կոմբայններ, գլանելու դազգյահներ, մեծաբեռ և ինքնա-

թափ վագոններ, տեքստիլ, տպագրական և կոշկեղենի մեքենաներ, ինքնաթիռներ, հզոր տուրբիններ, տրանսֆորմատորներ, ազդիչներ, բարձրավոլտ հաղորդումների սարքավորումներ:

Մենք կառուցում ենք նոր դոմեններ, մարտեններ, աշխարհի խոշորագույն գիգանտները: Ստալինգրադի և Խարկովի տրակտորի գործարանները, Ռոստովի գյուղատնտեսական մեքենաների գործարանը, Մագնիտագորսկի և Կուզնեցկի գործարանները, Նիժնի-Նովգորոդի ավտոգործարանը, «Շարիկոպոդշիպնիկը», Կրամատորի ծանր մեքենաշինության գործարանը, Ստալինի անվան ավտոմոբիլի գործարանը, դազգյահ շինող «Ֆրեզեր» և «Կալիբր» գործարանները, Բերեզնյակի, Վոսկրեսենսկու, Նեվսկու քիմիական կոմբինատները, Դնեպրյան էլեկ-

ՍԱՆԱՏՈՐԻԱՆԵՐ—ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ




Հսկայական չափերով աճում է աշխատավորներին Միության հիվանդանոցային—սանատորիական հիմնարկություններով սպասարկելու գործը: Երեք տարվա ընթացքում—յեռապատիկ մեծացում (հազարներով):

տրոցենտրալը և նրա շուրջը կառուցվող կոմբինատը, և բազմաթիվ այլ գործարաններ ու ֆաբրիկաներ կյանքի կոչվեցին առաջին բոլշևիկյան հնգամյակի կողմից:

«Մենք դառնում ենք,—ասում է ընկ. Ստալինը,—մետաղի յերկիր, ավտոմոբիլիզացիայի յերկիր, տրակտորիզացիայի յերկիր: Իսկ յերբ ԽՍՀՄ նստեցնենք ավտոմոբիլ, իսկ մուժիկին՝ տրակտոր,—թող փորձեն մեզ հասնել իրենց «քաղաքակրթությամբ» պարծեցող պատվարժան կապիտալիստները, մենք դեռ կտեսնենք, թե յերկրներից վորոնք հետամնաց «կհամարվեն» և վորոնք՝ առաջավոր»:

Արդյունաբերության մի շարք առաջատար ճյուղերի գծով մենք հասնում ենք առաջավոր կապիտալիստական յերկրներին:

Քարածխի գծով 1928 թվին մենք վեցերորդ տեղն եյինք գրավում՝ ՀԱՄՆ-ից, Անգլիայից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Լեհաստանից



հետո, 1931 թվին մենք արդեն չորրորդ տեղն եյինք գրավում՝ անցնելով Ֆրանսիային և Լեհաստանին:

Նավթի գծով 1928 թվին ԽՍՀՄ-ն յերրորդ տեղն եր գրավում: Առաջից գնում եյին ՀԱՄՆ-ը և Վենեցուելան: 1931 թվին մենք գրավեցինք յերկրորդ տեղը:

Առաջավոր կապիտալիստական յերկրներին մենք ավելի ու ավելի յենք հասնում նաև չուգունի ձուլման գծով: 1928 թվին մենք կանգնել եյինք վեցերորդ տեղում: Մեզանից շատ արտադրում եյին ՀԱՄՆ-ը, Գերմանիան, Ֆրանսիան, Անգլիան և Բելգիան: 1932 թվին մենք արդեն առաջին տեղն ենք գրավում Յեվրոպայում և չուգունի ձուլման տեսակետից վեցերորդի փոխարեն յերկրորդ տեղն ենք գրավում ամբողջ աշխարհում: Պողպատի արտադրության գծով հնգամյակի սկզբում, 1928 թվին, մենք հինգերորդ տեղն եյինք գրավում՝ ՀԱՄՆ-ից,




ոտնամանի արտադրությունը ԽՍՀՄ (մլն զույգերով)




կրկնակոշիկի արտադրությունը ԽՍՀՄ (մլն զույգերով)




կոնսերվի արտադրությունը ԽՍՀՄ (մլն. ռուբլիներով)

Գերմանիայից, Ֆրանսիայից և Անգլիայից հետո: 1931 թվին մենք գրավեցինք չորրորդ տեղը: Իսկ յեթե վերցնենք վերջին ժամանակների ամսական միջին ցուցանիշները մեզ մոտ և կապիտալիստական յերկրներում, ապա կպարզվի, վոր մենք արդեն յերկրորդ տեղն ենք գրավում: Մեզանից առաջ է միայն Ամերիկան: Ըստ վորում մենք սովորել ենք ինքներս պատրաստել բարձրորակ, արագ կտրող և չժանգոտող պողպատ: Մենք դարձել ենք աշխարհում ամենախոշոր գյուղատնտեսության յերկիրը, մենք անցել ենք Ամերիկայից և դարձել ենք աշխարհում առաջին գյուղատնտեսական մեքենաշինության յերկիրը:

Սակայն մենք չենք կարող ասել, որ «տեխնիկական-տնտեսական տեսակետից առաջավոր կապիտալիստական յերկրներին հասնել և անցնելու» լենինյան լոզունգն արդեն լրիվ իրագործված է: Չի կարելի մեր արդյունաբերության զարգացման տեմպերը շփոթել նրա զարգացման մակարդակի հետ: Տեմպը և մակարդակը միևնույն բանը չեն:

Մեր տեմպերը շատ բարձր են, նրանք աշխարհում հավասարը չունեն: Մեր աճման արագությունն աննախընթաց է: Ոչ մի յերկիր, նույնիսկ կապիտալիզմի ծաղկման լավագույն ժամանակներում, չի ունեցել աճման այնպիսի արագություն, որպիսին ունի Խորհրդային Միությունը: Սակայն մենք դեռ նշանակալից չափով մեր արդյունաբերության զարգացման մակարդակի տեսակետից հետ ենք մնացել առաջավոր կապիտալիստական յերկրներից: Այսպես, էլեկտրոէներգիայի արտադրության տեմպը մեզանում ամենաբարձրն է (600 տոկոս), սակայն չնայած դրան՝ էլեկտրոէներգիայի արտադրությունը ԽՍՀՄ-ում 1931 թվին կազմում էր 10,6 միլիարդ կիլովատ-ժամ, մինչդեռ 1929 թվին Ամերիկայում արտադրվել է 126 միլիարդ, իսկ Գերմանիայում՝ 33 միլիարդ կիլովատ-ժամ: Մեզանում անվիճելիորեն հսկայական հաջողություններ են ձեռք բերվել չուգունի ձուլման գծով — 1931 թվին մենք արտադրել ենք 5 միլիոն տոնն, իսկ ՀԱՄՆ-ը — 19 միլիոն տոնն, Գերմանիան — 6 միլիոն տոնն, Ֆրանսիան — 10 միլիոն տոնն: Շնորհիվ մեր տեմպերի՝ չուգունի գծով մենք բռնում ենք յերկրորդ տեղը, սակայն այնուամենայնիվ մենք դեռ պետք է շատ աշխատենք, որպեսզի լիկվիդացիայի յենթարկենք նրա հետ մնալը յերկրի առաջադրած պահանջներից: Մեր արդյունաբերության աճման տեմպերը դրա համար պետք է ե՛լ ավելի արագացվեն, մեր աշխատանքը պետք է ե՛լ ավելի լավանա:

## XVII ԿՈՒՍԿՈՆՖԵՐԱՆՍՆ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հնգամյակի չորրորդ՝ ավարտական տարվա սկզբին XVII կուսկոնֆերանսն առաջին հնգամյակի նախնական հանրագումարները կատարեց և նրանց հիման վրա դիրեկտիվներ տվեց ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության յերկրորդ — 1933—1937 թ.թ. — հնգամյա պլանը կազմելու համար:

Առաջին հնգամյակի խնդիրն էր ավարտել սոցիալիստական էկոնոմիկայի ֆունդամենտի կառուցումը, վորի մասին Լենինը խոսում էր՝ վորպես սոցիալիզմի շինարարության գլխավոր խնդրի: Այդ խնդիրը կատարված է: «Մեր ծանր արդյունաբերությունը,—մատնանշում է XVII կուսկոնֆերանսը,—հաստատուն կերպով վոտքի յե կանգնեցված



և դրանով իսկ սեփական բազա յե ստեղծված ժողովրդական ամբողջ տնտեսության ռեկոնստրուկցիայի ավարտման համար...

Գյուղատնտեսության մեջ տեղի ունեցավ արմատական բեկում, վորն արտահայտվեց գյուղի միջակ-չքավոր մասսաների վերջնական շրջադարձով դեպի սոցիալիզմ: Գյուղատնտեսության մեջ տիրապետող դիրք գրավեցին սոցիալիստական ձևերը (կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները): Խորհրդային Միությունը, կոլեկտիվացման, խորհտնտեսությունների ծավալման և մեքենայական տեխնիկայի լայն կիրառման հիման վրա, մանր և փոշիացած հողագործության յերկրից դարձավ աշխարհում ամենախոշոր հողագործության յերկիրը...

Առաջին հնգամյակում սոցիալիստական շինարարության գլխավոր արդյունքը հանդիսացավ կապիտալիզմի արմատների վերջնական քանդումը գյուղում, վորը կանխորոշեց կապիտալիստական ելեմենտների




Շաքարավազի արտադրությունը ԽՍՀՄ-ում (միլիոն ցենտներով):

լիակատար լիկվիդացիան և դասակարգերի լիակատար վոչնչացումը: ԽՍՀՄ-ում սոցիալիզմի ֆունդամենտի կառուցման ավարտումը նշանակում է, վոր «ով-ում» լենինյան հարցը վճռված է ընդդեմ կապիտալիզմի և հօգուտ սոցիալիզմի լիովին և անդառնալիորեն թե՛ գյուղում և թե՛ քաղաքում:

1932 թվի գարնան կոլտնտեսական-խորհտնտեսական ցանքի հաջողությունները (սոցիալիստական սեկտորին բաժին է ընկնում ցանքի 80 տոկոսից ավելին) ցույց տվին, վոր ԽՍՀՄ-ն վերջնականապես հաստատվեց սոցիալիզմի ուղու վրա, վոր ԽՍՀՄ-ում սոցիալիզմի վճռական հաղթանակը կարելի յե ավարտված համարել:

«Այդ բոլոր նվաճումներն արդյունք են բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության լայն մասսաների հեղափոխական ակտիվության վիթխարի աճի, արդյունք են սոցիալիստական մրցության և

2443

հարվածայնության հսկա աճի, վերջապես, արդյունք են մեր կուսակցության լենինյան քաղաքականության, որը հետևողականորեն ամբողջ ֆրոնտով ծավալուն հարձակում է կատարում կապիտալիստական էլեմենտների վրա»:

Մեր յերկրի ինդուստրացումը նշանակում է կառուցել արդյունաբերություն, և առաջին հերթին ծանր արդյունաբերություն, հասնել այն բանին, որ նրա նշանակությունը ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ ավելի ու ավելի աճի: Մեր կուսակցության դեռ XVI համագումարում ընկ. Ստալինը ցույց տվեց, թե ինչպես ընդհանուր տնտեսության մեջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքի բաժինն սկսեց աճել, ինչպես, հնգամյակի առաջին իսկ տարվանից՝ արդյունաբերությունը գյուղատնտեսության համեմատությամբ սկսեց աստիճանաբար առաջին տեղը գրավել: Հեղափոխությունից առաջ արդյունաբերական արտադրանքը ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի 42 տոկոսն էր կազմում, հնգամյակի սկզբում— 45-ից մի քիչ ավելի, 1930 թվին — 53 տոկոս, 1931 թվին — 63 տոկոս, իսկ ընթացիկ տարում արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռն արդեն կկազմի 66 տոկոս: Արդյունաբերության ներսում «Ա» խմբի (արտադրության միջոցների արտադրություն) տեսակարար կշիռը հնգամյակի սկզբից 44,6 տոկոսից աճեց մինչև 50,3 տոկոսի:

Սոցիալիստական արդյունաբերությունն արդեն գերակշռում է Խորհրդային Միության ժողովրդական ամբողջ տնտեսության մեջ, որն ագրարային յերկրից դարձել է արդյունաբերական յերկիր, ինդուստրիալ յերկիր:

ՎԵՐՋ ՅԵՐԿՐՈՐԴ ԳՐՔԻ

Гос. Публ. Библиотека ССРА им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0187436

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.

Б. ВОЛИН
ПОЛИТГРАМОТА
ВЫПУСК II
ПАРТИЗДАТ ЭРИВАНЬ